



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

2453

A 989,986


ՈՒՂԵՑՈՅՑ
ՍՐԲԱԶՈՆ ՏԵՂԵԱՑ

Կ. ՏՊԱԳՐԱԹԻՒՆ



Ի ՏՊԱԳՐԱԹ
ՈՒՍԹԵԼՈՒՄԻՆ Ի ԿՐԻՍՏՈՍ
ՄՐԱՅ ԵՐԵՎԱՆԻ
ՈՒՍԹԵԼՈՒՄԻՆ

1904




[The main body of the page contains extremely faint and illegible text, likely bleed-through from the reverse side of the document. The text is scattered and difficult to discern.]

مطوق نظارت جلیہ سنک فی ۱۳ مایسن سنہ ۴۱۱
قرینلو ویکری ویلڈ اسٹریٹ جینجہ کتب اوٹومندو



ՈՒՂԵՑՈՅՑ

ՍՐԲԱԶԱՆ ՏԵՂԵԱՑ



ՈՒՂԵՑՈՅՑ

ՍՐԲԱԶԱՆ ՏԵՂԵԱՑ

Yphetsayts subesem... 195

Ե. ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ



Ի ՏԳԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԱԲՈՈՒՈՅՍ

ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԱՐԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱՂԵՄ

1902

415 p.

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

6 RAD

10000

811

Buhr

GRAP
EREN

811


01.10.1951

Ս. Զ. Դ.

Ներկայ հրատարակութիւնը — ՈՒՂՆՅՈՅՑ Ս. ԳՆ. ՂՆՈՑ — կը պարունակէ իւր մէջ տեղագրական և օդատնական ծանօթութիւնը հին ու նոր յիշատակաց և անցից՝ որոնք քաղուած են համազգի և օտարազգի յիշատակարաններէ և խնամով կարգաւորուած 'ի հրատարակին բարեպաշտ ուխտաւորաց և ամեն հարցասէր ընթերցողաց, Հեռեւապէս, կենդանի առաջնորդ մ'ի տա, որով կարէ ընթերցողն, թէ՛ անձամբ և՛ թէ՛ մտքը, շքղագայիլ Պաղեստինի մէջ և գոհացուցիչ տեղեկութիւններ ստանալ ամեն տեղեաց, հնութեանց և ազգաց սեփականութեանց վրայ ։

Արդ՝ այսպիսի մի երկասիրութիւն ջերմեռանդ ուխտաւորաց կարի բազմալի լինելուն ապացոյց կրնայ համարուիլ չորրորդ տպագրութեան սպառումը և ներկայ Ե. տպագրութիւնը ։





ՈՒՂԵՑՈՅՑ

ՍՐԲԱԶԱՆ ՏԵՂԵԱՑ



Ուխտաւորք ի Յոպպէ
Եւ ուղեւորութիւնն ցոցա դէպ յԵրուսաղէմ :

Ի ՍՈՒՐԲ Երուսաղէմ ուխտի եկող տէրունական եւ բարեպաշտ ուխտաւորքն , որք ծովային ճանապարհորդութեամբ կ'ընեն իրենց ուղեգնացութիւնը , պարտաւոր են նախ և առաջ Յոպպէ քաղաքն ելնել եւ ապա մեկնիլ դէպ 'ի Սուրբ Երուսաղէմ :

Թէեւ քաղաքին մէջ , թէ՛ ճանապարհորդաց և թէ՛ մասնաւորաց համար բնակութեան արժանի պանդոկք եւ օթեւանք կը գտնուին , սակայն իւրաքանչիւր ազգաց տէրունական

ուխտաւորքն ՚ի բնէ անտի՝ ըստ սո-
վորութեան՝ կ'իջեւանեն իրենց Ազ-
գային վանքերը , որոց հանգստու-
թեան համար ըստ ամենայնի խնամք
և ջանք կը լինին վանքերու միաբանից
կողմէ :

Այս քաղաքն՝ որ ընդհանրապէս
Եաֆա եւ կամ Յոպպէ կը կոչուի ,
որ երբեմն շաֆ և շափ անունով ալ
յիշուած է , աշխարհիս հին քաղաք-
ներէն մին կը համարուի , և Ս . Գրոց
ու Ազգաց Պատմութեանց մէջ նշա-
նաւոր տեղ մը կը գրուէ :

Աւանդութեամբ կ'ըսուի թէ՛ Նոյ
նահապետն Աստուծոյ հրամանաւ իւր
Տապանը այս քաղաքին մէջ շինեց , և
ջրհեղեղի ժամանակ քաղաքն քան-
դուած լինելով՝ Նոյի Յաբեթ որդւոյն
ձեռօք վերստին շինուելով՝ նորա ա-
նունը ստացած է :

Յովնան մարգարէ Տիրոջը ձեռքէն
խոյս տալու համար , որ իրեն կը պա-
տուիրէր Նինուէ երթալ քարոզելու
համար , այս քաղաքն եկաւ , ուրկէ

նաւ մտաւ փախչելու համար 'ի Թարսիս • Յոհն • Ա • 3 :

Տիւրոսի Քիրամ Թագաւորն Լիբանանու լեռնէն կտրել տուած փայտերը՝ ծովուն մէջ լաստեր շինելով՝ այս տեղ բերաւ ու հանեց ծովեզրն՝ Սողոմոնին զրկելու համար, որոնք ճշմարտին Աստուծոյ Տաճարին շինութեանը գործածուեցան • Գ • Թագ • Ե • 8, 9 : Եւ Բ • Մա • Բ • 16 :

Այս քաղաքին մէջ կը բնակէր Տաբթայ անուն բարեպաշտուհի կինն, զոր Ս • Առաքեալն Պետրոս յարոյց 'ի մեռելոց • Գործ • Թ • 36 :

Աստ է Արմոն խաղախորդի տունը, ուր Ս • Առաքեալն Պետրոս, տեսաւ սուրբ եւ անսուրբ անասնոց տեսիլը • Գործ • Ժ • 11 : Այս տան տեղը մինչեւ ցայսօր կայ քաղաքիս յարեւմտահիւսիս՝ ծովեզերքին վրայ բարձրաչէն, որուն մեծ մասն այժմ Հայոց Վանքի սեփհականութիւնն է, և մնացեալ մի փոքր մասն ալ Տաճկաց կը վերաբերի, ուր ունին մի փոքր աղօթատեղի, ու

բուն քով է ծովային նաւահանգստի մեծ փարոսն, որ շինուեցաւ Գաղղիական ընկերութեան մը կողմէ հրամանաւ Ձերութեան:

Միջերկրական ծովու վերին ծայրն դէպ յարեւմտեան հարաւ շինուած այս քաղաքն, այլ և այլ ժամանակ զանազան տէրութեանց կողմանէ ստեպ կրած յարձակումներէն և հարուածներէն միշտ փոփոխութիւնք ընդունելէ զկնի, այժմ կիսաբոլոր և ամփիթատրոնի ձեւն առնելով, ծովու կողմանէ ակնապարար և հիանալի տեսարան մը կ'ընծայէ տեսողաց. քաղաքն կը տարածի արեւմուտքէն դէպ յարեւելք ընդարձակօրէն, գեղեցկաշէն տուներով, եւ՝ հետզհետէ նաև զարգանալու վըայ է, թէ՛ բնակչօք և թէ՛ վաճառականութեամբ:

Յուպէն կը բաղկանայ այժմ աւելի քան 15,000 բնակչէ, որոց մեծագոյն մասն Մահմետական են, Ֆիացեալն Յոյն, Ատոին, Հայ, Հրէայ, եւ Սուրիացի Հռովմէադաւանք եւ այլ զանազան

Քրիստոնեայ ժողովուրդք • Հայոց Թիւն
ընդ ամենը իբր 130 հոգի է՝ արք եւ
կանայք :

Վերջին տարիներու մէջ գերմա-
նական գաղթականութիւնք հաստա-
տուած են Յուպպէի մէջ երկու տեղ,
մին քաղաքի արեւելահիւսիս Գօլթի
ըսուած տեղը, ծովեզերքին մօտ • միւսն
Սարթի դաշտին արեւմտեան եզերքն •
սոյն երկու գաղթականութիւնն կը
բաղկանայ գրեթէ 500 բնակիչէ • տը-
ներն գեղեցկաշէն, փողոցներն կանո-
նաւոր և եւրոպական ոճով շինուած
են երկու կարգ ծառերով • պտղատու,
ծաղկալից պարտէզներ, և զքօսավայ-
րեր ունին, և գրեթէ մէյ մէկ գիւ-
ղաբաղաքներ են :

Յուպպէի նաւահանգիստը միայն մէկ
նաւամատոյց ունի, այն է Մաքսատու-
նը, ուր պարտաւոր են ելնել ամեն
ճանապարհորդք : Մաքսատնէն ելնե-
լով դէպ 'ի ձախ արեւելեան կողմն
դառնալով, իսկոյն աջ կողմդ կ'իջնայ,
նախ Յունաց, ապա Լատինաց և յե-

այս Հայոց հոյակապ վանքերն կարգաւ :

Հայոց վանքը Ս. Նիկողայոսի անուամբ շինուած փոքր Եկեղեցի մը ունի, ուր կը կատարուին ամեն օր եկեղեցական ժամերգութիւնք ու պատամուկք . վանքը ունի մի Տեսուչ եւ մի ժամարար վարդապետ, և մի քանի աշխատաւոր միաբան, թարգման մը և պահակ մը, որք միշտ խնամք և զգուշութիւն ցոյց կուտան ուխտաւորաց ամեն գործերուն :

Մեծն Նափօլէոն Ա. երբ Յոպպէ եկաւ, մեր սոյն վանքին մէջ հաստատեց իւր զինուորաց համար հիւանդանոցը, եւ իրեն բնակութեան համար ալ վանքին մօտ Հայոց սեփական եղած տունը, ինքը՝ Նափօլէոն՝ ստէպայցելութեան կ'ուզար զինուորաց, որք ժանտախտէ բռնուած էին . զինուորաց հիւանդանոց եղած տեղն ընդարձակ սրահ մ' էր, որ իբր հոգեւորն կը ծառայէր այն ժամանակ, այժմ խուցերու բաժնուած է . Եւրոպացի ճա-

Նապարհորդք երբ Յոպպէ կ'եննեն միշտ կուգան հետաքրքրութեամբ այն տեղն տեսնելու : Նափօլէոնի բնական տունն մինչեւ ցայսօր Հայոց սեփհա-կան է :

Տէրունական Ուխտաւորք այն վան-քին մէջ կը հանգստանան , և իրենց 'ի բնէ անտի սովորական եղած դարպասական տուրքն կը վճարեն թէ Յոպպէի եւ թէ Ռէմլէի վանօրէից պայծառութեան եւ հաստատութեան համար , որ սահմանեալ է կէս Օսմանեան լիբայ անձ գլուխ :

Յոպպէէն ⁽¹⁾ մինչեւ յԵրուսաղէմ 10 ժամուան ճանապարհ է կառքով եւ 12 ժամուան՝ ձիով , ճանապարհոր-

(1) Մինչեւ 1892 տարւոյ վերջերք , որ առնն նոր սփռաւ Յոպպէէն յԵրուսաղէմ շինուած երկաթուղւոյ երթեւեկն . բոլոր Երուսաղէմ եկողք նոյն ժամանակի կառքի սովորական ճանապարհով կուգային անպատ-ճառ . և որովհետեւ այդ ճանապարհ ունի իւր հար-գօքեան պատմական կարեւորութիւնն ուսումնասի-րաց համար , ուստի անոր նկարագիր Ուղեցոյցի մէջ իւր կարգին թողլով՝ այս տեղէն երկաթուղւոյ նոր

դաց եւ ուխտաւորաց կամքէն կախ-
եալ է կառքով կամ ձիով ճանապարհ-
հորդելն։ Սուրբ Նիկողայոսի վանուց
դռնէն ելնելով դէպ 'ի յարեւելք ե-
ղած երկայն շուկայի մէջէն ուզղակի
քաղաքի դռուն կը հասնիս, ուր կ'ըս-
տասեն ճանապարհորդաց յատկաց-
եալ կառքերն, եւ ուր ըստ եղանա-
կին զանազան տեսակ բերքեր կը վա-
ճառուին ձերմակ և սեւամորթ արա-
քացիներէն, այսինքն՝ նարինջ, լեմոն,
նուռ, ադամաթուզ, շաքարղէզն,

ու տարբեր ճանապարհին նկարագիրն ալ կ'ընեմք հան-
դերձ պատմական համառօտ ծանօթութեամբ։

Երբ բարեպաշտ ուխտաւորն ուզէ մեկնիլ Յոզ-
պէէն երկաթուղւոյ ճանապարհաւ Երուսաղէմ եր-
թալաւ. վանքի դռնէն ելնելուն աջ կողմը դռնալով
պէտք է դիմէ դէպ յարեւելք եղած փողոցը, ուսկից
Տ վայրկեանի շափ քալելէն յետոյ կը հասնի քաղաքին
արեւելեան դռուը՝ որ կը գտնուի շուկային վերի կողմը.
այն դռնէն ելնելով և շուկային աջ կողմը բռնելով
երթալաւ է դէպ 'ի հիւսիսային արեւելք. շուկային
ծայրը կը տեսնուի «Օգէլ Հովարո» անուամբ պան-
դսիը. որուն առաջէն պէտք է անցնիլ եւ դէպ յաջ
երթալով հասնիլ Գերմանական դաղթականութիւնը.
Տե՛ք է՛լ 11.

ձմերուկ, խաղող, թուզ, թուփ, եւ ամեն տեսակ մրգեղէնք եւ բանջարեղէնք. այս տեղ ճանապարհն խիստ խռնուած է անցուդարձով, և քաղաքին ամենէն բանուկ տեղն է, հետեւաբար պէտք է զգոյշ լինիլ բան չի կորսնցնելու :

Այն ժամու չափ երկու կարգ պրուզաւէտ պարտէզներու մէջէն անցնելով կը հասնուի Սարձի դալարագեղ դաշտին ծայրն, որ խիստ պտղաբեր տեղեաց մին է :

Սոն գաղթականութեան ծայրէն Յ վայրկեան հեռաւորութեամբ կը տեսնուի երկաթուղւոյ կայարանը, որ քաղաքադռնէն 7 վայրկեանի չափ հեռաւորութիւն ունի. Յոպպէի և Երուսաղէմի միջեւ կան հինգ կայարանք և են՝ Արփէ, Ռեմէ, Սեճիք, Տեր-Ալան, և Պէրթիլ. — ամբողջ ճանապարհի երկայնութիւնն է 87 քիլոմէթր. — Շոգեկաւքը Յոպպէէն ելնելուն Չ քիլոմէթրի շափ տեղ ագամաթղոյ խոշոր ու խիտ տեւեւներով ցանկապատեալ նարնջենիներու և լեմոնիներու պարտէզներուն մէջէն կ'անցնի, յորս կան նաև նրունիներ եւ ուրեք ուրեք բարձրացած արմաւենիներ : Սոն պարսիկաց կը յարդգէ Նաղլուս և Հայֆա տաճար ուղին՝ որոյ ձախ կողմը կ'երեւին Գերմանական գաղթականութեան մի քանի տներ : Տե՛ս էջ 11. — Ատտ

Այս դաշտը փոփոխակի՝ տարի մը առատ հունձ կուտայ եւ միւս տարին անմշակ մնալով արօտ կը բերէ, գարնան մէջ անհամար ծաղիկներով կը ծածկուի, որոց մէջ կը գտնուին կակաչ եւ հարսնուկ։ Սոյն դաշտը անուանի է Սամփսոնի յիշատակովն,՝ ուր տեղ Փղշտացւոց հունձերը այրեց, 300 աղուէս թողլով նոցա մէջ՝ որոց այգիներուն վառած ջահեր կապած էր. Գրգրա. ԺԵ. 4, 5 :

ուզեալը կը գտնուի արդէն Սարճի գաշտին սիւղքը Տե. էջ 18, որոյ աջակողմը կը տեսնուի 1870ին խորայէլեան ընկերութեան ծախիւք շինուած երկրագործական գարոցը։ Ասկից յետոյ շոգեկառքը կ'անցնի քարաշէն կամուրջէ մը որ շինուած է Ռապի — Սաւվի կոչուած հեղեղատին վերայ և որուն ձախ եղերքն է համանուն գիւղը։ Նոյն կողմէ իբր 1 քիլոմէթր անդին կը տեսնուի Իդի — Իուրաի եւ Սափի կոչուած երկու աննշան գիւղերն։ 10էն 13 քիլոմէթրի վերայ աջ կողմէն կ'երևին Պել — Տէճան, Սափիբիե եւ Սերֆան գիւղերը, իսկ ձախ կողմը կ'երևի Քեֆը—Օնա ըսուած գիւղը։ Հարաւակողմը կանգնած է քառասուն մանկանց աշտարակը (՚ի Ռեմլէ) եւ ձախակողմը սոցխակազոյն փոքրիկ բարձրաւանդակի մը վերայ կ'երևի հրէական

Ճանապարհին վրայ կը տեսնուի հին
 Լիւրիա քաղաքը . Ա . Մնայ . Ը . 12 :
 Ելլա . Բ . 3 : որ Յունարէն Դիոսորիս կը
 կոչուէր , ուր տեղ Պետրոս առաքեալ
 բժշկեց Ենա անուն անդամալոյծը . Գործ .
 Թ . 32 - 35 :

Այս քաղաքն Ս . Գէորգայ ծնըն-
 դեան քաղաքն է . Նիկոմիդիոյ մէջ
 նահատակուելէն յետոյ հոս փոխա-
 դրուեցան նորա սուրբ նշխարհքները ,
 և Յուստինիանոս կայսրն ալ քաղաքին
 մէջ յանուն սրբոյն փառաւոր եկե-

գաղթականութիւն մը Մելաղէս անուամբ : 15 քիւ-
 մէթրին վերայ գաշտին ձախակողմէն կը նշմարուին
 մի քանի աննշան գիւղեր եւս , իսկ 20րդ քիլոմէտրին
 վերայ է Լիդդէի կայարանը , յորմէ 1/2 քիլոմէթր գեպ
 'ի ձախակողմը կ'ինայ համանուն հին քաղաքը Լիդ-
 գէ , Տէս ել 17 : Երգեկաւքը Լիդդէէն ելնելուն՝ ճա-
 նապարհին իւր ձախ կողմը ձգելով 4 գիւղեր՝ որոնք
 չունին յիշատակաց արժանի բան մը , 23րդ քիլոմէթ-
 րին վերայ կը հասնի Ռէմլէի կայարանը . - Ռէմլէ , Տէս
 ել 20 . - Մեկնելով Ռէմլէէն 26-27 քիլոմէթրի վե-
 րայ ձախակողմէն կը տեսնուի Էլ - Պերրիէ գիւղը որ
 շնուած է հոգէ եւ փայտէ . գարձեալ նոյն կողմը
 բլուրի մը վերայ կը գտնուի Աղասըսէ անուամբ
 Թիւրքէլմը որ Թէեւ մանաւոր նշանակութիւն մը

ղեցի մի շինեց, ուր 414 թուականին Քրիստոսի ժողով մի եղաւ ընդդէմ Պեղազիոսի, որ կ'ուրանար սկզբնական մեղքը և Աստուածային շնորհաց պիտանաւորութիւնը: Մալահէտտին իշխանի օրովն Մահմէտականք տիրելով սոյն քաղաքին, եկեղեցին աւերեցին եւ մէկ մասին վրայ ալ մզկիթ մը շինեցին մէկ շէրէֆէսլ մինարէ մի կանգնելով. մնացեալ մասին տեղւոյն սեփհականութեան իրաւունքին վրայ, Յունաց եւ Լատինաց մէջ, տարիներ

շունի, բայց սոյն բլրին տեղն էր հինն Գաւէր: որ ունի պատմական յիշատակներ. Յէ. յ. 33: յ. 12: յ. 22: Յ. Գ. Թագ. Թ. 16: - 30 քիլոմէթրի վերայ ճանապարհին ձախ կողմը կը գտնուի Նտով, որ հաւանականօրէն կը թուի լինիլ հինն Նտամ զոր Յետասուա Յուգայի ցեղին. Յէ. յ. 41: Սոյն քաղաքը այժմ Մահմէտականաց մեծ գիւղ մը եղած է, որոյ աջակողմը բաւական հեռու կը գտնուին Ալլափի աւերակները, որք շէն այնքան նշանաւոր. - 31 քիլոմէթրի վերայ Ճիշտ աջակողմը կը նշմարուի Դիբան որ երէական գաղթականութիւն մը է: Սորա մասն է Ա. Գի որ հնոյն Ակկարանի տեղւոյն վերայ կը գրանուի. Ակկարան Յետուայ ժամանակ փոշտացւոց հինգ քաղաքներէն մին էր, զոր Յետու Աւետեաց կրկին

առաջ վէճ ծագեցաւ, բայց ՚ի վերջոյ Յունաց սեփհականութեան իրաւունքն հաստատուեցաւ, որով սկսան նորո գութիւններ ընել եւ պայծառացնել. և 1872 ին փառաւոր եկեղեցի մը կառուցին նոյն տեղոյն վրայ:

7000 ի մօտ բնակիչ ունի, որոց մեծագոյն մասն Մահմետական են եւ մնացեալ մասն Յոյն, քանի մ'ալ Լատին կայ:

բաժանման ժամանակ Յուդայի ցեղին տուաւ, Յէսու ժե. 43. և յետոյ ՚իանի ցեղին անցաւ, Յէս. ժթ. 43. — Ակիարոն նշանաւոր է տապանակին գերի տարուելով և նորէն իսրայելացւոց տրուելուն համար. Ա. թագ. Ե. 10. 2. 1-18. այս քաղաքին մէջ կը պաշտուէր Ճան. Ճիկ աստուածը Դ. թագ. Ա. 2. սորա աւերը մարգարէացան, Աճոյն Ա. 8. Սոփո. Բ. 4. Զագա. Թ. 57. Ա. կարոն, որ այժմ Ասիլ, աղիւսէ շինուած տներով Մահմետական գիւղ մը է իբր 1,200 բնակչօք որք ընդհանրապէս կ'ըլաղին երկրագործութեամբ: — Սուրա Ճիշգ աջակողմը կը տեսնուի Զարնուս աննշան գիւղօ. — 32 քիլօ. ի վերայ աջակողմը կ'երեւի բլրակ մը որոյ վերայ ժամանակաւ կը գտնուէին մի քանի շինութիւններ, որոյ հետքը միայն մնացած է այժմ:

ՌԷՄԼԷ

Ռէմլէ՛ ըստ պատմութեան Լատին կրօնաւորաց՝ հին Արեմաթիա ըսուածըն է, որ էր հայրենիք Յովսէփայ եւ Նիկողիմոսի, որոնք Քրիստոսի մարմինը պատելով գերեզմանին մէջ դրին: Ռէմլէի կից է յանուն Քառասուն Տանկանց Աշտարակը, որք Սեբաստիոյ մէջ նահատակուեցան. այս տեղս հին ժամանակ եկեղեցի էր, Գաւիթին մէջ տեղը

— Ասոր մօտ գէտ 'ի հարաւ կայ հին Քահիճ մը որ աներեւութանայու մօտ է, կայ նաեւ ազբիւր մը և ջաղացքի մը աւերակները: Դարձեալ աջակողմը բայց մի քիչ հեռուն կը նշմարուին Մանսուրէ և Էլ-Էնդար աննշան գիւղերը: — ՅՏ քիլօմէթրի վերայ ձախակողմն կը տեսնուի Էլ-Խալփա կոչուած աննշան գիւղը. ապից մեկնելով մինչեւ Բէլսասիսի աւերակները կ'երկարի Ակկարոնի (Ա.քիբ) ճանապարհը. ուսկից երկու երինջներն ուխտի տաղանակը կրող սայլեն լծուելով առանց սայլավարի հրաշիւք իմն ուղղակի գիմեցին 'ի Բեթսամիւս: Ա. Թագ. 2. — ՅՄԴ քիլօմէթրի վերայ Ուսպի — Սորսը երկաթեայ կամուրջէն հ'անցնուի: — առ հասարակ այս տեղ կը թուի լինել Սուլէի: պատմական հովտը ուր կը բնակէր Սամբ:

փոքրիկ մզկիթ մի կայ, եւ աշտարակին ծայրը կ'եղնուի 113 աստիճաններով:

Ուէմլէն միջին դարուն մէջ բաւական շէն քաղաք մ' էր՝ պարսպապատ եւ 12 դռներով, իսկ այսօր աղտեղի եւ աւերակներով լեցուն փողոցները կ'երեւին, 'ի բաց առեալ երեք ազգաց վանքերը:

Հայոց վանքը և նորա փոքրիկ մատուռը շինուած են սուրբ Գէորգայ անուամբ: Ունի Տեսուչ վարդապետ մի եւ թարգման՝ հանդերձ քանի մի միա-

տանի նենգաւոր կինն Դալիլա և ևս փղշտացիներն բռնելով զՍամփոսն աչքերը փորեցին և տարին բանտարկել 'ի Գաղտ. Դոս. ԺՁ:— ՅՅրդ քիլօմէթրի վերայ է Սեճեփի կայարանը, համանուն փոքրիկ գիւղը կը տեսնուի աջկողմը բարձրութեան վերայ: Այս տեղ կայ գեղեցիկ ազբեր մը և ջրաղաց մը: Մի ուրիշ ազբեր եւս կը բլդի գիւղին եւ երկաթուղւոյ ճանապարհին մէջ տեղէն:— 42 քիլօ.ի վերայ ձախ կողմը զառիվայրին վերայ կ'երեւի Ռոֆտո անուն աննշան գիւղակը: 49 քիլօ.ի աջկողմը կը նշմարուի Խերդէն-այն-լոմնոս է նախկին Բեթսամիւս քաղաքին տեղը: Բեթսամիւս պատմական տեսակէտով աւելի նշանաւոր է ընդ մէջ Յուգայի և Խորայելի եղած պատերազմաւ: Երբեմն վարտեցաւ Ամասիա Յուգայի ութերորդ թա-

բանով: Ուխտաւորք հոս եկած ժամանակնին դարպասական տուրք չեն վճարեր, ըստ որում Յոպպէ կուտան երկուսը մէկտեղ: Քանի մի ժամ միայն հանգստանալէն յետոյ ճանապարհ կ'եննեն ուխտաւորք դէպ յԵրուսաղէմ ուղեւորելու, որ եօթը ու կէս ժամու ճանապարհ է:

Անքէն մեկնելով և 10 րոպէ յառաջանալով Տաճկաց գերեզմանատունը կը հասնուի, ուրկէ կը սկսի դարձեալ Սարծի դաշտը: Ասկէ մինչեւ

գաւորն . Դ. Թագ. յԴ. 12-14. և հրաշիւք իմն ուխտի տապանակը փղշտայններէն գառնալովը . Ա. Թագ. 2. — Սոյն պատմական քաղաքն այժմ բնակիչ չունի. իւր տներակները կը տարածուին երկու ոչ շատ բարձր մերձակայ բլուրներու մէջ տեղ, մէկէն միւսը: Արեւելեան բլուրին մօտ կը տեսնուի միայն Գող-Շամրան-էլ-Ճաղպար (Գերեզման հղորագունին Սամֆունի) կուշուած թիւրպէն: Ատր հարաւակողմը հեռեան 48 վայրկեան հեռաւորութեան վերայ կը բարձրանայ Պէյ-ճամալ, որ պէտք է լինի նախկին Եօթաւորը երկու պատճառներով. 'Եսի' ըստ Ս. Գրոց թաղուած է Սամֆուն 'ի մէջ Սարտի և Եօթաւորի . Դագ. յՁ. 21. որ շատ ճիշդ է եթէ Գող-Շամրան-էլ-Ճաղպարը բնորակնիք Իսրայելի հաժկու գառաւորին գերեզման

Էլ-Պերրիէ գիւղը՝ որ աջ կողմը կ'իյնայ, 20 բոպէ է. ճանապարհին՝ կամուրջէ մի կ'անցնուի, և տեղ տեղ աջ և ձախ դին կ'երեւին պահապանաց աշտարակներ, որոնք 1860 ին Աւրէյա փաշային ժամանակ շինուեցան ուղեւորաց ապահովութեան համար: 10 բոպէ եւս յառաջանալով՝ ձախ դին կ'երեւի Էննայէ ըսուած Տաճկաց գիւղը. և 25 բոպէէն աջ դին բարձր բլրի վրայ Ադո-ւղոյէ ըսուած Լիւլլէն՝ և ձախ դին ուրիշ Լիւլլէ մի՝ Քոֆր — Դասլ անուն հին

նասեզնն. Ելկորդ. շրջակայքի բոլոր բնակիչք հաւատարի կ'առնեն թէ Պէյլ-ձեմալէ նախկին անունն է Իսլամադ: Սոյն հի՛, քաղաքի մէկ բարձր բլրոյն վերայ կանգնուած է այժմ՝ երկրագործական դպրոց մը զոր 1868 ին հիմնած է Լատին վարդապետ մը և նուիրած Սալեզեան միաբանութեան:

Խէրղէլ-այն-Շեմէն (Բէլսափա) ոտքով մէկ ժամ դէպ ՚ի հարաւային արեւմուտք քայելէն վերջ Պրէյճ անուն գիւղակի առգիի կողմը կը տարածուի ՚Իտղուէի մի քանի մնացորդները որ հաւանականաբար է հինն Թաճնալու. — Թաճնալու էր քաղաք Յուգայի, Յէ. ԺԵ. 10. և Սամիսոնի օրինաւոր կնոջ հայրենիքը. Սամիսոն գեռաստի Փզշտուհին իրեն կնութեան ինդրելու համար իւր ծննդայ հետ գացած ատեն ճանապարհին

գիւղի մի աւերակներով պատած , յետոյ կը հասնինք Էլ-Քո-դապ գիւղը , որ ձախ դին կ'իյնայ : Սոյն գիւղիս սարադաշտէն վար իջած տեղը Սարօնի դաշտին վերջին մասն է . ասկէ դէպ յարեւելք լեռան ստորոտը կ'երեւի Պէյր-Նո-պա կամ նախկին Նոր քաղաքը , որ Աքիմելէք քահանայապետին հայրենիքն էր , նստ' որ Գաւթի մաւոցց Առաջաւորաց հացը :

Վերոյիշեալ սարադաշտէն վար՝ կամուրջի մի վրայէ անցնելով եւ 40

պատահեցաւ առիւծի մը կորեան՝ որոյ կզակը բռնելով երկուքի բաժնեց առանց որ և է զէնք մը ունենալու . Դապ . ԺԳ . Ծ-7 . - Այժմ Թամաթայի աւերակները միայն յայտնոյ Պրէյճ գիւղի բլուրի մը կողին վրայ ցրուած են . Պրէյճ գիւղն ալ Թամաթայի աւերակներէն առնուած շինուածանիւթով կառուցուած է ու բազմաթիւ ջրամբարներէ ուրիշ նշանաւոր բան մը չունի : - 48 քիլօ-ի ձախակողմը բարձր բլուրի մը վրայ արմուեանց մը հովանոյն տակ կը նշմարուի Թիւրպէ մը որ կը կոչուի Շէյի՝ - Սամար . - Սարաաի և շրջակայ բնակչաց բնածին համեմատ Շէյի - Սամար է եղբայր Սամիսնի : - Սոյն Թիւրպէին հեռախային արեւելեան կողմը նոյն բլրին վրայ կը ստաւ ծուխ Սարա գիւղը , որ նոյն է ընդ հնոյն Սարաաի . -

րոպէ յառաջ գնալով՝ աջ կողմի վրայ կը հանդիպի պղտիկ աղբիւրակ և բլուր մի՝ որու վրայ է Լաւրոն ըսուած կիսաւերակ գիւղը :

Աւանդութեամբ կ'ըսուի թէ հոս էր եգիպտացի Դեմաս անուն՝ բարի աւագակին բնակարանը : Սոյն բլրին քով կը վերջանայ Սարծի դաշտը և կը սկսին Գուդայաստանի լեռները :

Լաւրոնէն իբր ութ րոպէ՝ ձախ կողմն է հին Եմասոսը . այս քաղաքը շատ պատերազմներ տեսներով աւել-

Սարաս 'ի հնումն Գուդայի ցեղին կը վերաբերէր , զոր յետոյ Յեսու Դանին տուաւ . Յէս . ժն . 35 . ժԹ . 40-41 . Սարաս էր նաև հայրենիք Մանուէի՝ հօրն Սամիսոսնի : — Սարաս ունի այժմ 350-400 բնակիչ որ Մահ մետական են և հողագործութեամբ կը պարապին : —

50 քիլօի վրայ է Տէյր — Աղանի կայարանը : Համա նուն գիւղը կայարանին հարաւային արեւելեան կողմը գտնուող լեռան դառիվայրի աջ կողմը շինուած է ՚ Տէյր — Աղանի բնակիչները հողագործ Մահմետականներ են և կը հաշուին իբր 1200 անձ . — Մէջը կը գլու նուի բաղմաթիւ անոյշ ջրոյ հորեր և շատ մը ձիթե նիներ . — Չախակողմը փոքրիկ բարձրութեան մը վերայ կը նշմարուի Արդոֆ գիւղը . Անդդիացիք մի քանի տարի յառաջ սոյն գիւղի սեփհական հողերուն մեծ

բեցաւ, յետոյ վեապասիանոս կրկին շինելով Նիկոպոլիս անուանեց։ Ասոր մէջ դեռ կը տեսնուի խիստ հին Եկեղեցւոյ մը աւերակ մասեր յանուն Եօթն Մակարայեցւոց։

Ասկէ շարունակելով ճանապարհը 20 վայրկեան, պահապանաց երկու աշտարակներ կը հանդիպին, եւ ճանապարհին վրայ տեղ տեղ ջրի ակեր կը գտնուին. երկրորդ աշտարակին քովերը, որ ձախ կողմը կ'իյնայ, ջրհոր մի կայ որ Պիր—Էյոպ կ'ըսուի։ Յրոպէ

մասը և բուն Արգուֆի տեղւոյն մէկ մասը գնելով՝ մտերս շինութիւններ կառուցին այդ տեղ. — Արգուֆի բնակիչներն են իբր 200 անձ բոլորն ալ Մահմետական որք հողագործութեամբ կ'ըբաղին։ — Այս տեղւոյն մտ՝ Ոստի — Բրէխտս կոչուած քարաշէն կամուրջէն անցնելով՝ որ կ'անուանի նաև Ոստի — Ինձիլ, հուզայ Յուգայի լեռները մտնելու անցքը. — Սոյն լեռները մտնելու համար պետք է անցնիլ Ոստի—Սուքազէն որ հոս Ոստի — Իոմոյ)էլ անունը կը կրէ. երկու ծառախիտ և զառիվայր լեռանց մէջ տեղ յոյժ գեղեցիկ և նկարչական վայր մը է. — Երկամուղւոյ գիծը կը յառաջանայ դեպ ՚ի հայտնակողման լեռան հիւսիսային կողմը մինչև 63 քիլո.ի վերայ որ ձախակողմը կը թողու Ոստի—Իոմոյ)էլը Ոստի—Պերդիլը երթալու

եւս յառաջ՝ կամուրջ մի կայ, ուսկէ անցնելով ձախ դին բարձրկեկ տեղւոյ մի ծայրը հին ու երեսի վրայ Թողուած առն մի կը տեսնուի, այն է Տէր-Էյրուզ ըսուածը, որ կը նշանակէ Յորայ վանքը։ Ասկէ 15 բուսէ կը տեւէ Պապ-Էլ-Վափ (ձորադուռ) ուր ճանապարհորդաց հանգստանալու պանդոկ մի կայ։

Պանդոկէն ելնելով անմիջապէս կը մտնենք Յուդայաստանի լեռներուն կիրճը, եւ երկու շարք լեռանց մէջէն անցնելով՝ 40 բուսէէն՝ Սարխ գիւղի ձի-

համար։ 65 քիլօի վերայ աջակողմը պրուստական բլուրի մը ծայրը բարձր կաղնիի մը ստորաք կը տեսնուի Տէր-Էլուէյի անուամբ շրջանակաձեւ գիւղը։ Ուր կը գտնուի պամուկնի մը։ - 67 քիլօի վերայ կաղնեայ վերի գին աջակողմը կ'երեւի Էր-Բաւ կոչուած անշան գիւղակը։ - 73 քիլօմէթրի վերայ է Պէրդիլի կայարանը։ - Ս. Գրոց մէջ յիշուած Բեթէր մը կայ։ Երգ. Բ. 17. բայց ստոյգ չէ որ մեր այս Պէրդիլը եղած ըլլայ։ -

Պէրդիլը աւելի նշանաւոր եղած է Անգրիանոսի կայսրութեան ժամանակ (138. Յ. Բ.) որ առեն Պաղեստինիանակ հրեայք գերազայն ջանք մը ըրին հոսով-մայեցւոյ գեմ իրենց անկախութիւնը վերստանալու համար, այլ 'ի զուր. որովհետեւ հրեից զօրագլուխը

Թաստանին մէջ կ'եննենք , լերան ոտ-
քը՝ աջ դին՝ ջրի պզտիկ ակ մի կայ՝
Այն — Շափե կոչուած , բայց ջուրը շատ
լաւ չէ : 20 բոպէէն կը հասնինք Էկնուր
ըսուած գիւղը , եւ անկէ 30 բոպէ ալ
յառաջանալով Կարիափ — էլ — էծնապ գիւղը
կուգանք , որ ալ կողմի բլրին ծայրը
չինուած է : Այս գիւղը որ միւսնե-
րուն քով աւելի նշանաւոր է , Ապրողը
կը կոչուի վաթսուն տարի է 'ի վեր ,
իւր մէկ Շէյխին անուամբը , որ երե-
ւելի էր իւր բռնութիւններովը եւ

որ իւր քաջերուն հետ 'ի Պեգդիբ ամրացած էր , վեր-
ջագէս երկար պաշարուած յետոյ զարհուրելի պար-
տութիւն մը կրեց Հուսիմայեցիներէն և որոնք տիրեցին
Պեգդիբ քաղաքին : — Այժմեան գիւղը հաւանակա-
նաբար ստորին քաղաքի տեղն է . ունի քաղցրահամ
ջրոյ գեղեցիկ աղբիւր մը որ կը թափի աւազանի մը
մէջ և անտի հոսելով կը ջրէ բազմաթիւ ածուներու
բաժնուած պարտէզներ : Բնակչաց թիւն է 600 . բա-
լրն ալ Մահմետական են և կ'ըսաղին երկրագործու-
թեամբ :

74 քիւօի վերայ ձախակողմէն բարձր նեղ անջքի
մը ծայրը կ'երեւի Ուալանճ աննշան գիւղաւիլը . —
Գիւր մը անդին ալ կողմը կ'երեւին պտղատու ծառեր
և բանջարեղէնաց պարտէզներ , զորոնք կը ջրէ առատ

վանքերուն տուած վնասներովը. ուխտաւորաց վրայ անցատուրք դրած էր եւ շատ նեղութիւն կուտար աննոց : Իպրահիմ փաշայ 1830 ին ասոր ուժը խորտակեց, և հիմակ սոյն Շէյխին սերունդը յետին չքաւորութեան մէջ են :

Այս գիւղը հին կարիաթարիմն է, Յուդայի ցեղին մէջ : Այս տեղ Ամինադարայ տանը մէջ մնաց Տապանակը եւ Դաւիթ այս տեղէն տարաւ Երուսաղէմ, Փղատացիք իրենց քովէն հեռացնելէն յետոյ : Սեմէի որդի Ուրիա

աղբիւր մը՝ որ կ'անուանուի Այն - Հակէ : (Աղբիւր Ումնասորչի) որ է Փիլիպպոսի աղբիւրը, որոյ մասին պիտի ծանօթանամք յետոյ :

75 քիլօմէթրի վերայ ձախակողմը լերան մը վերայ կը տեսնուի գիւղակի մը մնացորդները . այս գիւղն է Խերդէն - այն - Աւէտ որոյ աւերակաց մէջ կայ աղբիւր մը որուն ջրերը կը թափին ջրամբարի մը մէջ, ուրկէ կ'երթան ջրել շրջակայ բանջարեղէնները . պտղատու ծառերը, այգիները և այլն :

77 քիլօմի վերայ ավակողմը երկաթուղին կը լծողու այգիներ տնկուած հովիտ մը որոյ մէջ կայ հեղեղատ մը և Պէլթ - Ղալա ու Բէթլէհէմ տանող նրբուղի մը : Սոյն հովտին (Ոսաթի - Ահմէթ) բարձրութեան վերայ (հիւս . . արեւելք) կը տեսնուին երկու շէնքեր, որոց

մարգարէն Կարիաթարիմէն էր, որ
 ողն քաղաքին և երկրին դէմ կ'ուղղէր
 իւր մարգարէութիւնները, որ Յովա-
 կիմ արքայն սպաննել տուաւ զինքը ։
 Երե՛ . ԻՆ . 20 ։

Այս գիւղիս մէջ հին եկեղեցւոյ մը
 աւերակներ կան, զոր Գաղղիոյ տէ-
 բութիւնը 1872 ին Ք . Դունէն խնդրե-
 լով ստացաւ 'ի պարգեւ՝ իւր ազգին
 համար ։ Հին եկեղեցին կառուցեալ էր
 յանուն Երեմիա մարգարէին, յորմէ
 եւ ոմանք 'ի լատինացւոց կը կոչնն

մերձաւորագոյնն է Սալէզեան միաբանութեան ժառ .
 վարժարանը ։

Կէս քիւօ . յառաջ մի և նոյն կողմը (աջ) կան մի
 քանի բանջարեղենաց պարտէզներ, որք Այն-Իսլո կո-
 շուած ազբիւրէն կ'ուսոգունն . — Հոն միայն մէկ տուն
 կայ ուր պարտիզպանը կը բնակի . — Սոյն կալուածը
 Երուսաղեմայ Բունաց պատրիարքարանին է ։

79 քիլոմէթրի վերայ աջակողմը կ'երևի Շարաֆաթ
 անուն աննշան գիւղակը որ բոլորակաձեւ բլուրի մը
 վերայ է ։ Չախակողմը բարձր տեղը կը գտնուի Մալհա ։
 Այս գիւղը հաւանականորէն հին Մագուան է, Ա . Թագ .
 Գրքին մէջ ։ Հոս Դաւիթ իւր երեք եղբայրը՝ Եղէ-
 արի, Ամինազարի և Սամաշի, որոնք կը ծառայէին
 Ասուրի բանակին մէջ, բերաւ չափ մը գարբի ա-

Գիւղ երեւիս Մարգարէի :

Այո՛ւղը անցնելով, աջ դին բարձր լեռան վրայ կը տեսնուի Մակաբայեցւոց հայրենիքը՝ հին Մովդիիմը, որ հիմակ Սոպոս կը կոչուի. այս տեղ Շմաւոն Մակաբէ՝ ծնողացը և եղբարց գերեզմաններուն վրայ եօթը բուրգ կանգնեց : Կան ոմանք որ Մովդիիմը աւելի հաւանաբար Լիւրդի արեւելեան կողմը երկու մղոն հեռու Մերիէ ըսուած տեղը կը դնեն, ուր կրնար Միջերկրական ծովէն ալ տեսնուիլ յի-

լևր : տասն հաց և տասը պանիր զօրապետին համար : Մուհա Մահմետականաց մեծկակ գիւղ մը է այժմ :

81 քիւլօի վերայ աջակողմը փոքրիկ դաշտի մը մէջ կը նշմարուի Պէյլ-Սաֆաֆա անուն Մահմետական անշշան գիւղակը : — Հոս կը մշակուին բազմաթիւ վարգենիներ, որոց համար սոյն տեղը կ'անուանուի Ուսփի -էլ-Ուսփ : որ կը նշանակէ հովիտ վարգերու :

82 քիւլօի վերայ կը տեսնուի Երբէւաղէմ քաղաքը նոյնպէս Ս : Համբարձման լեռան վերայ բարձրացած Ռուսաց հսկայաշէն զանգակատունը որ Պաղէստինու բարձրակէտերէն մին է : Ատոր անմիջապէս կը յաջորդէ Ռափայնոց հովիտը, զոր տեղացիք կ'անուանեն Պարսոս : — Սոյն ՚ի բնէ բարեբեր հովիտն պատմական տեսակէ-

չեալ բուրգերը . Ա . Մ . Կ . ԺԳ . 29 , 30 .

Այո՛ղջի՛ն 15 բոպէի չափ հեռա-
նալով կամուրջի մի վրայէ կ'անցնուի ,
հոն մօտերը աջ դին փոքր աղբերակ
մի կայ որ կը կոչուի Ա . Ե .—Տիւղ եւ ձախ
դին է բարձրկեկ գետնի վրայ Պէյլ—
Նափոսայ գիւղը : շանապարհին քանի
մի աննշան հնութիւններն 'ի բաց թող-
լով , և լեռնաձորերու մէջէ անցնելով
բարձր տեղ մի կ'ելնուի ուսկէ կը տես-
նուի ձախ դին Նեպի Սահուէլը , այն է
Ռամա 'ի լերինն Եփրեմի՛ Սամուէլ

տով նշանաւոր է Դաւթի փղշտացոյ գէժ երկիցս մղած
պատերազմօք և տարած յաղթութեամբը . Բ . Թագ .
Ե . 22 . — 83 քիւօ֊ի վերայ ձախակողմը փոքրիկ բարձ-
բութեան վերայ քանի մը շէնքեր կը տեսնուին , որոյ
տեղը կը կոչուի Քալաֆ . — Ըստ աւանդութեան հոս
բնակած և հոս թաղուած է ծերունին Սիմէօն՝ որ մեռ-
նելէն առաջ աշխարհի Փրկիչը տեսնելու և իւր բազ-
կաց մէջ աւնելու մեծ մխիթարութիւնն ունեցաւ .
— Ս . Մերունուոյն գերեզմանը անոք գտնուած յուս-
կան մատրան մէկ գետնափորին մէջ կ'երեւի :

Առաջները հոս միայն մէկ ածել աւերակ մը կը
տեսնուէր բայց 4 տարիէ 'ի վեր նորոգուած է ու նոր
շինութիւններ ալ եղած են գլխաւորապէս Յունաց նոյն
ատենուած Պարթաւրքի ձեռք :

մարդարէի հայրենիքը, 10 բուպէ յառաջանալով իսկոյն հեռուանց կ'երեւի Յովհաննու ճննդեան գիւղը՝ Այն-Քարիմ, ուր մեր այցելութեան ժամանակ պիտի տեսնենք: Ասկէ եւս 10 բուպէ դէպ 'ի յառաջ երթալով կը հասնինք Քարանիկ ըսուած գիւղը, որ ձախ դին լեռան ստորոտը շինուած է. գիւղին և ճանապարհին մէջ տեղը գեղեցիկ ձոր մի կը տեսնուի որու մէջ կան կիտրոնի, լեմոնի, նարնջի եւ սերկեւիլի ծառեր, այգիներ ու ձիթենիներ, և վեց ջրիակեր

84. քիլոմէթրի վերայ աջակողմը կը նշմարուի Յունաց Ս. Եղիայի վանքը Մոսկուի շրջանը Զերակէս կայսրը շինել տուած է 777 գարուն. այն վանքին համար օտար պատմիչ մը կ'ըսէ թէ սոսկալի երկրաշարժէ մը հիմնայատակ եղաւ և 1165ին Մանուէլ Կոմնենոս վերաշինեց զայն և Գոսիթէոս անուն եպիսկոպոս մ'ալ նորոգեց 1678ին. — Վանքը քառակուսի շէնք մ'է և ունի եկեղեցի մը, որոյ կից բարձրացած է վանդակակերպ զանգակատուն մը զոր կանգնեցին Յոյնք 1889ին—

85. քիլոմէթրի վրայ ձախակողմը բարձրութեան մը վրայ աչաց առաջ կը պարզուի գեղեցիկ շէնք մը որ բարտասնաց մ'է: Սոյն մարդասիրական հաստատութիւնն կառուցուեցաւ 1888 ին Գերմանական ընկերութեան մը կողմանէ եւ կը կառավարուի սարկաւա-

կ'ոռոգանեն, որոնց մին ճանապարհին վրայ ձախ կողմն է և բաւական ջուր ունի: Հոն կ'երեւի հին գիւղի՝ և աշտարակի մը աւերակներ: Քանի մի քայլ ալ յառաջ երթալով քարաշէն կամ մուրջի մի կը հասնինք Գերեպինի ըսուած հեղեղատին վրայ շինուած, որ տեղէն Գաւիթ 5 քարերը ժողվեց Գողիաթու դէմ կռուելու իւր պարսատիկովը, և սոյն ձորին մէջ զինքը մեռցուց. Ա. Թագ. ԺԷ. 40-51. 25 բոպէ աւելի անդին դար 'ի վեր ճանապարհին վրան աջ կողմը աշ

գուհներէ . — Երկու սեւէ բորոսներ այս տեղ լաւ կը խնամուին և իրենց բան շինայուիբ, բայց հակառակ եղած այնքան զոհողութեանց և բժշկական ջանից՝ այդ ողորմելի հիւանդներ ապաքինութիւն չեն գտներ: Աջակողմը կ'երեւի պատ մը, որուն մէջն է Գլարիսեանց վանքը որ 1889 քն սկսաւ շինուիլ . — Գարձեալ աջակողմը Գլարիսեանց վանուց մօտ դէպ 'ի հիւսիս կը գրտնուի Չար-Խորհրդոյ Լեւոր, զոր տեղացիք կ'անուանեն Ճեղեւ-ապու-Լօր (Յուլին հօրը Լեւոր), և որոյ մասին յետոյ պիտի կարդանք :

87 քիւօի ձախակողմը տարածուած է Գերմանական գաղթականութիւն մը . — Սոյն գաղթականութեան սկզբնաւորութեան թուականը 1871էն անդին չանցնիր . — Գաղթականներն գրեթէ բոլորն ալ արհեստա-

տարակ մի և ձախ կողմը լերան մի ստորոտը Պեյի-Խթա գիւղը կը տեսնուի, և անկէ քիչ մի անդին նոյնպէս ձախ կողմն է Լիֆոպի ձորը եւ անոր մէջ Լիֆոպ գիւղը, որ ջրի աղբիւրակ մի ունի: Շարունակելով ճանապարհը Ծրոպէ, ձախ կողմը պահապանաց աշտարակ մի կը հանդիպի, և կ'ըսկսին այս տեղաց արեւելեան կողմը Ս. Համբարձման լեռը եւ աջ դին Խաչավանքի ձորը երեւալ: Եւ երկրորդ աշտարակ մի եւս հասնել նուս Երուսաղեմը կ'երեւի:

ւոր և գործաւոր են. ունին մէկ մէկէ անջատ գեղեցիկ և կանոնաւոր տուներ և իւրաքանչիւր տուն ունի իւր փքքիկ և սիրուն պարտէզը. — Սոյն հասարակութիւնը կը հաշուի իբր 300 անձ որ բարեկեցիկ վիճակ ունին. դաւանութեամբ Բողոքական Եկեղեցւոյն կը վերաբերին:

87 քիլոմէթրի վերայ է Երուսաղեմի երկաթուղւոյ կայարանը: — Կայարանէն քաղաք գալու համար կառքի ճանապարհէն դէպ 'ի հիւսիս երթալու է որ կայարանի արեւելակողմէն կանցնի. 5-6 վայրկեանէն կը ներկայանայ Գեհանի ձորը զոր տեղացիք կ'անուանեն Ուսփի — Էւրոպոս կամ Ուսփի-Շուանէն. ասոր մասին յետոյ պիտի կարդանք. — Անցնելով այն ձորէն պէտք է դառնալ դէպ 'ի ձախ' որ կողմն է Պերսէդ-էս-Սուլթան և

Ճանապարհին երկու կողմը նոր շինուած գեղեցիկ տուէներ են և ուսումնական ու մարդասիրական հաստատութիւններ, որոնցմէ վերջը կը տեսնուի Ռուսաց մեծ վանքը, որու մէջ է նաեւ հիւպատոսարանը, որ 1858 ին սկսուելով ք տարուան մէջ լրացաւ : Երջն ուղղութեան վերայ կը տեսնեմք հասարակաց պարտէզը որ 13 տարի յառաջ սկսուած, իսկ դիմացը՝ Ճանապարհին աջակողմը՝ Ռուսաց վանքին և հասարակաց պարտիզին դէմ կը տեսնուի ընդարձակ գետին մը որ կը վերաբերի մեր

աջակողմը Աննի լեռը . — Ասկեց մի քանի վայրեան ևւս յառաջանալով կը հասնինք Յոպոլի ըրուած գուռը՝ զոր արտացոյց կ'անուանեն Պոպ-էլ-Խալիլ . — Սոյն գունէն ներս մտնելով, երկու կարգ խանութներու և զանազան շէնքերու առաջին ք քարքնկէցի չափ յառաջանալով՝ ալ կողմերնիս եկած առաջին լայն փողոցը մտնելու՝ և միքիչ յառաջ գնալու եմք, հաս ձախ կողմերնիս կ'իյնայ Անգղիացոց ժողովարանը և գիմնոչնիս կուգայ զգրանոցը . — Զորանոցի քովէն առջի ուղղութեան ք վայրեանի չափ ևւս առաջ երթալով կը հասնինք մեր Արարչ Բովակեանց գերահռչակ վանքը :

վանքին և որուն վերայ զանազան շէնքեր կառուցուած են, նոյնպէս մեր վանքին կը վերաբերի նոյն ուղղութեան վերայ ճանապարհներով շրջապատուած կարգմը հոյակապ շէնքեր և դարձեալ ուրիշ նոր շէնքեր, 1890 էն սկսած եւ վերջին օրերս լրացած՝ որոնք կը պարունակեն բազմաթիւ մթերանոցներ, մեծամեծ հիւրանոցներ և զանազան բնակարաններ և տուններ:

Ասկից մի քիչ յառաջ գնալով եւ նորաշէն խանութներու մէջ տեղէն անցնելով կը հասնինք Յոպպէի դուռն՝ զոր Արարացիք Պապ-էլ-Խալէլ կը կոչեն, ուրկէ կը մտնուի քաղաքը:

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Երուսաղէմ քաղաքը, բաց ՚ի իւր պատմական դէպքերէն, որով բոլոր ազգաց առջեւ երեւելի եղած է, նաեւ մասնաւորապէս սուրբ համարուած է

Քրիստոնէից համար, վասն զի այս քաղաքիս մէջ Տէրն մեր Յիսուս Քրիստոս աշխարհի փրկութիւնը կատարեց:

Երուսաղեմայ բնակչաց թիւը կրնայ հասնիլ մօտ ութսուն հազարի, որոց գրեթէ կէսը կը բաղկանայ Հրէաներէ, չորրորդ մասը Մահմետականներէ եւ մնացածը՝ այլ եւ այլ ծէսեր ունեցող քրիստոնեայներէ: Հայ ժողովրդոց թիւը եօթ հարիւրի կը հասնի:

Ուխտաւորք, ինչպէս ըսինք, Յուպէի դռնէն ներս մտնելով 50 մեդրի չափ յառաջ՝ աջ կողմի ընդարձակ փողոցը կ'առաջնորդուին. ու Գաւթի բերդին եւ զօրանոցին առջեւէն անցնելէն յետոյ, ճանապարհը կը նեղնայ, եւ կամարի տակէ անցնելով շիտակ սուրբ Յակովբայ հոյակապ վանուց գրան առաջը կ'ելնեն. Ներս մտնելով վանքին Հիւրընկալ վարդապետը կամ նա չգտնուած ժամանակ սենեկատանը կ'առաջնորդէ զիրենք դէպ 'ի հոգետունը, ուր քիչ մի հանգստանալէն եւ սուրճ խմելէն յետոյ, Հիւրըն-

կալ վարդապետը կառնու կը տանի զիրենք Եկեղեցին, եւ սուրբ Էջմիածին անունով Եկեղեցւոյն դռնէն ներս մտնելով կարգաւ կը նստին Եկեղեցւոյ մէջ, ուր Գարպասընկալ եպիսկոպոսը, կամ վարդապետը բարեպաշտ ուխտաւորներէ Գլխադրի անուամբ մասնաւոր եւ որոշեալ մէկ մէջիտ սուրբը ընդունելէն յետոյ, անոնց անունները Գարպասական տօմարին մէջ կ'արձանագրէ, եւ Պահպանիչ ասելով կը զրկէ զանոնք սուրբ Յակովբայ Եկեղեցին, ամեն մէկին ձեռքը մոմեր տալով, որք Ս. Գլխադրի առջեւ ծնկան վրայ կարգաւ կը շարուին: Այն ժամանակ կը սկսին անմիջապէս դասին մէջէն « Որդւոց որոտման » քաղցր շարականը երգելու, եւ վարդապետներէն մին շուրջառաւ սուրբ Ստեփաննոսի մատուռէն դուրս կ'ելնէ խնկարկելով, և Գլխադրի մատուռը կը մտնէ, և դէպ 'ի ուխտաւորաց դառնալով համառօտ ծանուցումով մի նոցա գալուստը շնորհաւորելով, և իւրեանց ճանապարհորդ

դաժեան նպատակը՝ որքան սուրբ և նախրական լինելը յայտնելով, կը յորդարէ զիրենք ջերմեանդ ոգւով ներկայանալու թէ՛ ՚ի սուրբ Գլխագիր եւ թէ՛ բոլոր տնօրինական սուրբ Տեղիքը՝ Յետոյ երկրպագել տալով նոցա սուրբ Եկեղեցւոյն մէջ գտնուած սրբազան խորանները, կ'առնու կը տանի Հիւրընկալ վարդապետը ՚ի սեղանատուն՝ կերակուրի, յետոյ կը բերէ դարձեալ ՚ի Հոգեատուն, ուր տեղ նոյն գիշերն հանգիստ կ'առնուն։

Հետեւեալ առաւօտուն Գարդաւորնկալը իւր քանի մ' ընկերակից վարդապետներով Գարդասատուն կ'ենէ, ուր կը հրաւիրուին բարեպաշտ ուխտաւորք, իրենց մեծ ու գլխաւոր վարդասական տուրքն շնորհելու համար սուրբ Աթոռոյս։ Աւելորդ է ըսել թէ՛ գլխաւորապէս սոյն Գարդասական տըրոց վրայ կը կայանայ Ս. Աթոռոյն հաստատութիւնը եւ պայծառութիւնը, վասն որոյ բարեպաշտ ուխտաւորք նախ կը յորդորուին Գարդասատան Անդամնց

կողմանէ, որ չընկալեն իրենց հոգե-
ւոր Գարգասական աուրքն աննախան
ձաքար նուիրելու եւ իբրեւ Ազգային
անդամ, Ազգային վանուց պիտոյից
ձեռնառ լինելու: Յետ այնորիկ իւրա-
քանչիւր ուխտաւորաց իրենց արժա-
նաւորութեանը եւ թուոյն համեմատ
սենեակներ կը տրուին:

Ս. ԵԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԸ

Պատմական:

Իրուսաղեմի առաջին եւ գլխաւոր
պաքավայրը, որ բոլոր Քրիստոնէից ուխ-
տագնացութեան միակ նպատակը կը
համարուի, Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի Ս. Գերեզմանն է, Ս. Յարութիան
ըսուած հոյակապ տաճարին մէջ: Այս
տաճարիս մէջ հինգ այլ և այլ ազգեր
ընկերովի իրաւունք կը վայելեն և աւ-
տուածային պաշտամանց արարողու-
թիւնը կը կատարեն իւրաքանչիւր ազգ

ըստ իւր եկեղեցական կարգաց : Այս
 ազգերն են՝ գլխաւորապէս Հայք, Լա-
 տինք, Յոյնք, և իմասնաւորի Ղբտիք
 եւ Ասորիք : Առջի երեք գլխաւոր ազ-
 գերը՝ նաև Ղբտիք, իրենց սեփական
 եկեղեցի և մատուռներէն զատ, ունին
 նաեւ բնակութեան տեղի սոյն տաճա-
 րիս ներքին կողմը, վասն զի մեծ դուռը
 հասարակօրէն գոց կը մնայ և անոր բա-
 նալիները դռնապան Տաճկաց քով կը
 պահուին : Այս տեղ բնակող միաբան-
 ները չեն կրնար ըստ կամաց իւրեանց
 անկէ դուրս ելնելու . դուրս գտնուող-
 ներուն հետ մեծ դրան վրայ եղած
 փոքր դռնակէն միայն հաղորդակցու-
 թիւն կրնան ընել, ուսկէ ներս կը
 տրուին նաև իւրաքանչիւր ազգի միա-
 բանից օրական կերակուրը՝ եթէ մեծ
 դուռն գոց ըլլայ : Հայք, Լատինք եւ
 Յոյնք միայն իրաւունք ունին սուրբ
 Գերեզմանի ճակտին վրայ կանթեղներ
 վառելու, իսկ ներսի կողմը սոյն երեք
 ազգերէն զատ Ղբտիք եւս կանթեղ
 ունին . նոյնպէս Պատանատեղւոյն վրայ

և մնացած մասերուն մէջ՝ այլ եւ այլ պատկերներու առջեւ :

Առջի երեք ազգաց Տեսուչ վարդապետները երբ որ կ'ուզեն՝ իրաւունք ունին պահանջել դռնապան Տաճիկներէն որ Սուրբ Յարութեան տաճարին դուռը բանան, իրենց Հանդիսաւոր տօն օրերուն եւ ուրիշ պէտք եղած ամեն պարագաներու մէջ : Այս դրան բացման համար փոքրիկ տուրք մի որոշուած է, որ կը վճարուի դռնապանաց՝ դուռը բանալ տուող միաբանութեան կողմէն :

Ս. Գերեզմանին վրայ Պատարագ մատուցանելու իրաւունքը միայն Հայոց, Յունաց և Լատինաց միաբանութեան սեփականուած է. իւրաքանչիւր ազգ իւր եկեղեցական պաշտամունքները կը կատարէ իրեն սեփական եղած մատրան մէջ և իւրաքանչիւր Ուխտատեղիքը թափօրիւ պտըտելու և աղօթելու սովորութիւն ունեցողներն, ինչպէս են Հայք և Լատինք, անխափան կը կատարեն՝ բաց 'ի Հանդիսաւոր մեծ :

Թափօրներէն . Հայք ամեն ուրբաթ , շաբաթ և կիրակէ երեկոյները , և պատահաբար ամեն անգամ որ նորեկ ուխտաւոր ունենան , իսկ Հասինք ամեն երեկոյն կը կատարեն հասարակ Թափօրը : Յոյնք միմիայն ուխտաւոր ունեցած ժամանակնին :

Աւանդութիւնը մեզ կ'ուսուցանէ որ նախկին Հրէաստանը Ադամին ընակութեան տեղն եղաւ , որ վաղվաղակի հոն ազաստանեցաւ երկրաւոր դրախտէն արտաքսուելէն ետքը . նա եւ այն երկիրս ընդունեց նախահօր մարմինը , որուն գլուխը Թաղուեցաւ այն տեղս որ կոչուեցաւ Կրանիօն (Cranion) որ կը նշանակէ տեղի գագաթան , այն է Գողգոթայն : Այս աւանդութիւնը մեզ ուսուցանողներն են Ս . Բարսեղ , Որոգինէս , Ս . Եպիփան , Ս . Հերոնիմոս և այլք : Յիսուս Թաղուեցաւ մերձ 'ի Գողգոթա , և յետ երից աւուրց յարեաւ մահուան զօրութեան յաղթելով : Քրիստոնէութիւնը հսկայաքայլ յառաջագիմութիւններ ըրաւ . Գողգոթան

և Գերեզմանը ուսկից Աստուծոյ Որդին
 յարութիւն առաւ, մեծ յարգ և պա-
 տիւ կ'ընդունէր նորընծայ հաւատաց-
 եալներէն : Տիտոս կայսրը Երուսաղէմը
 պաշարելու եկած ժամանակ, Յակովբ
 առաքելոյն յաջորդը՝ Սիմէօն կամ Շմա-
 ւոն, որ այն ժամանակ սուրբ քաղա-
 քին եպիսկոպոսապետն էր, քրիստո-
 նէից հետ Յորդանանէն անդին Բելլա
 քաղքին մէջ ապաստանեցաւ, և պա-
 շարումէն վերջը Երուսաղէմայ աւե-
 թակները, Գողգոթան և Ս. Գերեզմանն
 ժառանգելու համար վերագարձաւ, ու
 բոնք սկսան կրկին պատիւ ու յարգ
 գտնել :

Ս. Գերեզմանի մայր եկեղեցին, որ
 երկրորդ անգամ ⁽¹⁾ Հեղինէի եւ որդե-
 ւոյն Կոստանդիանոս կայսեր եւ մեր
 Տրդատ Թագաւորին ձեռօք շինուեցաւ,
 շատ անգամ ամբողջական և մասնակի
 կործանու մներէն յետոյ, վերջին ան-

(1) Առաջին անգամ սուրբ տեղերը շինող ու
 պահպանողն եղաւ Արգարոս, կին շէշայն Հեղինէ :

գամ 1868 ին մեծ գմբէթը նորոգուեցաւ: Չամանեան տէրութեան խնամք, և դրամական մասնակցութեամբ Ռուսիոյ եւ Գաղղիոյ կառավարութեանց, եւ կ'ըսուի թէ երկու միլիօն ֆրանք ծախք եղած է:

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ի ՏԱՃԱՐ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ

Տէրունական ուխտաւորաց սենեակները տրուելէն յետոյ՝ նոյն երեկոյին Հիւրընկալ վարդապետը կ'առնուկը տանի զիրենք: Սուրբ Յարութեան տաճարը ուխտ եւ երկրպագութիւն մատուցանելու: Նախ Ս. Յարութեան դբսի բակին մէջ Հայոց սեփհական Ս. Յովհաննէսի եկեղեցին ուխտ եւ երկրպագութիւն ընելով՝ ապա կ'մըտնեն 'ի Տաճարն Ս. Յարութեան և ուղղակի երթալով կ'ընդհանան Տեսչին, ըստ սովորութեան իրենց դարպասական տուրքը նուիրելու, որ է 33 դա-

հեկան (¹)։ Տեղւոյն ժամարար վարդապետներէն մին և կամ ուրիշ վարդապետ մի շուրջառազգեստ, Թափօրի անտրակ եւ մոմ 'ի ձեռին, նոյնպէս սարկաւազ մի շապիկով սաղաւարտ 'ի գլուխ և բուրվառաւ և անդ գտնուած վարդապետներով, դպիրներով, Թափօրի կ'ենէ հանդերձ ուխտաւորօք, և բոլոր Սրբազան տեղիքն ու մատուռները կը շրջագայեցնէ, իւրաքանչիւր Տնօրինական տեղւոյն համեմատ Ս. Աւետարանը կարդալով, եւ համառօտ ծանուցմամբ տեղեկացնելով ուխտաւորաց Յիսուսի Քրիստոսի նոյն տեղւոյն վրայ կատարած փրկագործ խորհուրդն, եւ յորդորելով զբարեպաշտ ժողովուրդը 'ի ջերմեռանդութիւն, երախտագէտ զգացմամբ լեցնելով նոցա սրտերը։ Ուրեմն սկսինք տեղագրել Ս. Յարութեան տաճարի շրջապատին մէջ բովանդակուած իւրաքանչիւր Ս. Տ-

(¹) Սոյն ողորմութեան տօրօք կը հոգացուի սուրբ Յարութեան տաճարին մշտավառ կանթեղներուն իւրջ, մոմը և ուրիշ զանազան պիտոյքները։

ղէբը , այն կարգաւ՝ որով թափօր կ'ելէ
նեն մերայինք :

Ա. Զորրոյ Բանօ . Նախ սուրբ Գե-
րեղմանի և Լատինաց եկեղեցւոյն առ-
ջեւէն անցնելով եւ դէպ 'ի աջ դին
ծռուելով կ'երթան առաջին սրբավայրը
որ ձախ դին կ'ընայ , որ է Քրիստոսի
չորրորդ Բանօը , որ մթին մատուռ մի է
և Յունաց ձեռքն է : Աւանդութեամբ
կ'ըսուի թէ այրի վրայ շինուած է , ուր
տեղ Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս եւ
երկու աւազակներն արգիլեցին մինչեւ
չարչարանաց գործիքներուն պատրաս-
տուիլը : Երեք մասերու կամ խորշերու
բաժնուած է , որով բանտարկեալներն
երեք անձինք ըլլալնին ցոյց կուտան :

Ներս չ'մտած , աջ կողմը դրան
քով վանդակի պէս բան մի կը նշմա-
րուի մեծկակ քարի մի վրայօք . և այս
քարը երկու տեղեաց ծակեր ունի փո-
րուած . Յոյնք այս տեղ մշտավառ կան-
թեղ մի ունին ու կ'ըսեն թէ՛ Յիսուսի
Քրիստոսի բանտարկութեան ժամանակ
իւր երկու օտքերը սոյն քարին ծակե-

բուն մէջ դրած էին եւ տակի կողմէն
երկուսն իրարու հետ շղթայած :

Բ. Սորբ Ղուկիանոսի սեղան : Յիշեալ
բանտէն դուրս ելնելով ուխտաւորաց
Քափորական հանդէսը, 12 մեդր հեռա-
ւորութեամբ ձախ կողմը կ'իյնայ սուրբ
Ղուկիանոսի նուիրեալ Յունաց սեղանը :
Ասիկայ էր՝ ըստ աւանդութեան՝ Փրկչին
մահուանէն յետոյ նորա սուրբ կողը
նիզակով ծակողը, ուսկէ բղխեց արիւն
և ջուր, և սոյն սքանչելեաց վրայ հա-
ւատաց Յիսուսի, եւ այս տեղս եկաւ
իւր գործած մեղաց վրայ ողբալու :

Գ. Հանրերից Բաժանման սեղան : Այս
կարգին վրայ՝ յիշեալ Ս. Ղուկիանոսի
սեղանէն երկու մեդր հեռաւորու-
թեամբ՝ կը գտնուի Հանրերից Բաժանման
Ս. Սեղանը՝ որ Հայոց սեփհական է :
Այս սեղանին տեղը դահիճները իրենց
մէջ բաժնեցին Յիսուսի հագած հան-
դերձները, « Բաժանեցին զհանդերձս
նորա վիճակաւ 70. Մար. ԻՁ. 35 :

Դ. Սորբ Լուսաւորչի Եկեղեցին : Քիչ մի
յառաջ երթալով նոյն ուղղութեամբ՝

դէպ 'ի արեւմուտք դուռ մի կը տեսնուի անփեղկ, ուսկէ 29 աստիճանաւ Հայոց սուրբ. Լուսաւորիչ եկեղեցին կ'իջնուի: Երկու սեղան ունի և առանձին դատով բաժնուած է. Աւագ սեղանը յանուն Ս. Լուսաւորչի և յաջակողմանը յանուն Ս. Կարապետի. ունի և գեղեցիկ գմբէթ մի չորս մարմարեայ սիւնի վրայ: Աւանդութեամբ կ'ըսուի թէ սուրբ Լուսաւորիչ հայրն մեր հոս եկած ու քիչ մի ժամանակ ճգնած է, վասն որոյ եւ իւր անուան նուիրած է եկեղեցին: Աւագ սեղանոյն ձախակողմն պզտիկ պատուհան մի կը տեսնուի, ուր տեղաց սրբուհին Հեղինէ ըստ աւանդութեան, կ'աղօթէր, երբ իւր հրաւանաւը խաչափայտը գտնելու համար գետինը կը փորէին: Այս տեղս ալ Հայոց սեփհակսն է, ուր մշտավառ երեք կանթեղ կը վառին:

Ե. Գիւփ-Խաչ: Նոյն եկեղեցւոյն արեւելեան հարաւակողմն եղած 13 աստիճան սանդուխով Գիւփ-Խաչի տեղը կ'իջնուի, ուր Լատինք յաջակողմն ա-

ուանձինն պատարագամատոյց սեղան՝
մ' ունին :

Յիսուսի թաղմանէն յետոյ նորա
չարչարանաց բոլոր գործիքները ըստ
սովորութեան Հրէից, պէտք էր որ հռ
ղին տակ թաղուէին, ուստի թէ խա
չերն եւ թէ միւս երկաթեղէն գոր
ծիքները բերին հոս նետեցին, որ փոս
ու ամայի տեղ մի էր խաչելութեան
տեղոյն մօտ, և հետզհետէ քաղքէն
դուրս հանուած աղբիւսով և աւերակ
ներու կոյտերով ծածկուեցան, Քրիս
տոսի 326 թուականին սրբուհին Հեղի
նէ Ս. Գերեզմանի և Գողգոթայի վրայ
տնկուած չաստուածոց արձանները կոր
ծանել տալէն յետոյ, սուրբ Երուսա
ղէմի Մակար եպիսկոպոսին, որ ժամա
նակի պատրիարքն էր, եւ քաղաքին
ծերունեաց հարց ու փորձ ըրաւ՝ թէ
ո՞ր արդեօք կրնայ գտնուիլ Քրիստոսի
փրկագործ սուրբ խաչափայտը : Այն
ժամանակ Յուդայ Աիւրեղ, որ ծերու
նեաց մին էր, սոյն տեղս նորա ցոյց
տուաւ, ուր փորել տալով, վերջապէս

երկաթի գործիքներն ու երեք խաչերը
 գտնուեցոն . բայց Քրիստոսի Տեառն
 մերոյ սուրբ Խաչը որն ըլլալը յայտնի
 չէր : Մակար Հայրապետ աղօթք եւ
 հսկումն ընել տուաւ բոլոր հաւատա-
 ցելոց , որպէս զի Աստուած ցոյց տայ
 ճշմարիտ խաչը : Նոյն միջոցին հոգե-
 վարքն հասած հիւանդ կին մի պատա-
 հեցաւ , ուստի սուրբ Հայրապետն ու
 Հեղինէ առին տարին երեք խաչերն ալ
 և կարգաւ հիւանդին մարմնոյն մօտե-
 ցուցին . առջի երկուքը զօրութիւն մի
 ցոյց չ'տուին , բայց երրորդը մօտե-
 ցուցած ժամանակնին անմիջապէս բը-
 ժչկուեցաւ մահուան դուռն հասնող
 կինը : Նոյն օրը սուրբ Հայրապետը նրն-
 ջեցեալի մի եւս պատահեցաւ որ Թա-
 դելու կը տանէին , և նոյն փորձը կրկ-
 նելով ճանչցաւ ճշմարիտ Աննայ փայտը
 և անոր սքանչելի զօրութիւնը , ըստ ո-
 Րում երբ Յիսուսի խաչափայտը միւս
 երկուսէն յետոյ ննջեցելոյն մարմնոյն
 մօտեցուցին , անմիջապէս յարութիւն

Ձ. Չաղանայ սիւն կամ Փուշ — պակի սիւն : Սուրբ Լուսաւորչի եկեղեցիէն դուրս ելնելով և դարձեալ ձախ թեւին վըայ կը տեսնուի Յունաց սեղանը , ուրուն միջավայրը երկաթեայ վանդակի մը մէջ կը պարունակի Չաղանայ սիւնին մէկ մասը , որ գորշագոյն կրանի-թեայ սիւնի մը կտոր է , և ըստ աւանդութեան Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասոր վըայ նստեցուցին երբ փշեայ պսակով կը պսակէին , թշնամանելով և նախատելով Պիղատոսի տանը մէջ , ուսկէ յետոյ հոս բերուեցաւ յիշեսլ ուլնը :

Է. Սորբ Գողգոթա : Փուշ պսակի սեղանէն քսան քայլաչափ դէպ 'ի ձախ դին յառաջանալով , Գողգոթային կը հասնինք , ուսկից 18 ոտք աստիճաններով վեր կ'եղնուի : Հոս է Սուրբ Խաչին տնկուած տեղը , որոյ վերայ բարձրացաւ Փրկիչն աշխարհի : Այս սրբավայրը որ Հայոց սեփհական էր , 1422 թուին Վրացիք յափշտակեցին , այժմ Յունաց ձեռքն է :

Ը. Տարածման սխալն: Գողգոթայի ձախակողմը կ'իյնայ եւ Լատինաց ձեռքն է, որ ըստ աւանդութեան կը կարծուի թէ Յիսուսի Քրիստոսի խաչի վրայ տարածուած և գամուած տեղն է:

Թ. Պարանայի: Գողգոթայէն վար իջնելով, անմիջապէս դէպ 'ի ձախ կողմն դիմացնիս կ'եննէ Քրիստոսի պատանուած տեղը, որ սուրբ Յարութեան տաճարի դրան դիմացը կ'իյնայ: Այս տեղս կարմրագոյն գեղեցիկ քառանկիւնի քարով մի ծածկուած է. երկու կողմը մեծադիր և փոքրադիր երկերկու զոյգ աշտանակներ կան երեք ազգաց, այսինքն՝ Հայոց, Յունաց և Լատինաց, և քարին վրայօք կարգաւ խոշոր և միատեսակ կանթեղներ մշտալոյս կը վառին, որոնք չորս ազգաց են, այսինքն՝ Հայոց, Յունաց, Լատինաց և Ղբտոց, ինչպէս կանթեղներուն վարի ծայրը կախուած պղնձին վրայի գրերը ցոյց կուտան որ ազգին ըլլալը: Հին ժամանակ այս սուրբ Տեղը գեղեցիկ մուլախիտով զարդարուած էր:

Յովսէփ Արեմաթացի եւ Նիկողե-

մոս Յիսուսը խաչէն վար առնելէն յետոյ այս տեղս բերին պառկեցուցին, որ անշուշտ հարթ ու հաւասար տեղ մի էր. և օծելով սուրբ Մարմինը՝ պատեցին մաքուր կտաւով ըստ սովորութեան Հրէից :

Ժ. Ութախափման պէտէ : Պատանատեղէն դէպ յարեւմուտք յառաջանալով, քսան քայլաչափ, Ղրտւոց սենեկի դռնէն, որ ՚ի հարաւ կը բացուի, մինչեւ վերնատան քարեայ սանդուխը գետեղուած Հայոց զգեստուց միակուտը պահարանին պրեթէ արեւմտեան ծայրին առջեւն է Ութախափման տեղին :

Ըստ աւանդութեան, Մարիամ սուրբ Կոյսն այս տեղէն տեսնելով առաջին անգամ իւր միածին Որդին խաչին վերայ բարձրացեալ, ուժաթափ եղած մարեցաւ եւ հեան եղող սուրբ Կանանց թեւերուն վրայ ինկաւ : Կամ ըստ այլ աւանդութեան այս տեղ կայնած էին սուրբ կանայք, երբ Յովնէփ ու Նիկողեմոս Քրիստոսի սուրբ Մարմինը մաքուր կտաւներով կը պատէին :

Յիշեալ տեղը Հայոց սեփհական՝ է. երկաթի ու բոլորակ ճաղով շրջապատուած ու վրան ջահ մի կոխուած : Այս ճաղիս քովի աստիճանները Հայոց վերնատունը կը հանեն :

ԺԱ. Իւղաբերից սեղան : Յիշեալ տեղէն քանի մի ոտք դէպ 'ի աջ դին կամարին տակովն է Իւղաբեր կանանց սեղանը , որ Հայոց սողգին սեփհական է : Այս տեղս եկան յիշեալ սուրբ կանայք մի. աշաբաթի (կիւրակէ) առաւօտուն Յիսուսի մարմինը խնկելու , որ արդէն յարութիւն առած էր :

ԺԲ. Սուրբ Գերեզման Կրկին : Իւղաբերից սեղանէն վեց մեդր դէպ 'ի հիւսիս , նորաչէն մեծ գմբէթի մի տակ և կլորաձեւ սրահի մի մէջտեղը կը տեսնուի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Ս. ԳԵՐԵԶՄԱՆԸ , եւ ընդհանուր քրիստոնէից երկրպագելի սուրբ Տեղը :

Սոյն Գերեզմանը երկու պղտիկ խորշերով բաժնուած ու ժայռի մէջ փորուած էր , առաջինը երկրորդին իբր դաւիթն էր , ուրկէ անցնելով երկրորդ

խորշը կը մտնուէր, ուր տեղ կար քարի մէջ փորուած մսուրի նման փոս մի, որ վիմափոր կամար մի եւս ունէր: Հեղի նէ Թագուհին սոյն տաճարը շինած ժամանակ գեղեցիկ զարդարելու համար այլակերպեց. մինչեւ 1808ին քանի մի ձեւերու մտնելէն յետոյ, յիշեալ Թուականին այրեցաւ սուրբ Յարութեան տաճարը, որ ըստ մեծի մասին տախտակեղէն էր, Գերեզմանն ալ քիչ շատ վնասուելով, Բարձրագոյն Գրան կողմէն նոյն ժամանակ Յունաց արտօնութիւն տրուեցաւ տաճարը նորոգելու որոնք գրեթէ առանց առջի ձեւը փոխելու՝ մարմարեայ քարերով եւ քանդակներով զարդարեցին յունական արձանագրութիւններով: 'Հրդեհէն առաջ Ս. Գերեզմանի շրջապատին վրայ Հայերէն գիրեր ալ գտնուիլը ծերունի միաբանք կը վկայէին:

Սուրբ Գերեզմանի դուռը դէպ 'ի արեւելք կը նայի, ուսկէ կը մտցուի առաջին խցեակը, որու մէջտեղ կանգնած կը տեսնուի մարմարեայ սիւնաձեւ

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

քար մի , որ Հրեւրաի մէջ կը կոչուի : Այս տեղն է սուրբ Աւետարանի Գանձոց ըսած տեղը , ուր կանգնած էր Հրեշտակին մէկը սպիտակ հագած : Այս մատուռին մէջ 18 հաս մշտավառ կանթեղներ կան . մէջտեղի եր Լատինաց է , աջակողման եր Յունաց , ձախակողման եր Հայոց եւ մէկ հաս Ղրաւոց : Այս մատուռին մէջէն երկրորդ դռնով մի կը մանուի Ս . Գերեզմանը որու մեծութիւնը թէ լայնութեամբ և թէ երկայնութեամբ երկու մեզրի չափ է : Շրջապատերուն մարմարներուն տակը դեռ կը տեսնուին բուն Գերեզմանի բնական ժայռ քարերը , զոր Գլխոյն Հեղինէ տաշելու կոկել տուած էր Զաքարիա մարգարէի գերեզմանին նման , որուն համար յետոյ պիտի խօսինք : Քրիստոսի Տեառն մերոյ բուն քնարանի տեղը հիւսիսոյ կողմն է , ժայռին մէջ փորուած , որուն կողերն եւ վրայի կողմը ճերմակ մարմարիաններով ծածկուած են , այնպէս որ բարեպաշտ ուխտաւորք ներս մտնելուն բնականէն թացեալ բան մի

չեն տեսներ, բայց ՚ի մարմարէ պատկերներէ և կանթեղներէ. Հոս եւս 43 կանթեղ կը վառին մշտավառ, որոց 13 ական հատը Հայոց, Յունաց և Լատինաց են, իսկ 4 հատը Ղրաւոց:

Սուրբ Գերեզմանի ներքին կողմը հիւսիսային դին երեք մասի բաժնուած է եւ երեք ազգաց կը վերաբերի. մէջտեղը Յունաց է, աջ կողմինը՝ յանուսից կողմը՝ Հայոց, եւ ունին յարութեան պատկեր մի՝ նկարուած կտաւի վրայ, եւ վեց աշտանակ ու ծաղկամաններ, ձախ կողմինը՝ սնարից կողմը Լատինացէ նոյն օրինակ պատկերով զարդարուած:

Սուրբ Գերեզմանի դրսի դրան երկու կողմերը բարձրիկի քարաշէն նրատարանաձեւ սեթեր շինուած են, որոց վերայ կան Յունաց կճեայ աշտանակները կերոնաբարձ, և ետեւի կողմերն են Հայոց և Լատինաց՝ պղնձէ մեծ աշտանակները՝ զորս Հանդէսներու, Պատարագի և Քափօրներու ժամանակ կը վառեն: Իւրաքանչիւր ազգ ունի եւս մէկ մէկ զոյգ քիչ մի փոքր աշտանակ:

ներս Սուրբ Գերեզմանի արտաքին դրան Ճակտին վրայ դարձեալ սուրբ Յարու-
թեան պատկերներ կան վրայէ վրայ ,
անմիջապէս դրան վրայինը Հսոց է ,
երկրորդն Յունաց՝ որ մարմարի վրայ
քանդակուած է , երրորդն Էլատինաց
որ կտաւի վրայ նկարուած է , որոնց
առջեւ մշտավառ կանթեղք կը վառին :
Մեր պատկերին առջեւինը Ս . Լ . ստորի
կանթեղ կը կոչուի :

Այս սրբավայրերէս դուրս թէպէտ
ուրիշ սուրբ Տեղիք եւս կան , յարգա-
նաց արժանաւոր , սակայն թափօրիւ
պտըտելու սովորութիւն չունին Հայք .
իւրաքանչիւր բարեպաշտ անձն , կրնայ
առանձին պտըտել , ծանօթ ընկերի մի
հետ , և իւր հետաքրքրութիւնը լե-
ցընել :

Ասոնք են միւս տեղերը .

Ա . Ղբարոյ սեղան : Սուրբ Գերեզմա-
նի կից արեւմտեան կողմն է Ղբարոց
սեղանը , որ սուրբ Աւետարանին Սնարից
կոչածն է , ուր տեղ նստած էր միւս
Հրեշտակը եւ աւետիս տուաւ Իւղա-

բեր կանանց « ԶԷ աստ, այլ յարեաւ որ
ըսելով: Այս սեղանս յառաջագոյն
Հայոց էր, ինչպէս կը վկայէ Հաննէ
վարդապետ (Երեւ 206), և կ'ըսէ թէ
եթում թագաւորն շինել տուած է.
Քամանակէ յետոյ այս սեղանը Ղբաւոց
տալով, նորա փոխարէն յեգիպտոս ու-
րիշ Եկեղեցի մի առած են մերայինք:

Բ. Յովէփ Արեմախի: Սոյն մատու-
ռին դիմացը դուռ մի կայ որ երեք
խորշի կամ խցի բաժնուած է մէջ առ
մէջ. առաջինը նախագաւիթ մի է,
ուրկէ աստիճաններով Հայոց ժամա-
րար միաբանից ննջարանն կ'երևուի.
Երկրորդ խորշը մատուռ մի է յանուն
Ս. Աստուածածնի. երրորդը գրեթէ
ժայռի մէջ փորուած մութ տեղ մի է,
քանի մի մանր և անկանոն խորշերու
բաժնուած, ուր առանց լոյսի անհը-
նարին է մտնել. և այս տեղն է Յով-
սէփայ Արեմաթացւոյն գերեզմանը:
Վասն զի՝ ըստ աւանդութեան այս
սուրբ անձը՝ իրեն համար փորած գե-
րեզմանին մէջ, Յիսուսը թաղելէն յե-

այս, փափագեցաւ որ ինքն և իւր ըն-
տանիքն ալ նորա գերեզմանին մօտ
տեղ մի թաղուին . ըստ որում նոյն
գետինը իրեն սեփհական կալուածն
էր, ուստի սոյն խորշերը այս նպատա-
կիս համար փորել տուած էր : Յիշեալ
երեք մասերն , որ Յովէփ Արեմաիայի կը
կոչուին , Հայոց սեփհական է , և Ասոր-
ւոց թոյլատրած են Պատարագելու
սուրբ Աստուածածնի սեղանին վրայ
երբ Ս . Յարութեան մեծ դուռն բաց
գտնեն : Մերայից կը Պատարագեն
երբ որ ուզեն :

Գ . Պարպէզ : Նոյն տեղէն ելնելով
և դէպ 'ի ձախ կողմը յառաջ երթալով
և Գերեզմանէն գրեթէ 12 մեդր հեռու
կը տեսնուի Լատինաց սեղանը Մարիամայ
Մագրաղէնացոյ անուամբ , որ ըստ մեզ
Պարպէզ կը կոչուի . ըստ որում Յիսուս
այս տեղ պարտիզպանի կերպարանքով
երեւեցաւ Մարիամու Մագդաղենաց-
ւոյ , որ երբ ձայնէն ճանչալով քովը
երթալ կ'ուզէր , ըսաւ Յիսուս . « Մի
մօտենար ինձ , վասն զի դեռ Հօրս քով

ելած չեմ, այլ գնահ իմ եղբարցս ըսէ ք
 թէ ես իմ Հօրս եւ ձեր Հօր քով պիտի
 ելնեմ, իմ Աստուծոյս և ձեր Աստու-
 ծոյն ո՞ Յովհ. Ի. 17. Սոյն պարտիզին
 վրայ երկու մշտավառ կանթեղ կան ք
 մին Հայոց և միւսն Լատինաց, թէ եւ
 երկու կանթեղն եւս առաջ Հայոց էր ք
 բայց 1631ին Պարսնտէր կոչուած Գրի-
 Կոր պատրիարքը կանթեղին մէկը եւ
 երգեհոնի ներքեւ եղած խուցը Լատի-
 նաց տալով, ասոնց փոխարէն վերնա-
 տնէն երեք կամար առած և մեր եկե-
 ղեցին գէպ 'ի երկայնութիւնն ընդար-
 ձակած է ք

Գ. Երբ՝ման ճապոտ: Պարտիզին հիւ-
 սիսակողմը ք աստիճանով վեր Լատինաց
 եկեղեցին կ'ելնուի: Լատինք կ'ըսեն թէ
 Յիսուս այս տեղ երեւեցաւ Մագդա-
 ղենացւոյն, վասն որոյ եւ եկեղեցւոյն
 անունը Երբ՝ման կը կոչեն: Սոյն եկեղե-
 ցիէն դուրս ելնելուն՝ ձախ կողմը դուռ
 մի կայ՝ որ է աւանդատունը, եւ ասոր
 մէջ եղած ճանապարհէն Լատինաց վեր-
 նատունը կ'ելնուի, որ սուրբ Գերեզ-

մանի վրայ կը նայի :

Ե. Ադամյ սփռնը : Պատանատեղւոյն դիմացը դուռ մի կայ , որ դէպ 'ի Գողգոթայի տակը կը բացուի : Ներս մըտլու ժամանակ աջ կողմը քարէ շինուած բարձրկեկ տեղ մի կը տեսնուի , որու համար Լատինք կ'ըսեն թէ Խաչակրաց առաջին թագաւոր Կոստըֆրոուայի կամ Գողգիֆոէտօսի գերեզմանն է , որ 1099ին տիրեց Երուսաղեմի : Չախ կողմը առաջնոյն նման երկրորդ քար մի կայ բարձրկեկ , եւ այս ալ նորա եղբօր Պտտուէն կամ Պալտաւինօս անուն թագաւորի գերեզմանն է , որ 1113ին մեռած է : Այս երկու գերեզմանները 1808ի կրակէն առաջ դուրսն էին , յետոյ երբ Յոյնք Ս. Յարութեան տաճարը նորոգելու արտօնութիւն ստացան՝ ներս առին զանոնք՝ ընդարձակելով Ադամյ մատուռը : Պատանատեղւոյն դիմացը դէպ 'ի հիւսիսային կողմը պատին կից եղող երկու կարգ աստիճաններուն տակն ալ Խաչակրաց ուրիշ իշխաններու տապանները կան կ'ըսուի :

Ագամայ մատրան ներսի կողմը պզտիկ փոս մի կայ, ուր տեղ ըստ աւանդութեան՝ նախատեղծ մարդոյն գլխոյն ոսկորը դրուած էր։ Այս տեղաց կ'երեւի նաեւ Գողգոթայի վրայ խաչափայտը տնկած ժայռին ճեղքուածը ։

Ձ. Հայոց վերնափունը։ Ասկէ ելնելով և Ուժաթափման տեղը գալով դուռ մի կայ, ուր տեղ է Հայոց Տեսուչ վարդապետին սենեակը, եւ դրանը քովի աստիճաններէն վեր ելնելով, վերնատունը կը հասնուի, որ երեք մասերու բաժնուած է, եւ Ս. Յարութեան մէջ առանձին Յկեղեցի է Հայոց ազգին սեփհական, ուր իր կատարուի Հայոց միաբանութեան կողմէն ամենօրեայ գիշերային և տունընջեան ժամերգութիւնք։ Եւ ուզած ատեննին, բայց սովորաբար երկու շաբաթը մի անգամ կիրակի օրեր Պատարագ կը մատուցանեն։ այս տեղս երկրորդ Գողգոթա կ'անուանի, ըստ որում յիշատակարանք կը պատմեն թէ՛ Մարտիրոս պատրիարքը՝ վրաց հետ

ջկարենալով գլուխ ելնել, որոնք 1422էն
 մինչեւ 1439, քանի մի անգամ Հայոց
 ձեռքէն յափշտակեցին զսուրբ Գողգո-
 թայն Եգիպտոսի սուլթանը եւ մեծա-
 մեծները կաշառելով. ուստի յիշեալ
 Պատրիարքը սուլթանէն այս տեղս
 խնդրեց ու ստացաւ արծաթով, և ետ
 դառնալուն յատուկ Եկեղեցի մի շինեց
 1439ին եւ երկրորդ Գողգոթա կոչեց,
 որովհետեւ ճիշդ Գողգոթայի դիմաց
 կ'իյնայ: Յառաջագոյն այս տեղը թա-
 գաւորաց հանգստարան էր կ'ըսուի,
 և հոս կը բնակէին թագաւորք և թա-
 գաւորազունք ուխտի եկած ժամա-
 նակին:

Սոյն եկեղեցւոյ դէպ^Պի արեւելեան
 հարաւակողմը ուրիշ մատուռ մի եւս
 կայ, Երաշխաւոր սուրբ Աստուածածնի ա-
 նուամբ: Յիշեալ մատրան սեղանին
 ետեւը դուռ մի կը տեսնուի, որ սե-
 ղանատունը կը հանէ, և հոյակապ գե-
 ղեցիկ պատուհան մի ունի դէպ 'ի
 սուրբ Յարութեան տաճարի արտա-
 քին մեծ դրան և բակին վրայ: Այս

զէնքը , ինչպէս նաեւ սուրբ Լուսաւորչի Հայոց եկեղեցին , 1808 ին հրդեհի ժամանակ անջլաս մնացած են :

Է . Յունաց եկեղեցին . Սուրբ Գերեզմանի արեւելեան դին , եւ տաճարին դրեթէ մէջտեղը , եկեղեցի է Յունաց . որ հարուստ զարդարանք ունի . ոմանք տգիտաբար Աշխարհամատուռ կը կոչեն այս մասը միայն , փոխանակ ամբողջ Տաճարն իմանալու սոյն անուամբ , ըստ որում բոլոր Քրիստոնէից տիեզերական և համաշխարհական մայր Եկեղեցին է սուրբ Յարութեան տաճարը , ուր կը համախմբին ամեն տարի ամեն ազգէ և ամեն կրօնքէ խառն հաւատացեալք Յիսուսի Քրիստոսի Յարութեան սուրբ Խորհուրդը տօնախմբելու : Յունաց յիշեալ եկեղեցւոյն մէջ տեղը տնկուած քար մի կայ , որու համար Յոյնք միամտաբար աշխարհիս կեդրոնն է կ'տանն :

Ս . Յարութեան տաճարէն դուրս եղած Ուխտատեղիքն հետեւեալներն են .

Ա. Մգաոր Ս. Ասորաճաճի Տարուան և Սուրբ Գերեզմանի տաճարի շքապատէն դուրս, աւագ դրան ձախ դին տասն աստիճաններով բարձր՝ փոքրիկ մատուռ մի կայ Լատինաց յանուն Սգաոր սորբ Ասորաճաճի, որ կից է Գողգոթայի, եւ պատուհան մի ունի, որ Գողգոթայի դուռն էր յառաջագոյն:

Բ. Սորբ Ասորաճաճի Տարուան: Յիշեալ Լատինաց մատրան տակովք Յոյնք փոքրիկ մատուռ մի ունին յանուն սորբ Ասորաճաճի՝ որ ժամանակին Հապէշից էր, եւ մեր ձեռքն անցնելէն յետոյ՝ Յոյնք գրաւեցին Աստուածատուր Պատրիարքի ժամանակ:

Գ. Ղբարոյ Եփեղէի: Արտաքին գաւթին արեւելեան պատին հիւսիսային անկիւնը՝ Յունաց յիշեալ Ս. Աստուածածնի մատրան կից դուռ մը կայ, ուրկէ կը մտնուի Ղբառոց եկեղեցին, որ շինուած է յանուն սորբ Միքայել, որու մէջէն աստիճաններով վեր ուրիշ եկեղեցի մի, անկէ ալ ուրիշ դռնով մի Հապէշից վանքը, և սուրբ Լուսաւորչի

կամ Գիււս — Խաչի տանինն կ'ենուի :

Գ. Սորբե Յովհաննու Տարուան Հայոց ։
 Ղբտուոց Ս. Մեքայէլ եկեղեցւոյ դրան
 ուղղութեամբ Յ կամ Դ մեդր դէպ 'ի
 հարաւ՝ գաւթին արեւելեան կողմը՝
 Հայոց սեփհական սուրբ Յովհաննու
 Աւետարանչի մատուռը կայ երեք սե-
 ղանով : Աւագ սեղանն է յանուն Ս.
 Յովհաննու Աւետարանչին , աջակող-
 մինը Չարչարանաց և կապանաց Քրիս-
 տոսի , ձախակողմինը յանուն Հորն Աբ-
 րահամու և զենման Խասհակայ : Աջա-
 կողման փոքր սեղանին մէջ կը գտնուի
 չարչարանաց սիւնին մէկ կտորը՝ յոր
 կապեցին զՅիսուս Կայիափայի տան մէջ ,
 եւ զոր հաւատացեալք ջերմեան-
 դութեամբ կը համբուրեն 'ի յիշատակ
 չարչարանաց Քրիստոսի : Աջանկայիչա-
 տակ Կիրակոս Պատրիարքի օրով 1849ին
 սոյն մատրան ներքին կողմը ամբողջ
 նորագուած է :

Ե. Հայր Աբրահամու վանք : Ասկէ 9
 մեդր անդին Յունաց Հայր Աբրահա-
 մու վանքն է , որու մէջ կայ երկուսու-

սան Առաքելաց անուամբ եկեղեցի մի : Սոյն եկեղեցւոյ կից կայ ուրիշ փոքրիկ մատուռ մի, որ ըստ աւանդութեան՝ Աբրահամին իւր իսահակ որդին զոհելու տեղն է • Այս վանքն ալ առաջ Հապէշացն էր :

2. Սորբ Յակովբայ Էփեղեյին Յունաց • Ս. Յարութեան Աւագ դրան աջ կողմը հին զանգակատունն է, որ այժմ աւերակ է : Ասոր ներքեւը դուռ մի կայ ուրկէ Յունաց յանուն սուրբ Յակովբայ եղած եկեղեցին կը մտնուի, և ուր տեղ ուրիշ քանի մի աննշան մատուռներ եւս կան :

Ասոնք են ահաւասիկ սուրբ Յարութեան տաճարի մէջը և դուրսը եղած երկրպագելի և նշանաւոր տեղուանք : Տէրունական ուխտաւորք նոյն գիշերն հոն մնալով և յիշեալ ներքին սրբավայրերը ուխտ և երկրպագութիւն ընելէն եւ Ս. Գերեզմանի վրայ մատուցուած անմահ Ս. Պատարագին ներկայ գտնուելէն յետոյ, որ գիշեր կը մատուցուի, հետեւեալ առաւօտուն դուռը բացուե-

լով իւրաքանչիւր որ կը դառնայ 'ի Ս․
Յակովբ և հանգիստ կ'առնու։ Յետ այ-
նորիկ կրնայ ինքը առաջնորդ մի գտնե-
լով, որու կրնայ առաւելապէս ծառա-
յել և սոյն գիրքս, շրջագայիլ կարգա-
բոլոր սուրբ և նշանաւոր տեղիքը թէ
սուրբ քաղաքին մէջ և թէ անոր բոլոր-
տիքը պարսպին մօտ եղած տեղերը, ո-
րոնց տեղագրութիւնը հետզհետէ պի-
տի ընենք :

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Խաչին ճանապարհը մինչեւ 'ի գերեզման
ամենասուրբ Կուսին :

Տէրունական ուխտաւորք քանի մի
որ հանգիստ առնելէն յետոյ կը փա-
փագին այցելութեան և ուխտի երթալ
Աստուածամօր սրբոյ Կուսին գերեզմա-
նին, որ քաղաքին արեւելեան կողմը

պարսպէն դուրս Գէլեփոսի (1) ըսուած ձորին մէջ է։ Եւ երկու ճանապարհ ունի երթալու, մին քաղաքին մէջէն անցնելով և Ս. Ստեփաննոսի կամ Ս. Աստուածածնի ըսուած դռնէն դուրս ելնելով, երկրորդն՝ Աիօնի կամ Փրկչի դռնէն և պարսպին տակոյն երթալով։ Արտօբացիք այս երկու դռներէն առաջնոյն Պապօղոսով և երկրորդին Պապօղոսով կը կոչեն։ Երկրորդ ճանապարհը քիչ մի հեռու է, իսկ սովորական ճանապարհն առաջինն ըլլալով, մենք եւս անկէ կ'առաջնորդենք մեր բարեպաշտ Ռախտաւորաց, ցոյց տալով նոցա խալէ կամ Զարչարանոյ ճանապարհի (2) վրայ գտնուած սուրբ Տեղուանքը։ Եւ որովհետև սոյն ճանապարհը Պիղատո-

(1) Գէլեփոսի յորին նաեւ ըսինք յոր կոչուիլը կը յիշէ Վարդան մեծ Վարդապետը, « Անթուած ծագիկ » Մեծապետոցէն տեսութեան մէջ։

(2) Խալէ կամ Զարչարանոյ ճանապարհ կոչուցինք, զոր Լատինք յուսովին ճանապարհ կը կոչեն, այն փողոցները՝ ուսկէ Գրիստոս խաչն ուսը՝ Պիղատոսի պալատէն հանուելով մինչեւ Գողգոթայ բերուեցաւ։

«ի պալատէն մինչեւ 'ի Գողգոթայ կը վերջանայ, ուստի մենք ալ ասկէ սկսելով շարունակենք մեր հոգեւոր այցելութիւններն ամենայն ջերմեռանդութեամբ» :

Առաւօտ կանուխիկ սուրբ Յակովբայ վանքէն ելնելով եւ դէպ 'ի աջ կողմը ծռուելով կը հասնինք սովորական ճանապարհով մինչեւ Ս. Յարութեան եկեղեցւոյն դրփի բակը, ուր քանի մի օր առաջ կատարեցինք մեր այցելութիւնները : Բակին արեւելեան կողմի հարաւային անկիւնը փոքր դռնէն դուրս ելնելով, ապարանջան ծախող վաճառականաց փողոցին մէջտեղ՝ աջ կողմը՝ հին կամարագուռ մի կը տեսնուի : Այս տեղս առաջ կաշէգործներու գործարան էր, եւ հին ժամանակ յանուն Ս. Աստուածածնի, եւ ըստ ումանց՝ յանուն Արբոց Առաքելաց, եւ կամ ըստ Հաննէ վարդապետի՝ յանուն սրբոյն Պետրոսի Առաքելայ Եկեղեցի մը կար : 1869 ին Բրուսիոյ տէրութիւնը առաւ Օսմանեան կառավարութենէն, եւ

մեծաքանակ ծախք ընելով փորեցին՝ ուր շատ հնութիւններ և շինութիւններ և մանաւանդ հին եկեղեցւոյ աւերակ տեղն գտնուեցաւ . թէ՛ եկեղեցւոյ եւ թէ՛ բոլոր տեղւոյն յատակը մաքրեցին, որով բազում ներքին և վերին սենեակներ յայտնուեցան . ընդ որս նաև մեծ սեղանատունն՝ զոր Բրուսիացիք առայժմ առժամանակեայ կերպիւ Աղօթաւ տեղի ըրած են իրենց համար 1871 էն սկսեալ . իսկ 1894 ին փառաւոր Եկեղեցի մը կանգնած են հոյակապ զանգակատունով մը :

Այս դրանը առջեւէն անցնելով ճանապարհը երկուքի կը բաժնուի, աջ կողմինը պղնձագործաց և մսավաճառաց մեծ շուկայն կը տանի . մենք պէտք է դէպ 'ի ձախ կողմի ճանապարհը ուղղուինք . և քիչ մի առաջ երթալով ճանապարհը կը ծռի դէպ արեւելք եւ յետոյ դէպ 'ի հիւսիս՝ որ կը հանէ մութ շուկայն . Յիշեալ շուկային կամարին բերանը, ձախ դին աւերակ տեղ մի կ'երեւի բարձր, ուր տասն և երկու

աստիճաններով վեր կ'երնուի. այս տեղը
 Կոստանդիանոսի ժամանակ Ս. Յարու-
 թեան տաճարի նախադուռն էր, ուր
 տակաւին երկու սիւները կանգուն կ'ե-
 րեւին, եւ հիմակ ճանապարհ մի է
 դէպ 'ի վեր, ուսկէ կ'երթուի Ղաւուոց
 և Հապէշից վանքը և Ոսկէկոյ ըսուած
 սառնիճը:

Ա. Սիւն Դափավճոյ. Նախադուռնէն
 դէպ 'ի մուտ շուկայն առաջ երթալով,
 անոր ծայրը շորեքուղի ճանապարհ մի
 կը հանդիպի. դիմացի ճանապարհը քաղ-
 քին Գամաուկոսի ըսուած դուռը կը հա-
 նէ, զոր Արաբացիք Պապ-էլ-Աճոփ կը
 կոչեն. ձախ կողմինը դէպ 'ի Յունաց
 եւ Լատինաց վանքերը, աջ կողմինն է
 Խալէ ճանապարհը. արդ՝ ձախ կողմի եր-
 թալիք ճամբուն բերանը՝ հիւսիսակողմն
 է Սիւն Դափավճոյ ըսուած սիւնը, և ըստ
 Կոստանդուսեան՝ Տեառն մերոյ Յիսուսի
 Քրիստոսի մահուան վճռոյն յայտարար
 թուողը այդ սեան վրայ փակցուցին:
 Յիշեալ սիւնը խանութի մի մէջ տրն-
 կուած է, որուն կամարէն վեր կը բարձ-

բանայ , և 7-8 մեդր երկայնութեամբ
կը տեսնուի :

Բ. Գրասպանի Դոտ : Այս սեան մերձ
արեւելահարաւ կողմ եղած աւերակ
կամարն որ ճամբուն բերանն է , է՛ Գր-
ասպանի Դոտն , ուսկէ Յիսուս Քրիստոսը
խաչն ուսը շալկած դուրս հանեցին :
Եր կարծուի հասարակօրէն , որ 'ի մահ
դատապարտուած ամեն անձինք այս
դռնէն դուրս կը հանուէին տանջանա-
բանը տարուելու համար :

Գ . Բերիկիկայ գունը : Յիշեալ տեղէն
դէպ 'ի աջ կողմի ճանապարհին մէջ
յառաջանալով 60 մեդրի չափ , աջ թե-
ւին վրայ պատին մէջ տեղաւորուած
սիւն մի կ'երեւի . այս տեղւոյս համար
կ'ըսուի թէ Սրբուհւոյն Բերենիկեայ
(Վերոնիքա) տունն էր , որ Քրիստոսը՝
խաչն ուսը անցուցած ժամանակ՝ չդի-
մանալով նորա քաշած նեղութեանը ,
համարձակեցաւ քովը մօտենալ և երե-
սէն վազած քրտինքները սրբել :

Դ . Պիղապոսին կամարը : Նոյն ճանա-
պարհը շարունակելով՝ երկու ուղի կ'ել-

նէ դիմացնիս, մին դէպ'ի հիւսիս, միւ-
 սը դէպ'ի հարաւ : Դէպ'ի ձախ՝ հիւ-
 սիսային կողմի ճանապարհէն յառաջ
 երթալով անցքը կը լայննայ, և դիմա-
 ցը՝ անկիւնագլուխը՝ նոր դուռ մի
 կ'երևէ, այս տեղ է Աւստրիացւոց հիւ-
 բանոցը եւ նորաչէն մատուռը : Ասոր
 հանդիպակաց կողմի անկիւնագլուխը
 հին բաղնիք մի կար, զոր Հռովմէական
 Հայք ծախու առին եւ եկեղեցի շինե-
 ցին . այս շէնքին պատին տակովը փո-
 ղոցին վրայ մարմարասիւնի մեծկակ կը-
 տոր մը կ'երեւի . այս տեղ հասնելով
 Յիսուս, կ'ըսէ աւանդութիւնը, եւ
 խաչին ծանրութեան տակ ընկձուած
 ըլլալով Սիմօն Կիւրենացւոյն պատա-
 հեցան, և բռնեցին զինքը որ խաչը նա
 տանի : Յառաջ երթալով դէպ'ի աջ
 կողմի փողոցին մէջ, ձախ դին կ'երեւի
 նորաչէն մատուռ մի և անոր կից Գաղ-
 զիացի Սիօնի Քոյրեր ըսուած մայրապե-
 տաց վանքը : Այս վանքին կռթնած
 հին կամար մի կայ փողոցին վրայ՝ հիւ-
 սիսէն դէպ'ի հարաւ ձգուած, որուն

վրայ սենեակ մի՝ կամ Տաճկաց աղօթարան մի կ'երեւի երկու կողմէն մէկ մէկ պատուհանով։ Պիղատոս այս կամարին վրայէն ցոյց տուաւ, կ'ըսեն, Յիսուան Հրէից, զինքը ծեծել տալէն յետոյ, կարծելով թէ այս անգութ ազգին սիրտը կրնայ ամոքել, և ասաց. « Ահա՛ այրդ ցձեզ ր » :

Ե. Հերովտէի պալարը։ Քիչ մի աւելի յառաջ գնալով, աջ կողմն է Հերովտէս Զորորդապետի պալատին տեղը, այն որ Յովհաննու Կարապետին գլուխը կտրել տուաւ, և ծաղրաբանութեամբ վարուեցաւ Յիսուսի հետ՝ երբ Պիղատոս անոր քով խրկեց զՅիսուս :

Զ. Անթոնիէան աղբարայ, կամ Արիան Դափարայան։ Պիղատոսի կամարէն 40 մեդր դէպ 'ի արեւելք զօրանոցի դուռը կայ ուր աստիճաններով կ'եննուի։ Փրկչի ժամանակ այս տեղ Անթոնիէան աղբարայը կար, ուր կը բնակէին Հռովմայեցոց կողմէն եկող դատաւորները։ Պիղատոս Պոնտացի դատաւորը որքան որ Յիսուսը անմեղ հրատարակեց, այ-

ուռ ամենայնիւ փոխանակ ազատ ար-
ձակելոյ՝ Հրէից ձեռքը մատնեց որ՝
խաչ հանեն : Հոս էր այն ժամանակ-
ները Դապա-որական արեանը : Յիշեալ զօ-
րանոցին մէջ՝ տեղ մի կայ, որուն հա-
մար կ'ըսուի թէ Փրկչին մերոյ Յիսու-
սի Քրիստոսի փշով պսակուած տեղն է :

Է. Փոռ-պսակի եկեղեցին : Զօրանոցի
հիւսիսային պատին դիմացը ձախ թե-
ւին վրայ երկաթեայ պզտիկ դուռ մի
կայ, որուն ներսը եկեղեցի մը եւ կրօ-
նաւորաց խուցեր կան . այս դռնէն
ներս մտնելով բակին ծայրը դէպ 'ի
ձախ կողմը եկեղեցւոյ դուռն է, զոր
Հայք Փոռ-պսակի կ'անուանեն : Յիսուս
Հրէից ձեռքը մատնուելէն յետոյ գը-
լուխը Փոռ-Պսակ դրած՝ այս տեղ բե-
րին ու սկսան խարազանով ծեծել ու
ամեն տեսակ նախատինք՝ թուք ու մուր
տալ իրեն . սոյն եկեղեցին 1838 էն 'ի
վեր Լատինաց ձեռքն է :

Այս տեղ կը վերջանայ Խաչին ճա-
նապարհը :

Բայց մենք շարունակենք մեր այ-

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

ցելութիւնը դէպ 'ի յառաջ, ա. կամա-
րի մի տակէն անցնելով, ուր կը տես-
նուի Սողոմօնեան տաճարի մէկ դու-
ռը, և փողոցին վերջացած տեղը դէպ
'ի աջ դին ներսէ ներս կ'երեւի ուրիշ
մէկ դուռը: Հոս ճանապարհը չորեք-
ուղի է, արեւելեան ճանապարհէն
բաւական առաջ երթալով ձախ դին
կ'երեւի Յովակիմայ և Աննայի տունը,
ուր իրենց անուամբ հին եկեղեցի մի
կայ հայկական ձեւով: 1187 թուակա-
նին՝ Սալահատտին տիրելով ասոր՝ քա-
ղաքին մէջ գտնուած Տէրվիշներու ու-
սումնարան ըբաւ, որ այն ժամանակ-
նոյն տեղն Սալահի կը կոչուէր, վերջին
ժամանակներս՝ 1856 թուականին՝ նոյն
տեղն Գաղղիացիք ստացան Օսմանեան
տէրութենէն 'ի պարգեւ. և հին շէնքը
պահելով Եկեղեցին նորագեցին, և փողո-
ցին վրայ՝ երկայնութեամբ՝ ընդարձակ
և հոյակապ առաջնորդարան մը և ներսի
կողմը սենեակներ ու գպրոց մը շինեցին
մեծաքանակ ծախիւք, սրբատաշ քարե-
բով. և եկեղեցւոյն քով եղած տուներն

գնելով՝ այժմ կ'աշխատին ընդարձակել
և հոյակապ վանք մը բնել :

Ասոր գրեթէ կից է Ս. Աստուածածնի
անուամբ յիշուած բազնիքը , եւ այս
բազնիքին դիմացի ճանապարհը շեղե-
լով , Սողոմոնի տաճարին ուրիշ մէկ
դուռը կը տեսնուի , որու քով աջ կողմը
մեծ փոս մի կ'երեւի , որ է Պրոպագիկե
աւազանը . իսկ ձախ դին ծռուելով
քանի մի զօրքեր կը տեսնուին որոնք
Աստուածածնի դրան պահպաններն են :
Այս դուռը դէպ 'ի արեւելք կը բա-
ցուի , եւ աջ ու ձախ կողմը Տաճկաց
գերեզմանատուն է . ուղղակի ճանա-
պարհը բռնելով դարու վար իջնելու
ժամանակ՝ ճանապարհը կը բաժնուի
'ի ձախ եւ 'ի յաջ . երկրորդ ճամբուն
մէջ յառաջ երթալով դէպ 'ի վար՝ հոն
ծայրը գետնին երեսը հարթայատակ
ժայռեր կ'երեւին . այս տեղ , կ'ըսեն ,
քարկոծուեցաւ Ս. Ստեփաննոս նախա-
վկայն : Եւ դարձեալ ձախ դին դառնա-
լով , ձախ թեւի վրայ Հայոց Ձիթենեաց
պարտէզն է , որու դուռը կից է սուրբ

Աստուածածնի Եկեղեցին իջնելու արտաքին աստիճաններուն :

Սուրբ Աստուածածնի Գերեզմանը : Գէթսեմանի ձորին հիւսիսային ծայրը կ'իյնայ ամենասուրբ Կուսին փառաւոր Շիրիմը . քանի մի ոտք աստիճաններէ վար արտաքին գաւիթը կ'իջնուի : Եկեղեցւոյ առաջին հիմնադիր Աբգար Թագաւորի կնոջ Հեղինէէն յետոյ , եղած են երկրորդ Հեղինէն՝ Կոստանդիանոսի մայրն ու ինքը : Կ7 ոտք աստիճաններով կ'իջնուի Եկեղեցւոյ մէջ . Ս . Կուսին Գերեզմանը որ ժայռի մէջ Վիրուած է , դրսի կողմէն տաշելով՝ միայն Ս . Մարմինն ընդունած մասը թողուցած են , չորս կողմը ազատ թողլով՝ որ Եկեղեցւոյն արեւելեան թեւին մէջ կ'իյնայ , ըստ որում Տաճարը խաչաձեւ է : Գերեզմանին ներքին կողմնչալ կոկուած ու զարդարուած է . մարմնոյն դրուած տեղը ճերմակ մարմարիոնով ծածկուած է բարձր դիրքով ու սեղանաձեւ , որու վրայ ամեն օր Պատարագ կ'ընեն միայն Հայք եւ Յոյք . երկու փոքրիկ դռներ

ունի մին դէպ 'ի հիւսիս եւ մին դէպ 'ի յարեւմուտք: Հեթում Բ. Եկեղիցի թագաւորը 1300ին Եգիպտացոց վրայ արշաւանք ըրած և յաղթութեամբ ետ դարձած ժամանակ յՆրուսաղէմ գալով, 'ի նշան գոհութեան՝ Գերեզմանին դրսի կողմը արեւմտեան դրան կից սեղան մը կանգնել տուաւ, որ մինչեւ ցայսօր կը մնայ եւ միայն Հայոց սեփհական է, ուր երբեմն կը Պատարագեն եւս:

Ս. Գերեզմանին հիւսիսային կողմը՝ և Եկեղեցւոյն արեւմտեան թեւին մէջ՝ զատ զատ երկու սեղաններ կան Հայոց սեփհական, առջնոյն վրայ Ասորիք կը պատարագեն ամեն չորեքշաբթի օրերը, և երկրորդին վրայ Ղբտիք, ամեն ուրբաթ օրեր Հայոց թոյտուութեամբ:

Ս. Գերեզմանին ետեւի կողմը սեղան մը կայ, ուր Ասորոց պատարագած Սեղանին առջեւէն կանցնուի՝ Յունաց է, իսկ հարաւային կողմը եղած անկիւնը Հայոց ժամարարներու զգեստաւորուած տեղն է:

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARY

Եկեղեցւոյն հիւփսային թեւին վրայ եղած տախտակեայ տեղն, ուր 12 աստիճաններով վեր կ'երնուի Յունաց տեսչին խուցն է :

Եկեղեցւոյ աստիճաններէն վեր ելած ժամանակ իսկայն աջ կողմը դուռ մի կայ, ուր տեղ է Հայոց Տեսչին խուցը եւ պահարանը : Աստիճանաց կէտը հասնելով աջ դին պատարագումատոյց սեղան է Հայոց սեփհական, ուր Յովսեփայ Աստուածահօր գերեզմանն է, պատին մէջ առանձին կամարով : դիմացի կողմն ալ Յովակիմաց և Աննայի գերեզմաններն են կրկին սեղանով, որ Յունաց ձեռքն է : Բոլոր եկեղեցին Հայոց և Յունաց կը վերաբերի : Թէ Ս. Գերեզմանին և Թէ բոլոր եկեղեցւոյն մէջ գտնուած ամեն զարդ, կանթեղ, ջահ, կերոն, աշտանակ և այլն և այլն, հաւասարապէս երկու ազգին են, թէպէտ իւրաքանչիւրինը որոշուած և զատուած է :

Աստիճաններու գլուխը ելած ժամանակնիս, աջ եւ ձախ կողմերը պա-

տառհասներ եւ մէկ դուռ մ' ալ կերեւի պատով հիւսուած , որ հասարակօրէն կը կարծուի թէ վերի եկեղեցին ելնելու դուռը եղած ըլլայ . բայց որով , ինչպէս յայտնի կ'երեւի , հին ժամանակ այժմեան Տաճարին վրայ ուրիշ եկեղեցի մի եւս կար , որ եզմանբարդ դարուն մէջ դեռ կանգուն կը կենար և բարրակ ձեւ ունէր : Ահա սաներորդ դարուն մէջ յիշեալ եկեղեցին աւերակ մնացած ըլլալով , քաղքին պարիսպները նորոգուելու գործածուեցան անոր քարերը :

Սուրբ Գերեզմանի տաճարը երկու բանալի ունի , որոնց մին Հայոց և միւսն Յունաց լուսարարին քով կը մնան .

Եկեղեցիէն դուրս ելածիդ պէս ձախ դին նեղ անցք մի կ'երեւի , եւ փոքր դուռ մի երկամթեայ , եւ մէջը անշուք խորշեր են ստորեկրեայ՝ երեք սեղանով . այս տեղը Լատինաց ձեռքն է , որուն համար կ'ըսուի թէ Յիսուս դեռ չ'մատնուած Առաքելոց հետ եկաւ աղբիւր , ուր և տաղնապի մէջ մնալով

արեան քրտունք հոսեց իւր դէմքէն ,
 և ուր ասաց յաղօթելն . « Հայր իմ ե-
 թէ հնար է , անցցէ բաժակս այս յի-
 նէն » :

Գաւթի հարաւային աստիճաննե-
 րէն վեր ելնելով , աջ կողմը խարխու-
 պատով հիւսուած տեղ մի կայ որ Ա-
 րարացւոց է և մէջը գերեզման մի կայ
 կ'ըսեն , սակայն գերեզմանը այժմ չե-
 րեւիր :

Քիչ մ' առաջ երթալով Գէթսե-
 մանի ձորին ուղղութեամբը՝ ձախ թե-
 ւին վրայ ճանապարհ է դէպ 'ի Ս . Համ-
 բարձման լեռը ելնելու , եւ անոր բե-
 րանը նոր պատով հիւսուած Զիթե-
 նեաց պարտէզ մի կայ , եւ մէջը ութ
 ձիթենի , որոնց բուները աւանդու-
 թեամբ Քրիստոսի ժամանակէն կը կար-
 ծուին , եւ Ողջունի ծառեր կը կոչուին
 ըստ ռամկաց : Այս տեղը շատ տարի
 չէ , որ Հատինք իւրացուցին չորս դին
 հաստատուն պատ քաշելով , և հիմակ
 գեղեցիկ ծաղկանոց է , և ամեն աղբէ
 ուխտաւորք ներս կ'ընդունին , և երկա-

Թեայ փոքր դուռ մը ունի արեւելեան հարաւակողմի անկիւնը : Դռնէն դուրս՝ դէպ յարեւելս՝ ժայռ մի ցոյց կուտան գետնի վրայ , որոյ համար աւանդու-
 Թեամբ կ'ըսուի Թէ Փրկիչն մեր Յիսուս հոս սպասել տուաւ Պետրոսը , Յովհաննէնն ու Յակոբոսը , պատուիրելով անոնց որ արթուն մնան ու աղօթեն , ինքը քարընկէց մի տեղ հեռանալով խնդրեց իւր Հօրմէ որ չարչարանաց բաժակը զանց ընէ իրեն խմելու :

Երկոտասաներորդ դարու մէջ եկեղեցի մի կար այս տեղ յանուն Առաքելոց ննջմանը :

Այս պարտիզին արեւելեան կողմի զառ ՚ի վեր գետինը Ռուսք գնեցին եւ փառաւոր Եկեղեցի մի շինեցին իբրեւ դամբարան Կայսրուհւոյն Աղեքսանդր Բ . ի :

Յիշեալ պարտիզին դրան հարաւա կողմը 15 մեդր հեռու սիւնի կտոր մի կը տեսնուի , եւ ասիկայ նշան է այն տեղւոյն՝ ուր Յուդա մատնութեան համբոյրը տուաւ Փրկիչն :

Համբարձման լերան այցելութիւնը
 ոտքիչ աւուր թողլով, մենք դառնանք
 քեզ 'ի քաղաքը Փրկչադռնէն ներս մըտ
 ներս և ճանապարհին վրայ գտնուած
 նշանաւոր տեղաւանքը աչքէ անցնելու
 կամար :

Ա. Ողորմալիան Դոտար : Յիշեալ աւ
 ճետարանական տեղերէն ետ դառնա
 լով եւ Ձիթենեաց պարտիզին պատին
 տակովը յառաջ գնալով, ձախ դին է
 Ս. Համբարձման օտորոտը եւ ալ դին
 Գէթսեմանի ձորը : Ասկէց երեսնիս դէպ
 'ի սուրբ քաղաքը դարձուցած ժամաւ
 նակ կ'երեւի Ողորմալիան Դոտար, որ պատ
 առով հիւսուած է. և ունի կրկին կամար
 երկու ոտքերու վրայ, որոնց ամեն մէ
 կուն լայնութիւնն է 2 մեդր, ամեն մէկ
 կամար եւս 2 մեդր և 88 հարիւրորդա
 մեդր լայնութիւն ունի. կամարներուն
 շջանակի դուրս ցցուած մասերն ալ
 տերեւաձեւ զարդարանքներով շքե
 ղացուցած է : Այս դռնէն մտաւ յառջ
 թանակաւ Փրկչն մեր Յիսուս՝ Մարկոս
 զարդի կիւրակէի օրը :

Եւ կ'ըսուի թէ՛ Հերակլ կայսր՝ կե-
նաց: Փայտը Պարսից գերութենէն ազա-
տեալով սոյն դռնէն ներս մտցուց, եւ
ուսին վրայ շարկած տարաւ Գողգոթայի
վրայ անկեց ՚ի տեա հաւատացեալաց:
Ս. Երուսաղէմ Մահմետականաց ձեռն
անցնելէն յետոյ, այս դուռը պատռի
հիւստեցին սուտ գուշակութեան մի հա-
ւատալով, իբր թէ Յռանկ աղջը այս
դռնէն կրկին անգամ ներս մտնելով
պիտի տիրէ քաղաքին: Այս կողմը կը
տեսնուի նաեւ Սողոմոնեան պարսպին
մէկ մասը, որ յայտնի է ահագին մե-
ծութեամբ քարերէն: Ասոնց մէջ մէկ
քար մի կայ որ 6 մեդր երկայնութիւն,
2 մեդր լայնութիւն, եւ 1 մեդր բարձ-
րութիւն ունի:

Բ. Տեսանելիքօր Ս. Յակոբայ որից պեղ-
շտնապարհն առաջ տանելով կամուր-
ջի մի կը հանդիպինք, որ շինուած է
կերտի ըսուած կերպովն վրայ: Ըստ
աւանդութեան Լատինաց՝ Հրէայները
Յիսուսը բռնած ժամանակնին երբ հոս
հասան սոյն կամուրջին վրայէն չանցը-

նելու համար՝ հարաւային կողմէն վար
Էդգրոնի հեղեղատին մէջ ձգեցին զին-
քը որ անկէ անցնեն, որոյ նշան՝ ինկած
տեղը ոտքերուն և ծունկւրներուն տե-
ղերը մնացին ժայռին վրայ ⁽¹⁾։ Իսկ մե-
րայինք աւանդութեամբ կ'ըսեն թէ
Տեառն եղբայր Յակոբոս առաքեալը
Տաճարի աշտարակէն հոս գահավիժե-
ցին Հրէայք, եւ թափիչները՝ որ լը-
ւացք կ'ընէին ձորին մէջ, վրայ հաս-
նելով իրենց թակերովը գլխուն՝ զար-
կին՝ երբ սուրբ Առաքեալը դեռ կը
բոչէր. «Տէր թող սոցա, զի ոչ գիտեն
զինչ գործեն ք. Յայսմաոորք, Հոկո. 23.
և Դեկո. 25.

Գրիգոր Շղթայակիր պատրիարքի
ժամանակ խիստ աւեր ըլլալով սոյն
կամուրջն՝ և վտանգաւոր անցուղար-
ձից, 1728ին մեծ պատով մի ամրա-
ցուց ու կամուրջը նորոգեց և ընդար-
ձակեց. և այն տեղ գտնուած սառնի-

⁽¹⁾ Տես Հաննէ, Պատ. Ս. Երուսաղէմի, եր. 255.
յայեալ 'ի Կ. Պոլիս 1807.

Ճին բերանն ալ, որ երկիւղալի էր, նեղցնել տալով ապահովեց բաւական աշխատութիւն կրելով. եւ կամուրջին քով դէպ 'ի արեւելակողմն գտնուած կէս արտավարի չափ արտն ալ գնեց որ մինչեւ ցայտօր կայ և Հայոց վանքին է, որուն մէջ մի քանի ձիթենիի ծառեր կան :

Գ. Աբիսողոմայ արշանը : կամուրջին դէպ յարեւելակողմը եւ հեղեղատին ձախ դին կը տեսնուի Աբիսողոմայ արշանը կամ Գերեջանը, զոր Աբիսողոմ Դաւթի որդին ինքն իւր կենդանութեանը կանգնել տուաւ . Բ. Թագ. ԺԸ . 18 : Միաժայռ քարէ է. և մինչեւ ծնօտը (սալախ) ժայռէն կտրուած է. չորս կողմը դէպ 'ի երեսները չորս սիւներով զարդարուած է և անոնց վրայ բոլորածել տաշուած է ստամանի ձեւով և ծայրը երկաթով սրացած, որ կը վերջանայ արմաւենիի վինջով մի : Ամեն մէկ երեսին վրայ մէյ մէկ պատուհան ունի, եւ ներսը լեցուած է խիճով զոր անցնող ու դարձող Հրէայք կը նետեն : Արձա-

նին յատակն ար մի և նոյն ժայռին մէջ
 փորուած է տեղեցիկ զարդերով, բայց
 կիմակ հողով ծածկուած լինելուն չե-
 քելիք: Արիսողոմայ բուն գերեզմանը
 Յորդանանու արեւելեան կողմն է փոսփ
 մէջ, ուր տեղ նետեցին զինքը հորը
 դէժ ապստամբութիւն ըրած ժամա-
 նակ սպաննուելէն յետոյ. Բ. Թագա-
 ծԸ. 17:

Դ. Յովսէփոս ըսուած գերեզմանը:
 Արիսողոմայ գերեզմանին կից արեւե-
 լեան կողմը կը տեսնուի Յովսէփոս
 ըսուած գերեզմանը. որ վիճափոր մեծ սցք
 մ' է, եւ դուռը գետնին մէջ գրեթէ
 Թաղուած, որուն միայն վերին ճնօտը
 կը տեսնուի գետնին երեսին հաւասար:
 Այս շիրիմը հասարակօրէն կը կարծուի
 որ դատարկ եղած ըլլայ և ՚ի յիշատակ
 երեւելի անձի մը՝ կամ նոյն Յովսէփոս
 Թագաւորին կանգնուած. վասն զի ըստ
 Յատուածաշունչ սուրբ Գրոց՝ յիշեալ
 Թագաւորը Երուսաղէմի մէջ Թաղուե-
 ղաւ. Գ. Թագ. ԻԲ. 51:

Ե. Սուրբ Յովսէփոս Այլը կամ Գերեզ-

մանր : Արիստղոսայ արձանէն 45 մեդք
անդին դէպ ՚ի հարաւ՝ մահարձան մի
կ'երեւի ժայռին մէջ փորուած , ուր
պզտիկ դաւիթ մի կայ երկու սիւներով
եւ երկու կէս-մայթերով , որոնք նոյն
ժայռէն յորինուած եւ մարդակով մի
իրարու հետ միացուցած են՝ բոլորը մէկ
ժայռէ : Այս մահարձանիս համար քրիս-
տոնեայք Ս. Յակոբայ Այրը կամ Գերեզ
Տանէ կ'ըսեն . Մահմետականք Տիւանը-
Յարառն կը կոչեն , իսկ վրան երբայեցե-
րէն վերտառութիւն կայ , որու մէջ
գրուած է Եզրի շրիմն ըլլալը : Յիսուս
Քրիստոսէ՛լ քիչ ժամանակ առաջ շի-
նուած կը կարծուի այս մահարձանը :

Առաքեալք երբ տեսան որ իրենց
Տէրը դահիճներու ձեռք կապուած
յանձնուեցաւ , իրենք թողուցին փա-
խան . մէջերէն ութը հատը գնացին
տեղ մի պահուըտեցան , որու վրայ ու-
րիշ անգամ պիտի իստինք , իսկ Յակոբոս
առաքեալ Փոքրը , եկաւ այս այրին մէջ
պահուեցաւ : Աւանդութեամբ կ'ըսուի
թէ՛ մինչեւ Քրիստոսի յարութիւն առ-

OF AMERICAN LIBRARIES

նեղը հոս մնաց առանց բերանը բան մի դնելու, և թէ Փրկիչն մեր այս տեղ երեւեցաւ իրեն:

Յակորոս առաքեալ Փոքրը՝ Սիմէօնի և Յուդայի եղբայրն է, և Յիսուսի Քրիստոսի հետ մօր քրոջ որդիք են. աւսիկայ եղաւ Երուսաղէմի առաջին եպիսկոպոսը եւ Յիսուսի Քրիստոսի փոխանորդը: Հրէայք նախանձելով և թշնամանալով եւ իրենց քահանայապետէն դրդուեալ Տաճարի պարսպէն վար նետեցին զինքը և հոն թափիչներու ձեռօք չարաչար հոգին աւանդելով սոյն մահարձանիս մէջ թաղուեցաւ, ըստ ոմանց յամի Փրկիչն 62:

Քրիստոնէութեան առջի դարուց մէջ սոյն մահարձանիս վրայ մատուռ մի կար, ուսկէ վար շէրիմը կ'իջնուէր ժայռին մէջ փորուած աստիճաններէն, որոնք դեռ կը տեսնուին:

2. Զաբարիայի գերեզմանը: Սուրբ Յակորայ շիրմին հարուստային կողմը կ'իյնայ՝ անոր կից, Զաբարիա որդւոյ Բարաբիայի գերեզմանը: Բոլորովին միակտուր ժայռէ

քառակուսի կտրուած և իւրաքանչիւր երեսները երկու կիսասիւնով զարդարուած է, որոնց ծնօտները պարզ արուեստիւ մի դէպ 'ի դուրս քուածեւցցուած են. և անկէ սկսելով պէպ 'ի վեր բրգաձեւ ծածք ունի առանց կորսնցնելու իւր քառակուսի ձեւը. դուռ չունի, եւ հաւանական է որ չորս բոլորը դիզուած Հրէից գերեզմաններուն մէջ աներեւութացած ըլլայ:

Զաքարիա, Յովիադայ մեծ Քահանայապետի որդին, երբ տեսաւ որ ժողովուրդը բոլոր կռապաշտութեան ետեւէ ինկաւ, աստուածային նախանձով վառուած, գնաց Տաճարն ու խորայելացիքը յորդորեց որ ճշմարիտ Աստուածը չթողուն. բայց նոքա փոխանակ իրեն մտիկ ընելու, Տաճարին գաւթին մէջ զինքը քարկոծեցին, ինչպէս որ կը կամենար Յովաս' Թագաւորը. Յիսուս Քրիստոսէ 864 տարի առաջ. Բ. Մ. 20-22:

Հոս վերջացնելով մեր Երկրորդ այցելութեան շրջանը, դառնանք յետ և

կամուրջին վրայէն անցնելով և Վեդրոնի
 հեղեղապար ձախ կողմերնիս ձգելով
 ելլենք գէտ ՚ի վեր, բռնելով այն ճա-
 նապարհը որ Փրկչադուռը կը տանի եւ
 քաղաքին պարիսպը աջ դիմիս կ'իջնայ:
 Ներս մտնելով դռնէն և միւս կամարա-
 քերնէն դուրս ելած ժամանակնիս դէտ
 ՚ի ձախ կողմի ճանքան բռնենք, որ եր-
 կու փողոց դառնալէն յետոյ ուղղակի
 Սուրբ Յակոբայ մեծ վանուց հոյակապ
 դուռը կը տանի, որու դիմացի պար-
 տիզին մէջի եղած շոճի ծառերը, որոնք
 բոլոր ընդարձակ հրապարակը կը ծած-
 կեն, աւելի մեծ շքեղութիւն եւ գե-
 ղեցկութիւն կ'ընծայեն տեղւոյն:



ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ի Ս. Փրկիչ էս 'ի հարաւային շրջակայքն
Ս. Երուսաղէմի :

Առաւօտ մի նախաճաշ ընելէն յետոյ, երբ գեղեցիկ արեւ եւ մեղմ եղանակ կ'ընէ, բարեպաշտ ուխտաւորաց խումբը Փրկչի դռնէն դուրս կ'ելնէ Փրկչավանքը ուխտ ընելու և սուրբ քաղաքի հարաւային շրջակայքն եղած նշանաւոր հին տեղուանքը այցելելու :

Փրկչադռնէն դէպ 'ի հարաւ 37 մեղր առաջ երթալով Հայոց Զիթենեաց պարտիզի արեւելեան ցանկապատին տակովք կայ հին սիւնի մի կտոր, ուր առաջ կային նաեւ քանի մի ոտք աստիճաններ Հայոց հին տապանաքարերով շինուած : Այս տեղւոյն համար աւանդութեամբ կ'ըսուի թէ՛ Առաքեալներն երբ ամենօրհնեալ սուրբ Աստուածամօր վախճանէն յետոյ անոր մարմինը ճաղի մէջ դրած հոս հասան : Հրէից խուռն բազմութենէ մի արգիլուեցան, որոնք ա-

տելութեամբ զինեալ կ'ուզէին վար տապալել նորա սուրբ մարմինը . բայց անմիջապէս պատժուեցան . մէջերնին ամենէն յանդուգն եղողը որ քահանայ մի էր , երբ ձեռքը դէպ 'ի ճաղն երկընցուց , որ վար ձգէ , ձեռքը գօսացաւ , եւ միւսներն կուրացան : Սոյն պատժոյն վրայ սարսափելով զզջումի եկան եւ Առաքելոց միջնորդութեամբ Աստուած շնորհեց անոնց առողջութիւնը , հաւատացին ամենքն ալ 'ի Քրիստոս և մկրտուեցան :

Յիշեալ աստիճաններէն ետ դառնալով դէպ 'ի արեւմտեան փողոցը կը մտնենք , դարձեալ Հայոց Զիթենեաց պարտիզին պատին տակովը որ ձախ դին կ'իյնայ , 50 մեդր առաջ՝ տախտակեայ փոքր դուռ մի կար , որ այժմ վերցուած է յիշեալ պարտիզին դուռն է : Մեծ դռնէն (1) ներս մտնելով պար-

(1) 1899 թ Տ . Յարութիւն Ս . Պատրիարքի ծախիւք պարսպապատ եղած մեծ երկաթեայ դռնով մը ներս կը մտնուի իսկ աստիճանները հաւասարցուցած են յատակին :

տիզին մէջ տեղէն ուղղակի 60 մեդր
 յառաջանալով՝ 8 աստիճաններէ վար
 եղած էր , այս է Հայոց սուրբ Փրկչի
 Հին վանուց դուռը : Ներս մտնելուս
 եկեղեցւոյն գաւթին է , որ և գերեզ-
 մանարան է սուրբ Աթոռոյս Պատրիար-
 քաց , Եպիսկոպոսաց եւ վաստակաւոր
 Վարդապետաց և Միաբանից , ինչպէս
 կը ցուցնեն տապանաքարերը (1) : Պատ-
 րիարքացը բարձրկեկ շինուած են մար-
 մարիոնով զարդարուած , ինչպէս կ'ե-
 րեւին դռնէն ներս մտնելուս ձախ կող-
 մի անկիւնը և գաւթին դիմացի կողմի
 կամարներուն տակը : Այս եկեղեցւոյ
 և վանքի տեղը , ինչպէս ամեն ազգ կը
 վկայեն , Կայիափայ քահանայապետին
 տունն է , ուր տեղ Յիսուս Քրիստոսը
 մատնութենէն յետոյ բերին եւ հոս
 հարցաքննութեան ենթարկեցին քա-
 հանայապետին դիմացն հանելով : Այս

(1) Թէ այն տապանաքարերու՝ եւ թէ անդ ու
 Ս. Յակոբայ վանուց մէջ գտնուած զանազան տեսակ
 հին խաչ — քարերու վրայ եղած յիշատակարաններն
 տես գրքիս վերջը գրուած յաւելուածին մէջ :

տեղ Պետրոս երեք անգամ ուրացա-
 խոր Տէրը, և հինգշաբթի գիշերը դեպ
 'ի ուրբաթ լոյս՝ այս տանը մէջ անցուց
 Յիսուս հաղարումէկ նախատանաց համ-
 բերելով: Գաւթին արեւելեան կողմն է
 Եկեղեցւոյ դուռը, ուր մտնելով՝ սեղա-
 նին ձախ կողմը կողմնակի պզտիկ դուռ
 մի կայ և մէջը փոքրիկ սեղան մի պա-
 տարագամատոյց՝ ուր հաղիւ երկու հռ
 դի կը պարունակի, այս է Երկրորդ բան
 տը, ուր անցուց Փրկիչն մեր Յիսուս այն
 մէկ գիշերը: Եկեղեցին որ առանց սեան
 սիրուն գիրք մի ունի, մէկ սեղան միայն
 կը ներկայացնէ, որու վէմն է Յիսուսի
 Քրիստոսի սուրբ Գերեզմանի կափարիչ
 Վէմը, զոր Հրեշտակը վար շրջեց ու
 վրան նստաւ. Մատ. ԻԲ. 2: Սոյն քարը
 որ գրեթէ կէս բոլորակի ձեւ ունի, բա-
 լոր սեղանը կը ծածկէ, և երեք տեղէն
 բաց թողուած է համբուրելու համար:
 Այս կափարիչ Վիմիս վաւերականու-
 թիւնը ուրիշ Քրիստոնեայ ազգերն եւս
 կը հաստատեն:

Ս. Փրկչայ վանուց մէջ պժմ երեք

սեղան կայ պատարագամատոյց . դրաք
 գաւթինը յանուն Ս . Չարչարանաց .
 Յկեղեցւոյ Աւագ Սեղանն յանուն Ս .
 Փրկչի, ձախ կողմը գտնուած փոքրիկ
 մատրան երկրորդ բանտի սեղանը՝ յա-
 նուն Ս . Բանտի, Աւագ Սեղանի ետե-
 ւի կողմն է աւանդատունն կամ պահա-
 րանը ուր կար յառաջագոյն սեղան մի
 եւս, զոր վերջին շինութեանց ժամա-
 նակ վերցնել հարկ եղաւ :

Յիշեալ վանքին գոյութիւնը մինչեւ
 քրիստոնէութեան առաջին դարը կ'ել-
 նէ, եւ Հայոց սեփհական ստացուածք
 եղած է իւր հիմնարկութենէն ՚ի վեր :
 Սուրբ քաղաքը Արարացւոյ ձեռք անց-
 նելէն յետոյ բաւական նեղութիւն կրած
 են սուրբ Բանտին ծառայող միաբանք,
 եւ բաւական ժամանակ լքեալ թողու-
 ցուած է բռնաւոր մարդոց ձեռք . Չո-
 բեքտասաներորդ դարուն մէջ, Յովհան-
 նու Արձիշեցւոյ աշակերտ՝ Կարապետ
 անուն վարդապետ մի, Տոսպ գաւառ-
 ուէն յերուսաղէմ ուխտի գալով, եւ
 տեսնելով յիշեալ վանքը զոր Արարացիք

Հայոց ձեռքէն յափշտակելով ախոռ կամ խան շինած են, վշտալից սրտով Եգիպտոս կ'իջնայ եւ 4000 դահեկանի կրկին անգամ ծախու կ'առնու Սուլթանէն, եւ վերադառնալով Եկեղեցին կը նորոգէ, յորում էր կ'ըսէ Կափարիչ վէմը. Զկնի այնորիկ հետզհետէ սուրբ Աթոռոյս Պատրիարքունք պէտք եղած նորոգութիւններն ըրած, և պարիսպն աւելի բարձրացուցած են Սիօնցւոց յարձակումներէն ազատ մնալու համար: Վերջին նորոգութիւններն եղան Կիրակոս Պատրիարքի օրով 1848 ին գաւթին մէջ եղած սեղանը նորոգեցաւ եւ աբեւմտեան կամարներն ու սենեակները շինուեցան:

Բայց 1873 ին ձմեռան խտուածներէն արեւելեան պարիսպը բոլորովին կործանեցաւ որոյ վերաշինութիւնը զանազան պատճառներով մնաց մինչեւ 1889, որ ատեն Ս. Աթոռոյս Նորնախր Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարքը Պօլսէն հետը բերելով նորոգութիւնն արտօնող Գայսերական հրովարտակը՝ մի եւ նոյն

Թուին եղաւ պարսպի շինութիւնն 'ի հիմանց եւ մի եւ նոյն կողմը երկրորդ յարկին մէջ երկու սենեակներ շինուեցան . հարաւային նոր պատն եւս մին չե կէսը շարունակուեցաւ 'ի ներքուստ կրկին կամարներով . և մաս մի եւս նոյն պատին սեղանի շարունակութեամբ հիմեր դրուեցան . սեղանի ետեւի խախուտ սենեակները վերցուեցան եւ եկեղեցւոյ արեւելեան պատը հաստատելու համար իբրեւ յենարան հիմեր ձգուեցան սէթ մի ձեւացնելով . ուր զետեղուեցան նշխարք երկու ննջեցելոց , որք քանդուած պահարան սենեակի պատերուն տակ շինուած երկու գերեզմաններէն ելան :

Վանքի դռնէն դուրս ելնելով պարտիզին հարաւային կողմը գտնուած տախտակեայ փոքրիկ դռնէն 3 ոտք աւ տիճանաւ գերեզմանատունը կը մըտնուի : Սոյն գերեզմանատունը , որ Սիօն լեւոյն վրայ է , երեք ազգաց կը վերաբերի որոշեալ սահմաններովն , Հայոց , Յունաց և Լատինաց . մեծ մասը Հայոց

է : Լատինաց գերեզմանատունը նոր
 պատու բաժնուած է , և բաց ՚ի հիւսի-
 սային կողմէն ուր ճանապարհ կայ , միւս
 երեք կողմէն Մեր գերեզմանատան մէջ
 մտած է , և յայտնի կ'երեւի որ սկիզբը
 բոլոր մէկ գերեզմանատուն եղած է
 Հայոց ազգին սեփհական , ու յետոյ մէկ
 փոքր մասը Լատինաց տրուած , ինչպէս
 կը վկայեն սուրբ Աթոռոյս հին Յիշա-
 տակագրերը , 1866ին Լատինք երբ ի-
 բրենց գերեզմանատունը շրջապատեցին ,
 բռնութեամբ Մեր գերեզմանատան
 մէջ երկու դուռ թողուցին , որուն հա-
 մար թէեւ Բարձրագոյն Գրան բողո-
 քած էր սուրբ Աթոռոյս վարչութիւնը ,
 բայց և այնպէս սոյն խնդիրը դեռ վէճի
 տակ մնացած էր ⁽¹⁾ :

1892ին տեղական Կառավարու-
 թեան միջոցաւ երից ազգաց մէջ հա-
 մաձայնութիւն գոյանալով՝ Մեր և Յու-
 նաց Գերեզմանատները եւս շրջապա-
 տեցան , մէջտեղը ճանապարհ ձգուե-

(1) Տես խնդիր Ս. Տեղեաց , տպեալ երուսազէմ 1871 :

լով Լատինք իրենց մեր Գերեզմանա-
տան վրայ բացուող երկու դռները հի-
սեցին մեր կողմէն եղած մասնաւոր
փոխարինութեամբ :

Ամերիկացւոց գերեզմանատան հա-
րաւակողմը պղտիկ գետին մի կը տես-
նուի , որ սուրբ Աստուածածնի տանը
տեղն է , ուր Յիսուսի Քրիստոսի մա-
հուանէն յետոյ կը բնակէր Ս . Յովհանն
նէս Առաքելոյն հետ , և ինքն ալ այս
տեղ վախճանեցաւ : Դեռ քանի մի խո-
շոր քարեր կը տեսնուին , որոնք աւան-
դութեամբ կ'ըսուի թէ նոյն տան հնու-
թեան կը վերաբերին : Յոյնք այս տեղ-
ւոյն չորս պատին քով Պենտէկոստէի օրը
ազօթելու կուգան և ժամերգութիւն
կը կատարեն , ըստ որում իրենց գե-
րեզմանատան կից է ⁽¹⁾ :

(1) Երջագատէն դուրս գտնուած գետինը՝ որ
աւանդութեամբ Ս . Աստուածածնի տան տեղ լինիլ
կը կարծուի՝ 1898 ին Աեհափառ Սուլթանի կողմէն
գերմանացւոց Աեհ . կայսեր շնորհուած է , և 1899 ին
նոյն Աեհ . կայսրը Տնօրինական Ս . Տեղիքը պցելու-
թեան առթիւ՝ այդ տեղ իւր գերման հոգատակ կա-

է. Լատինաց գերեզմանատունը նոր պատուով բաժնուած է, և բայց ՚ի հիւօխ սային կողմէն ուր ճանտպարհ կայ, միւս երեք կողմէն Մեր գերեզմանատան մէջ մտած է, և յայտնի կ'երեւի որ սկիզբը բոլոր մէկ գերեզմանատուն եղած է Հայոց ազգին սեփհական, ու յետոյ մէկ փոքր մասը Լատինաց տրուած, ինչպէս կը վկայեն սուրբ Աթոռոյս հին Յիշատակագրերը, 1866ին Լատինք երբ իրենց գերեզմանատունը շրջապատեցին, բռնութեամբ Մեր գերեզմանատան մէջ երկու դուռ թողուցին, որուն համար թէեւ Բարձրագոյն Գրան բողոքած էր սուրբ Աթոռոյս վարչութիւնը, բայց և այնպէս սոյն խնդիրը դեռ վէճի տակ մնացած էր (¹)։

1892ին տեղական Կառավարութեան միջոցաւ երից ազգաց մէջ համաձայնութիւն գոյանալով՝ Մեր և Յունաց Գերեզմանատները եւս շրջապատեցան, մէջտեղը ճանտպարհ ձգուե-

(¹) Տե՛ս Խնդիր Ս. Տեղեաց, տպեալ երուստղէմ 1871•

լով Լատինք իրենց մեր Գերեզմանա-
տան վրայ բացուող երկու դռները հի-
սեցին մեր կողմէն եղած մասնաւոր
փոխարինութեամբ :

Ամերիկացւոց գերեզմանատան հա-
րաւակողմը պղտիկ գետին մի կը տես-
նուի , որ սուրբ Աստուածածնի տանը
տեղն է , ուր Յիսուսի Քրիստոսի մա-
հուանէն յետոյ կը բնակէր Ս . Յովհան-
նէս Առաքելոյն հետ , և ինքն ալ այս
տեղ վախճանեցաւ : Դեռ քանի մի խո-
շոր քարեր կը տեսնուին , որոնք աւան-
դութեամբ կ'ըսուի թէ նոյն տան հնու-
թեան կը վերաբերին : Յոյնք այս տեղ-
ւոյն չորս պատին քով Պենտէկոստէի օրը
ազօթելու կուգան և ժամերգութիւն
կը կատարեն , ըստ որում իրենց գե-
րեզմանատան կից է (1) :

(1) Նրջապատէն դուրս գտնուած գետինը՝ որ
աւանգութեամբ Ս . Աստուածածնի տան տեղ լինելը
կը կարծուի՝ 1898 ին Վեհափառ Սուլթանի կողմէն
գերմանացւոց Վեհ . կայսեր շնորհուած է , և 1899 ին
նոյն Վեհ . կայսրը Տնօրինական Ս . Տեղիբը պցելու-
թեան աւթիւ՝ այդ տեղ իւր գերման հպատակ կա-

Բ. Սորբ Սիօն վերնափուն : Յիշեալ
 դեանի արեւելեան դին իրար անցած
 տներու կոյտ մի կը նշմարուի գմբեթա-
 ւոր և միարէ մի եւս ունի . Հայք սոյն
 տեղը Ս. Սիօն կը կոչեն , Մահմետականք՝
 Դեպի-Տավոս , և Լատինք Ընկրեաց Կեղ :
 Երկու դուռ ունի , մին արեւմտակողմը՝
 և միւսն հիւսիսակողմը . այս դռնէն ներս
 կը մտնեն այցելութեան գացող ուխ-
 տաւորք : Մահմետական Սիօնցիք հոս
 յատուկ տեղ մի ցոյց կը տան ուխտ
 քնելու , ուր մտնելու համար նախ ա-
 խոռի մի մէջէն պէտք է անցնիլ , յետոյ
 աստիճաններէ վեր քարայտակ պզտիկ
 դաւթի մի վրայ կ'եննուի , և հոն ձախա-
 կողմեան դռնէն հին եկեղեցւոյ մէջ
 կը մտնուի , որ հիմայ մզկիթ է , և կա-
 ռուցեալ է այն վերնատան տեղւոյն
 վրայ , ուր Յիսուս Քրիստոս իւր Առա-
 քելոց հետ զատկական գառը կերաւ ,
 ուրբ Հաղորդութեան խորհուրդը կա-

Բողիկներուն շնորհեց , ուր այժմ կը կառուցուի հոյա-
 կապ Եկեղեցի մը :

տարեց, Աշակերտաց ոտքերը լուաց, և թացեալ պատառը Յուդայի տալով՝ յայտնեց թէ անոր ձեռօք պիտի մատնուի և Պետրոս առաքեալն Ձինքն պիտի ուրանայ. վերջապէս այս տեղ խոստացաւ անոնց Սուրբ Հոգին զրկելու: Երկու անգամ այս տեղ՝ Վերնատան մէջ՝ իւր Աշակերտներուն երեւեցաւ. երկրորդ անգամուն իւր կողը բանալով՝ թուժա առաքելոյն մատովը շօշափել տուաւ ըսելով. « Բէր զձեռն քո եւ մխեա 'ի կողս իմ, և մի լինիր անհաւատ՝ այլ հաւատացեալ »: Յիսուսի Քրիստոսի համբարձմանէն յետոյ Հոգին Սուրբ այս տեղ իջաւ Առաքելոց վրայ:

Քրիստոնէութիւնը ծաղկած ժամանակէն 'ի վեր այս սուրբ Տեղոյն վրայ եկեղեցի շինուած էր. և մինչեւ վեշտաւաներորդ դար Քրիստոնէից ձեռքը մնացած և երեւելի ուխտատեղի եղած էր. իսկ 1554 թուականին Մահմետական Շէյխ մը տիրեց սոյն տեղոյն եւ բնակութիւն հաստատեց անդ, որ մինչեւ հիմայ նորա սերունդը բազմաւ

նալով կը բնակին, եւ որոնք Սիօնիք կը կոչուին, և դրամական փոքրիկ պարգեւով ընդունելով ուխտաւորներէ՝ ցոյց կուտան անոնց վերնատան տեղը, որ ինչպէս տեսանք, այժմ անշուք սրահ մի է:

Սիօնիք կը հաւատան թէ Դաւթի եւ Սողոմօնի գերեզմաններն այս տեղ են, և ներքնասենեակ մի ցոյց կուտան զանոնք պարունակող. բայց ներս մըտնելու ոչ այլոց կը թողուն և ոչ իրենք կը մտնեն. եւ այս պատճառաւ բոլոր տեղւոյն Նեպի-Տալոս անուներ կը տան: Քաղում ժամանակէ ՚ի վեր է Ս. Սիօնի հարաւային եւ հիւսիսային արեւելակողմը բաւական նոր շէնքերով ընդարձակեցին, հիւսիսային արեւելեան կողմի նոր շէնքերը մինչեւ մեր Փրկչականքի հարաւային պատը կը հասնին, նեղ շանապարհ մի միայն երկուսին մէջ տեղը մնալով:

Գ. Պեպրոս Առաքելոյն այրը: Այս ճանապարհէն ետ դառնալով դէպ ՚ի Փրորկչադուռը, եւ անկէ աջ կողմի շանա-

պարհը շեղելով պարտադիր պատին տա-
 կովը, մասնենք աջ կողմերնիս եկած ա-
 ռաջին ճանապարհը որ քարակոյտ եւ
 անհարթ շաւիղ մի է . եւ անկէ 200
 մեդրի չափ յառաջ երթալով դէպ 'ի
 հարաւ՝ ծակ տեղ մի դիմացնիս կ'ենէնէ
 Սողոմօնի ջրացքին մէջ, անկէց ալ դէպ
 յարեւելք վար իջնելով եւ 100 մեդր
 եւս քալելով Պեպոս առափըն այրը կը
 հասնինք: որ Աիօն լեռան հարաւային
 արեւելեան ստորոտին վրայ է՝ ճանա-
 պարհին ձախակողմը եւ 10 մեդր դէպ
 'ի ներս: Պետրոս առաքեալ իւր Տէրն
 ուրանալէն յետոյ հաւուէն խօսիլը իմա-
 նալով՝ յիշեց Յիսուսի Քրիստոսի կան-
 խասացութիւնը, և իւր յանցանքը ճա-
 նաչելով՝ եկաւ այս տեղ իւր մեղքը ող-
 բալու: Այրին բերանը բաւական ընդար-
 ձակ է ու դէպ յարեւելք կը նայի: Այս
 տեղ Արշակունեաց տէրութեան ժամա-
 նակէն փոքրիկ վանք և եկեղեցի ունէին
 Հայք և կը կոչուէր . «Վանք հառաչանաց
 Պետրոսի», և մինչեւ երկոտասաներորդ
 դարուն մէջ եկեղեցին կը մնար:

Գ. Սելովամայ աղբիւրը : Ասկէ կրկին ետ դառնանք մինչեւ Փրկչադրան կողմը եւ պարսպին տակովը սովորական ճանապարհաւ առաջ երթանք քաղաքին Աղբիւսաց ըսուած դուռը զոր Արաբացիք Պապէլ-Մաղարդէ կը կոչեն, և անկէ դէպ 'ի Սելովամայ աղբիւրը երթալու շաւիղը բռնելով իջնենք, և առկէ սկսելով շարունակենք մեր այցելութիւնը զոր Երկրորդ այցելութեան մէջ թողուցինք :

Չորին արեւմտեան կողմը կ'իյնայ Սելովամայ աղբիւրը որ դէպ 'ի արեւելք կը նայի, ուր է համանուն գիւղն, որուն հարաւային արեւելեան կողմը՝ մզկիթ կարծուած հին շէնքի մը լաւերակները կ'երեւին :

Սելովամայ աղբիւրը, զոր Արաբացիք Այն-Սըրտի-Մերիէ՛ (¹) կ'անուանեն, Ուխտ ըսուած բլուրին ստորտը շէնուած է . 17 ոտք աստիճաններէ վար

(¹) Մարիամայ տիրուհւոյ (Ասուածածնի) աղբիւրը կը նշանակէ :

կիջնուի, ուր պզտիկ և տափարակ տեղ մի կայ, անկէ դարձեալ 15 ոտք վար իջնելով ջրին մօտ կը հասնուի: Ջրին հասանքը անկանոն է, ժամանակ կայ որ օրուան մէջ կը դադրի յետոյ նորէն կ'ըսկսի, համը աղի է՝ չխմուի, բայց ամառը մեծ օգուտ կ'ընէ քաղաքին՝ ջրերուն նուազած ժամանակը: Աւազանը՝ ժայռին մէջ փորուած պզտիկ խուցի մը մուտքը շինուած է, եւ այս խուցին մէջէն է ջրանցքը, որու միջին լայնութիւնն է 63 հարիւրորդամեզր եւ բարձրութիւնը տեղ տեղ մինչեւ 4 մեզր և քիչ մը աւելի: Երկրորդ աւտիճաններու վրան հնաշէն կամարով ծածկուած է:

Ե. Յոգայի կառուած ծառին գեղը՝ Չաքարիա մարգարէի գերեզմանէն դէպ 'ի հարաւ 100 մեզր հեռու, Յուգայի Սկարիովաջուց կախուած ծառին տեղն է՝ ըստ աւանդութեան. հոս է և Հրէից գերեզմանատունը, ուր տեսնելու արժանաւոր բան մի չ'կայ, բաւական է հեռուանց սկնարկ մի նետել, և անի,

բաւ մտանութեան աղետալի վախճանը
խորհրդածել՝

Զ. Գայլնաղղո-նիւն լեռ . Դարձեալ
Ջաքարիայի գերեզմանէն սկսելով, 363
մեդր դէպ 'ի հարաւ ձախ թեւի վրայ,
Արաբացի գիւղականաց գիւղ մի կը
տեսնուի Սերլամ անուամբ . ինչպէս քիչ
մը առաջ յիշեցինք . այս գիւղը Գայլնա-
ղղո-նիւն լեռն⁽¹⁾ ստորոտը շինուած է: Այս
լեռան Գայլնաղղո-նիւն ըսուելուն պատճա-
ռը այն է որ . Սողոմոն Եգիպտոսէն ի-
րեն համար բերել տուած կռապաշտ
կանանց համար . այս տեղ կռոց տա-
ճարներ կառուցանելով ժողովուրդը
իւր վրայ գայլթակղեցուց . Գ. Թագ .
ԺԱ. 8 : Դ. Թագ . ԻԳ. 13 : Այս տաճար
ներէն մին դեռ կանգուն կը կենայ գիւ-
ղին քով, եւ անոր հիւսիսային կողմը
սրածայր ժայռի մի վրայ՝ միակտուր քա-
րէ քառակուսի՝ ժայռին մէջ փորուած
դեղին գունով, և պզտիկ դուռ մի ունի

(1) Լեռն Մոսթայ, որ Թարգմանի Լեռն
պղծութեան կամ ապականութեան . Դ. Թագ . ԻԳ. 13 :

Կեդրոնի ձորին վրայ : շարտարապետական զարդերէ զուրկ չէ դրսի կողմէն , իսկ ներսի կողմէն՝ արեւելեան ու հիւսիսային երեսները պատուհանի նման երկու խորշեր ունի եւ առաստաղն ալ իշու կռնրկի ձեւով է :

Է . Արտնի պարտէզ եւ ջրի առալան Ընցնինք յառաջ Կեդրոնի ձորին միւս կողմէն եւ Սելովամայ աղբիւրի առջեւէն զոր արդէն տեսանք , աջ կողմերունիս է Ուխտ ըսուած բլուրը , ձախ կողմերնիս Արտնի Պարտէզը : 300 մեդրի չափ հեռուն՝ Ճանապարհին վրայ ջրի առալան մի կը հանդիպի աւերեալ , հոս կուգայ կը Թափի Սելովամայ աղբիւրի ջուրը՝ ապառաժի մէջ փորուած ստորերկրեայ ջրբուխէ մի անցնելով : Գիւղի Ֆելչակ կանայք այս աւազանին մէջ կը լուան իրենց կտաւեղէնները , եւ քաղաքին պահապան զօրքերը ասկէ կուգան ջուր առնելու : Ասոր չորս դին գետինը պարկած կ'երեւին նշանաւոր շէնքի մը աւերակները , որ հաւանականաբար մեծ աղբիւրի մի մնացորդ նիւթեր եղած

պիտի ըլլան, որ Գ. Եզրասի մէջ կը կարգանք. Թ. 14: Այս աւագանին ջրովը կ'ուռոզին Սելովամայ պարտէզները, այն է Ս. Գրոց Պարփէզ արհունի ըսածը. Գ. Թագ. ԻԵ. 4: Երբ. ԼԹ. 4: Զրի աւագանը Ոփալ բլուրի հարաւային արեւելեան ծայրը կ'իյնայ:

Ը. Սողոմնի լիճը: Այս աւագանէն 4-5 մեդր դէպ 'ի հարաւային արեւմտակողմը կը տեսնուի Սողոմնի լիճը. զոր Յովսէփ Փլարիանոս կը յիշատակէ, որուն մէկ մասը ժայռին մէջ փորուած է, և հիմակ բանջարեղինաց պարտէզ ըրած են:

Թ. Սելովամայ աւաղանը: Վերայիշեալ աւագանէն 83 մեդր դէպ 'ի յարեւմուտք է Սելովամայ աւաղանը, Ոփալի հարաւային արեւմտեան մասին Դիրբէնի ձորին դէպ 'ի ծայրը ձախ կողման վրայ շինուած. յիշեալ ձորը Ոփալ բլրին և Սիօն լեռան մէջտեղէն անցնելով Յովսափատայ ձորին հետ կը միանայ: Այս աւագանին համար է որ ըսաւ Փրկիչն մեր Յիսուս 'ի ծնէ կոյրին, Թէ գնահ Սելո-

վամայ աւազանին ջրովը աչքերդ լուծ
որ տեսնես . Յովհ. Թ. 1-7: Հին ժամա-
նակ այս տեղ եկեղեցի կար և աւազանը
անոր մէջ առնուած էր , եւ երկուքի
բաժնուած , մին այր մարդոց՝ և միւսը
կանանց համար որոնք իրենց ցաւոց
բժշկութիւն գտնելու համար լուացուե-
լու կուգային : Երկուտասաներորդ դա-
րուն մէջ դեռ եկեղեցւոյն կամարներն
ու սիւները կեցած էին , և շատ հաւա-
նական է որ Հայոց 70 եկեղեցեաց մին
եղած ըլլայ , որոնց կարգին մէջ կը
յիշուի Թէ չորս վանք կան Սելովամայ
կողմը :

Այս աւազանը 15 մեդր երկայնու-
թիւն և 4 մեդր միջին լայնութիւն և 5
մեդր բարձրութիւն ունի : Արեւելեան
պատին մէջ դեռ քանի մը սիւներու
բեկորներ կը տեսնուին :

Ուրիշ բլուրը եւ Միօնի մէկ մասը
որու դիմացը կը գտնուինք , հին Երու-
սաղեմի պարսպին մէջն էին . Յովակիմ
Թագաւորը Ուրիշ պարսպին վրայ շէ-
նութիւններ ըրած է . Բ. Միայ . ԻԷ . 3 :

Ժ. Եսայի մարգարէի սղոյման պէղը: Ասկէ 130 մեդր անդին գետնէն բարձրացած ու քարերով ամրացուցած տեղ մի կը տեսնուի Սողամօնի լճին հարաւային աւրելակողմը, և վրան թթի ծառ մի կայ քաւական հին. աւանդութեամբ կ'ըսուի թէ Եսայի մարգարէն հոս սղոցեցաւ Մանասէ թագաւորին հրամանաւ, և այն տեղուանքը թաղուեցաւ:

ԺԱ. Յոբայ հոր: 400 մեդրաչափ նախ դէպ 'ի հարաւ, յետոյ դէպ յարեւելք յառաջ երթալով երկու շէնք կը հանդիպին այն տեղ ուր պարտէզները կը վերջանան: Այս շէնքերուն մէկը Մահմետականաց աղօթատեղի է, որու քով ջրի տաշտ մի կայ, եւ միւսը հորի մի վրայ խարխուլեալ շինուած մի է, զոր Արաբացիք Պիր-Էյոպ կը կոչեն, այն է Յօբայ հոր, զոր ռամիկք սովորաբար Աբբայ-հոր կ'անուանեն: Հասարակօրէն կը կարծուի թէ Հռոգելի աղբիւր ըսածն այս է, Յուդայի եւ Բենիամինի ցեղին սահմանագիտոյն վրայ շինուած. Յեւ. ԺԾ. 7: - ԺԸ. 16: Բ. Թագ. ԺԷ. 17:

Սոյն հորին մէջ, ինչպէս կը կարծուի, իարայեւացիք Բաբելոն գերի երթալէն առաջ Նրեմիա մարգարէի հրամանաւ Տաճարի նուիրական հուրը պահեցին: Գերութենէ դառնալէն յետոյ Նեեմի՝ հուրը պահող քահանայից որդիքը ղրկեց որ երթան զայն փնտռեն, բայց անոնք թանձրացած ջուր միայն գտան հոն: Այն ժամանակ Նեեմի հրամայեց որ այն ջրէն առնուն և փայտերուն ու զոհերուն վրայ ցանեն, այն միջոցին երբ արեւն ամպերուն մէջէն դուրս ելնելով անոր վրան փայլեցաւ, յանկարծ կրակ մի բռնկեց, որով նուիրական հուր ըլլալը յայտնուեցաւ. Բ. Մ.՝ Ա. 19-22:

Այս ջրհորը 29 մեդր խորութիւն ունի, և իհիստ մեծ քարերով շինուած է, որով անոր հնութիւնը կ'իմացուի. կենդանի ջուր է, որ նոյն հորին տակէն կ'անցնի կ'երթայ, բայց ուր երթալը մարդ չգիտեր. երբ սաստիկ անձրեւներ տեղալու ըլլան, ջուրն այնքան կ'աճի, մինչեւ բերնէն դուրս հոսելով առուակ

մի կը կազմէ և բաւական օրեր կը տեւէ. մինչեւ մէկ ամիս շարունակ հոսիլը տեսնուած է : Եւ այս յորդուածիւնը բնակչաց քով հնձոց առատութեան նշան է, և մեծ ուրախութեան տօն կը կատարուի Կեդրոնի ձորին մէջ Յօբայ-հորին բոլորտիքը, ցորչափ որ տեւէ անոր յորդուածիւնը : Զրին համը Սելովամայ աղբիւրին պէս աղի չէ, կրնայ խմելու գործածուիլ :

ԺԲ. Ուստի շոտնէն : Յօբայ-հորէն ետ դառնալով իբր 150 մեդր ճանապարհ, աջ կողմերնիս թողլով Կեդրոնի ձորը և Սելովամայ պարտէզները, մըտնենք այն նեղ ճանապարհը որ կիրճի մի աջ կողմը կը հանէ արեւմտքէն դէպ յարեւելք : Այս խոր կիրճը Ենոնի օրդուոյն ձորն է, զոր տեղացիք այժմ Ուստի-Րոպպ կամ Ուստի-Շոտնէն կը կոչեն. որ Յուդայի ցեղի սահմանը Քրեւիամինի ցեղէն կը զատէր : Այս ձորին մէջ Խարայելացիք կը պաշտէին Մողոքը սուած կուռքը, որուն մինչեւ անգամ մարդիկ կը զոհէին : Յուդայի Մանասէ

թագաւորը իւր զաւակները սոյն Մո-
ղթայ կրակէն անցուց • Բ • Մնայ • ԼԳ • 6 •

Այս ձորը՝ ձոր Գեհնի կամ կոտու
քածի ալ կոչուած է՝ Իսրայելացւոց այն
տեղ կուսպաշտութեան հետեւելնուն
պատճառաւ • Երեմ. Է. 31-32 • Եւ Ե-
րեմիա մարգարէն՝ Աստուծոյ հրամա-
նաւ, հողէ թրծած աման մի բերելով,
ձերուներաց եւ քահանայից հետ մէկ
տեղ, սոյն ձորին մէջ զարկաւ գետինը
խորտակեց՝ ըսելով • « Այսպէս, կ'ըսէ
զորութեանց Տէրը, այս խեցեղէն ա-
մանը ինչպէս որ խորտակեցաւ, այնպէս
պիտի ջախջախեմ այս ժողովուրդը եւ
այս քաղաքը, և ալ չպիտի բժշկուի ո •
Երեմ. ԺԹ • 11-14 •

Յիշեալ ձորին ձախ կողմին վրայ
եղած փորուածոյ աստիճաններէն վեր
ելնելով, ընդարձակ գերեզմանոց մի կը
տեսնուի, որ հաւանականաբար հին
Տօլբէլթն եղած պիտի ըլլայ, ուր կ'ե-
րեւին ժայռին մէջ փորուած գերեզ-
մաններ • Զին ժամանակ մինչեւ երկո-
տասաներորդ դարը ճգնաւորներու բը-

նակարան եղած են , և տակաւին նշա-
նագիրներ կը տեսնուին ոմանց վրայ :

ԺԳ. Առաքելոց առանխարանը : 150 մեդ-
քաչափ տեղ քայելով եւ քարածայռի
վրայ փորուած աստիճաններէ վեր ելնե-
լով, ձախ կողմը ժայռին մէջ փորուած
շէնք մի կ'երեւի ութ ճակատասիւնով
և չրթունքով զարդարուած , նայնպէս
երկու կոյզ խաղող, երկու պսակ և չորս
վարդ, որոնք իրարմէ երկու բարակ գու-
լազանաձեւ զարդով բաժնուած են :
Արտաքին սենեակը մեծ մասամբ աւե-
րած է : Այս շէնքը Առաքելոց առանխա-
րանը կը կոչուի , վասն զի՝ ըստ աւան-
գուլթեան՝ Յիսուս Քրիստոս Զիթենեաց
պարտիզին մէջ բռնուելէն յետոյ , Ա-
ռաքեալներէն 7 կամ 8 հոգին հոս եկան
առանձնացան : Աննա մեծ քահանայա-
պետին համար այս տեղ թաղուեցաւ
կ'ըսուի : Յետոյ Ոնոփրիոս անապատաւ
կանը աստ բնակելու եկաւ , ուր ժամա-
նակէ մի յետոյ պզտիկ մատուռ մի եւս
շինուեցաւ , ինչպէս ցոյց կուտան նը-
կարներու մնացորդները : Մէջը գերեզ

մանական խորշեր դեռ կ'երևին, ոմանք բարձրկեց նստարանի ձեւով ու կամաբով մի յասկացած :

ԺԴ. Ախրամա կամ Զառնէր : Առաքելոց առանձնացած տեղւոյն կից է արեւմտեան կողմէն Ախրաման կամ Ս. Աւետարանին մէջ Ագարակ արեան ըսած տեղը, ուր կ'ենունի և մեզր բարձրութեամբ ժայռի մի վրայէ անցնելով այս գետինը Յուդային ետ դարձուցած երեսուն արծաթով գնեցին Քահանայապետք՝ օտարաց գերեզմանատուն ընելու համար : Մաթթ. ԻԷ. 1-8, Գործ. Ա. 19 : Իջնոյն Հեղինէ պարիսպով պատած էր սոյն տեղը, որու մէջ կ'երեւի Հայոց Զառնէրը ⁽¹⁾, որ Հաննէ Պատմագիր եւս

(1) Շառնէլ (Charnel). Նշանակութիւնն է « Դիակիր, ուր թաղեալ են մարմինք » . տես 'ի Բառարանն Անգղերէն : Որով հաւաստեալ կը մակարեբի թէ՛ Խաչակրաց ժամանակը այս տեղւոյս անունն՝ է Ակեղ-գամայ, Ագարակն բրտի, կամ Արեան, Գերեզմանն օտարաց, առհասարակ կը կոչուէր Շառնէլ, որ ինչպէս նաեւ տեղացի Արարացի Գրիստոնեայք՝ մինչեւ յայժմ կը կոչեն այս տեղս Շառնէլ, յորմէ առնելով մենք եւս կը վերաձայնեմք ճառներ եւ կամ Զառնէր :

Հեղինէի շէնքը ըլլալ կը կարծէ . գետնափոր տեղ մի է առանձին դռնով, որ հիմակ գետնին տակ ծածկած և պատով հիւսուած է, ինչպէս ներսի կողմէն կ'երեւի . ստորին մասը ժայռին մէջ փորուած է . պատերը խիստ հին են և վրան խաչաձեւ գմբէթ ունի՝ ութ տեղաց ծակեր բացուած, ուսկէ մեռեալները վար կ'իջեցնէին : Բոլոր շէնքը 20 մեդրաչափ երկայնութիւն եւ 12 լայնութիւն ունի : Ինչպէս ըսինք, այս շէնքը Հայոց սեփական է եւ տարուէ տարի գետնին իճարէն մինչեւ ցարդ կը վճարուի :

1736 Թուականին 'ի Բրուսիա տըպուած Dappers Palaest. անուն գրքի մը մէջ, եր . 421, յիշեալ Հայոց Ջառների մասին հետեւեալ տեղեկութիւնն կայ, որոյ թարգմանութիւնը արժան կը համարիմք յառաջ բերել . « Արեգակն « Ակեղդամայ կամ գերեզմանատունն

Յակոբ աւելի ճիշտ է « Շտոնէլ » կոչել նոյն տեղը անունն :

« ուխտաւորաց՝ Սիօն լեւան հարաւա-
 « կողմն, Գեհնի ձորոյն վերի կողմն է,
 « ցամաք բլուրի եւ քարաժայռ լե-
 « րանց մէջ տեղ, որ հին ժամանակնե-
 « րէն ՚ի վեր փոքրիկ կտոր գետին մ՚է,
 « և որ Հրէայնեցի յԵրուսաղէմ մեռ-
 « նող օտարաց գերեզմանատուն ընե-
 « լու համար Բրուտէն գնեցին 30 Ար-
 « ծաթի, զոր մատնիչն Յուդայ ետ
 « դարձուց. Մատ. Իլ. 3-8. Գործ. Ա. 19:
 « Ներկայ ժամանակին մէջ (1736) սոյն
 « տեղւոյն կը տիրեն Հայերը՝ որք Մահ-
 « մետականներէն գնած են յատկա-
 « պէս՝ գերեզմանատուն ընելու հա-
 « մար: Սոյն տեղւոյն կեդրոնը քառան-
 « կիւնի կամարակապ շէնք մի կայ կա-
 « ռուցեալ, 40 ոտնաչափ երկարու-
 « թեամբ և լայնութեամբ, առաստա-
 « ղէն 4 և կամ 5 լուսամուտներ ունի,
 « յորմէ չուանաւ կիջեցնեն Հայերը
 « յԵրուսաղէմ մեռնող Հայ ուխտա-
 «ւորաց մարմիններն, բայց առանձին
 « դուռ մի եւս ունի յորմէ մտնելով,
 « ննջեցելոյն մարմինն՝ առանց թաղե-

« լու, կարգաւ՝ քով քովի՝ գետնի վրայ
 և կը դնեն և այնպէս կը մնայ գետնին
 և երեսը, 'ի վերայ այսր ամենայնի,
 և քանի մ' օրէն զկնի ննջեցելոց մար
 և մինները կը չորանան առանց հոտելոյ »:

Մարինոս Լատին պատմագիրն ալ
 այս տեղւոյն համար կ'ըսէ թէ քսան
 և չորս ժամէն մոխիր կը դարձնէ դի-
 ակն՝ եթէ հողի մէջ թաղուելու լինի:
 Կը պատմուի թէ կ'ըսէ՝ Դժխայն Հեղե-
 նէ, այս հողէն նաւով Հռովմ տարաւ,
 և Ֆլատիկան լերան մօտ լեցնել տալով
 գերեզմանատուն ըրաւ, ուր թաղուած
 մեռեալներուն մարմինն Չէ ժամէն հող
 կը լինին, մնալով միայն ոսկորներն:

ԺԵ. Չար խորհրդի լեւը, Շարունակե-
 լով ճանապարհը ձորին եզերքով, որ
 երթալով իւր խորութիւնը կը կորսնցնէ,
 աջ դին եղած ճանապարհին վրայէն ձո-
 րին միւս եզերքը ելնելով՝ ձախ կողմը
 լեռ մի կը տեսնուի, զոր ոմանք տեղա-
 ցիք Ճեղէլէլ-Քոպոբ կը կոչեն, որ
 « Գերեզմանոցի լեռ » ըսել է, սոյն գե-
 րեզմանատան պատճառաւ զոր վերը

տեսանք • իսկ ոմանք աւելի գործածական անուամբ Տէյր-ապո- - թոր կը կոչեն, որ կընչանակէ՝ « Յուլին հօրը վանքը » • Մերայինք Յուդայի գիւղ կը կոչեն, և ուրիշ Քրիստոնեայք « Չար խորհրդի վեռ կ'անուանեն. վասն զի Կայիափա քահանայապետը հօն ամարանոց մի ունէր, ուր ըստ աւանդութեան՝ անօրէն խորհուրդն ըրին Յիսուսի Քրիստոսի դէմ ըստ Յովհաննու աւետարանին, որ կ'ըսէ թէ քահանայապետք և փարիսեցիք ժողովք ըրին, և Կայիափա վճռեց՝ որ լաւ է մէկ անձ մի մեռնի ժողովրդեան վրայ և բոլոր ազգը չկորնչի. Գլ. ԺԱ. 47-53. և այն օրէն 'ի վեր խորհեցան որ Յիսուսն սպաննեն : Այս ամարանոցիս տեղը հիմակ յայտնի է լերանը՝ ծայրը շինուած մէկ երկու տներէն :

ԺԶ. Բողոքականաց Դպրոցը և Գերեզմանագոհնը : Չորին ձախակողմեան եզերքէն առաջ երթալով՝ աջ կողմիդ վրայ կ'իյնայ Բողոքականաց դպրոցը որ Աիօն լերան զառ 'ի վար տեղւոյն վրայ կառուցուած՝ և շրջապատուած է, որուն մէջ է նաեւ

իրենց գերեզմանատունը . այս տեղ հնութեան վերաբերեալ՝ ժայռի մէջ գորուած աստիճաններ կ'երեւին միայն , որ ըստ ոմանց Գաւթի ժամանակէն կը կարծուին :

Ճանապարհին ձախ կողմը ջուր պարունակելու մեծ աւազան մի կայ , որուն Պիրիէլ-էլ-Սոյլան կը կոչեն , և Սուրբ Գրոց « Զրբուղիս կազմելոյ » ըսածը կը կարծուի (1) , որ 180 մեդր երկայնութիւն և 80 մեդր լայնութիւն ունի . հիմակ աւերակ է և ջուր չպարունակեր երբէք . Եննի որդւոյն ձորին մէջ չենուած է : Աւազանի հարաւային պատին վրայ ջրանցք մը կայ(2) ձորին լայնութեան վրայ չինուած ինը աչք կամուրջով , որ Յերուսայեոց ժամանակէն մնացած կը

(1) Գ . Եղբաս . Գ . 16 : կաշիւոյ բաւը , որոյ երբայեցերէն է Աստիակ , մեծ աշխատութեամբ և արուեստիւ շինուած կը նշանակէ :

(2) Անցեալ 1901 թուականին Սողոմոնի աւազաններէն և այլ տեղերէ հոսող ջուրեր միացնելով՝ երկաթուղւոյ կայարանի մօտերը , (ինչպէս) նա և Սողոմոնի տաճար և ուրիշ քանի մը տեղեր ազգիւրներ բայնի ժողովրդեան պիտոյից :

կարծուի: Այս ջրանցքը Պիղատոս դատաւորը Տաճարին գանձովը անգամ մի նորոգեց, ինչպէս կը պատմէ Յովսէփոս Գիրք. ԺԸ. 4. որու պատճառաւ մեծ խռովութիւն ծագեցաւ դատաւորին և ժողովրդոց մէջ և բազմաթիւ Հրէայք սպաննուեցան: Քրիստոնեայք Սողոմոնի ջրանց, իսկ Մահմետականք Քանաթ-էլ-Քո-Ֆֆար կ'անուանեն: Մեր ժամանակները, շատ տարի չէ, քաղաքիս նախկին Կառավարիչ Իզզէթ փաշայն եւս նորագեց, եւ Աղբիւր կնքեալի ջուրը՝ նոյն ճամբով Օմարայ տաճարը բերել տուաւ:

Ասո՛րհա՛կ աւազանին արեւմտեան հարաւակողմը մէկ գծի վրայ շինուած սենեակներու շարք մի կը տեսնուի, զոր Մոնթէֆիօրէ մեծահարուստ Հրէայն շինել տուաւ իբր աղքատանոց 1860ին ուր կը բնակին կարգաւ երկերկու տարի՝ կարողութիւն չունեցող Հրէայ ընտանիքներ՝ ձրի: Մէջը կայ հողմաղացք մի եւս:

Յիշեալ աւազանին հիւսիսային արեւմտակողմը բլուր մի կը տեսնուի,

ուր տեղ կայ մի փոքրիկ եկեղեցի Յու-
նաց յանոււն անարծաթ բժշկացն կող-
մայի և Գամիանոսի, որոց գերեզմանքն
եւս աստ են ըստ ոմանց, բայց Յոյնք
յանոււն Ս. Գէորգայ կը կոչեն զեկե-
ղեցին: Սոյն եկեղեցին պարունակող
բլուրին մնացեալ ամենամեծ մասը ձի-
թենեաց պարտէզ է, եւ Նիգոֆորիէ
կ'ըսուի, յանոււն Նիգոֆորի Յոյն կրօ-
նաւորի մը, որ առաջին անգամ ծախու-
առնելով տեղը՝ ձիթենեաց ծառեր ւորն-
կեց. ասկէց կը տեսնուի Յոպպէի դու-
ռը, զոր արդէն առաջին անգամ Երու-
սաղէմ մտած ժամանակնիս տեսանք:
Ատրիանոս կայսրը այս դրան վրայ մար-
մարեայ քարէ խոզի պատկեր մի կանգ-
նած էր, արգիլելով Հրէից որ հոն չմօ-
տենան և մօտեցողը մահուամբ կը պատ-
ժուէր: Դրանը վրայի վերնագիրէն կ'ի-
մանամք՝ որ 1544 ին Սուլթան Սելիմին
որդին Սիւլէյման Բ. վերանորոգել
տուած է:

Երրորդ այցելութիւննիս այս տեղ
կ'աւարտի:

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ս. Յակովբայ Եկեղեցւոյն
եւ Վանուց մեջ :

Բարեպաշտ ուխտաւորաց հինգերորդ արտաքին այցելութենէն առաջ՝ հարկ կը համարիմք ներքին այցելութիւն մի ընել տալ Սուրբ Յակովբայ մայր Եկեղեցւոյն եւ Վանուց ուրիշ նշանաւոր տեղուանքը, թէ՛ հոգեւորապէս մխիթարելու և թէ՛ իրենց փափազն ու հետաքրքրութիւնը լեցնելու համար. ըստ որում սոյն այցելութիւնն բոլորովին ազգային հաստատութեանց կը վերաբերի, և իւրաքանչիւր ոք իւր սրտին մէջ հարկաւ կ'ըզգայ ուրախութիւն և մխիթարութիւն մի, տեսնելով ազգային բարեպաշտական հնութիւններն եւ ուրիշ ուսումնական հաստատութիւններն :

Մտնենք ուրեմն Ս. Եկեղեցւոյ մէջ որ փառաւոր և ակնապարար շինուած մ'ունի և որու երկայնութիւնն է 22 մեդր

և լայնութիւնն է 16․ և մօտենանք Աւագ Սեղանին մօտ մեր երկրպագութիւնն ու երախտագէտ սրտերնիս նուիրելու։ Սոյն Աւագ Սեղանին ներքեւ թաղուած է Ս․ Յակովբայ Տեառնեղօր մարմինը, որովհետեւ սոյն եկեղեցւոյ տեղն էր Ս․ Յակովբայ տունը, և հոս ամփոփուեցաւ միւս Սուրբ Յակովբայ՝ Զեբեդիայի որդւոյն գլուխը։

Աջակողմեան դասին մէջ կաթողիկէիւ եղած մեծ ու փառաւոր աթոռը Տեառնեղօրն է, ուր տարին անգամ մի՛ յիշեալ Ս․ Առաքելոյն տօնին օր, ժամանակին գտնուած Պատրիարքը կը բազմի տաւառտեան ժամերգութեան միջոցին, « Փսալք 'ի բարձունս » երգին սկիզբէն ցվերջ ժամերգութեան․ ժամերգութիւնը լրանալէն յետոյ բոլոր դասականք՝ Եպիսկոպոսք, Վարդապետք, Սարկաւագունք եւ Դպիրք կ'երթան Սրբազան Պատրիարքին աջը կը համբուրեն 'ի շնորհաւորութիւն։ Անոր քովի աթոռն է Պատրիարքական սովորական աթոռը, ուր ամեն ստեն

կը բազմի Ս. Աթուռոյս Պատրիարքը : Սոյն Եկեղեցին հին ատենները ըստ երկայնութեան աւելի փոքր լինելով, աւանդութեամբ կ'ըսուի թէ Հեթում Թագաւորն ընդարձակել տուած է, Աւագ Սեղանն ու քովի երկու սեղանները դուրս քաշել տալով : Հայոց ՌՃԱ Թուականին (1652) Փիլիպպոս կաթողիկոսը յերուսաղէմ գալով՝ Ս. Եկեղեցոյ դասերուն՝ և ատենի յատակը գոյնզգոյն քարերով և ճարտարապետական հիւնաքարհետով զարդարել տուաւ և բեմն բարձրացուց նմանապէս զարդարել տալով գոյնզգոյն քարերով : Եկեղեցին մէջտեղէն պզտիկ բայց խիստ սիրուն ու պայծառ գմբէթ մի ունի պատուհաններով՝ չորս քառակուսի սիւներու վրայ բարձրացած : Բոլոր Եկեղեցոյ պատերուն ներքին երեսները գետնէն մինչեւ երկու կանգուն բարձրութեամբ յախճապակիներով զարդարուած, և անկէ վեր երկու կարգ պատկերներով ծածկուած են. երկու դասերուն մէջ եղած վարի կարգի պատկեր

ները՝ աջ կողմինը՝ Երուսաղեմի երեւելի
 Հայրապետաց, և ձախ կողմինը՝ Հայոց
 նշանաւոր և սւրիշ Հայրապետաց պատ-
 կերները կը ներկայացնեն համակ ըզ-
 ւեստաւորուած . իսկ մնացեալ մասին
 վարի կարգի պատկերներն են՝ նշանաւոր
 Սրբոց եւ Մարտիրոսաց նահատակու-
 թիւնները, երկրորդ կարգիններն են՝
 Յիսուսի Քրիստոսի Տնօրէնութեանց և
 Աւետարանական պատմութեանց պատ-
 կերները . նմանապէս չորս սիւներն ալ
 ամեն կողմանց երկու կարգ զսնազան
 պատկերներով ծածկուած են ոսկէզօծ
 շքանակներով . իւրաքանչիւր պատկերի
 վրայ կան, Շղթայակիր Գրիգոր Պատ-
 րիարքի ժամանակ՝ զանոնք յիշատակ
 ընողներուն անունները, ըստ որում
 յիշեալ մեծանուն Հայրապետն եղած է
 Եկեղեցին նորոգող ու զարգարողը, ձե-
 ուրն տուութեամբ Կոստանդնուպօլսոյ
 Պատրիարք և իւր համշիրակ Կոլոտ Յով-
 հաննէս Եպիսկոպոսի, ինչպէս ցոյց կու-
 տայ Աւագ Սեղանի խաչկալին վրայի ոս-
 կէզօծ խոշոր երկաթագիր յիշատակու-

բանը գրեալ 'ի Թուին Հայոց ՌՃՀԱ
(1722):

Եկեղեցւոյս ձախակողմն է սուրբ
Էջմիածնի Եկեղեցին ուր կը մտնուի
փառաւոր միջնադռնէ մի՝ կամարակապ
և սիւնազարդ . մէկ խորան ունի յա-
նուն Ս. Էջմիածնի, զոր Եղիազար կա-
թողիկոսն շինել տուած է եւ յետոյ
Շղթայակիրը նորոգած: Հարաւային պա-
տին կից խորանաձեւ և պզտիկ կաթո-
ղիկէիւ Սեղան մը կ'երեւի Ս. Սինա ա-
նուամբ, զոր Շղթայակիր Գրիգոր Պատ-
րիարքը շինել տուած է, և որու տակը
երեք խոշոր քարեր կան, որոնց մին Սի-
նէական լեռնէն, մին Յորդանան գե-
տէն՝ և միւսը Թափօրական լեռնէն բե-
րուած են, որոնց համար տես 'ի գիրս
Հաննէի. (Երէս 89): Սոյն եկեղեցւոյ եր-
կայնութիւնը 28 մեդր և լայնութիւնը
7 մեդր է. դասազլուխը Պատրիարքա-
կան աթոռ մի կայ . Հոս կը կանգնին
կանայք, և հոս կ'ընծայեն բարեպաշտ
ուխտաւորք Գլխադիւր անուամբ տուրքն:
Հարաւային կողմէն պատին կից աստի-

ճաններով վերնատունը կ'ելնուի , ուր տեղ կան երկու փոքրիկ սեղաններ յանուն Պայծառակերպութեան և Ընթրեաց : Սոյն վերնատունը 1835ին շինուեցաւ Գաբրիէլ Պատրիարքի օրով , յետ պարտուց վճարման Ս. Աթոռոյ՝ կառավարչութեամբ Ադրիանուպօլսեցի Պօղոս Պատրիարքին :

Ասկէ վերստին վար իջնելով և վերոյիջեալ միջնադռնէն մեծ եկեղեցին մտած ժամանակնիս , աջ կողմերնիս Հայրապետաց պատկերներուն կարգին սատասփեայ դուռ մի կ'երեւի միափեղկ , ուսկէ պատին մէջէն 21 աստիճանաւ վեր ելնելով , ձախ դին պատուհան մի կայ պատշգամով՝ ուր ատենօք Ս. Միօն անունով փոքրիկ սեղան մը կար , և որ մեծ եկեղեցւոյն դասին վրայ կը նայի , եւ աջ դին պատուհան մի կայ ուրկէ Ս. Էջմիածնի տանիսին վրայէն եկեղեցւոյ մէջ կը նայուի . ասկէց 3 ոտք եւս ելնելով՝ դիմացնիս սեղան մի կ'ելնէ , յանուն Ս. Առաքելոյն Պօղոսի որ շինուած է

Եկեղեցւոյ ձախակողմեան յանուն Ս․ Աստուածածնի սեղանոյն վրայ, ասկէջ դէպ 'ի ձախ կողմն 12 աստիճան վեր ելլելով՝ եւ Աւագ խորանին ետեւէն անցնելով՝ եւ 12 ոտք վար իջնելով աջ կողմդ դարձեալ սեղան մի կը տեսնուի յանուն սրբոյ Առաքելոյն Պետրոսի, որ շինուած է Եկեղեցւոյ Աւագ Սեղանի աջակողմը գտնուած յանուն Ս․ Կարապետի սեղանոյն վրայ, այս երկու սեղաններն՝ մէկ մէկ կամարով եւ առաջինն երկաթեայ վանդակաւ Եկեղեցւոյ դասերուն վրայ կը նային: Այս սեղաններուն վրայ ալ պատարագ կը մատուցուի յիշեալ Առաքելոց տօնին եւ տարուան մէջ ուրիշ մի քանի անգամ եւս՝ որոշեալ օրեր:

Եկեղեցւոյ աջակողմը Սուրբ Էջմիածնի միջնադրան դիմացը՝ նոյն մեծութեամբ դուռ մի կայ կամարածեւ, բայց երկուսի բաժնուած է հորիզոնաբար, վարի մասը դուռ մի է սաստափեայ երկու փեղկերով եւ վերի մասը ամպիոն ձեւացուցած է, ուր կը կարդա-

ցուի Յայսմաւուրքը : Այս դռնէն ներս Ս. Ստեփաննոսի մատուռը կը մտնուի՝ որ երկու սիւնի վրայ կառուցուած է , և երեք սեղան ունի , Աւագ սեղանն է յանուն Ս. Ստեփաննոսի նախավկային , աջակողմեանը յանուն Ս. Լուսաւորչի , իսկ ձախակողմեանը՝ յանուն Ս. Կիւրղի Երուսաղեմայ Հայրապետին . ասոր սեղանաքարին տակն է զետեղուած այն հին Մկրտութեան Աւազանը , որու մէջ յիշեալ սուրբ Հայրապետը՝ հարիւր հազար անձինք մկրտեց Հրէաներէն Երեւման Խաչին պատճառաւ : Այս սեղանին կից դուռ մի կը տեսնուի , որուն ներսը մէջ առ մէջ երկու խուցեր են , որ է պահարան և իւղատուն : Յիշեալ Ս. Ստեփաննոսի մատրան հիւսիսային կողմը երկաթի փոքրիկ դուռ մի կայ , ուսկէ կ'երթուի Մոմատունը , Մասատունը , և այլ ուրիշ տեղեր ու թաղեր : Սոյն մատրան մէջ է՝ մկրտութեան Ս. Աւազանը , եւ ժամարար վարդապետը՝ աստ կ'ըզգեստաւորին :

Սուրբ Ստեփաննոսի սատափեայ

դրան և Ս. Գլխադրի մէջտեղ եղած Տէրունական պատկերն՝ Ս. Յակովբայ բաւ ժակարբու Առաքելայն գլխատումը կը ներկայացնէ, և սորա առաջը մարմարեայ նեղ սեղանաքար մի կայ։ Աջ կողմէ Գլխադիրը, զոր առաջին օրը տեսանք։ Ս. Գլխադրի մատուռն բաց ՚ի հարաւային սատափեայ դռնէն, արեւմուտքէն ալ դուռ մի ունի, ու սկէ դուրս ելլելով աջակողմը կը գտնենք վարագուրով ծածկուած դուռ մի՝ ուրկէ կը մտնուի սուրբ Մինասայ մատուռը։ Սոյն մատրան մէջ կոյ երեք սեղան, մին յանուն սուրբ Մինասայ՝ և միւսն յանուն սուրբ Սարգսի, իսկ միջին փոքրիկ սեղանն յանուն սուրբ Յարութեան։ Ասոր մէջ է աւանդատունը ուր կը պահուին Եկեղեցւոյ բոլոր զարդերն եւ զգեստեղէնները, որոնց պահպանութիւնը յանձնուած է Աւագ Լուսարարին։ Սուրբ Մինասայ մատրան պատերը զարդարուած է ամեն տեսակ հասարակ և ընտիր գաւազաններով։

Սոյն մատրան և պզտիկ բակին հա-

բաւային դռնէն դուրս ելնելով դէպ
 ՚ի արեւմուտք և դրան կից ուրիշ սա-
 տափեայ երկփեղկ դուռ մի կայ, ուր է
 Սուրբ Մակարայ անուամբ սեղան մի. ու-
 թուն ներքեւ ամփոփուած է նոյն սուր-
 բին մարմինը. ասիկայ Երուսաղեմի Հայ-
 րապետներէն մին եղած է չորրորդ դա-
 թուն մէջ: Հիւսիսային կողմն ալ մար-
 մարեայ նեղ սեղան մի կ'երեւի, որու
 տակ կայ Ս. Լուսաւորչի մասունքէն:
 Այս մատուռը միանգամայն և խոստո-
 վանարան է, ուր կը գտնուի միշտ այր
 մարդոց խոստովանահայր վարդապետը:

Այս մատրան դիմացը յառանձին
 երկաթեայ վանդակով բաժնուած տեղը
 Գլխադրի Դաս կը կոչուի, ուր տեղ կը
 կանգնին եկեղեցականք և դպրաց դասը՝
 երբ սուրբ Պատարագը Գլխադրի մէջ
 կը կատարուի շաբաթ օրերը, ուր՝ տեղ
 կայ և Պատրիարքական սթոռ մի: Սոյն
 սթոռին քովը որ եկեղեցւոյն հիւսիսա-
 յին յարեւմտեան անկիւնն է, դուռ մի
 կայ, ուսկէ 30 ոտք աստիճաններով
 հիւսիսային պատին մէջէն վեր կ'երևուի

Սուրբ Նշանի խորանը, ուր կը պահուէր առաջ կենաց ֆայտը, և Գրիգոր Հայրապետ Շղթայակիր 1722 թուին նորոգելով պատարագամատոյց սեղան մը կանգնեց, և պատշգամ մի շինել տալով լայնացուց պատուհանն, որ Գլխադրի մատրան վրայէն գէպ 'ի Ս. Յակովբայ եկեղեցւոյ մէջ կը նայի:

Աստիճաններուն գլուխը ուրիշ ճանապարհ մի կայ, ուսկէ կը մտնուի Երիտասան Առաքելոյ փոքր մատուռը հընաշէն, զոր Թագաւորաց աղօթարան կը համարէ Հաննէ Պատ. Երեւ 89: Մատուռն երկրորդ դուռ մի եւս ունի որ 'ի տանիս կը հանէ: Սոյն մատուռն ալ Գրիգոր Հայրապետն 1722 թուին նորոգելով՝ գրքատուն ըրած էր և ցիր ու յան եղած ձեռագիր հին գրեանքը կազմել տալով այս տեղ ամփոփած էր:

Յիշեալ տանիքին վրայ, որ առանձին բակ մի է խիստ հին ժամանակէ մնացած, Առաքելոց մատրան պատին կից ուրիշ խորան մի կայ յանուն Ս. Համբարձման, ուր տեղ տարին անգամ մի

աբատարագ կը մատուցուի :

Սոյն տանիքին հիւսիսային դռնէն դուրս մեծ տանիքներն կ'երթուի . դիմացնիս դէպ 'ի սջ կողմը փոքր կամաւրի մի մէջէ քանի մի աստիճանով վար նոր դուռ մի կ'երեւի երկու փեղկով . ասիկայ է այժմեան Գրչապահնը որ սովորական անուամբ Թանգարան կը կոչուի : Մէջը երկու դուռ ունի , մին հին դուռ մը որ վարը մոմատան կողմէն է , իսկ միւսը հիւսիսային կողմը՝ ուր տեղ է բուն Թանգարանը . հին ատենէ 'ի վեր սոյն սենեակն « Հին Պապրիարչարան » կը կոչուի , որ հետզհետէ շատ բաներու եւս գործածուեցաւ : Զոր օրինակ 1832ին առաջին անգամ Գրիեստէն բերուած եկած տպագրական Մամուլն հոս դրուելով՝ 4833 թուականի սկիզբն առաջին անգամ տպուեցաւ « Տեպրակ Ալուխանապոյց վան Զերեռանդ աղջխախրայ , որս կամ անչամբ և կամ ճպօր ներկայանան 'ի Սորբ Տնօրինական փեղէն Քրիստոսի Աստուծոյ Տերոյ » անուն տետրակն , եւ ապա 1834ին « Քերակն կամ Այբբէնարան » և բազում

կոնդակներ և այլն . և յետոյ մամուլն և գրերն ուրիշ տեղ փոխադրուելով՝ գոր քիչ մը վերջ պիտի տեսնենք՝ այս տեղս ժամանակ մ'ալ վարժատուն եղաւ , և այժմ Թանգարան . Թանգարանի հաստատութիւնը հանգուցեալ Եսայի Սրբազան Պատրիարքին օրով եղաւ , և նորա անխոնջ ջանից արդիւնքն է , որու մէջ 1700 հատորէն աւելի ձեռագիր մատեաններ կան բաց 'ի ուրիշ լեզուներէ և տպեալ հին ու նոր գրքերէն , որոց թիւը 1500ի կը հասնի :

Յիշեալ Գրքատունէն դուրս ելնելով և դէպ 'ի աջ դին ծռուելով , նոյն Գրքատան պատին ծայրը դուռ մի կայ , ուր մտնելով և քիչ մը առաջ երթալով դիմացնիս երկու աստիճան կ'ելնէ , մէկը վար իջնելու , ուրկէ Մոմատուն կ'երթուի , եւ միւսը քանի մի ոտքով վեր ելնելու , ուր կը մտնուի դռնէ մի , եւ անմիջապէս աջ ու ձախ կողմերնիս մէջ մէկ դուռ կ'երեւին , ուղղակի երթալով և դէպ 'ի աջ կողմը շեղելով կ'երթուի Հոգւոյն Սրբոյ փայտեակ մատուռը ,

որու դրան վրայի պատկերէն յայտնի է .
ասոր մէջ փոքրիկ պատուհան մի կայ
ուրկէ՛ վար սուրբ թորոսի եկեղեցին է ,
զորէքիչ մը վերջը պիտի տեսնենք : Այս
տեղ եւս տարին քանի մի անգամ եւ
չոգեգալստեան շաբթուն մէջ պատա-
րագ կը մատուցուի :

Այս տանիքին վերջին ծայրը ան-
կիւնի մը գլուխ երկու դուռ կայ , ձախ
կողմինը հին Տպարանինն է , իսկ միւսը
տանիքի դուռ է :

Ասկէ կրկին ետ դառնալով մինչեւ
թանգարանի դուռը , և դէպ 'ի ձախա-
կողմի աստիճաններէն վար Սուրբ Ստե-
փաննոսի եկեղեցւոյ տանիքն իջնելով՝
դիմայնիս դուռ մի կուգայ , որ ուխ-
տաւորաց ժամանակ փակեալ կը մնայ :
Այս դռնէն դուրս դարձեալ տանիքի
արեւելեան պատին հիւսիսային ան-
կիւնը դուռ մի կայ , ուրկէ աստիճան-
ներով վար կ'իջնուի Սուրբ թորոսի Եկեղե-
ցին , որ առանձին երկաթեայ դուռ մի
ունի հարաւակողմը , և ուրիշ դուռ մի
եւս յարեւմուտք : Սոյն եկեղեցւոյ

համար Հաննէ վարդապետ կը վկայէ
Թէ ԶԼԵ (1) Թուին Լեւոն Թագաւոր
չինել տուած է 'ի յիշատակ եղբօր իւրոյ
Քորոսի՝ որ Եգիպտացւոց դէմ մղած
պատերազմին մէջ մեռաւ և նորա մար-
մինն եւս այս տեղ փոխադրել տուաւ ,
որու գերեզմանը , կ'ըսէ Հաննէ՝ եկե-
ղեցւոյ հիւսիսային անկիւնը կը գտնուի :

Եկեղեցին առանց սիւնի է , ունի
15 մետր երկայնութիւն և 7 մետր լայ-
նութիւն : Աջակողմեան դասին մէջ

(1) Հաննէ վարդապետի Պատմ. Երուսաղէմի
գրքին 110 երեսին մէջ՝ տպագրական եւ կամ գրչի
սխալմամբ՝ փոխանակ ԶԼԵ (738) Թուականն գրուե-
լաւ՝ ՊԼԵ (838) Թուականն գրուած է , ինչպէս նաեւ
որչի բառն փոխանակ եղբօր . սխալմամբ կ'ըսենք , ո-
րովհետեւ նոյն գրքի 91 և 270 երեսներու մէջ գրուած
են Լեւոն Գ . Թագաւորին շինութեանց ճիշդ և ուղիղ
Թուականներն՝ որ է ԵՃԼԵ (738) . այն արձանագրու-
թեան համեմատ՝ որ գրուած է 'ի Ս . Յակոբ Եկեղե-
ցւոյ՝ ձախակողմեան ետքի սեան՝ դէպ 'ի հիւսիսա-
կողմն նայող երեսին վրայ՝ Յովհաննու Աւետարանչի
պատկերին տակը :

Սոյն Լեւոն Եգիպտացւոց Սուլթանին քով գերի
ինկած ժամանակ յԵրուսաղէմ ուխտի եկաւ . Ասորոս
Բաբոնի , երես 228 :

մկրտարան կայ, որու պատին մէջ պա-
տուհանաձեւ փոքրիկ տեղ մը կայ եր-
կաթեայ փեղկով փակուած, որ ըստ ա-
ւանդութեան Լեւոն Գ. ի եղբօր Թորո-
սի գերեզմանն է կ'ըսուի, և սորա տակ
եղած Խաչ — քարի վրայ հետեւեալ
Յիշատակարանը կայ :

ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՏԷՐ ԴԱԻԹ ԱՐՀ
ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԵՍ ՄԵՂԱԻՈՐ ՄԱՐՏԻՐՈՍ
ԿԱՆԳԵՅԻ ԶԻԱԶԸՍ ԲԱՐԵԽԱԻՍ ԱՌ ԱՍ-
ՏՈՒԱԾ, ԻՆՁ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ ՍԱՐԳԻՍ
ՔԱՀԱՆԱՅԻՆ ԵՒ ԽԱՆՈՒՄԻՆ ԵՒՍ ԱՌԱԻԵԼ
ՅԱՎՀԱՆԵՏԻՆ, ՍԱՐԽՈՇԻՆ, ԵՒ ՄԻՐԱՆՇԻՆ,
ԹՎԻՆ Ռ. Լ. Թ. :

Այս մկրտարանին քով դուռ մի կայ
ուսկէ քանի մի աստիճանով պահարանը
կ'ենուի, որ ունի մի սեղան յանուն
սուրբ Կարապետի. հոռ պատերուն
վրայ ագուցած բաւական հին՝ Խաչ —
քարերու վրայ փորագրուած Յիշատա-
կարանք կան, յորոց ոմանք դժուար
կը կարգացուին: Աւագ սեղանն յանուն
Ս. Թորոսի է, որոյ բեմին վրայ՝ հարա-
ւային անկիւնը՝ աստիճանով վեր փոք-

ըիկ մատուռ մի կայ յանուն Սուրբ Մեծ
 Գրիգորի, իսկ դրսի դաւթին մէջ սեղան
 մը կայ յանուն Ս. Թադէոսի և Կուսմէ
 Սանգիտայ:

Սոյն Եկեղեցւոյ մէջ 'ի տօնի Սուրբ
 Թէոդորոսի եւ Սուրբ Մեակեռիոսի եւ
 ուրիշ քանի մի անգամ տարին Պատու
 րագ կը մատուցուի:

Եկեղեցւոյ արեւմտեան դռնէն
 գուրս ելնելով և աջ կողմէն քանի մի
 աստիճանով վեր դէպ 'ի աջակողմը՝
 Աբանա խողը կ'երթուի. իսկ ձախ դին
 գէպ յառաջ երթալով և կրկին շեղելով
 ձախակողմը՝ նեղ ճանապարհէ մի դէպ
 'ի Սուրբ Թորոսի վերնադուռը կ'եր-
 թուի՝ ուսկէ ներս մտանք, այս դրան
 աջակողմը երկու խուց կայ, որ Հեթում
 Խափասորի սենեակք կը կոչուին աւան
 դութեամբ:

Յառաջ գնալով և քանի մի աստի-
 ճաններէ վար՝ Պրոսա խողի դրան առ-
 ջեւէն կրկին քանի մի աստիճան վար
 իջնելով, ձախակողմեան դռնէն գուրս
 Յրէնախողին մէջ կը գտնենք զմեզ, որու

տակն է վանքին սղորիքը, և ասոր կից հին ախոռ ըսուածն՝ որ շինուած են Պարոն — Տէր Գրիգոր Պատրիարքէ ՚ի Թուին Հայոց ՌՂ (1090)․ իսկ ցորեննատան արեւելակողմն եղած ներքին Թաղերն ՌՃԴ (1174) Թուին և ցորենի ամբարանոցն ՌՃԷ (1177) Թուին շինուած են Եղթայակիր Գրիգոր Պատրիարքի և Հաննէ վարդապետի ժամանակ։ Այս տեղ Աւագ-Սեղանի պատին ճիշդ ետեւը եղած ճանապարհի յատակն՝ եկեղեցւոյ իւղատան տանիքն է։

Աւագ-Սեղանի արեւելեան պատը արդէն ասացինք, որ Հեթում Թագաւորը շինած է։ Հեթում Լեւոն Գ. ի որդին է, որ Թաթարաց հետ Երուսաղեմը սուաւ և մեծահանդէս տօն կատարեց Երուսաղեմի մէջ, ինչպէս կը յիշատակուի Համթեցի Մինաս վարդապետի գրած «Համառօտ Պատմութիւն Թագաւորացն Հայոց և Հռովմայեցւոցոյ» 82 եւ 160․ Եւ «Հեթում պատմի» 747, 48 երեսներուն՝ և յԱկանց անապատի Գրիգոր վարդապետէ շարադրեալ

« Պատմ. Թաթարացոց 7 անուն գրքին մէջ :

Յորենի ամբարսնոցի ներքին դրան արեւելեան կողմը բոլորակ թաչ-քար մը կայ, հետեւեալ արձանագրութեամբ՝ ԽԱՉՍ է ՈՎԱԿԻՄԱ եի ԱՆՆԱՅԻ ՏԱՆԷՆ է ՈՒՐ ԵՆԱԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Այս թաչ-քարին եզերքը արձանագրութիւն մ'ալ կայ հետեւեալ կերպիւ՝

ԿԱՆԳՆԵՑԱԻ ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԳՐԻԳՈՐ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ եի ԱՄԵՆԱՅՆ ՄԻՍՐԱՆԻՑ ՈՐ ՇԻՆԵԱՅ ՑՈՐԵՆԱՏՈՒՆՍ. ԹՎԻՆ ՌՃՀԷ (1177) ԻՆ .

Յորենախաղէի հարաւակողմը շինուած է Նոր Զարդաի ըսուած փառաւոր յարկը, չորս գեղեցիկ սենեակներով, զոր Կիրակոս Պատրիարքն շինել տուած է 1849 ին :

Ճանապարհը շարունակելով Սուրբ Յակովբայ պարսպին տակովը, ձախ կողմերնիս ձգելով Հաննէ եւ Իլմիլ լաղէրը, դէպ 'ի աջ դին կ'եննենք վանքին արտաքին մեծ գաւիթը, և դիմացնիս կ'երեւի

խինջածեւ քարաշէն և երկաթի ճազով սանդուխ մի, ուր կան երկու սենեակք՝ որոնք Պօղոս պատրիարքի կառավարութեան ժամանակ շինուած են :

Այս սանդուխին հարուակողմը կ'իյնայ Հոգեփռանը, զոր արդէն եկած ժամանակ տեսանք : Հոգէտան աջ կողմը երկաթի վանդակներով պատասպարուած լայն արձակ տեղ մի կ'երեւի, զոր Եղիա զար կաթողիկոսն շինել տուած է ՌՃԻԳ (1124) Թուին Հայոց՝ հանդերձ վրայի Թաղերով, այս տեղ հին ժամանակ ախտ էր, որ յետոյ մէկ մասն հիւսանոց եղաւ, եւ մէկ մեծ մասն ալ փայտատուն, զոր 1866 ին Եսայի Սրբազան Պատրիարքը նորոգելով՝ հոս փոխադրեց Տոբանը : Հինգ մասի բաժնուած է . Ա. մասն է գրաշարից տեղը, Բ. տպելու գործարանը, Գ. կազմարանը, Դ. ձուլարանը ու վճարատունը և Ե. ընդարձակ գրագարանը . սոյն վերջին երկու մասերը շինուած են 'ի Յիշատակ Քալաքի մեծապատիւ հանգուցեալ Մահատեալ Յակովբ Էֆէնտի Աչրգեանի :

Յիշեալ ընդարձակ յարկին վրան՝ Կա-
ւթիթին վրայ է՝ Պէմար խաղը, եւ անոր
ետեւի կողմը՝ Թոխախ խաղը, որու պա-
տուհանները տպարանի պարտիզին վրայ
կը նային, որ առաջ Պատրիարքաց յառ-
կացեալ պարտէզ էր և զոր Հաննէ Ների
պարտէզ կը կոչէ։ Տպարանի մուտքը սե-
նեակ մի կայ ուր տեղ կը ծախուին
տպուած բոլոր գիրքերը։

Սուրբ Յակովբայ վանուց միւս մա-
սերն ու թաղերը զանց կ'ընեմք այս տեղ
ոտորագրել, որովհետեւ ուխտաւորք
ինքնին կրնան շրջագայել և տեղեկու-
թիւններ ստանալ։ Բայց չեմք կրնար
առանց յիշատակութեան թողուլ արդի
հոյակապ Պատրիարքարանը՝ զոր 'ի հի-
մանէ շինել տուաւ Զմիւռնացի Յով-
հաննէս Սրբազան Պատրիարքը 1853ին։
Ասոր ճանապարհն Սուրբ Յակովբայ
գաւթին մէջէն է, ուր կ'երեւին քա-
րեայ աստիճաններ հարաւային պատին
մէջ արեւմտեան անկիւնը, ուրկէ կ'ել-
նուի նախ Ս. Մինասայ խաղը, որ Պողոս
Պատրիարքի կառավարչութեան ժամա-

նակ շինուած է : Աստիճաններէն վեր ելնելուդ՝ դիմացը կ'երեւի Պատրիարքարանին մեծ դուռը վրան Յիշատակարանով : Այս դռնէն ներս մտնելով և քանի մի ոտք մարմարեայ աստիճաններէ վեր ելնելով՝ դիմացնիս ընդարձակ սենեակ մի կայ տախտակեայ առաստաղով, որ այժմ Տնօրէն Ժողովոյ Խորհրդարանն է, աջ կողմերնիս փառաւոր դուռ մի է, ուրկէ կը մտնուի Պատրիարքարանի ընդունելութեան մեծ սրահը, որու երկայնութիւնն 21 մետր է, և լայնութիւնը 7 $\frac{1}{2}$ մէջ տեղը գեղեցիկ գմբէթով :

Աջ ու ձախ կողմ դէմ առ դէմ երկու սենեակներ կան Ս. Պատրիարքի բնակութեան յատկացեալ, աջ կողմինը՝ որոյ պատուհանները սուրբ Յակովբայ վանուց արտաքին հրապարակին և Աւագ դրան վրայ կը նային, սմառուան բնակութեան յատկացած է հանդերձ յարակից սենեկով, որ պարտիպին վրայ կը նայի, իսկ հարաւային կամ ձախ կողմինը ձմերուան բնակութեան : Զախ

կողմի սենեկին քովի երկրորդ դռնէն ,
 աւր տեղ փոքր սենեակ մի եւս կայ իբր
 պահարան , ճանապարհ ունի նաեւ ըս-
 տորին յարկը իջնելու , որ քանի մի մա-
 սերու բաժնուած է . և ունի փոքր բա-
 զանիք մը : Վարի յարկը երեք դուռ
 ունի մին 'ի պարտէզ ելնելու և երկուսն
 'ի փողոց , որոնց մին կամարին տակ կը
 քացուի , ըստ որում Պատրիարքարանը
 շինուած է մէկ մասը վանքին մէջ եւ
 միւս մասը պարտիզին վրայ , որոնց մէջ-
 տեղն է փողոց , և փողոցին վրայ դար-
 ձած է կամարը , որով երկու մասերը
 իրարու հետ կը միանան :

Հրապարակին վրայ վանուց դրան
 առջեւի պարտիզին պարիսպը Տ . Եսա-
 յի Ս . Պատրիարքը ուղիղ գծի վրայ
 կանգնել տալով , Յ խանութ ալ շինել
 տուաւ ոմանց միաբանից ծախիւքը , և
 հիւսիսային հին կամարին տակն ալ , ո-
 րու վրայ է Սեղանատունը և Գարպա-
 սատունը , ուրիշ երկու փոքր խանութ
 և վեց մեծ ու ընդարձակ մթերանոց-
 ներ շինել տուաւ , որոնց վերջին կամա-

բարերնին կից եղածն է վանքին Դեղ-
բանը, նոյնպէս հին գինետունք փայտա-
տունի փոխելով երկու դուռ բանալ
տուաւ, մին յիշեալ կամարին տակ՝ և
միւսն գեղարանին դիմացի փողոցին
մէջ:

ՀԻՆԳԵՐՐԱՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ի վաճառ սուրբ Հրեշտակապետի եւ քա-
ղաքին մէջ գտնուած ուրիշ պատմական
տեղիքը:

Սուրբ Յակովբայ մեծ գաւթին
դէպ ՚ի հարաւակողմի մէկ անկիւնը
երկու կամար կ'երեւին, ասոնց վրայի
սենեակներն Յաղուպ աղայի Զարտաին
է որ սյժմ Պզտիկ Զարբաթի կ'ըսուի, ձախ
կողմի կիսակամարին տակէն Պակճալը
խաղը կ'երթուի, զոր կիրակոս Պատրի-
արքն շինել տուած է 1848ին՝ և որուն
հիմերը դրուած էին Զաքարիա Պատ-

բիւրոյքի ժամանակ. այս թաղի դրանք
 դիմացի ճանապարհէն կ'երթուի կրաս-
 տունը (ֆիրեճկանէ) որ բաւական ըն-
 դարձակ շինուած մ'է, ուր կիր կը պա-
 հուի վանքին շինութեանց համար. իսկ
 աջ կողմի կամարին տակ երկաթեաց
 փոքր դուռ մի կը տեսնուի. այս դռնէն
 ելնելով կ'երթուի Սուրբ Հրեղակայոքի
 վանքը : Բայց մենք դեռ հան չ'գնացած .
 ճանապարհին վրայ երկու նոր շէնքե-
 րուն ոյցելութիւն ընենք :

Յիշեալ երկաթի դռնէն դուրս՝ նեղ
 շուրիչն առաջ երթալով՝ գիմացնիս ան-
 միջոպէս նոր շէնք մի կ'ելնէ մայրի ծա-
 ուերով չղատչատուած . վրայի յիշատա-
 կարանը մեզ կ'իմացնէ Զաւթաղ Ըլլայն ,
 որ Զմիւռնացի Յովհաննէս Պատրիարքի
 օրով շինուեցաւ 1852 ին , եւ թէպէտ
 այն ժամանակ իւր սւսուճնական նպա-
 տակին չ'ծառայեց , բայց հանգուցեալ
 Եօայի Սրբազան Պատրիարքի Գահակա-
 լութեան տարիէն Ուսումնարանի մէկ
 մասը կը կազմէ . կը պարունակէ Ժա-
 ոանգաւոր աշակերտաց հանգստարտ-

նը, սեղանատունը, ինչպէս և ձմեռ-
նային ննջարանները և սերտարանը իւր
դասարաններով հանդերձ:

Ասոր արեւելեան կողմի փառաւոր
ու հոյակապ շէնքն է բուն Ոսոմնարանը,
որուն ձեւը շատ նմանութիւն ունի
կ'ըսեն Գաղղիացիք Փարիզու Սորպոնի.
Ետսը լայնարձակ աստիճաններէ վեր
կ'եղնուի: Ուսումնարանի ներքին ձեւն
է խաչաձեւ, չորս անկիւնը չորս փա-
ռաւոր սենեակներ բռնած են, և կեդ-
րօնը գմբէթ մի ունի՝ երեք թեւերուն
մէջ, դէպ 'ի ճակատը երեքական ըն-
դարձակ պատուհաններ և երկու կող-
մերը չորս չորս դարաններ կան ապա-
հափեղկերով, որոնց մէջ կը պարունա-
կին հնութիւնները, իւրաքանչիւր ըստ
իւր տեսակին կարգաւ զետեղուած են.
Սիշեալ հնութեանց և թանկագին նիւ-
թոց մէկ մասը Հնդկաստանի արգայնոց
առատաձեռնութեան շնորհքն է, զոր
Հնդկաստանի նուիրակ Գերա . Ներսէս
Ծայրագոյն վարդապետը՝ որ այժմ Ե-
պիսկոպոս հետը բերած է 1870ին:

Ուսումնարանէն դուրս արտաքին մեծ հրապարակը, ճանապարհ է դէպ 'ի Ս. Հրեղակապետի վանքն երթալու, եւ տախտակեայ միափեղկ դռնէ մի անցնելով անել փողոցի մէջ, եւ դիմացը երկաթեայ փոքր ու ցած դուռ մի կայ, որ է յիշեալ վանքին դուռը. փողոցին հարաւային ծայրը գտնուած միափեղկ դռնէ 'ի զատ ուրիշ փողոցադուռ մի կայ տախտակեայ նորաչէն, որ դէպ 'ի Փրկչագուռը ⁽¹⁾ կը հանէ. Վանքին դռնէն ներս մտնելով: դէպ 'ի աջ կողմը բաց դուռ մի կայ որ եկեղեցին կը տանի՝ ձախ կողմին վրայ: Երկու մասի բաժնուած է եկեղեցին, առաջինը կանանց կայնելու տեղն է, ուր կայ Պատարագամատոյց սեղան մի Չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ մկրտարան մի գեղեցիկ՝ յիշատակ Տաշճի — պաշխ մահտեսի Վարդան Աղա-

(1) Փրկչագրան քով պարսպին ներքին կողմին կից Ուրկանոց մը կար որ այժմ փոխադրուած է քաղաքէն դուրս Յորայ-հորին քովերը:

յի՝ Երկրորդ մասն է բուն տաճարը ե-
 բեք խորանաւ, նուիրեալ յանուն սրբոց
 Հրեշտակապետաց, ձախակողմեան դա-
 սին մէջն է աւանդատունը, ուր 1725
 ին Գրիգոր Եղթայակիր Պատրիարքը
 տեղը մեծցնելով սեղան մի կանգնեց
 յանուն Հռիփսիմէ կուսին: Տաճարին
 հիւսիսակողմն արեւմտեան անկիւնը
 պատին մէջ ուրիշ սեղան մի կայ Գրե-
 խադրի մատարան ձեւով, որ է Քրիստոսի
 Առաջին Բանփը: Ասան զի ըստ պատմու-
 թեան Ս. Աւետարանի, սոյն տեղը Ան-
 նա Քահանայապետի տունն ըլլալով,
 Տէրն մեր Յիսուս Քրիստոս իւր մատ-
 նութենէն յետոյ Աղբիւսաց դռնէն
 (Պապ-էլ-Մաղարդի) ներս մտցընելով,
 ուղղապէս բերին նախ յիշեալ քահա-
 նայապետին տունը, և մինչեւ որ նորա
 ատեանն հանելը, գաւիթը Ձիկի ծա-
 ուի մը կապեցին, և հոն ապտակ մի կե-
 րաւ քահանայապետի ծառայէն. Յովհ.
 ԺԼ. 22: Բանտին կից է գրեթէ դրսի
 կողմէն ձիթենիին տեղը, որու արմատը
 դեռ կը մնայ և հիմակ նորա շառաւիղ-

ներէն մեծցած ծառացած են, եւ այս պատճառաւ Արարացիք Վանքին Տերէլ-Ձէլունէ՛ պսինքն Վանք Ձիթենւոյ՝ կը կոչեն: Ձիթենիին քով քանի մի խաչոր քարեր եւս կը տեսնուին, որ Աննայի ժամանակէն մնացած են և Ուլաննայի քարեր կը կոչուին. Ղոմ. ԺԹ. 20^o քայց այլք աւելի հաւանական կը համարեն պատառեալ քարերէն լինելն. Մաթի. ԻԷ. 51:

Սուրբ Հրեշտակապետի Եկեղեցւոյ տեղւոյն համար աւանդութիւն մը կայ որ կ'ըսուի թէ՛ Դաւիթ Մարգարէն այս տեղէն տեսաւ Յերուսաղի Ունային կալին քովը կոտորած ընող Աստուծոյ Հրեշտակը, որ երկրին ու երկնքին մէջ տեղ կայնած ձեռքի սուրն Երուսաղեմի վրայ երկնցուցած էր, Դաւիթ ու ծեռերը քուրձեր հագած՝ երեսնուն վրայ ինկան: Բ. Թագ. ԻԴ. 16, 17. և Ա. Մնայ. ԻԱ. 18, 16:

Այս Եկեղեցւոյ պայութիւնը ժամանակակից է սուրբ Տեղեաց ինտութեանը. ինչպէս Այսիափայի տունը

(Ս. Փրկիչ), նոյնպէս եւ այս տեղս անյիշատակ ժամանակէ 'ի վեր Հայոց սեփհական եղած է, եւ անոնց հիմնադրութիւնը Աբգարու կնաջ Հեղինէ Թագուհիէն կը կարծուի, որ առաջին հիմնադիր է սուրբ Տեղեաց. և որովհետեւ Տիտոսի ժամանակ Սիօնի վերայ կառուցեալ շէնքերուն մէկ մասը կանգուն մնային, այս տեղուանքն եւս այն ժամանակէն 'ի վեր Թէ՛ յայտնի եւ Թէ՛ գաղտուկ կը պահպանուէին Հայ կրօնաւորաց և բարեպաշտ միանձանց ձեռօք մինչեւ յերկրորդ Հեղինէ՝ մայրն Մեծին Կոստանդիանոսի. այս կարգին մէջ է նաեւ Սուրբ Յակովբայ եկեղեցին:

Սուրբ Հրեշտակապետի վանուց մէջ Կիլիկիոյ Թագաւորք եւս ըստ իւրեանց կարգին նորոգութիւններ ըրած են, ինչպէս Լեւոն Գ. Թագաւոր Հայոց 216 (1286) Թուականին պարիսպը շինել տուած է. ըստ Յիշատակարանին, որ գրուած է Ս. Յակովբայ Եկեղեցւոյ մէկ սիւնին վրայ: Վերջին անգամ շինութիւններ և նորոգութիւններ եղած

են Գրիգոր Շղթայակիր Հայրապետին
օրով, և 1848ին Կիրակոս Պատրիարքը
Աւագ խորանին խաչկալն ոսկէզօծել
տուած է :

Սոյն վանուց մէջ հիւրընկալուեցան
Ժամանակ մի Լատին կրօնաւորք Ս. Սի-
օնի վանքէն արտաքսուելուն յետոյ ,
մինչեւ որ Բ. Գրան հաճութեամբ հի-
մակուան իրենց Ս. Փրկիչ ըսուած վանքը
ստացան , որ յառաջագոյն վրաց վանք
էր Ս. Յովհաննու անուամբ :

Սուրբ Հրեշտակապետի վանուց մէջ
կը բնակին Մայրապետք և յաշխարհէ
մեկուսացեալ հաւատաւոր կանայք ,
որոնք Ս. Յակովբայ միաբանից տնտե-
ական պիտոյիցը կը ծառայեն և խը-
նամբ կը տանին նոցա մայրաբար . ու-
նին իւրեանց առանձին գլխաւոր մի՞
իրենց մէջէն ընտրուած , որ Տնփս կա-
նուանի . իսկ Եկեղեցին Տեսուչ վարդա-
պետի մի ձեռօք կը կառավարուի , եւ
հոս կը մատակարարուի քաղաքի Հայ
ժողովրդոց հոգեւոր պէտքերը :

Այս վանքը երկու դուռ ունի , բաց

անկէ ուսկէ մտանք, երկրորդ դուռն է հիւսիստակողմը՝ նոյնպէս երկաթեայ և ցած, ու քաղաքի ժողովրդոց թաղերը կը հանէ, ուրիշ երրորդ դռնէ մի անցնելէ յետոյ: Այս երկու վերջին գոնեքուն մէջտեղի անցքին մէջ աստիճաններով ելնելու յարկ մի կը տեսնուի. որ Քաղաքացի օրիորդաց Դպրոցն է 1861ին հիմնարկեալ ծախիւք Նախընտանցի բարեպաշտ Շուլդովեան մահտեսի Կարապետ Աղայի. 50ի չափ աշակերտահիք կը գտնուին, որոնք բաց Կի ասեղնագործութենէ՝ կ'ուսանին իւրենց մայրենի լեզուին քերականութիւնը, քրիստոնէական վարդապետութիւն, և այլն:

Ա. Ատրոյ վանք: Սուրբ Հրեշտակապետի վանուց երկրորդ արտաքին դռնէն դուրս ուղղակի երթալով եւ աջակողմը փողոց մի թողլով, երկրորդ անել փողոց մի կը հանդիպի նոյն կողմը, աւարտեղ է Յունաց յանուան Ս. Գեորգայ փոքրիկ վանքը, որ նոր հաստատութիւն է և չունի ոչ պատմական և ոչ

տեղագրական կարեւորութիւն: Մենք նորա կից միւս փողոցն ալ աջ կողմերնիս թողլով և դէպ 'ի ձախ կողմը ծռուելով՝ Ս. Յակովբայ պարսպին տակով շարունակենք ճամբանիս, ուր քառուղի փողոցաբերան մի կը հանդիպի. դարձեալ շարունակելով դէպ 'ի հիւսիսային փողոցին մէջ և երկու կամարի տակէն անցնելով և յետոյ դէպ 'ի արեւելք ծռուելով աջ կողմերնիս անկիւնացեալ տեղը երկաթեայ դուռ մի կ'ենէ, այս է Ասորոյ վանքը: Այս տեղ Յովհաննու՝ Մարկոս կոչեցեալի մօրը տունն էր, ուր Պետրոս առաքեալ բանտէն շրջտակի ձեռօք ելնելով եւ պարսպադռնէն անցնելով եկաւ դուռը զարկաւ, երբ հաւատացեալք ներսը ժողովուած իրեն համար աղօթք կ'ընէին, եւ աղախին մի իմանալով դրան զարնելը և ճանչնալով Պետրոսի ձայնը՝ ուրախութենէն ներս վազեց լուր տալու, որոնք թեպէտ չէին հաւատար, բայց երբ դուռը իրարու վրայ կը զարնուէր, բացին ու տեսնելով զՊետրոս

զարմացան. Գրիգ. ԺԲ. 1—19:

Սոյն եկեղեցւոյ շինութիւնն ալ թագաւորական է, նուիրեալ յանուն Ս. Աստուածածնի: Գրիգոր Շէթայակրի ժամանակ Հայոց միաբանութեան ձեռքն էր սոյն վանքը պարտուց փոխարէն գըրաւ առնուած, ուրիշ ժամանակներ եւա Ասորիք Հայոց հետեւակ կամ նոցա պաշտպանութեան ներքեւ լինելով, իրենցմէ միաբան չգտնուած աստէն Հայք կը հոգային եկեղեցին: 1727ին Գրիգոր Հայրապետ Շէթայակիր նորոգելով ըսպիտակացոյց զայն, և 1831թուականին Պօղոս Պատրիարքի կառավարչութեան ժամանակ կրկին անգամ նորոգուելով սպիտակացաւ Հայոց ձեռօք ու մինչեւ մեր օրերը տակաւին Հայագիր յիշատակարաններ կային, իսկ իւրեանց վերջին Ապտ—ըլ—Նուր և Գրիգոր Եպիսկոպոսներն հետզհետէ զանոնք եղծանելով՝ Ասորերէն գրել տուին, և ուրիշ նորագութիւններ եւս ըրին: Երկու կամ երեք միսբան և եթ ունին, իսկ ժողովուրդ միայն մէկ ընտանիք:

Բ. Երկաթի Գոտը : Ասորւոց վանքէն դէպ'ի հիւսիս ուղղուելով, ձախ կողմին վրայ Անգղիացւոց հիւանդանոցը կայ (1), Հրէից ազգին համար հաստատուած, որոնց դարձին համար մեծ հոգ ու խնամք կը տարուի բաւական ժամանակէ 'ի վեր : Յառաջ գնալով կամարի մի տակէն մինչեւ ծայրը, անկիւնագլուխը հին ու քանդակածոյ սիւնի մի կտոր կը տեսնուի, Հաննէ վարդապետ այս տեղ կը դնէ քաղաքին Երկաթի Գոտը, ուսկէ Տիրոջ Հրեշտակը Պետրոս Առաքելուն անցնելով՝ քաղաքին մէջ մըտցուց ու ինքն աներեւոյթ եղաւ : Իսկ Լատին պատմագիրք այս երկաթի դրան տեղը կը նշանակեն աջակողմեան փողոցին ծայրը դիմացի պատին երեսը տեսնուած հին ու խոշոր քարերով շինուած կամարը, որ հիմակ գետինը բարձրանալով՝ կամարին վերի մասը միայն կ'երեւի, աւելի հաւանական և ընդհանրապէս ընդունուած է այս կարծիքը :

(1) Այժմ քաղաքի պարսպէն դուրս փոխադրուած է .

1870ին Անգղիական հնախուզական ընկերութեան կողմէ գիտնական ճարտարապետ մի ուրիշ շատ տեղերէ 'ի զատ՝ այս տեղս ալ փորելով, հին շէնքեր և խցի նման յարկեր գտաւ տակը:

Գ. Ս. Յարո-լիւան քաճարի նախարոսն: Ասկէ դէպ 'ի հիւսիսային փողոցն ուղղուելով և մասվաճառաց կամ փերեզակաց շուկայէն անցնելով ուղղակի կ'ելնենք Մութ շուկային մէջ, ուր Երկրորդ այցելութեան ժամանակ տեսանք Սուրբ Յարութեան Տաճարի Նախագրան տեղը, որոյ 'ի նշան կանգուն կը մնան երկու հին ու մաշուած սիւներ: Աստիճաններէն վեր ելած ժամանակնիս, որ միշտ դէպ 'ի օջ դին շեղելով կ'ելնուի, ձախակողմը պատով հիւսուած գետին մի կ'երեւի. այս տեղ 1860ին Ռուսք Ղաւարոց վախճանեալ քահանայէն գնեցին և սկսած են շինութիւններ ընել: Յիշեալ գետնոյն մէջ կ'երեւի Հրէից Թագաւորութեան ժամանակի քաղաքին երկրորդ պարսպէն մնացեալ աւերակ մասեր չափազանց

մեծ քարերով շինուած :

Դ. Ղբփոյ վանք, Ոսկեհոր և Հապէղէց վանք: Գրեթէ 100 մեդր առաջ երթալով անել Ճանապարհին մէջ, աջ կողմը կանգուն սիւն մի կայ. որ Խաչի Ճանապարհին նշանակեալ մէկ տեղն է: Այս տեղ երեք դռներ կ'երեւին. դէպ 'ի Ճակատն եղած մեծ դուռը Ղբփոյ վանքին է, զոր 1870ին նորոգեցին, և բաց 'ի եկեղեցիէն գեղեցիկ ու բարձրագիր Սառնորդարան մի ևս կառուցին: Աջ կողմի դռնէն Ոսկեհոր կ'իջնուի, զոր Լատինք սուրբ Հեղինէի գանձատունը կը կոչեն, և նա շինել տուած է: Ոսկէհոր կամ գանձատունն կոչուելուն պատճառը առասպելական կը համարուի: Լատինք կ'ըսեն թէ յիշեալ Թագուհին իւր թքովը հողը քարացնելով ոսկի կը գոյացնէր, եւ մշակները կը վարձատրէր առատօրէն: Չախ կողմի դուռը Հապէղէց վանքն է, եւ անմիջապէս տեսնուած բակի նման քարայատակը Հայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ տանիսն է, որում մէջ տեղը բարձրացած է յիշեալ եկե-

դեցւոյն գմբէթը հանդերձ պատուհանօք : Հապէշից վանքն աւերակաց կոյտ մի է, եւ յայտնի ցոյց կուտայ բնակողաց խեղճութիւնը, որոնց օրապահիկ ապուրն ու հացն անգամ Հայոց միաբանութիւնը կը հոգար :

Սոյն վանքը Սուրբ Յարութեան տաճարի արեւելակողմը կ'իյնայ, ուրկէց լաւ կ'երեւի հին տաճարին մասերը, որոնց խնայած է ժամանակը : Չորրորդ դարուն այս վանքի տեղն ալ սուրբ Յարութեան Տաճարին մէջը պարունակուած էր : Գմբէթին և աւերակներուն մէջ տեղը Հապէշք ձիթենի մի ցոյց կուտան, քուրջերու կտորներով զարդարուած, որու համար կ'ըսեն թէ՛ Հայր Աբրահամ այս տեղ ուզեց զօհել իւր միակ որդին իսահակը :

Ե. Գալառնի վանք : Ասկէ կրկին ետ դառնալով Տաճարին Նախադուռնը սաժ տեղերնիս, սիւններուն քովէն վար իջնելով և Մութ շուկային մէջ ուղղուելով՝ աջ կողմերնիս ելած առջի փողոցին մէջ մտնենք, որոյ ուղղութիւնն

է արեւմուտքէն դէպ յարեւելք: Ներս
մտած ժամանակ աջ թեւերնուս վըսյի
առաջին շէնքը հին եկեղեցի մի է, որոյ
անունը ծանօթ չէ, բայց անտարակոյս
կըթուի մեզ որ Գաղառնի վանք ըսածն է
այս, կառուցեալ յանուն Ս. Հովհովմէի
եւ Գոյիանէի, որ Հայոց ունեցած 70
վանօրէից 29 րն էր, որոյ համար Կը-
րուած է թէ Ս Յարութեան դրան
քովն է:

2. Դընոյն Հեղինէի Խալիֆներուն Գեղը:
Յիշեալ փողոցէն ուղղակի զառ ՚ի վայր
երթալով՝ աջ կողմերնիս մեծկակ դուռ
մի կայ, որ ըստ ուսմկաց Դընոյն Հեղինէի
Խալիֆներուն Գեղը կ'ըսուի, և ըստ Լատիւ
նաց՝ Նորա հիւրանոցը կը կոչուի, իսկ
Արաբացիք Թէփե-էլ-Խասեփի կ'անուա-
նեն. ժամանակ մի հիւանդանոց էր,
բայց հիմակ երբեմն միայն աղքատաց
համար ապուր կ'եփեն, ուր դեռ հին
ժամանակէ մնացած երեք կաթսաներ
կան ահագին մեծութեամբ, որ յանուն
Գընոյն Հեղինէի կը յիշուին. Եւ որով-
հետեւ հաւատաստացոյն կարծեօք սոյն

Հաստատութիւնն Աբգարու կնոջ Հեղինէի պալատին տեղւոյն վրայ է, որ Ախոյ լեւրան վրայ կը գտնուէր, և նա էր որ սովու ժամանակ աղքատաց համար ցորեն բերել տալով բաժնեց ու ինամք տարաւ, 'ի յիշատակ սոյն մարդասիրական գործոյն մնացած է այնքան դարերէ 'ի վեր իւր պալատին մէջ սոյն անջնջելի նշանը և ճշմարիտ քրիստոնէութեան օրինակը:

Շատ դարերէ յետոյ Ռորսելան Սուլթանուհին, որ Սուլթան Սելիմի որդւոյն Սուլթան Սիւլէյմանի սիրուհին էր, նորոգել տուած է այս մարդասիրական հաստատութիւնն, և Սիւլէյման անոր մշտնջենաւորութեան համար Պէյթճէլէ գիւղի Բեթլեհէմի և Սելովամայ եկամուտները նոյն տեղւոյն շնորհած էր. թէպէտ մինչեւ ցայսօր բաւական Վազըֆիէր ունի, բայց աղքատներն կերակրելու համար բաւական ինամք չ'տարուիր:

Թէ սոյն Թէմիէի դուռը և թէ փողոցին նոյն կարգին վրայ գտնուած բանի

մի շէնքերը որ հիմակ Էֆէնտիններու տուններ են, և տեղական կառավարութեան ապարանն եւս այս կարգի շէնքերուն մէջն է, բաւական հնութիւններ ունին, շատ տներուն ճակատը շքաքարով յորինուած են, և բաւական ճարտարապետական են, որոնք մինչև Խաչակրաց ժամանակ կը հասնին:

Է. Սալահէֆֆիի Դպրոց և Այն-Սեդիլի Դպրոցն Հեղինէի հիւրանոցէն կամ Թէֆէէն ելնելով և դէպ ՚ի արեւելք ճանապարհը շարունակելով կը հասնինք քառուղի փողոցի բերանը, որուն ձախակողմեան հիւսիսային արեւմտեան անկիւնը՝ հնաշէն Մեդրէի մը կայ Տաճկաց, որուն համար կըսուի Թէ՛ Մատթէսս Աւետարանչի տունն էր, և հոս գրեց Ս. Աւետարանը Եբրայական լեզուաւ: Այս չորեքուղի ճանապարհին արեւելեան հիւսիսակողմի անկիւնն ալ հին Սեդիլ մի կայ. արեւելեան ճանապարհը ուղղակի կը տանի Սողոմոնեան Տաճարի Պապ-էլ-Հաֆիփ ըսուած դուռը, եւ մեծ ուղին՝ որ Գամասկոսի դրան

Ճանապարհն է և որ հիւսիսէն դէպ 'ի հարաւ կ'երկարի, Յովսեպոսի լայն կողմը կոչուած լեռանցամէջն է. դէպ յաջ ուղղուելով և ճանապարհին ծայրը հասած ժամանակնիս՝ բաւական գարուվեր է, եւ հեղեղատին ծայրն է որ Մակաբայեցի իշխանաց հրամանաւ պարսպի աւերակներով լեցուելով՝ Ախոս լեռը Սողոմոնի տաճարին հետ միացաւ:

Այս ճանապարհին մէջ՝ ձախ կողմն՝ հին շուկայ մի կ'երեւի, որ աստ է Սողոմոնեան Տաճարի Պապ-տո-կ-ը-կաթիլանի (դուռ բամբակի շուկայի) ըսուած գուռն, և սոյն շուկային մէջ՝ Տաճարի դրան մօտ աջակողմն է Համմա-է-լ-Շիֆա կոչուած բաղնիքն. շուկայէն դուրս ձախ կողմն է Համմա-ը-էյն (ակի բաղնիք) զոր մերօրինք կը կոչեն նոր բաղնիք. այս բաղնիքէն քիչ մը անդին դէպ 'ի հարաւ Սեպիլ մը կայ, որ յիշեալ բաղնիքի ակի քաղնի կոչուիլն այս Սեպիլն սնունէն առնուած է:

Յիշեալ ճանապարհէն դուրս ելնելունս ձախ դին պզտիկ տուն մի կ'ե-

րեւի դրսի կողմէն քանդակուած , որ Սալահի-պարիի դպրոց կը կոչուի, ըստ որում նա եզեւ հիմնադիր , և այսօր ալ դարձեալ դպրոց է Մահմետականաց :

Այս անէն 20 մեդր աւելի ներս՝ գեղեցիկ այգիւր մի կը տեսնուի Այն-Սէպիլ անուամբ . ասոր ջուրը Աղբիւր կնքեալէն կուգայ , որ նախ Տաճարը գալով կը թափի եւ յետոյ անկէ կը բաժնուի :

Այս աղբիւրին հարաւային կողմն է Դատաստանատունը (Մահիթէն) : Այս տեղ քարի մէջ փորուած անտուկի ձեւով տապան մի կար (¹) , թագաւորաց գերեզմաններէն բերուած , որ 1569ին Գաղղլոյ հիւպատոսին խնդրանօք Փարիզու կայսերական թանգարանը խրք-

(¹) Ճիշդ ասոր նման արկղածեւ և քարի մէջ փորուած տապան մի կար Ս . Յակովբոյ մեծ գաւթի Ջրամբարին քով գրուած , որ իբրև ծառայի կը գործածուէր , և այս 1886 թուոյն տպարանը փոխադրուելով , հոն ալ իբրև ծառայի գործածուեցաւ , սակայն 1869ին հնութեանց թանգարանը փոխադրուեցաւ հանգուցեալ Նոայի Ս . Պատրիարք Հօր հրամանաւ :

կուեցաւ : Արտաքին բակին մէջ միւսիննէ յօրինուած գեղեցիկ աղբիւր մի կը տեսնուի , որու ջուրը նոյնպէս Աշբիւր կնքեալէն կուգայ :

Այն-Սեպիլէ արեւելակողմը և կից անոր՝ Սողոմօնեան Տաճարին Պապ-էլ-Սիլիլէ կոչուած դուռն է :

Այն-Սեպիլէն 200 մետր ետ դառնալով նոյն փողոցին մէջ , երկու տուն կ'երեւին , մին աջ՝ և միւսն ձախ դին , որոնք թէպէտեւ խարխիւեալ , սյսու աւմենայնիւ նշանաւոր գեղեցկութիւն մի ունին : Առաջին տունը , որու դուռը շթաքարով շինուած է , թաշակրաց ժամանակ դպրոց էր , այժմ Սյայիլէ կը կոչուի , եւ Էսաստ էֆէնտի Մուֆթի-էլ-Շաֆիհիէ անուն անձինն է : Երկրորդը՝ որ նոյնպէս թաշակրաց ժամանակ դպրոց էր օրիորդաց , այսօր դարձեալ վարժարան է Մահմետական տղայոց և Շէյխ Իամայէլ Տանային է , և Էլ-Աճէֆէ կը կոչուի , յանուն այն պարսկուհւոյն , որ Սալահէտտինի մէկ պաշտօնէին կինն էր եւ հոս թաղուեցաւ , սւր կը տես-

նուի դեռ գերեզմանը :

Ը. Հրէից արգաստած պեղը : Յիշեալ տանց առաջնոյն դիմացը փողոց մի կայ , ուր շորս բոպէի չափ քալելէն յետոյ , միշտ դէպ 'ի ձախ գնալով , կը հասնինք Տաճարին պարսպին քով , ուր տեղ Հրէայք ուրբաթ օրերը աղօթելու և արտասուելու կուգան , գլուխնին զարնելով նոյն պարսպին , որուն քանի մի կարգ քարերը խիստ հին են և Սաղմօնի ժամանակէ մնացած կ'երեւին , օրոնց մէջ մինչեւ 3 մեդր երկայնութիւն ունեցող քարեր կան : Հրէից այս արարմունքը տեսնելով՝ ստուգուած կը համարուի այն ճշմարտութիւնը , զոր Արեմիայի բերնով խօսեցաւ Տէրը . « Զք՞ գոչես 'ի վերայ բեկման քոյ՝ սակայն ոչ արարից քեզ վախճան . բուռն են ցաւք քո , վասն բազմութեան անօրէնութեան քոյ սաստկացան , մեղք քո արարին քեզ զայդ » . Երեմ. Լ. 15 : Ողբալի տեսարան մի է արդարեւ այսպիսի ցրրուեալ աղգի մի վիճակը , որոնք աշխարհիս ամեն կողմէն խուժք խուժք

կուգան իւրեանց արտասոււաց կաթիլները խառնելու նախահարցը արտասուքին, որոնք տասն և ինը դարերէ ՚ի վեր կը թափեն սոյն տեղւոյս վրայ, ոչ ուրիշ բանի համար ըստ մեզ՝ եթէ ոչ Մարգարէին վերոյգրեալ խօսքերը ճշմարտելու :

Այս արտասոււաց տեղը սալայատակեալ բակ մի է 30 մեդր երկայնութեամբ և 4 մեդր լայնութեամբ, հիւսիսոյ կողմէն Մահիճէին սլասն է, հարաւէն անհատականի մը տունն է, ուր տեղ հին Տաճարի պարսպին դրան մէկ վերնաշէմը կը գտնուի, արեւմուտքէն ուրիշ տուներով ծածկուած է, իսկ արեւելեան կողմն է Տաճարին պարսպի այն մասը զոր Հրէայք իրենց արտասուքներովն ու համբոյրներով կը թանան ու կը յարգեն :

Թ. Եղեիլայի աւաղանը : Ետ դառնալով այս տեղաց մինչեւ ձախակողմի առաջին փողոցը, անկէ ՚ի հարաւ շեղելով մինչեւ Հրէից արտասուած տեղւոյն պատին ծայրը, այսինքն՝ Օմարայ Մզկիթի

պարսպին հարաւային արեւմտեան անկիւնը, հոն կը տեանուի Կաթուղի մը խառնալեւս մասերը, որ յառաջագոյն Գիրոբէնի ձորին վրայ ձգուած էր և Մորէա լեռը Սիօն լեռան հետ կը միացնէր։ Այս կամուրջը, ինչպէս կ'երեւի, 15 մեդր լայնութիւն ունեցած է, և Հրէից Թագաւորները շինած են հաւանաբար Արիստարուլոս մեծ քահանայապետը կործանել տուաւ զայն Գրիստոսէ Յէտարի առաջ, որպէս զի Պոմպէոս չ'կարենայ անկէ տաճարը մտնելու։ Յովնայ. Ա. 5։ Սոյն կամուրջին մէկ ծայրը Մախբայիցոյ պալատին կը հասնէր Սիօն լեռան վրայ։

70 մեդր աւելի անդին դէպ 'ի հարաւ ադամաթզենեաց երկու անտաներու մէջէ անցնելով՝ Աղբիւսաց դռը կը հասնուի։ Բայց մենք ետ դառնալով և ձախ կողմի առաջի փողոցը մտնելով մինչև Սափիյէ ըսուած տունը հասնինք, անկէ դարձեալ ձախ կողմի ճանապարհը դէպ 'ի յարեւմուտք առաջ քալենք։ Այս փողոցիս կէսէն սկը-

սերլով մինչեւ ծայրը շուկայ է. ձախ
 կողմերնիս Հրէից թաղը կամ շուկայն
 է, դէպ յաջ տասը քայլաչափ երթա-
 լով ձախակողմը Մեծ շուկային (Սոս-
 քէլ-Քէդիր) բերանն է. ասոր արեւմը-
 տեան ծայրը՝ խանութներուն ետեւի
 կողմն է Եղեկիայի աւազանը, որ կրնայ տես-
 նուիլ բարձր սրճարանին մէջէն, որ ա-
 ւազանին վրայ կը նայի, և ուրիշ չըջա-
 կայ տուններէն: Այս աւազանին համար
 շատ հնագէտք՝ Եղեկիա թագաւորի շի-
 նեւ տուած և Սպորին աւազան ըսուածը
 կ'իմանան, ու Վերին աւազանէն ջրանցք
 մ' ալ բանալ տուաւ Ասորեստանցւոց
 Սենեքերիմ թագաւորին գալու ժամա-
 նակը, որպէս զի պաշարման մէջ ջուր
 ունենան: Վերին աւազան ըսածնիս այժ-
 մեան Յոպլէի Գրան դուրսը եղածն է.
 Տաճկաց գերեզմանատանց մէջ, և ջը-
 րանցքը մինչեւ հիմայ կը մնայ նոյն
 նպատակին ծառայելով անձրեւաց յոր-
 դութեան ժամանակ:

Ժ. Դաւիթ Բերբը: Յիշեալ Մեծ շու-
 կային ծայրը՝ հրապարակ մի կայ, ուր

Տէլլահ կանայք կը նստին բանջարեղէն
 և փայտ ծախելու . Չախ կողմը դէպ
 ՚ի հարաւ երթալով աջակողմը մեծ
 դուռ մի կը տեսնուի պահապան զօր-
 քով պահպանուած . ասիկայ է քաղա-
 քին բերդը , որ քաղաքի բոլոր շէնքե-
 րէն բարձր է և որ Դաւիթի բերդ կը կո-
 չուի , ըստ որում նորա շինել տուած
 աշտարակին կամ պալատին տեղն է .
 Բ . Թագ . Ե . 7-11 : Հերովդէս մեծ այս
 տեղ երեք աշտարակ շինել տուած էր ,
 առաջինն էր Հիպպիկոսի ըսուածը , երկ-
 րորդը՝ Մարիամնեայ , երրորդը՝ Փոսա-
 յելի , եւ այս աշտարակներուն հնու-
 թիւնները դեռ մինչեւ ցայսօր կ'երե-
 ւին այն խոշոր քարերէն , զոր Դաւթի
 ժամանակէ մնացած կը կարծեն գիտնա-
 կանք : Այս երեք աշտարակներէն ՚ի զատ
 երկու հատ եւս կան որոց շինուածքն
 ու քարերուն մաքրութիւն ալ կը վկայեն
 որ Հերովդէսին ժամանակէն չ'են , այլ
 շատ շատ մինչեւ Սուլէյման Բ . կ'ընեն
 թերեւս :

ԺԱ . Ի-դաբերից Գոմեր : Փողոցին ձա-

խակողմը Դաւթի բերդին է Անգղիացի Յպիսկոպոսական Բողոքականաց աղօթարանը, որ շինուած է Հերովդէս մեծի պալատին տեղւոյն վրայ: Սոյն աղօթարանին քով ետեւի կողմէն դեռ կանգուն կը տեսնուի փոքրիկ եկեղեցի մի յանուն Յակովբայ առաքելոյն որ Եւֆոպիէ կը կոչուի: Ասկէ իբր 55 մեդր դէպ յարեւմուտք կան երեք փոքր մաւտուռներ ձախ թեւիդ վրայ, նուիրեալ յանուն Նրից Մարիամանց, որոնց Յիսուս իւր յարութենէն յետոյ այս տեղս երեւնալով, առաց. « Ո՛ղջ էք » նոքա ալ մօտենալով անոր ոտքերը պագին ու զինքը պաշտեցին. Մապի. ԻԸ. 9: Այս տեղւոյն մերայինք Իզաբէրից քուն կ'անուանեն:

ԺԲ. Թովմայ առաքելոյն քան պեղը: Ասկէ դուրս ելնելով հասարակ ճանապարհին վրայ դէպ 'ի Սուրբ Յակովբայ վանքն երթալու կամարին բերանը հասնելնուս՝ մեր վանուց Դեղարանին դիմացի փողոցին մէջ ձախ դին առաջին դուռը թողլով՝ երկրորդ դուռն է Թով

Տայ առաջելոյ քանը տեղը , որ անկեան վրայ է : Հաննէ պատմագիր կ'ըսէ թէ՛ թովմայ առաքելոյն Յիսուսի ձեռօք Հընդիկ վաճառականաց ծախած տեղն է . և հին ատենները եկեղեցի էր յանուն թովմայ Առաքելոյ , իսկ այժմ Մահմետականաց ձեռքը Լքեալ մնացած աւերակ մ' է :

Ահա՛ հոս կը լքանայ . մեր Հիւգերորդ այցելութիւնը :

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ի լեռուն սուրբ Համբարձման :

Չիթենեաց լեռն Երուսաղեմի արեւելեան կողմն է , և Սրբազան լեռներէն մին , ուրկէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս համբարձաւ յերկինս՝ իւր աչակերտաց քարոզելու ի շխանութիւն շնորհելէն յետոյ , և յետ այնորիկ Համբարձման լեռ կոչուեցաւ Քրիստոնեայ ազգաց մէջ զոր Արարացիք ձեպէլէլ՝ Երուսաղեմի :

կանուանեն : Եւ Միջերկրական ծովէն
800 մեդրաչափ բարձր է :

Տիտոս երբ Երուսաղէմը պաշարե-
լու եկաւ . իւր տասներորդ խումբը
Ձիթենեաց լեռան վրայ բանակեցոյց .
Յովէպ . Ե . 8 :

Նոյնպէս Խաչակրաց ժամանակ
Տանկրետ Ձիթենեաց լեռը ելաւ , ուսկէ
լու կը նայուի քաղաքին վրայ , այն տեղ
Հինգ արաբացի Մահմետականք վրան
յարձակեցան , որոնցմէ երեքն սպաննեց
և երկուսը փախան :

Քրիստոսի ոտնատեղւոյն վրայ Հե-
ղինէ Թագուհիի ժամանակէն շինուած
եկեղեցի մը կար . այս եկեղեցին Պար-
սից Խոսրով Թագաւորի յարձակման ժա-
մանակ 616 Թուականին կործանեցաւ .
Երուսաղէմի Զաքարիա Պատրիարքն և
Քրիստոսի սուրբ Խաչը գերի տարուե-
ցան : Երբ Զաքարիային տեղակալեց
Մոգիստոս , նա կրկին նորոգեց սուրբ
Համբարձման եկեղեցին , ըստ որում
քիչ ժամանակ յետոյ եկող ուխտաւոր
Պատմագիրք կը ստորագրեն յիշեալ ե-

կեղեցին թէ՛ բոլորածեւ էր եւ վերի կողմը լաց: Ութերորդ դարու ականատես Պատմագիր մ'ալ կ'ըսէ թէ՛ Քրիստոսի ոտնատեղւոյն վրայ կախուած լուսաւոր ջահի վերին կողմը հովին դէմ պատսպարելու և անձրեւէ ազատ ըլլալու համար ապակիէ վանդակով մի ծածկուած էր:

Խաչակրաց ժամանակ եկեղեցին պայծառ մնացած էր. բայց երբ նոցա ձեռքէն իջնանութիւնը 1187 ին դարձեալ Մահմետականաց սնցաւ, կրկին խանդարեցաւ Ս. Համբարձման եկեղեցին, որուն աւերակ հիմերը դեռ կ'երեւին բակին մէջ:

Սոյն բակին մէջ տեղ Քրիստոսի ոտնատեղւոյն վրայ կառուցեալ մատուռ մը կայ ութանկիւնի ձեւով 6 էն միւշեւ 7 մեդր տրամագծով և վրան գմբէթով: Սոյն եկեղեցին Հայոց սեփականուած էր, բայց ո՛ր դարէն 'ի վեր՝ յայտնի չէ: Անգամ մի հրամանագիր սուած են Հայք, որ կ'արգիլէ գիւղացւոց Հայոց վանքին մօտ տուն շինելու. ժամանակէ մը յետոյ

դարձեալ Հայ Միաբանութիւնն անկէ դուրս ընելով՝ Ֆէլլաէք վանքը կ'աւրեն, եւ պարսպին կից մզկիթ մի կը շինեն հանդերձ միւսրէով: Երկրորդ անգամ Սուլթան Ահմէտ Ա.ին որով Հրամանագիր ստացած են Հայք Հիճրէթի 1022ին, որով արտօնութիւն կը տրուի Հայոց՝ պարիսպը շինելու, բակը քարաշատակելու և գմբէթը նորոգելու համար. այս Հրովարտակին մէջ կը յիշուի որ ուրիշ քրիստոնեայ ազգերն ալ իրաւունք ունին ուխտ և պաշտօն կատարելու: Երրորդ անգամ Հրամանագիր կ'ընդունին Հայք, որով կ'արգելուի Ֆէլլահներուն՝ պարսպին մէջ մեռեալ թաղելու:

Քրիստոսի ոտնատեղւոյն գմբէթը 1833 թուականին երկրաշարժէ մի փնասուելով, Լատին միաբանք ուզեցին նորոգել. Հայք և Յոյնք իմանալով ոտք ելան, սակայն ժամանակին դատաւորը և ո՛չ մէկ ազգի իլլա՛ տալ ուզեց մինչեւ որ հաստատուի որ ազգին վերաբերուիլը: Հայոց միաբանութիւնը, որ

գիտէր իւր քով հին Հրովարտակ գրա-
նուիք , յիշեալ երեք Հրովարտակները
տարաւ դատաւորին և խողովին ներկա
յացուց , որ վաւերական գտնելով զա-
նոնք՝ իլաճ տուաւ , և սոյն իլաճի վրայ
Ք. Գուռն 1400, 01, 02 Թուականնե-
րուն Հրովարտակներ շնորհեց Հայոց
նորոգութիւն ընելու և սենեակներ շի-
նելու համար . ուստի անմիջապէս սկը-
սան Հայք բակին աջակողմը , կէս մի
բակին մէջ և կէս մի բակէն դուրս ի-
րենց սեփական գետնին վրայ սենեակ-
ներ շինել կրկնայարկ , և ուրիշ նորո-
գութիւններ ընել , և մինչեւ ոտնա-
տեղւոյն գմբէթայարկին դրանը կից
արտաքին դռնէն սկսելով վրան գեղե-
ցիկ տախտակաշէն ծածք յօրինել , ա-
ռանց դաչելու այոց ազգաց իրաւանցը ,
և Մատրան մէջ Սեղան մը կառուցին ,
ուր գրեթէ ամեն օր Պատարագ կը մա-
տուցանէին Հայերը :

Լատինք և Յոյնք չկարենալով տա-
նիլ Հայոց ձեռօք եղած շինութեանը ,
քանի մի անգամ ՚ի Պօլիս և յԵգիպ-

տոս մարդ խրկեցին, եւ Գաղղիոյ ու Ռուսիոյ Դեսպանին ձեռօք Ռաբրի տը-
 ւին Տէրութեան, գանգատելով՝ որ-
 պէս թէ Հայք կ'արգիլեն իւրեանց որ
 հոգեւոր պաշտօննին կատարեն. ասոր
 վրայ հրաման կ'ելնէ որ քննութիւն ըլլայ
 Երուստղեմի Դատական ժողովոյն մէջ:
 Հատինք այս նպատակիս համար առ-
 նուած թուղթը, որ Շաթրգատէ Արի-
 ֆի անուն երեւելի անձի մի հետ ղըր-
 կուած էր քննելու պաշտօնով՝ այնպէս
 ներկայացուցին, որպէս թէ Հայոց յի-
 շեալ շինութիւնը աւրելու համար արը-
 ուած լինէր այն Հրամանագիրը, այս
 քննութենէն յետոյ՝ յիշեալ Դեսպա-
 նաց կրկին թախանձանքներով Քարձրա-
 գոյն Գուռը վերջապէս յակամայս զի-
 ջաւ իւր առջի Հրովարտակը ետ առ-
 նուլ եւ բակին մէջ շինուած սենեակ-
 ները աւրելու հրաման տալ: Սոյն հրա-
 մանիս վրայ Հայ միաբանութեան սիր-
 տը կարեւէր խոցուելով չուզեց պաշտ-
 պանել և չթողուլ որ բակէն դուրս իւր
 սեփհական գետնոյն վրայ շինած սեն-

եակներն ալ փլցրնեն, վասն որոյ Լատին և Յոյն միաբանութիւնք դատ վարած ժամանակնին ըսած էին թէ Համբարձման տեղւոյն վրայ եղած շէնքը ոչ մի Քրիստոնէի է, այլ Մահմետականաց մզկիթ է եւ մենք այնպէս գիտեմք:

Սոյն վիճակիս մէջ կը մնայ դեռ մինչև ցայսօր յիշեալ Սրբազան Տեղը, որու բանալին գիւղացւոց ձեռքն է և նորոգութեան ծախքը Տէրութեան գանձէն կը լինի: Տարին անգամ մի մեծ պահոց մէջ, երկրորդ անգամ Քրիստոսի Համբարձման օրը Պատարագ կը մատուցանեն Հայք եւ Յոյնք, իսկ ուրիշ ազգերը միայն Համբարձման օրը: Հայոցմէ միաբանք առջի երեկոյին երթալով գիշերը գմբէթին տակը՝ Ոսնատեղւոյն վրայ, իսկ առաւօտուն բակին մէջ հիւսիսային արեւելեան անկիւնը Պատարագ կը մատուցանեն: Յոյնք հարաւային արեւելեան անկիւնը:

Այս տեղեկութիւններէն յետոյ սկսինք մեր այցելութիւնն ընել:

Արեք ճանապարհ չկայ վեր ելնելու, առաջինն է Փրկչադուռնէն դուրս ելնելով եւ Արեսողոմայ արձանին քով հասած ժամանակնիս՝ Հրէից գերեզմանատան մէջ ուրուհն նեղ շաւիղ մի կ'երեւի, որ այս ճանապարհն Համբարձման լերան ձախակողմը կը հանէ: Միւս երկու ճանապարհներն են, քաղաքիս Պապէլ-Սպալի (Ս. Աստուածածնի) դռնէն ելնելով և նորա Գերեզմանի եկեղեցւոյն առջեւէն անցնելէն յետոյ արեւելեան ճանապարհը բռնել, որ Լատինաց պարտիզին քովէն է: Այս ճանապարհներէն մէկը խորդուբորդ է, այն՝ ուր տեղ Քրիստոս յաւանակաւ եկած ժամանակ քաղաքը տեսնելով լացաւ անոր վրայ: Իսկ միւսն՝ լերան ճիւղիս հասնելէն վրայ է որ աւելի ճանդիստ, և սովորականն է:

Գէթսեմանիի պարտիզին քովէն 20 մեդր դէպ 'ի արեւելք՝ քալելով, աջ ձեռքի վրայ ուրիշ պարտիզի մը տակովը ճերմակ ժայռ մի կը տեսնուի, ուր աւանդութեամբ կ'ըսուի թէ՛ Տէրն մեր

Յիսուս Քրիստոս Ծաղկազարդի օրն Ձեթենեաց լեռնէն գալուն՝ արտ իշէն իջնալով աւանակին վրայ նստաւ, եւ այս ժամուն՝ այս տեղ մերձեցան Յիսուսի քով Հայոց Աբգար Թագաւորի դեսպանները՝ Անանէ եւ իւր ընկերք, եւ Առաքելոց հետ խօսակցութիւն ըրին. Յով. ԺԲ. 20-23: Յոյներն՝ ուրիշ աւանդութիւն մը կը պատմեն այս տեղւոյն համար թէ՛ Թովմաս առաքեալ ամենօրհնեալ Տիրամօր գերեզմանը տեսնելու գնացած ժամանակ՝ տեսաւ նորա երկինք վերափոխուիլը, և այս քաւրիս վրայ վար ձգեց Տիրամայր իւր գօտին:

Այս տեղէն սակաւ ինչ հեռի դէպ ՚ի հիւսիս՝ վէմ մի եւս կայ գետինը Թաղուած, որուն համար կ'ըսուի թէ՛ Ս. Ստեփաննոսի քարկոծման ժամանակ՝ Ս. Կոյան կ'աղօթէր այս վիմին վրայ. 1860 թուականին Յոյները այս վիմին շուրջը քարով պատսպարեցին:

Քրիստոսի Համբարձման տեղը չը գացած մեր ճանապարհը դէպ ՚ի ձախ

կողմը յառաջ տանելով 200 մեդր, Գալիլեո կը հասնինք, որուն Մահմետականք Քարմէլ-Սէֆ կ'ըսեն: Աւանդութիւն մը կայ թէ Կանսա-Գալիլիացիք այս տեղ իջեւան կամ հիւրանոց մի ունէին ազգային, ուր կը բնակէին Զատկի տունին Երուսաղէմ եկած ժամանակնին, եւ ասկէ մնացած է տեղւոյն Գալիլիա անուներ:

Անոր համար Տէրն մեր Յիսուս Քրիստոս ալ՝ իբր 'ի Նսզարեթէ Գալիլեացոց համարուած լինելուն, երբ Երուսաղէմ կը գար՝ գիշերները կ'ելնէր այս Զիթենեաց լեռը կ'ազանէր. Ղուկ. ԻԱ. 37. ԻԲ. 39. Յովհ. Ը. 1-2: Այս տեղ ալ վանք մը և եկեղեցի մը կար, և անշուշտ վերոյիշեալ եկեղեցիներէն մէկն էր: Հին աւերակներու մնացորդներ կան դեռ, և շատ տարի չէ որ Յոյնք գնեցին այս տեղը. և մի քանի տարի առաջ գիշերայն պարսպապատեցին:

Ետ դառնալով ասկէ դէպ 'ի հարաւ 400 մեդրի չափ, Զէյթուն գիւղին

մէջ Ռինարէի մի քով կը հասնինք , որ կից է այն բակին որուն մէջ եղած դմբէթին տակ Քրիստոսի համբարձման օր թողուցած Ուսնաբեղոյն նշանը կ'երեւի ժայռի մի վրայ դրոշմուած , և ինչպէս կը կարծուի՝ ձախ ոտքին (՝) նշանն է . և ժայռին մէկ մասը բաց թողլով՝ բարեպաշտից համբուրելու համար , միւս բոլորտիքը քարայատակ ըրած են որչափ տեղ որ յարկի տակ առնուած է :

Բակի դռնէն դուրս ելնելուս հաբաւային կողմը Տերվիշէ Բնախարան է . տեղւոյն Շէյխին քանի մի փող տալով կը թողու վեր Մինարէն ելնելու , ուր մարդոյս աչքին գեղեցիկ տեսարան մի կը ներկայանայ . արեւմտեան կողմէն Քէթսեմանի ձորը , բուրբ Երուսաղէմը և ՚ի մասնաւորի Օմարայ մզկիթը , Սուրբ

(՝) Միւս ոտնատեղոյն համար Մահմետականք Օմարայ մզկիթին (Էլ-Աստ) մէջ է կ'ըսեն . բայց այդ հաւանական չէ , ըստ որում երկուան ալ զատ զատ ժայռեր են . և եթէ քովէ քով գրուելու լինին , երկու քայլին մէջ տեղը բնականէն աւելի տարածութիւն մի կը գտնենք :

Յակովբայ վանուց գմբէթը, և քաղաքին միւս ետեւի կողմը Ռուսաց վանքը, և այլն. արեւելեան կողմէն կը տեսնուի Յուդայի երկրին անապատը մինչեւ Յորդանան ու Մեռեալ ծովը եւ լեռներու շղթայ մի՝ որու հարաւային ծայրն է Մովսբայ լեռները:

Մինաբէն վար իջնելով եւ դէպ ՚ի արեւմտեան հարաւակողմն երթալով՝ շէնքերուն անկիւնը դուռ մի կը տեսնուի երեսը դէպ ՚ի արեւմուտք, ուսկէ կը մտնուի Սբբոհոյն Պեղեթա այրը: Այս սրբուհին Անտիոքացի էր Մարգարիտ անուն և գուսանութիւն կ'ընէր, յետոյ Եզեսիոյ Նոննոս եպիսկոպոսի ձեռք դարձի գալով հինգերորդ դարուն՝ Պեղեթայ անունը կրեց, եւ հոս մեռաւ ու թաղուեցաւ: Այս տեղ ալ հին ժամանակ վանք մի կար, և դեռ կը տեսնուի ստորին խուց մի կամ գերեզման մի ուր 16 ոտք աստիճաններով կ'իջնուի: Մահմետականք պատուով կը բռնեն այս տեղս և միշտ գոց կը պահեն:

Եթանասուն և հինգ մեդր դէպ ՚ի

հարաւ եւ քիչ մի Մինարէին դէպ 'ի ա
րեւելակողմը եղած տեղն՝ Տէրն մեր
Յիսուս Քրիստոսի իւր աշակերտաց Տե-
րունայն աղօթիչ ուսուցած տեղն է։ Այս
տեղն 1869 ին Լա Դուռ տ'Օվէռնի իշ-
խանուհին գնելով պարսպով պատեց
և ապա ընդարձակ շէնք մի շինեց, ու
րուն մէջ նաեւ Մայրապետանոց մը
ու պայծառ Եկեղեցի մը, շէնքին ներ-
քին կողմի պատերուն վրայ գրած են
Հայր Տէրը գրեթէ 30 տեսակ լեզուներով,
1880 ին նոյն շէնքին հարաւային կողմն
եղած փոքրիկ արտն ալ առնելով շքա-
պատեցին կցելով նոյն տեղւոյն։

Յիշեալ տեղւոյն հիւսիսային ա-
րեւմտեան դին իբր 30 մեդր հեռու է
Առաքելոց Հանգանակն յօրինած փեղը, ուր հին
ժամանակ եկեղեցի կար, և հոն 12 խոր-
շերու մէջ Երկոտասան Առաքելաց ար-
ձանները գտնուած են, Մահմետականք
այս տեղի քարերը Հրէից ծախած են
տապանաքար ընելու համար։

Սոյն տեղւոյն հիւսիսակողմը և ա-
նոր կից՝ դաշտակի մի մէջ գետնին երե-

որ գերեզման մի կար ժայռին մէջ փոր-
ուած, եւ մէջը 9 խորշ մտուրի նման :
Այս տեղն 1868 թուականին Ռուսք զը-
նեցին, և 1871 ին հիմնարկութեան հա-
մար փորել տուած ժամանակնին կար-
դաւ դամբարաններ յայտնուեցան, որոց
մէջ անեղծ մնացած երեք գերեզման-
ներուն կափարիչներուն վրան գրուած
է ՋՈՋԻԿ, ՇՈՒՇԱՆ, ՄԱՐԻՆ : Իսկ դրան
առջեւ յատակին վրայ քառակուսի ձե-
ւով Հայերէն հետեւեալ արձանագրու-
թիւնը կայ միւսինն քարերով շինուած :

ԲԱՐԵՒԱԻՍ ՈՒՆԵԼՈՎ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ
ՋՍՈՒՐԲ ԷՍԱՅԻ ԵՒ ՋԵՐԱՆԵԼԻ ՃԶԱՐՍՍ
ԵՍ ՎԱՂԱՆ ԱՐԱՐԻ ՎԱՍՆ ԹՈՂՈՒԹԵԱՆ
ՄԵՂԱՑ ՋՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՍ ՋԱՅՍ

Յիշեալ դամբարաններու վերի կողմը
ընդարձակ սրահի մը յատակին վրայ կը
տեսնուի դարձեալ միւսինն (միւզայիգ)
քարերով յօրինուած քառակուսիի մը
մէջ զանազան գեղեցիկ նկարներ, որք
են՝ ձուկ, աքաղաղ, սագ և այլն . եւ
քառակուսիի եզերքն ալ Հայերէն յի-
շատակարանի մը հետեւեալ մնացորդը .

որովհետեւ սրահի յատակին մէկ կողմը
յիշատակարանի մնացորդով միատեղ
քանդուած է .

ԱՅՍ Է ԴԻՐ ԵՐԱՆԵԼՈՅՆ ՇՈՒՇԱՆԿԱՅ
ՄԱԻՐՆ ԱՐՏԱՒԱՆԱՅ . ՀՈՌԻ ԺԸ

Այս գեանին մէկ ուրիշ կողմն ալ
յիշատակարանի մը հետեւեալ մնա-
ցորդը կայ՝

ՎԱՍՆ ԹՈՂՈՒԹԵԱՆ ՄԵՂԱՅ ԹԵՒԱՅ .
ԱՐԱՍՈՒ ԵՒ ՄԱԻԿԱՆ

Այս գեանին մէջ Ռուսերը 1883 ին
սկիզբները՝ հին եկեղեցւոյ մը փլատակ-
ներէն գտնելով, անոր վրայ կառու-
ցին հետզհետէ հոյակապ եկեղեցի մը
փառաւոր կաթուղիկէիւ եւ բարձրա-
դիր զանգակատամբ . Ռուսք այդ գըտ-
նուած Հայերէն յիշատակարաններն ա-
մենայն զգուշութեամբ կը պահպանեն :

Այս հնութեան յիշատակարաննե-
րը պահպանելու համար ճիշդ օրինակ-
ները իւղաներկով հանուած եւ փայ-
տեայ շքանակներու անցուելով Պատ-
րիարքարանի գաւթին մէջ կախուած են :

Վերեւ յիշուած յիշատակարան-

ներէն զատ Ռուսք 1892 ին «Շուշան կան» գերեզմանի տեղէն մի քիչ հեռու խոպան տեղ մը նորէն պեղել տալով նկարներով և արձանագրութեամբ ուրիշ միւզայիգ մը եւս գտան, զոր ամենայն զգուշութեամբ կը պահպանեն։ Միւզայիգին գտնուած յատակը մօտաւորապէս 5 մեդր լայնութիւն և 6 մեդր երկայնութիւն ունի։ Նկարներն են 35 ցամաքային, ջրային և օդային կենդանիներ, խաղողոյ ողկոյք և զանազան ծաղիկներ իրարմէ շրջագծով զատուած և ամենքն ալ անեղծ մնացած են։ Սոյն նկարներու արեւմտեան կողմը ամենանուրբ արհեստագործութեամբ շինուած միւզայիգէ գորգ մը կայ իսկ միւզայիգներու հիւսիսային արեւելեան կողմը և անոր կից է գտնուած արձանագրութիւնն որ տապանագիր մը ըլլալ կը թուի և է հետեւեալը։

ԱՅՍ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՏՆ ՅԱԿՈՎՐԱՅ
— ՈՐ ԵՂԵԻ Ի ՁԵՌՆ ԽՆԴԻԵԼՈՅ։

Եթէ ճիշդ է հնագիտաց կարծիքը՝ որք յիշեալ հին և նոր գտնուած միւ-

զայիգները մեր Մեսրոպեան գրերու գիւտէն անմիջապէս յետոյ շինուած կը համարեն , այն ժամանակ պէտք է համոզուինք որ այս ամենը ՀԱԶԱՐ ՉՈՐՍ ՀԱՐԻՒՐ տարուան հնութիւններ են .

Հանգանակ շինուած տեղւոյն դէպ 'ի հարաւային արեւելակողմը 400 մեղրաչափ հեռու , Զ/թենեաց լեռան ուրքը , Բեթանիայի ճանապարհին վըայ , այն տեղ ուր ձորի մի բերանը գոցելու համար կարծես թէ յատուկ շինուած է , Բէթիֆօֆէ ըսուած տեղն է . ուր երբ մօտեցաւ Յիսուս , իւր Աշակերտներէն երկուսը դիմացը եղած գիւղ մի խրրկեց , որ հոն կապուած է՛ն ու յաւանակը իրեն բերեն , որոնց վըայ հեծնալով հանդիսով Երուսաղէմ մտաւ .

Սոյն Բէթիֆօֆէ ըսուած տեղն 1881 թուականին Լատինք ծախու առին մեծ դժուարութեամբ , և գետինն փորելով սիւներու կտորներ և մեծամեծ քարեր գտան . բաց ասոնցմէ ուրիշ քար մ' ալ գտան սեղանաձեւ՝ որուն բոլորտիքը նկարուած են Քրիստոսի եւ իւր Աշա-

կերտաց պատկերներն ու կապուած ի-
շու մը նկարն :

Ասկէ գնալով դէպ յարեւելք Բե-
թանիա գիւղը՝ Ղազարոսի Գերեզմանը կը
հանէ , որ հիւսիսային կողմը բացուած
դռնէ մի ներս մտնելով 27 ոտք աստի-
ճան սանդուղներով վար կ'իջնուի . բնա-
կան դուռը այս չէ , վասն զի Մահմե-
տականք առաջի դրան վրայ Տաճիք շինե-
լով՝ արգիլեցին Քրիստոնէից ներս մըտ-
նելու : Ուխտաւորք հոս եկած ժամա-
նակին պէտք է որ հետերնին մոմ ու-
նենան , վասն զի խիստ մուժ ու ստո-
րերկրեայ է գերեզմանը , և կարգու-
մտնեն ու ելնեն , որ շնչառութեան
կողմէ չ'ներուին . Ղազարոսի գերեզ-
մանին վրայ եօթներորդ դարուն եկե-
ղեցի կար , և Արաբացիք տիրած ժա-
մանակնին կործանած պիտի լինին , ինչ
ժամանակ Հայոց 70 Եկեղեցեաց եւս
մէկ մասին տիրեցին և մէկ մասը աւե-
րեցին :

Այս տեղէն 80 մեդր դէպ յարե-
ւելք եկեղեցւոյ մի աւերակ մասեր և

միւսիննով շինուած յատակի մի կտոր
դեռ կը տեսնուի : 40 մեդր Ղազարու
գերեզմանէն հեռու դէպ 'ի հարաւ ,
Մարիամ Մագդաղենացոյ կամ Մարկայի տանը
տեղն է : Այս տեղն 1870 ին Մատամ-
տը-Նիգոլայ անուամբ հարուստ տիկին
մի գնեց :

Եւ 180 մեդր դարձեալ Ղազարու
գերեզմանէն հեռու դէպ յարեւմուտք
Աիծն Բորոփի տանը տեղն է , ուր Մարի-
ամ Մագդաղենացին եկաւ և Փրկչին
մերոյ գլուխը անոյշ իւղով օծեց : Այս
տեղն ալ յառաջ եկեղեցի էր . բայց
այժմ եւ ոչ աւերակները կ'երեւին :
Գիւղացիք արտ ըրած են և վար ու ցան
կ'ընեն :

Ղազարու գերեզմանէն դէպ յա-
րեւելք 10 բոպէի չափ քալելով քաթա-
րալ ժայռ մի կայ գետնին երեսը . այս
տեղ հանդիպեցաւ Մարթա Յիսուսին՝
իւր եղբայրը մեռնելէն յետոյ , ու
ըսաւ իրեն . « Տէր , եթէ աստ եղած
ըլլայիր , իմ եղբայրս չէր մեռներ » .
Յովն . ԺԱ . 21 :

Այս տեղւոյն քովերը Յունաց մի-
արաններէն Սպիրիտօն անուն հարուստ
Յոյն Եպիսկոպոսը՝ (Երբեմն պատրիարք
Դամասկոսի՝) 1880 ին գնելով փոքրիկ
վանք մը շինեց սրբատաշ քարերով:

Ետ դառնալով Ղազարու գերեզ-
մանէն, և քանի մի քայլ դէպ յարեւ-
մուտք երթալով, ձախ կողմը առջի ճա-
նապարհը կ'ելնենք եւ 10 բոպէէն Ե-
րուսաղէմ դիմացնիս կ'երեւի. հոս ճա-
նապարհը դէպ յաջ կը խոտորի, ուրկէ
12 բոպէ յառաջ գնալով՝ ձախ կողմեր-
նիս պզտիկ արտի մի ցանկը կայ, յո-
րում Յիսուս Քրիստոս անիծեց թղէնի.
Այս տեղս ժայռի մէջ փորուած խոռոչ
մի կ'երեւի. եւ այն ժամանակուան
պէս հիմակ ալ ուրիշ թղենիի մի ծառ
կայ:

Այս տեղէն 6 բոպէ եւս քալելով
դէպ յաջ որ է հիւսիս, ձախ կողմերնիս
Թողլով Գայթակղութեան լեռը և Սե-
լովամայ գիւղը, ու վար Գէթսեմանի
ձորին եզերքը ճանապարհին վրայ լճ-
նելով, ձախ կողմի ճանապարհը գէպ

՚ի Փրկչայ դուռը կ'առաջնորդէ, եւ
աջ կողմինը դէպ ՚ի Ս. Աստուածածնի
Գերեզմանը և անկէ Քաղաքին Ս. Աս-
տուածածնի ըսուած դուռը կը տանի:

Այս ճանապարհները արդէն բա-
րեպաշտ ուխտաւորք սորված կը լինին,
հարկ չէ մեզ կրկին առաջնորդել իրենց
մինչեւ ՚ի Ս. Յակովբ:

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ի Բեթլեհեմ եւ ՚ի շրջակայս ցորին:

Բեթլեհէմը, որ Ս. Գրոց մէջ եր-
կիր Յուդայ եւ տուն Եփրաթայ կը
կոչուի իւր պտղաբերութեան պատ-
ճառաւ, Միջերկրական ծովէն 846 մեդր
բարձր է, եւ Երուսաղեմի հարաւային
կողմը 12 հազարամեդր հեռի լեռան մի
վրայ շինուած է և չորս կողմը ձորերով
պատած: Հիմնարկութեան սկիզբը երբ

ըլլալը յայտնի չէ, միայն գիտեմք որ Քրիստոսէ 1740 տարի յառաջ կար։ Աստ ծնած է Եսեբօն, որ եօթը տարի դատաւորութեան պաշտօն վարեց Իսրայելի ժողովրդոց, և աստ մեռնելով թաղուեցաւ . Դաք . ԺԲ . 8 . Նոյնպէս և Ղեւտացի խեղճ կինը, որուն մարմինը չարաչար մեռնելէն յետոյ 12 կտոր ըլլալով Իսրայելի 12 ցեղին ղրկուեցաւ . Դաք . ԺԹ . 29 . Ելիմելէք եւ Նոյեմին, որու որդին Մաալուն՝ Մովաբացի Հռութն առաւ, և յետոյ այրի մնալով կինը, իւր կեսորջը հետ Բեթլեհէմ եկաւ և Բոոս զինքը իրեն կին առաւ, որ նոյնպէս Բեթլեհէմցի էր, եւ անկէ զաւակ մի ունեցաւ Ովբէդ անուն, որ եղաւ հայր Յեսսէի, ուսկէ ծնաւ Դաւիթ . Մաքի . Ա . 5 . Քրիստոսէ 1087 տարի առաջ :

Բեթլեհէմի մէջ Սամուէլ մարգարէ Աստուծոյ հրամանաւն օծեց զԴաւիթ թագաւոր Իսրայելի, երբ նա տակաւին մանուկ էր։ Եւ ուրիշ շատ երեւելի ու նշանաւոր անձինք ծնած են սոյն քաղքին մէջ, ինչպէս Յովսր, Ասայէլ,

և այլն : Ռուսովամ Սողոմոնի որդին ընդարձակեց Բեթլեհէմը եւ Բարբելոնի գերութենէն յետոյ 123 անձինք միայն Բեթլեհէմցիներէն ետ դարձան բնակելու :

Մատթան և իւր որդին Յակովբը՝ Յովսէփ Աստուածահօր հայրը, Բեթլեհէմի մէջ ծնան : Մաթթ. Ա. 16 : Նմանապէս և ամենօրհնեալ Կուսին մայրը Աննան եւ կը կարծուի որ աստ ծնած ըլլայ : Վերջապէս Բեթլեհէմի մէջ ծնաւ յամենասուրբ Կուսէն աշխարհիս Ազատարարը, Տէրն մեր Յիսուս Քրիստոս, անարգ այրի մը մէջ, որ իբրեւ ախոռ և օտար գիւղացիներու իբր բնակարան կը ծառայէր անշուշտ, որոնք իրենց անասուններն ալ ներս քաշելով իրենց բնակակից կ'ընէին, վասն որոյ մանուկն Յիսուս ծնանելէն յետոյ՝ խանձարրով փաթթուելով Մըսուրի մէջ դրուեցաւ : Աստ թլլփատեցաւ դարձեալ ութ օրէն յետոյ ըստ սովորութեան Հրէից : Ինչպէս կը հաւատայ սուրբն Եպիփան : Սոյն Մատթին մէջ

դտան երեք մոգերը, Մեւքոն Գասպար
և Պաղտասար, երբ յարեւելքէն եկան
աստղի մի առաջնորդութեամբ երկրը-
պագութիւն ընելու նորածին Քաղա-
ւորին :

Արգարու կինը Հեզինէ բարեպաշտ
Քաղուհին սոյն տեղը մաքրել տուաւ
և պատով մի շրջապատելով երկրպա-
գութեան տեղ որոշեց . քիչ տարիներէ
յետոյ ուրիշ Քրիստոնեայք Ազոթարան
մի շինեցին վրան , զոր 135ին Ադրիա-
նոս կայսրն եկաւ քակեց և տեղը ան-
տառով մի շրջապատելով նուիրեց՝ Ա-
տանիս չաստուածոյն և Մսուրին վրայ
Ափրոդիտեայ արձանը կանգնեց երկր-
պագութեան համար, ինչպէս կը վկայէ
Ս . Հերոնիմոս առ Սրբուհին Պաւլինա
դրած նամակին մէջ :

Ըստ աւանդութեան՝ Մեծին Կոս-
տանդիանոսի մայրը Հեղինէն կամ նոյն
ինքն Կոստանդիանոս կրկին մաքրել տա-
լով Սրբազան տեղը , շինութեան ձեռք
դարկաւ , կամ ինչպէս ազգային աւան-
դութիւն մը կը հաստատէ՝ Տրգատ թա-

գաւորը լրացուց շէնքը փառաւոր ու հոյակապ Տաճար մի կանգնելով: Ըստ ազգային Պատմաց եօթներորդ դարուն՝ Եկեղեցւոյն երկայնութիւնը 200, իսկ լայնութիւնը 100 կանգուն էր և 90 մարմարեայ սեանց վրայ քարուկիր կամարներով հաստատուած: Սակայն նոյն ժամանակէն յետոյ Եկեղեցին զանազան վտանգներու և դէպքերու առթիւ իւր մեծութիւնը և շքեղութիւնը կորսնցուց:

Օմար Խալիֆայն երբ Երուսաղեմի տիրեց, Բեթլէհէմ եկաւ և Մննդեան եկեղեցին մտնելով՝ աղօթքի կեցաւ այսին մէջ, բայց և այնպէս նոյն օրը հրամանագիր հանելով արգիլեց Խալամաց, որ երեք հոգիէն աւելի միատեղ չգան աստ աղօթելու համար:

Սալահէֆայն 1187ին Բեթլէհէմին ալ տիրեց, և հինգ տարի յետոյ Սալէպտորի եպիսկոպոսը խիստ դժուարութեամբ հրաման ընդունեց յիշեալ Սուլթանէն որ Բեթլէհէմի վանքին մէջ երկու Լատին քահանայ միայն մնան քանի մի սարկաւազներով իրենց աստուածային պաշ



տօնը կատարելու, ինչպէս որ Հայք շատ դարուց ՚ի վեր կը կատարէին. բայց Լատինք շատ տարի չ'անցաւ կրկին վաւրնտուեցան Բեթլեհեմէն:

Հստ Լատին Պատմչաց՝ Խոչակրաց Ս. Երկրէն հեռանալէն յետոյ՝ Եկեղեցին անտէրունջ մնալով քայքայեցաւ և Արարացիք տանեաց կապարներով՝ հրացանի գնտակներ կը շինէին: Մակայն զանազան Յիշատակարանք՝ հակառակ Լատին Պատմչաց՝ կը հաստատեն, որ Հայ Եկեղեցականք միշտ պահած ու պահպանած են զԵկեղեցին, ինչպէս 1227ին Տէր Աբրահամ և Տէր Առաքել անուամբ Հայ Եկեղեցականք իբրեւ տէր և իշխող Տաճարին՝ ներքին դուռը շինել կուտան տախտակեայ պատուական քանդակագործութեամբ զարդարուած, հետեւեալ Յիշատակարանով, որ մինչեւ ցայսօր անեղծ կը մնայ Հայերէն և Արարբերէն լեզուաւ:

ԹՎԻՆ. ՈՂՁ. ԿԱԶՄԵՑԱԻ ԴՈՒՌՈՍ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՍ ՁԵՌԱՄԲ ՏԷՐ ԱՐԲԱՀԱՄՈՒ ԵՒ ՏԷՐ ԱՌԱՔԵԼՈՅ Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՍ

ՀԱՅՈՑ ՀՆԹՄՈՑ ՈՐԴԻՈՑ ԿՈՍՏԱՆԴՆԷԻ • ԳՐԻՍՏՈՑ
ԱՍՏՈՒԱԾՆ ՈՂՈՐԾԻ ԱՇԽԱՏԱՒՈՐԱՑ

**Իսկ Արարերէն Յիշատակարանին
բնագիրն ու թարգմանութիւնն է հե-
տեւեայն .**

كل هذا الباب بعون الله تعالى في أيام مولانا
السلطان الملك المعظم في تاريخ الهجرة سنة
اربعه وعشرين وستماية

Կապարեղաս- դոռաս օգնականո- լեամբ Բարչ-
ըիւլն Աստուծոյ յառարս Տէրո- լեան Ռեճա-
փաս արչային Ռոյո Դ լո-ին Հիճրեթի ԴԿԷ :

Յոյնք 1842ին, Եկեղեցւոյ ամբողջ
նորոգութեան ատեն, աշխատեցան այս
դուռն եւս նորոգութեան պատճառաւ
ոչնչայնել, բայց բարեյիշտակ Տ. Զա-
քարիա Պատրիարքը՝ դրան վըայի Յի-
շատակարանները հանդերձ բողոքագը-
րով մը Բ. Դուռը ղըկեց և երկու պա-
հապան կեցոյց դրան քով, որով պահ-
պանուեցաւ դուռն իւր հնութիւննե-
րովն Յունաց նենգութենէն .

Ս. Ծննդեան արդի Եկեղեցին՝ սիւ-

նազարդ գաւթէն որմով բաժնուած է,
 և երեք դասէ կը բաղկանայ, հարաւա-
 յին կողմը և միջին Աւագ-Սեղանը՝ որոյ
 տակն է Ս. Ծննդեան Այրը, Յունաց
 սեփհական են, իսկ հիւսիսային դասը
 Հայոց սեփհականեալ 1813/ն, ըստ ու-
 բում նոյն թուականին Հայոց և Յու-
 նաց միջեւ տեղի ունեցած մեծ վէճէն
 և դատէն յետոյ բարեյիշատակ Սուլ-
 թան Մահմուտ մեծ կայսեր տուած
 Հրովարտակաւ (1728) Հայք Ս. Ծնն-
 դեան Եկեղեցւոյն վրայ եւս Յունաց
 հաւասար իրաւունք ունեցան, ըստ ու-
 բում բաւական տարիէ ՚ի վեր մինչեւ
 1813 թուականը արգիւտուած էին Հայք
 Ս. Պատարադ մատուցանելէ Ս. Այրին
 մէջ, և բաւական իրաւունքներ կորու-
 սած էին նոյն եկեղեցւոյն մէջ Յունաց
 միաբանութեան կրօնամուլ և թշնամա-
 կան վարմունքով, որ միշտ կը ջանան
 բոլոր Արբազան տեղերը իրենց սեփհա-
 կանել: Ուստի վերոյիշեալ թուականին
 բարձրագոյն հրովարտակաւ եւ նորին
 գործադրութեանը համար եկող Նուրի

ԷՖէնտի արդարասէր գործակալին ջանքովը կարողացան Հայք հանապազօրեայ Պատարագ մատուցանել Ս. Այրի սեղանին վրայ, և Յունաց ու Լատինաց ունեցածներուն համեմատ կանթեղներ կախել և պատկերներ հաստատել: Ասու ամենայնիւ տակաւին շատ իրաւունքներ ունին Հայք կորուսած թէ Լատինաց և թէ Յունաց բանութենէն. ինչպէս է, օրինակի համար, հիւսիսային դասուն մէջը եղած դրան բանութեամբ բացուիլը Լատինաց կողմէ, որոնք իրենց անցուդարձով ոտնակոխ կ'ընեն Հայոց միաբանութիւնը ժամերդութեան միջոցին. դարձեալ 1869ին Ս. Այրին մէջէն Լատինաց ձեռք Պատկերներուն գողցուիլը:

Սուրբ Մննդեան եկեղեցին երկու մաս բաժնուած է, որք միջնորմով մը իրարմէ զատուած են. ներքին մասը կը պարունակէ երկու կողմնական դասերը և ատեանը որ է Աւագ խորանը, իսկ արտաքին մասը, Սիւնաշարք Գուրի կը կառուի. չորս կարգ կարծրաքար միա-

կտուր 50 սիւներու վրայ հաստատուած է :

Բեթլեհէմի մէջ 5000էն աւելի բնակիչք կան, Հայ, Յոյն, Լատին և Մահմետականք Յոյնք և Լատինք քան զմիւս ազգերը շատուոր են, Հայք 100 հոգւոյ չափ կը հաշուին, որոնք թէպէտեւ քիչւոր, բայց քան զՅոյնս և զԼատինս ազդեցութիւն ունին :

Բեթլեհէմի հին և նոր պատմութեանց վրայ այսչափ համառօտ տեղեկութիւն տալէ զկնի՝ ճամբայ ելնենք մեր այցելութիւնն ընելու :

Սոյն ճանապարհորդութիւնը սովորաբար կառքով կամ երիվարով կ'ըլլայ, թէպէտեւ շատ բարեպաշտ անձինք և ինայասէրք ոտքով ալ կ'ընեն, ըստ որում հանգիստ երթալով երկու ժամու ճանապարհ է Երուսաղեմէն մինչեւ Բեթլեհէմ :

Յոպպէի կամ Հայր Աբրահամու ըսուած դռնէն դուրս ելնելով, առաջին անգամ ձախ դին հանդիպած զառ'ի վայր ճանապարհը կ'իջնուի, և անկէ Գեհնի ձորն անցնելով՝ Հրէից աղբատա

նոցի պատին տակէն ուղղակի ճանապարհ է բեթլեհէմ գնալու :

Հրէից աղքատանոցէն 200 մեղք անդին՝ ճանապարհին վրայ՝ ձախ կողմը՝ ձրղարի անուամբ խարխլած տուն մը կար, որուն փոխարէն արժէքն Սուլթանը տալով ծախու առաւ, և նուիրեց Ս. Յովհաննու կարգի Անգղիական խաչակիր ասպետներուն. որոնք անցեալ 1883 թուականին նոյն շէնքը գրեթէ 'ի հիմանէ նորագելով հիւանդանոց բոցին :

Այս ճանապարհին աջ կողմը կ'ընայ Անորէն կամ Չար խորհրդոյ լեռք, զոր Երրորդ այցելութեան մէջ ցոյց տուինք : Յառաջ գնալով ճանապարհին ձախ կողմը քիչ մի ներսով և հարթ դաշտի մի մէջ աւերակ մի թողլով, աջ կողմը կ'ըսկըսի երեւալ Տիբանանց կամ Միսից բառուած Լովիաները, ուր Դաւիթ Աստուծոց հրամանաւ Այլազգեաց դէմ ելնելով կռուեցաւ ու յաղթեց անոնց, և կուսքերնին այրեց. Ա. Մկայ. ԺԴ. 11-14. և Բ. Թագ. Ե. 22 :

Այս հովտին հիւսիսային արեւմը-
տեան կողմն է Գերմանական գաղթա-
կանութիւնը, որոյ մասին տես էջ 34:

Սոյն գաղթականութեան տեղէն
բաւական յառաջ երթալով և ձախ կողմն
եղած բլրակի մի ստորոտէն քալելով,
աջ կողմը Յունաց նորատունկ Զիթե-
նեաց պարտիզի առաջը ճանապարհի
վրայ Մոգերու հորը կայ, որուն տեղա-
ցիք իրենց լեզուաւ Պիր-էլ-նէճիճ կ'ը-
սեն, որ Աստղին հորը ըսել է: Աւան-
դութիւն մը կայ, որ երեք Մոգերը Ե-
րուսաղէմ մտնելուն՝ իրենց աչքին
դիմացէն աներեւոյթ եղաւ առաջնոր-
դող աստղը: Հերովդէսի մօտ տեսու-
թեան երթալէն յետոյ, երբ նորէն
ճանապարհ ելան Բեթլեհէմ գնալու,
այս հորին քով հասած ժամանակնին
կրկին անգամ աստղը երեւեցաւ իրենց,
և առաջնորդելով բերաւ մինչեւ Մսու-
րին տեղը, որուն մէջ էր դրուած Մա-
նուկն Յիսուս:

Ասկից Յրոպէի չափ եւս քալելով
Զիթենեաց երկու կարգ գեղեցիկ պար-

տէզներու մէջ տեղէ, կը հասնինք Սոսի
Եղիայի վանքը, որու դուռը ձախ կողմի
անեւ փողոցին մէջն է : Տէս էջ 33 :

Փողոցին դիմացը ճանապարհին
վրայ բարձր սէլ մի կայ և ժայռ քար մի
կ'երեւի գետնին երեսը . աւանդու-
թեամբ կ'ըսուի թէ Եղիա մարգարէ
Յեզարելի բարկութենէն փախչելու ժա-
մանակ այս տեղ հասնելով՝ բեւեկնի
ծառի մի տակ պառկեցաւ , ուր Տիրոջ
Հրեշտակը եկաւ զինքը արթնցուց եր-
կու անգամ, որ հաց ուտէ և ջուր խմէ,
որ գլխին վերեւը պատրաստ կը կենար :
Ելաւ Եղիա երկու անգամ ալ կերաւ
ու խմեց , և ոյժ առնելէն յետոյ ճա-
նապարհ ինկաւ երթալու , Գ. Թագ. ԺԹ.
1-8 . քնացած քարին վրայ իւր մարմնոյն
նշանը թողլով , ինչպէս կը հաւատան
Լատինք և Յոյնք : Այս տեղէն կ'երեւի
մէկ կողմէն Բեթլեհէմը և միւս կողմէն
Երուսաղէմը :

Յիշեալ ժայռին հիւսիսային արեւե-
լակողմը բլրին գէպ 'ի ստորոտը ճանա-
պարհէն ոչ շատ հեռու՝ գեղեցիկ եկե-

Լատիկ այսօրուսն տեսնուած շէնքը :
 Ա . Թագաւորութեանց գրքին Ժ . ԳԼ . 2
 համարին մէջ եւս կը յիշուի Ռադէլէ գե-
 րեզմանը Յովսեփոս Փլաբիանոս որ քրիւ
 տոնէութեան սուտջին դարուն մէջ ծաղ-
 կեցաւ . յիշատակութիւնը կ'ընէ . Հա-
 խօսութիւն Ա . 18 : Յետ այնորիկ դար-
 ձեալ ուրիշ պատմագրաց և ուխտաւո-
 րաց գրքերուն մէջ յիշուած կայ սոյն
 գերեզմանն : Վրան գմբէթ մի ունի ,
 զոր 1870ին Մօնիէֆիօրէ երեւելի Հրէ-
 այն Եւրոպայէն եկած ժամանակ նորո-
 գել տուաւ : Գերեզմանը քառակուսի
 շէնք մ' է , որուն մէջը տապան մի կայ
 մարդաչափ բարձրութեամբ . Մահմէ-
 տականք կը յարգեն սոյն տեղն՝ մօնա-
 ւանդ Հրէից մեծ ուխտատեղիէ , և ա-
 ռաւել կանայք կը յաճախեն՝ անոնք որ
 զուրկ են ծննդականութենէ :

Սոյն Գերեզմանին արեւմտեան կող-
 մը գիւղ մի կ'երեւի նոր շէնքերով ,
 որ է Պէյր-ճալ , ուր Յոյնք և Լատինք
 եկեղեցի ունին : Նաեւ Պարոն-Տերի պֆի
 և պարպէզ ըսուածը , որ Հայոց է , ուր

տեղ ունին բաւական ձիթենիք . այս
այգիին մէջ թէեւ բաւական հնու-
թեանց հետքեր կը նշմարուին , սա-
կայն ՚ի վեր հանելու համար մեծաքա-
նակ ծախուց կարօտութիւն կայ :

Ռադիլ գերեզմանին քովէն անցնե-
լով և քառորդ ժամ քայելով կը հաս-
նինք Բեթլեհէմին մօտ , եւ ձախ թե-
ւերնուս վրայ ճանապարհ է . եւ չոր
քարերէ հիւսուած երկու ցանկապա-
տի մէջ՝ ճանապարհէն 100 մեդրաչափ
ներս, Դաւիթի կոր ըսուած ջրամբարը կայ :
Այս հորին ջրէն ցանկացաւ Դաւիթ
խմելու , երբ իւր բանակաւ Ոդոդոմայ
այրին քովը կը կենար , ու ըսաւ . « Ո՛հ ,
ուր էր թէ Բեթլեհէմի դրան քով ե-
ղած հորէն ջուր մի խմցնէր ինձ մէկը ու :
Անմիջապէս իւր զօրաց մէջէն երեք
կտրիճներ Այլազգեաց բանակը ճեղ-
քելով գնացին և իւր փափագած հորէն
ջուր քաշեցին բերին , բայց Դաւիթ
փոխանակ այն ջուրը խմելու՝ Աստուծոյ
ըսաւ . « Քան լիցի ինձ՝ որ այդ երեք
մարդաց արիւնը արժող ջուրը խմեմ :

որ իրենց մահը աշուրնին առնելով
 գնացին բերին. Ա. Մնայ. ԺԱ. 17-19 :
 Յիշեալ հորին քով ուրիշ երկու ջրամ-
 բարներ եւս կան, և հին շինութեան
 մնացորդներ եւ միւսինով շինուած
 յատակներ ալ կ'երեւին: Շատ հաւա-
 նական է՝ որ վանորէից գրքին մէջ
 յիշատակուած Ս. Անանիայի անուամբ
 Հայոց Եկեղեցին այս տեղ եղած ըլլայ,
 որու համար կ'ըսէ Թէ Բեթլեհէմի
 մօտ է:

Ետ դառնալով սոյն տեղէն և կրթ-
 կին մեր ճանապարհը ձեռք առնելով,
 յառաջ երթանք ձախակողմեան շա-
 ղին մէջ, որ քանի մի ոլորուն ճանա-
 պարհներէ անցնելով քաղաքին մէջ կը
 հանէ, և այսպէս յառաջանալով քաղ-
 քին մէջէն կը գտնենք զմեզ Սուրբ
 Մննդեան Եկեղեցւոյ մեծ հրապարակին
 մէջ, ուր ալ կողմը կ'երեւի Հայոց
 վանքը, դիմացը Տաճարի երկամթեայ
 պղտիկ դուռը, եւ անոր հիւօթսային
 կողմը Յունաց գերեզմանոցը և Վատի-
 նաց վանքը:

Ուխտաւորք երկաթեայ փոքրիկ գունէն ներս մտած ժամանակնին երեք դուռ եւս կը աննեն պզտիկ բակի մի վրայ, դիմացինն է տախտակեայ դուռը, որոյ համար Հեթում թագաւորի ժամանակ շինուած է ըսինք, ձախ կողմինը պահարանի կամ յարդանոցի դուռ է Յունաց ձեռքը, որ առաջ Հայոց ջաղացքն էր, իսկ աջ կողմինն է Հայոց վանքին դուռը, ուսկէ ներս մտնելով եւ պզտիկ բակի մի մէջէն անցնելով՝ աջ կողմը դրան կից եղած աստիճանները զմեզ Վանքին վերնայարկը կը հանեն ։ Աստ պէտք է քիչ մի հանգիստ առնուլ սուրճ մի խմելով ։ Հին ժամանակէն 'ի վեր սովորութիւնն է աստ եւս Դարպասական տաւրք մը տալ, 'ի պայծառութիւն եւ 'ի շինութիւն Ս. Տեղւոյս, որ անձ գլուխ 33 զուրուշ է ։

Բեթլեհէմի Հայոց վանքն ունի յատուկ Տեսուչ վարդապետ մի, եւ երկու ժամարարք. ժամարարներն երկու ամիսն անգամ մի կը փոխուին. ունի եւ տասնվեցոփ հասարակ միաբանք ։

Վանքին մէջ կայ առանձին եկեղեցի մը յանուն Ս. Աստուածածնի զոր հիմնեց Գրիգոր Պարոն Տէր Պատրիարքն 1621-1622 թուականին, նոյնպէս ստորին յարկին մէջ եղած խնը որուն դուռը դէպ 'ի հիւսիս բակին վրայ կը բացուի, և վանքին մէջ ուրիշ քանի մը սենեակներ աւելցուց և նորոգութիւններ ըրաւ:

Գրիգոր Շղթայակիր Պատրիարքն վերոյիշեալ եկեղեցին 1727 թուականին նորոգելէն 'ի զատ ուրիշ երեք սեղաններ եւս աւելցուց, երկուքն եկեղեցւոյ մէջ՝ յանուն սուրբ Յովհաննու կարապետին և սուրբ Ստեփաննոսի Նախապետին, և միւսն աւանդատան մէջ յանուն Յովակիմայ և Աննայի: Նմանապէս յանուն Սուրբ Երրորդութեան եկեղեցի մը լինեց, որ այժմ սեղանատուն է, ուր Ս. Մննդեան ձրագալուցի երեկոյին և առաւօտուն եկեղեցական հանդէսներն Ս. Մննդեան Տաճարին մէջ կատարուելէն զկնի, Սրբազան Պատրիարքն հանդերձ Միաբաններով եւ Ուխտաւորօք

այս տեղ կուգան ընթրելու . որովհետեւ սոյն երկու օրն բոլոր Ուխտաւորք Ս. Աթոռոյս ծախիւքը կը կերուէրուին :

Ասոնցմէ զատ նոյն երջանկայիշատակ Գրիգոր Շղթայակիր Պատրիարքն վերնայարկին վըայ հինգ մեծ սենեակներ շինել տալով, ներքին գաւիթը եւ արտաքին մեծ հրապարակը քարայտակել տուաւ, այն է սուրբ Մննդեան Տաճարին արտաքին փոքր երկաթեայ դռնէն մինչեւ մեր վանուց արեւմտեան անկիւնածայրը :

Նոյն տարիները՝ 1732ին՝ Բեթլէհէմի մօտ եղած Ճանապարհի անցքը խիստ նեղ լինելուն, Կեսարացի Տարսիսի գիւղէն Մելիտոն իշխանը՝ որ Ս. Յակովբայ Եկեղեցւոյն մէջ ալ բաւական յիշատակներ ունի, նոյն Ճանապարհն իւր ծախիւք ընդարձակել տուաւ՝ որպէս զի Ուխտաւորք հանգիստ սնցնին :

Վանքը ունի Պատրիարքարան մի երկու մանր խցերով, Ուխտաւորաց և Միաբանից համար մեծ և փոքր 16 սենեակ :

Գեղեցիկ է իւր տանիսը, որ քաղաքի հրապարակին վրայ կը նայի. հիւսիսային կողմէն կ'երեւի Յունաց սուրբ Եղիայի վանքը և հարաւային կողմէն Եփրատայ ձորերը և այլն:

Այս համառօտ տեղեկութիւնները առնելէն յետոյ իջնանք վար Ս. Մինդեան այլը մեր ուխտն և երկրպագութիւնն կատարելու համար:

Հոս Ուխտաւորաց առաջնորդողն կը լինի կամ վանքին Տեսուցք եւ կամ Ժամարարաց մին հանգերձ սարկաւազաւ եւ դպրօք. նախ կ'իջնան Տաճարին Սիւնալարդ գաւիլը՝ Հայոց տախտակեայ մեծ դռնէն մտնելով. անդ մէկ մէկ վառուած մոմ տալով իւրաքանչիւր ուխտաւորի ձեռքը, եւ «Խորհուրդ մեծո՞ր Եարականը երգելով՝ հիւսիսային փոքր դռնէն եւ Հայոց դասին մէջէն անցնելով կ'իջնան Սուրբ այլը, և հոն Աւետարան կարդալէն՝ եւ «Փառք 'ի բարձունո՞ր ըսելէն յետոյ, համառօտ ծառայուամով մը կը տեղեկացնէ առաջնորդող վարդապետը իւրաքանչիւր

աւրբ Տեղեքը և անոնց վրայ եղած խորհուրդները :

Յիշեալ Այրը երկու դուռ ունի, մին Յունաց հարաւային դասին կողմէն 13 աստիճանով, և միւսը Հայոց հիւսիսային կողմէն 16 աստիճանով. և Այրը վերին Աւագ խորանին ճիշդ տակը կ'իսնայ, որ Ատեանին հետ մէկուեղ երկու կողմնակի գասերէն 70 հարիւրորդամեդր բարձր է : Հայոց դռնէն վար իջած ժամանակնիս՝ վարի աստիճանին կից ձախ կողմի Սեղանն է, Յիսուսի Քրիստոսի Մնդեան պէղը, որ Սեղանին տակն է մարմարեայ յատակով և կիսաբոլորակ ձեւով, որու մէջ տեղը փոսիկ մի կայ արծաթեայ ձաճանչ մի ագուցած, եւ բարբառիքը Լատիներէն այսպէս գրուած .

ԱՍՏ ԾՆԱԻ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ
Ի ՄԱՐԻԱՄԱՅ ԿՈՒՍԷՆ

Այս տեղ 16 կանթեղ կան մշտաւ

վառ . 6ը Հայոց , 6ը Յունաց , եւ 4ը
 Լատինաց : Այս սեղանին վրայ միայն
 Հայք եւ Յոյնք կը պատարագեն՝ իւրա-
 քանչիւրը իւր շարժական Պատկերը
 դնելով եւ Ս . Պատարագէն զկնի՝ կրկին
 վերցնելով :

Այս սեղանէն 3 մեդր դէպ 'ի հա-
 բաւային արեւմտակողմը երեք աստի-
 ճանով վար Մտորը կ'իջնուի , որ ժայ-
 ուին մէջ փորուած եւ մարմարեայ քա-
 բերով ագուցուած է . ունի $2\frac{1}{2}$ մեդր
 երկայնութիւն , 2 մեդր եւ 30 հարիւ-
 բորդամեդր լայնութիւն . հիւսիսային
 արեւելեան ծայրի սիւնով մսուրի մուտ-
 քը երկուսի կը բաժնուի , ուր տեղ եւ
 երեք ազգ մէյ մէկ աշտանակ ունին
 մշտավառ մոմերով : Այս տեղւոյն ա-
 բեւեւակողմը սեղան մի կայ Լատինաց՝
 յանուն Երէց Մոգոց , ուր ամեն օր Լա-
 տինք կը պատարագեն եւ ուր ըստ ա-
 ւանդութեան՝ կանգնած էին Մոգերը
 իրենց ընծայները մանուկ Թագաւորին
 նուիրած ժամանակնին : Սոյն յանուն
 Երէց Մոգոց եղած սեղանը հին ատեն-

ները Հայոց սեփհական էր (1) : Նոյն տեղւոյն արեւմտակողմը ժայռին մէջ փորուած ցածագոյն խոր տեղ մի կայ Մսուրի ձեւով, որու մէջ դրաւ ամեն օրհնեալ կոյսն Մարիամ իւր Աստուածային Որդին . այժմ տեղն մարմարնեւքով զարդարուած է, ուր Տ մշտավառ կանթեղ ունին Լատինք, և պատին երեսները կերպասով պատած է և սաւկայն տակը կ'երեւի բուն ժայռը :

Մննդեան Սուրբ Այրը 10 մեդր և 55 հարիւրորդամեդր երկայնութիւն, և 3 էն մինչեւ 4 մեդր լայնութիւն ունի . թէ գետինը և թէ պատին երեսները ճերմակ մարմարեայ խոշոր քարերով ծածկուած են . առաստաղը կամարով մի ամրացած է, որպէս զի կարենայ վերի եկեղեցւոյն ծանրութեան դիմանալ, ըստ որում Այրին բուն ժայռը կարծր քարէ չէ : Առաստաղէն կախուած 11

1

(1) Հաննէ Պատմ. Ս. Երուսաղէմի . յերես 288, և Բովանդակութիւն Ազգ. Սեփհականութեանց երես 107-109, ապեալ Երուսաղէմ 1880 :

Կանթեղ ունին Հայք, 11 Յոյնք, եւ 9
 Լատինք: Գարձեալ 11 Պատկեր ունին
 Հայք, որոնցմէ Լատին միաբանք 7 հատը
 գողցան 1869ին. եւ անկէ յառաջ առաւ-
 տազին կերպասեայ ծածկոցն այրերով՝
 կանթեղաւոյ շուաններն ալ այրեցան ու
 կանթեղներն ալ լյնալով խորտակեցան.
 այրած ծածկոցը հնացեալ ըլլալով, Լա-
 տինք կ'ուզէին որ իւրեանք նորոգեն
 առանձինն, իսկ Հայք եւ Յոյնք չէին թա-
 ղուր, այո պատճառաւ փորձ փորձեցին
 ծածկոցը այրելու, եւ յետոյ Հայոց պատ-
 կերն ալ գողցան: Սուրբ Աթոռոյ կող-
 մէն Բ. Գուռը եղած բողոքոյն վրայ
 Տէրութիւնը զիջանելով երկու պատ-
 կերաց կրկին դրուելուն հրաման եղաւ
 եւ այն ատեն դրուեցան, մնացեալ 8
 պատկերներէն 4 հասն ալ վերջերը
 դրուեցան, իսկ միոյն տեղը Լատինք
 յափշտակեցին իրենց պատկերը կախե-
 լով: Այժմ թէ՛ Հայոց եւ թէ՛ Յունաց
 պատկերները կախուած են՝ Լատինաց
 յԵւրոպայ շինել տուած պատկերազարդ
 վարագուրին վերայ, որ 1874ին կայսե-

բական Կառավարութեան կողմանէ կա-
խուեցաւ յանուն երեք ազգաց ։

Այրին յարեւմտակողմն դուռ մի
կայ, ուսկէ անցնելով և փորուածոյ նեղ
անցքի մի մէջէ գնալով Հայր Յովեփայ
անուամբ մատուռիկ մի կը տեսնուի
Լատինաց ։ Ասկէ ստորերկրեայ ճանա-
պարհ կայ Լատինաց եկեղեցին ել-
նելու ։

Լատինաց եկեղեցին Սբեռուհայն Կա-
պոթիէի անուամբ կառուցեալ է ։ ունի
Աւագ խորան մի եւ երկու կողմնակի
սեղաններ (՝) ։ Ներս մտած ժամանակ-
նիստ ջր թեւի վրայ երկաթեայ վանդա-
կով պատած աստիճաններ կը տեսնուին,
ուսկէ կ'իջնուի ։ Սպորերիւրեայ ճապարաները ։
Հոս կը տեսնուին առանձին խորաններ,
որոնք են մատուռ մի յանուն Ս. Հերո-
նիմոսի, որ ժամանակ մի Բեթլեհէմի

(՝) Սոյն եկեղեցին 1880-1881 Թուականին 'ի հե-
մանէ նորոգեցին Աւստրիոյ - Հունգարիոյ ՅՐԱՆՍՈՒՄ
ՅՈՋԻՅ Ա. Կայսեր հրամանաւ, որուն ամբողջ ծախքն
ինքն Կայսերական գանձէն շնորհեց ։

մէջ առանձնանալով բարի վարք մի ունեցած է, և աստ թաղուած կը համարի, որու գերեզմանին վրայ քիչ մի հեռու ուրիշ սեղան մի կանգնած է: Այլ և կը տեսնուին հոս սրբոհայն Եսափայտոյ գերեզմանը առանձին խորանով: Աւելի առաջ երթալով Ս. Հերոնիմոսի աշակերտող Եստէֆիոս իրեմոնայոյն գերեզմանը կայ խորանով մի, և ուրիշ ներքսագոյն խորան մի յանուն Բեթլէէմի Մանկան, զոր Հերովդէս Մեծն կոտորել տուաւ: Վերջին սեղանն է Հայր Յովսեփայ անուամբ եղածը, Այրը անցնելու դրան քով:

Սուրբ Այրին հարաւային դռնէն դուրս Յունաց կողմը կ'ենենք, որ է Եկեղեցւոյն ձախակողմեան դասը, ուր հարաւային կողմը երեւցած աստիճաններով դռնէն իրենց վանքը կ'երթուի: Աւագ խորանին ատեանը ելնելուս՝ միջին դրան կից՝ հարաւային սիւնին վրայ Հայերէն հին գրեր կը տեսնուէին, զոր Յոյնք ասկէ իբր 45 տարի յառաջ յատակի մարմարները շինել տուած եւ ծեփած ժամանակնին նոյն

գրերն ալ ծեփել տուին , անհետ ընելու համար : Իսկ հիւսիսային աջակողմեան դասուն մէջ . որ Հայոց սեփհա կան է , երկու սեղան կայ , մին դասին Ատեանին վրայ , և միւսը ներսի կողմը անկիւնացեալ մասին վրայ՝ որ կից է Աւագ խորանին . ըստ աւանդութեան Հայոց՝ կ'ըսուի թէ՛ Յիսուս Քրիստոս այս տեղ թլփատուեցաւ : Առաջին սեղանոյն վրայ տարին մի անգամ թոյլտուութիւն կը լինի Ղբտոց Պատարագելու իրենց Մննդեան տօնին , իսկ երկրորդին վրայ ալ Ասորոց կը թոյլատրուի տարին երկու անգամ Պատարագելու , մին իրենց Մննդեան տօնին և միւսն մեծ պահոց մէջ :

Սոյն հիւսիսային դասուն մէջի մարմարեայ սիւնին վրայ եղած հին պատին վրայ դեռ կը տեսնուին միւսիոնէ նկարուած քանի մը պատկերներ , որոնց մին կը ներկայացընէ զՔրիստոս , որ իւր աստուածային կողը բանալով թովմայ առաքելոյն շոշափել կուտայ . սոյն նկարներէն մնացորդներ կ'երեւին նաեւ դրսի

սիւնազարդ դաւթին կամարապատե-
րուն վրայ երկու կողմը տեղ տեղ-
մնացեալ մասերը նոր ծեփուած են : Ե-
կեղեցւոյն առաստաղը փայտաշէն է և
դրսի կողմէն արձճապատ :

Յիշեալ սիւնազարդ դաւթին հիւսի-
սային և հարաւային պատերուն տրեւ-
մտեան երկու ծայրերը դիմացէ դի-
(մաց երկու դուռ կը տեսնուին , որոնց
մին՝ Յունաց վանքը և միւսը Լատինաց
վանքը կը հանէ :

Բէթլեհէմին մերձակայ եղած այլ
Ուխտատեղիքն հետեւեալներն են .

Ա . Քառասնից Այլը : Արտաքին եր-
կաթեայ դռնէն դուրս Հայոց վանքին
անկիւնը անցնելով , դէպ 'ի հարաւա-
կողմը՝ ձախ դին եկած առջի փողոցին
մէջ՝ որու ուղղութիւնը դէպ յարե-
ւելք է՝ յառաջ երթալով , գիւղին ծայ-
րը աջ թեւի վրայ կ'իյնայ Քառասնից Այ-
լը , զոր Լատինք Կաթին այրը կանուա-
նեն հետեւեալ պատմութիւնը մէջ
բերելով : Մարիամ սուրբ Կոյսը Հերով-
դէսի սպառնալիքէն փախչելու համար

Հայր Յովսեփայ հետ այս այրին մէջ կուգայ կը պահուըտի. քանի մի օր, որ անկէ ըստ պատուիրելոյ Հրեշտակին՝ Յ. գիպտոս փախչի իւր նորածին Մանկանը հետ։ Սոյն Այրին մէջ Ս. Կոյսը զՔրիստոս դիեցուցած ժամանակ կսուական կաթէն քանի մի կաթիլներ կը թափին գետնին վրայ, որոնք զօրութիւն կուտան հողոյն՝ կաթ չունեցող ծծմար կանանց կաթը առատացընելու, եւ յիրաւի մինչեւ ցոյսօր շատ կանայք փափագանօք կ'առնուն յիշեալ Այրին հողէն, որ փխրուն ճերմակ քար մ'է։ Այս տեղոյն Լատինք. քան զամեն ազգեր մեծ կարեւորութիւն և յարգ ցոյց կուտան, որ թէպէտեւ 'ի հին դարուց հետէ ընդհանուր քրիստոնեայ ազգաց սեփհականուած է, որու սպառցոյց է դուռը առանց նգի միշտ բաց մնալը, այսու ամենայնիւ Լատինք երբեմն երբեմն ոտք ելնելով իրենց իւրայնելու համար ջանքեր ըրած են. ինչպէս եւ 1865 ին գիշերանց գաղտուկ արտաքին փոքրիկ բակին պատերը նորոգելով՝ Այ-

րին ալ կղպանք դրին , ասոր վրայ Հայք
 և Յոնք ոտք ելնելով և իրեցն քով ե-
 ղած հաստատութեան թղթերն ու Հրաւ-
 մանագրերը ցոյց տալով Բ. Դրան առ-
 ջեւ իրենց հաւասար իրաւունք ունե-
 նալին վաւերացուցին . ասոր վրայ հրա-
 ման եկաւ որ նոր շէնքերը փլցուին եւ
 կղպանքը քակուի , այսու ամենայնիւ
 Լատինք միայն կղպանքը քակելով՝ Թէ
 դրսի և Թէ ներսի նոր շինութիւնները
 անեղծ պահելու համար դիմագրեցին ,
 և մինչև ցայսօր դեռ այնպէս կը մնայ ,
 եւ Բ. Դրան հրամաններուն գործադ-
 րութիւնը առ կախ կը մնայ , և սակայն
 այժմ ամբողջովին գրեթէ իւրացուցած
 եւ դրան քով ալ պահապաններ դրած
 են , եւ ամեն շաբաթ ալ կը պատարաւ
 գեն :

Քստանից այրին մէջ քարափոր
 աստիճաններով կ'իջնուի Յառաջագոյն ,
 այսինքն իբր ՉՅ տարի առաջ , միայն
 անշուք սեղան մի կար մէկ կանթեղով ,
 և դուռը բաց մնալով գլուղացիք Թէ
 Քրիստոսեայ եւ Թէ Մահմէտական ,

ձէթ եւ մոմ կը տանէին վառելու . այժմ այս սեղանը Լատինք ոչ միայն զարդարեցին , այլ և ուրիշ քանի մի տեղեր եւ անկիւններն եւս խորաններ հաստատեցին , պատկերներ եւ կանթեղներ կախեցին :

Բ . Հայր Յովեփայ փան գեղը : Քառասնից այրէն ելնելուն՝ աջ կողմի արեւելեան ճանապարհը ձեռք առնելով , իբր 7 վայրկեանէն կը հասնինք Հայր Յովեփայ փանը տեղը , որ փոքր արտի մի մէջ և ճանապարհէն իբր 30 մեդրաչափ ներս՝ աջ կողմն է : Կիսաբոլորակ խորանի մի մնացորդէն յայտնի է յիշեալ տեղն , որ ժայռի մէջ փորուած է : Այս տեղ ալ ժամանակաւ եկեղեցի կար , որու քարափոր հիմերը դեռ կը տեսնուին : Աւանդութիւն մը կայ թէ Հայր Յովսէփ Գամուսնութենէն առաջ այս տանը մէջ բնակած է , և ժամանակէ մը յետոյ երբ ամենասուրբ Կուսին հետ եկաւ , մէջն եղող տանտէրը կամ վարձակալը զինքը չընդունեց , ուստի պարտաւորեցաւ երթալ

այրին մէջ բնակելու :

Գ. Պէյլ - Սահուր : 100 մեդրաչափ աւելի դէպ յարեւելք լեբանը ստորտը կը հասնինք . հոս իջնելէն յետոյ, դէպ յարեւելք և ետքը քիչ մի դէպ 'ի հաբաւ շեղելով՝ իբր 4 վայրկեանէն Պէյլ-Սահուր (Հովուաց գիւղը) կը հասնինք , ուր կը բնակէին , ինչպէս կը կարծուի , այն հովիւները , որոց Տիրոջ Հրեշտակը Յիսուսի Քրիստոսի ծննդեան աւետիսը տուաւ :

Դ. Բոոսի Դաշար : Գիւղէն դուրս փոքրիկ դաշտ մի դիմացնիս կ'ենէ , որ է Բոոսի Դաշար : Այս տեղ եկաւ Հռութ հասկ քաղելու , որ Բոոսի հետ ծանօթանալով՝ ամուսնացաւ հետը , և Դաւիթ մարգարէի մեծ հայրը՝ Ովբէթը ծնաւ :

Ե. Հովուաց այր : Յետոյ դէպ յարեւելք ծռուելով , 12 ըոպէէն կը հասնինք Հովուաց այրը , քառակուսի գետնի մի վերայ , ուր կան ձիթենիներ՝ քարէ չոր պատով մի շրջապատած : Ըստ աւանդութեան՝ այս է Հրեշտակին հովուաց

աւետիս տուած տեղը, ուր Հեղինէ Եկեղեցի մի շինեց, և հիմակուան տեսնուածը անոր ստորերկրեայ յատակն է, և հին Եկեղեցին անհետացած է. Այբին մէջ 21 սոք աստիճաններով կ'իջնուի.

Հսկուաց այրէն 256 մեդր եւ դառնալով և Պէյի-Սահուր գիւղի ճամբան թողլով, հիւսիսային արեւմտեան ճառագարհը բռնելու է, և յիշեալ գիւղին առջեւէն Գրոպէի չափ քայել անցնելէ յետոյ, Կրոպէ եւս աւելի առաջ երթալով՝ և ձախ ու սջ դին ելած ճառագարհները թողլով՝ ուղղակի գնալու է դարուվեր, եւ մէկ քառորդէն կը հասնուի վանքին և սուրբ Այրի եկեղեցւոյ առջեւի հրապարակը:

Բեթլեհէմի մէջ եւ անոր մերձակայքն եղած ուխտատեղիք ասոնք են զոր ստորագրեցինք, ասոնցմէ դուրս կան նաեւ մի քանի այցելութեան արժանաւոր պատմական տեղեր, ուր շատերը կը ցանկան երթալ տեսնել, որոց փափագը լեցնելու համար և մեք աշխատութիւն յանձն կ'առնումք իւ-

թեանց առաջնորդելու : Նոյն տեղերն են հետեւեալները՝

Ա. Ս. Գեորգայ վանք : Բեթլեհէմի հարաւային կողմէն դուրս ելնելով եւ դէպ յարեւմուտք շեղելով, 13 բոպէէն քաղաքին ծայրը և Ուսպի-Սահկին ըսուած ձորին մէջ իջնելու ճանապարհը ձախ դին ձգելով՝ 2 բոպէէն դէպ ՚ի հարաւաւ յին արեւմուտք երթալիք ճանապարհն կը հասնինք : Այս տեղ Պէյր-ձաւ գիւղը կը տեսնուի, և 8 բոպպէ քալելով՝ ձախ թեւին վրայ նեղ ճամբայ մի կը հանդիպի, ասկէ անդին՝ ալ ճանապարհը քաւ բուտ ու դժուարակոխ է :

Առաջ երթալով, 22 բոպէէն ալ կողմը նեղ ճամբայ մի կ'ենէ, զայն թողլով դէպ յարեւմուտք երթալու եմք, և 12 բոպէ յետոյ հեռուանց ալ կողմի վրայ ձորի մէջ կը տեսնուի Ս. Գեորգայ Յունաց վանքը : Այս վանքին եկեղեցւոյն մէջ շղթայ մի կայ, ուր խելագար մարդիկ տանելով կը կապեն, և կը հաստատեն որ շատերը շղթային զօրութեամբը զգաստացած են :

Բ. Հին ամրոցը և Կնիեալ աղբիւրը: Աջ
 Թեւեին վրայ ուրիշ ճամբայ մի ևս թող-
 լով, մեծ ճանապարհին մէջ յառաջ եր-
 թալու է, որ այս տեղ հասնելնէս յե-
 տոյ՝ դէպ ՚ի հարաւային արեւմուտք
 կը ծռի և Յրոպէէն Գալատ-էլ-Պորտ
 կը հասնուի, որ աւազաններու բերդ-
 ըսել է. Կը կարծուի որ այս ամրոցը
 Քէլաուն շինած ըլլայ, եւ ջրանցքն ալ
 ինքը նորոգած է երեքտասաներորդ դա-
 րուն մէջ. նա է որ թրծած հողէ շի-
 նուած ագուգաներ գործածեց ջրանց-
 քին համար:

Իսկ յիշեալ բերդը քառակուսի է՝
 միջին դարու ձեւով, պարսպին ծայ-
 րերը աշտարակներ և ակօաներ ունի.
 Երկու երեք անկանոն զօրք կը հօկեն
 այս տեղ թէ՛ Քէլանի ճանապարհը և
 թէ՛ ջուրերը պահպանելու համար:

Բերդին արեւմտեան կողմը 100
 մեդրաչափ հեռու կ'երեւի պզտիկ
 շէնք մի, որու տակն է Աղբիւր Կնիեալը:
 Ցած դուռ մի ունի և 26 ոտք աստի-
 ճանով ստորերկրեայ խուցի մը մէջ

կիջնուի, տեղը մութ ըլլալուն, պէտք է մոմ ունենալ ու վառել: Խուցը կամարաշէն է եւ պատերուն մէկ մասը ժայռին մէջ փորուած են: Խուցին երկայնութիւնն է 12-13 մետր եւ լայնութիւնը 3-4: Գետնին մէջ տեղը պզտիկ աւազան մի կայ, ուր մէկ կողմէն ջուրը կուգայ կը լեցուի եւ միւս կողմէն դուրս կ'ելնէ: Արեւմտեան կողմը դուռ մի կայ, ուսկէ երկրորդ խցի մը մէջ կը մտնուի նայնպէս վիմափոր ըստ մասին և կամարակապ: Հոս հարաւային պատին երեսը Միկրապի պէս տեղ մի կայ և մէկ մ'ալ արեւմտեան կողմը, ուսկէ ջուրը խիստ պայծառ ու փայլուն դուրս կը բղխէ, և ագուգայով մի աւազանի մէջ կը ժողուի, և անկէ ելնելով առաջին խցին աւազանին մէջ կը հոսէ: Տեղացիք Աղբիւր կնքեալին Ռաւել-Այն կ'ըսեն, որ աղբիւրակին գլուխն ըսել է: Ատոր յշատակութիւնը Ս. Գրոց մէջ կայ: Երփ. Դ. 12:

Բերդին հարաւային արեւմտա-

կողմը պզտիկ աւազան մը կայ վրան շէնքով ծածկած, ուր Կնքեալ աղբիւրէն ջուր գալով, յետոյ կամ Սողոմոնեան երեք մեծ աւազաններուն մէկուն մէջ կը թափի, և կամ ջրմուղով Բեթլէհէմ կուգայ եւ անկէ յերուսաղէմ:

Գ. Սողոմոնեան աւազանները: Այս Ըսած տեղէս 30 մեդրաչափ անդին է Սողոմոնեան աւազաններուն առաջինը. սոյն աւազաններն երեք հատ են եւ կը կարծուի թէ՛ Սողոմոն ինքն շինել տուած է Փակեալ պարտէզները ջրելու համար, այս պատճառաւ Սողոմոնի անուամբ կը կոչուին:

Առաջին աւազանին եզերքովը, որ 116 մեդր երկայնութիւն, 70 լայնութիւն եւ 7-8 մեդր խորութիւն ունի՝ դէպ յարեւելք գնալով՝ երկրորդ աւազանն է. ասիկայ ունի 129 մեդր երկայնութիւն, 70 լայնութիւն, 12 խորութիւն: Ասկէ ալ 49 մեդր հեռու երրորդ աւազանն է որ ամենէն մեծն է, ունի 177 մեդր երկայնութիւն, 64 լայ-

նութիւն, և 15 խորութիւն։ Այս աւազաններուն ջուրը անձրեւէն է, առջի երկուսին ջրերը երրորդին մէջը կը հոսին, եւ անկէ թողլով պարտէզները կը ջրեն։

Դ. Եփեմայ Բըրը։ Ճանապարհը շարունակելով դէպ յարեւելք, ջրմուղը աջ կողմերնիս թողլով, իբր 6 վայրկեան քալելէն յետոյ, ձորին միւս կողմը աջ թեւերնուս վրայ բլուր մի կ'երեւի աւերակներով լեցուն, որ կը կարծուի թէ հին Ետամ քաղաքին տեղն է, ուր Սամփսոն Այլազգիներուն հունձքերը այրելով, փախաւ եկաւ հոս այրին մէջ պահուեցաւ. Դապ. ԺԵ. 8։ Խորայելի թագաւորութիւնն երկուսի բաժնուելէն յետոյ, Ռորովամ սոյն քաղաքը ամրացուց. Բ. Մնայ. ԺԱ. 6։

Այս բլուրին ստորտէն կը սկսին Սողոմոնի Փալէալ պարպէղ ըսածները։

Ե. Եփրաթայ Գիւղը։ Եթէ ըրոպէի չափ քալելով պզտիկ գիւղ մի կը հասնինք Արբաս անուն, զոր Հայք Եփրաթայ Գիւղ կ'անուանեն, որ լեռան զառ 'ի վայր

կողմը շինուած է՝ դէպ յաջ, եւ ունի 600ի չափ բնակիչ: Իպրահիմ փաշայն 1831 Թուականին կործանել տուաւ բոլոր գիւղը, որովհետեւ Գիւղացիք յանձնառու չեղան տուրք վճարելու, եւ ետքէն նոր սկսան շինել: Այս տեղէն բոլոր պարտէզները մէկ տեսու- Թեամբ մարդոյս աչացը կ'երեւին Եփ- րաիայ յորին մէջ, ուր արեւուն ճառագայթներուն ջերմութիւնը ամփոփուելով, և ջուրն ալ առատ լինելով խիստ բարեբեր ըրած են հողը:

Պարտէզները գիւղացւոց են, բայց մեծ մասը Միւլլաճ անուն բողոքական Հրէայի մի կալուածք եղած է, որ շատ տեսակ ընդեղէններ եւ բանջարեղէններ յառաջ կը բերէ: Յիշեալ անձը 1860 ին իւր պարտիզին արեւելեան կողմը փորել տուած ժամանակ միւսի- ոնով շինուած գետնայատակ մի գրտնուեցաւ՝ և կորնթեան ձեւով սիւներու եւ սիւնախոյակներու բեկորներ: շատ հաւանական է որ Սողոմոն հոս պալատ մը շինել տուած ըլլայ:

Ճանապարհը շարունակելով ջրանց-
քին շաւղովը, կէս ժամէն Բեթլեհէմի
դիմացը կը գտնենք զմեզ, և դժուա-
րին ճանապարհներու վրայ կոխելով,
կը հասնինք Հայոց վանքին պատին քով
և անկէ դէպ յարեւելք դարձած ժա-
մանակնիս Սուրբ Ծննդեան Տաճարին
դուռը կ'երեւի:

Հոս կը լրանայ մեր Եօթներորդ-
այցելութիւնը, և բարեպաշտ ուխտա-
ւորք կրնան այլ եւս միայնակ ետ դառ-
նալ յԵրուսաղէմ այն ճանապարհա-
ւոր եկան:

ՈՒԹԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ի Տաճարն Սողոմոնի, կամ մզկիթն
Օմարայ:

ՄՈՐԻԱ ԼԵՌՇ: Այս հռչակաւոր լե-
ռը՝ Սէն եւ Ալուայ լեռանց (որոնք հին
Երուսաղէմը կը կազմէին) արեւելեան
կողմը կ'իյնայ: Աւանդութիւն մի կ'ըսէ

Թէ, Հայր Աբրահամ այս տեղ ուզեց զոհել իւր որդին իսահակը: Գաւիթ իւր ժողովուրդը աշխարհագիր ընելուն համար զԱստուած բարկացնելով, և 'ի պատիժ իւր այս յանցանացը մահ խընդրելով՝ երեք աւուր մէջ 70,000 մարդիկ մեռան: Եւ աղաչեց զԱստուած որ այս սոսկալի պատուհասէն զինքը ազատէ, ուստի Գադ մարգարէն Աստուծոյ կողմէն եկաւ իւր քով եւ հրամայեց որ Յերուսաղի Ուռնայի կալին մէջ տեղ՝ որ Մորիա լերան վրայ էր, սեղան մի կանգնէ, և հոն Տիրոջը զոհ մատուցանէ: Գաւիթ հնազանդեցաւ, և 600 սիկլ⁽¹⁾ ոսկոյ հատուցանելով գնեց յիշեալ կալին տեղը, և զոհը մատուցած ժամանակ երկնքէն հուր իջնելով լափեց զայն: Ընդունեց Աստուած և կոտորածը դադրեցաւ. Ա. Մնայ. ԻԱ. 1-28: Ասոր վրայ Գաւիթ 'ի նշան երախտագիտութեան ուզեց նոյն տեղոյն վրայ տաճար մի կանգնել Ճշմարիտ Աստուծոյն, բայց

(¹) Արդի արժեքով 121,200 զուրուշի ոսկի:

Աստուած իմացուց իրեն որ ըսած Տա-
ճարն իւր որդւոյն Սողոմօնի ձեռօքը
պիտի շինուի, որ իւր Թագաւորութեան
չորրորդ տարին Տաճարին հիմերը դրաւ,
եօթն տարուան մէջ լրացաւ, և անոր
մէջ դրաւ Տապանակ ուխտին:

Տաճարն իբր 34 տարի փառաւոր
եւ պայծառ մնաց, յետոյ Եգիպտոսի
Սիսակ Թագաւորն գալով կողոպտեց
զայն, այնուհետեւ քանի մ' անգամ
եւս այլ և այլ Թշնամիներու ձեռքով
աւարի առնուելով 'ի վերջոյ 476 տարի
յետոյ, կամ 588 տարի նախ քան ըզ-
Քրիստոս, Բաբելացւոց Նաբուգոդոնո-
սոր Թագաւորին ձեռք պրեցաւ.
Դ. Թագ. ԻԵ. 9: Բ. Մնաց. ԼԶ. 17-20:
Կիւրոս Պարսից Թագաւորը Քրիստոսէ
536 տարի առաջ հրաման տուաւ կրկին
շինութեան:

Սակայն երկրորդ Տաճարը Զորաբա-
բելի ձեռք շինուեցաւ՝ առջինէն շատ
նուազ փառօք. Անգ. Բ. 3. յետոյ Ան-
տիոքոս Եպիփանէս Քրիստոսէ 163 տարի
առաջ անհամար մարդիկ սպաննել տա-

լէն յետոյ՝ Տաճարին բոլոր թանկագին սպասները յափշտակելով՝ Ողիմպեան Արամազդայ պատկերն ալ հոն կանգնեց. Ա. Մ. ի. Ա. 23: Երեք տարի յետոյ Յուդա Մակարէ սրբեց Տաճարը և ճշմարիտ Աստուծոյ պաշտօնը կրկին հաստատեց :

Պոմպէոս բուռն զօրութեամբ տիրեց քաղաքին, մտաւ Տաճարին մէջ, բայց ձեռք չ'դպցուց, այլ ընդհակառակը յարգութեամբ վարուեցաւ :

Յիսուս քրիստոսէ 17 տարի առաջ Մեծն Հերովդէս Տաճարը վերանորոգեց, Յովեդ. Ա. 5. 10,000 գործաւոր, 1000 կառք և 1000 ալ քահանայ աշխատցնելով, որոնք միայն կրնային ներս մտնել. այս շինութիւնը 46 տարի տեւեց կ'ըսէ Յովսեպոս Պատմագիր. եւ սակայն այս շինութեան վրայ տարբեր կարծիքներ և պատմութիւններ կան :

Սոյն Տաճարին մէջ երեւցաւ Տիրոջ հրեշտակը՝ Զաքարիա Քահանային՝ նորա որդւոյն Յովհաննու ծննդեան աւետիսը տալու : Այս տեղ եկաւ ամեւ

նասուրբ կոյսն Մարիամ իւր անդրա-
նիկ Արդին Տիրոջ ընծայելու, ուր Մե-
րունին Ամէօն փառք տուաւ Աստու-
ծոյ որ արժանի բրաւ զինքը աշխարհիս
Փրկիչը տեսնելու և իւր գրկաց մէջ ըն-
դունելու: Յիսուսի Քրիստոսի համ-
բարձմանէն 37 տարի յետոյ Տիտոս գա-
լով՝ ուզեց այս Տաճարը անվնաս պա-
հել, բայց իւր ջանքերն ՚ի դերեւ ելան
և Տաճարն հրոյ ճարակ եղաւ. ըստ Յով-
սեփոսի՝ ճիշդ նոյն ամսուան մի և նոյն
օրը՝ յորում առաջին Տաճարը այրած էր
Նարուգոգոնոսորի ձեռօք, այսինքն՝
Ազ (Օգոստոս) ամսոյ 10ին:

Ազրիանոս 134 Թուականին կրկին
չինեց քաղաքը և Իլիա կոչեց, և յիշեալ
Տաճարին տեղւոյն վրայ Արամազդայ
անուանը մեհեան մի կանգնեց, և նոր
քաղաքին տեսուչները Տաճարին մօտ
՚ի պատիւ Ազրիանոսի արձան մի տնկե-
ցին: Հրէայք դրամով Թոյլտուութիւն
ստացան նոյն կայսրէն տարին անգամ
մի Երուսաղէմ գալու և Տաճարին աւե-
րակաց վրայ ողբալու:

Հեղինէ Թագուհին և որդին կուտանդիանոս այս Տաճարն կործանել տուին 327 ին, բայց արձանին չ'դպան, որ ժամանակ մի եւս մնաց:

Յուդիանոս անորէնն իւր ուրացու թենէն յետոյ 361 ին արեւելք եկած ժամանակ՝ Յիսուսի խօսքերը ստելու համար՝ հրաման տուաւ Հրէից որ Տաճարին աւերակները փորեն եւ շինեն, բայց հիմերուն տակէն կրակ ելնելով և գործաւորները այրելով վերջ տուին գործին: Ասկէ յետոյ քաղաքին բնակիչները ինչպէս սովորութիւն է, ամայի տեղ մի նկատելով զայն, աղքանոց ըրին:

Քրիստոսի 636 թուին՝ Օմար Խալիֆայն իսն Խաթթայ, որ Մուհամմէտի երրորդ յաջորդն էր, Երուսաղէմին տիրելով՝ ուզեց որ գտնէ այն տեղը, ուր Յակոբ նահապետ քուն եղած ատեն տեսիլքին մէջ տեսաւ գետնէն մինչեւ երկինքը բարձրացած սանդուխը: Խալիֆային առաջնորդողը այս տեղը ցոյց տուաւ իրեն, և նա հաւատալով որ իւր վնտուած տեղն է, մաք-

րել տուաւ գետինը, նուիրական ժայ-
 ուր դուրս ելաւ և Օմար ճիշդ նոյն տե-
 դէն վրայ շինել տուաւ գեղեցիկ մըզ-
 կիթ մի, ուր շինուած էր յառաջագոյն
 Սողոմոնի ձեռօք Աստուծոյ Տաճարը.
 և զոր 50 տարի յետոյ Մրուանայ որդի
 ԱլփէլՄէլէ՛ ամիրապետը աւրել տու-
 լով զայն՝ նորէն կանգնեց աւելի փա-
 ռաւոր, եւ հետզհետէ ուրիշ ամիրա-
 պետներ եւս գեղեցիկ սիւներով, միւ-
 սիոններով եւ շքեղ վանդակներով ճո-
 խացուցին: Բայց ութերորդ դարուն
 երկրաշարժէ՛ մը կործանելով, յետոյ
 դարձեալ որքան որ նորոգուեցաւ, սա-
 կայն առջի շքեղութիւնը չ'ունեցաւ:
 Սոյն Տաճարն կամ լաւ եւս է Օմարայ
 Մզկիթն, սովորութիւն եղած է հասու-
 րակայ՝ Սողոմոնի Տաճար անուամբ կո-
 շել, վասն որոյ մենք եւս մեր Պատ-
 մութեան մէջ շատ տեղ նոյն անունը
 գործածեցինք:

Խաչակիրք 1099 ին տիրեցին Տաճա-
 րին՝ տասն հազար Մահմետական սպան-
 նելով մէջը, և եկեղեցւոյ փոխարկե-

լով՝ Ապառաժին վրայ սեղան մի կանգ-
 նեցին. իսկ 1187 ին Սալահէտտին կրկին
 առաւ եւ նախ Քրիստոնէից արեամբ
 լուանալէն զկնի, դարձեալ ջրով՝ և ա-
 պա վարդեջրով լուաց ու Մզկիթ ըրաւ,
 որ մնաց մինչեւ ցայսօր. և գրով սահ-
 ման ու արգելք դրաւ, որ Քրիստոնէայ
 մէկը չի մտնայ հոն, և մտնողը մահով
 պատժուի և կամ հաւատքը ուրանայ.
 վասն որոյ արգիլեալ էին մինչեւ մօտ
 տարիներս որ և իցէ ուրիշ կրօնքէ ե-
 ղող անձիւք ներս մտնել, եւ մտնողը
 իբր սրբապիղծ՝ մահուամբ կը պատժ-
 ւէր: Խրիմու պատերազմէն յետոյ Եւ-
 րոպական Նեսպանաց միջնորդութեամբ
 սոյն արգելքը քիչ քիչ վերցաւ, և հի-
 մակ Եւրոպացիք իրենց Հիւպատոսաց
 ձեռօքը և արեւելեան Քրիստոնէայք՝
 Հայք և Յոյնք՝ իրենց վանուց Քարգ-
 մաններուն միջոցաւ կրնան հրաման ըն-
 դունիլ կառավարութենէն. քովերնին
 զօրական մը կը տրուի և վանքերու պա-
 հակներն առաջնորդելով իրենց՝ կրնան
 խումբ խումբ պատելու երթալ, ուր

տեղի Շէյխերէն մէկը կ'առաջնորդէ ցոյց տալով ամեն մասերը, թէ՛ Տաճարին մէջ եւ թէ՛ դուրսը, որու փոխարէն կը պարտաւորի իւրաքանչիւր որք մասնաւոր պարգեւ մը տալ։ Ռաբաթ օրերն արգիլեալ է պտտել, ինչպէս եւ Բամազան ամսոյն մէջ։

Արդի Տաճարը ուր պիտի այցելենք՝ տասը դուռ ունի եւ շինուած է ընդարձակ գաւթի մը կեդրոնը. գաւթին տարածութիւնն է 150 հազար քառակուսի մեդր 500 մեդր երկայնութեամբ հիւսիսէ ՚ի հարաւ, եւ 300 մեդր լայնութեամբ արեւելքէ յարեւմուտք։

Ռախտաւորք հասարակօրէն Պապ-էլ-Ղալանիօ կոչուած դռնէն կը մտնեն, որ հիւսիսային արեւմտեան անկիւնը հին Սէրային մօտ է, եւ Հարէժ-էլ-Շերիֆի մեծ հրապարակը կը հանէ։ Չախ դին կ'երեւի այն ժայռին երեսը, որու վրայ շինուած էր Անփօլիեան աշտարակը, զոր Շմաւոն Մակարէի որդին Հիւրկանոս մեծ Քահանայապետը շինեց Քրիստոսէ 120 տարի յառաջ։

Ալ կողմէն Բըղէ ըսուած բողոքակ
 եւ գմբէթաւոր սղօթարանի մի քովէ
 կ'անցնուի, այս տեղ պահուած կը կե-
 նայ նուիրական ժայռին (Էլ-Սաբա)
 մէկ մասը, որու վրայ ըստ Մահմէտա
 կանաց՝ Յակովբ նահապետ պառկեցաւ
 և սանդուխքին տեսիլքը տեսաւ : Յետոյ
 գեղեցիկ բայց ցամաք աղբիւրի մի կը
 հանդիպինք, ուսկէ դէպ 'ի հարաւ շե-
 ղելով կ'անցնինք Սբակ Հիւանոսոյ ըսուած
 տեղւոյն մէջէն մինչեւ վեց ոտք աստի-
 ճաններուն քով և վեր կ'եննենք քարա-
 յատակ գեղեցիկ բակին վրայ որ Յովսե-
 փոսին Սբակ Իսրայելացոյ կամ Տաճար Ը-
 սածն է, որ պատով մի շրջապատուած
 էր յառաջ : Այս տեղ Յիսուս Քրիստոս
 շատ հրաշագործութիւններ ըրած է :
 այս տեղ գտան զինքը իւր ծնողքը՝ երբ
 նա բապտիստներուն հետ հարցմունքներ
 կ'ընէր, և ասկէ դուրս հալածեց վա-
 ճառականներն ու սեղանաւորները, այս
 տեղ Մարգարէացաւ Տաճարին աւե-
 րումը, զոր Տիտոս 37 տարի յետոյ ե-
 կաւ կատարեց : Աստ հեթանոսաց ար-

դիլեալ էր մանել :

Օմարայ Մզկիթին արեւելակողմը , որ սոյն բակին վրայ է , տասնանկիւնի շէնք մի կ'երեւի վրանաձեւ՝ 17 սիւնով , ասիկայ Ողջիկոճ խաչին տեղւոյն վրայ է . այս սեղանին և Տաճարին մէջտեղը քարկոծուեցաւ Զաքարիա (Ազարիա) որդին Բարաքեայ . Բ. Մնայ. ԻԴ. 20-21 : Մահմէտականք այս տեղւոյն Մահմէթի -Տառփ , կ'ըսեն , այսինքն՝ Գաւթի դաւ տարանք :

Գանք հիմա արդի Մզկիթին որ Օմարայ անուամբը կը յիշուի , այս ալ Քուպլի-էլ-Սաիրա կը կոչուի , որ ժայռին գմբէթն ըսել է . ութանկիւնի է , ամեն մէկ անկիւնին երեսները՝ որ մարմարով և յախճապակիով զարդարուած է՝ 20 մեդր է , եօթը պատուհան ունի գունաւոր ապակիներով , և վրան պղնձապատ գմբէթ մի : Զորս դուռ ունի , արեւելեանը՝ Պապ-Տառփ , հիւսիսային դուռը Պապ-էլ-Ճէննէ , արքայութեան դուռ . արեւմտեանը՝ Պապ-էլ-Ղարոյ , հարաւայինը՝ Պապ-էլ-Գըլլէ , կը կոչուին :

Ուխտաւորք արեւելեան դռնէն ներս կը մտնեն, բայց պէտք է որ ներս չ'մտած ոտից ամաններնին հանեն, ներքին կողմը քիչ մը մուտք է. կեդրոնական մասը երկու ութանկիւնի շրջապատով բոլորած է, առաջինը արտաքին որմով, երկրորդը ութ սիւներով եւ 16 ընտիր մարմարեայ սիւներով, որոնց բունը միակտուր է, Մղկիթին վերի կողմերը բոլոր միւսիոններով եւ ոսկէզօծով ծածկուած են. եւ գրեթէ բոլոր ներքին կողմի պատերուն վրայ տեղ տեղ Ղուրանէն հատուածներ կան ոսկէգրով դրոշմուած: Բուն կեդրոնը չորս մոյթով եւ 12 սիւնով գոցուած եւ անոնց միջոցները երկամթեայ գեղեցիկ վանդակներով պատած են, յետոյ դարձեալ ուրիշ վանդակ մի կայ տախտակեայ եւ արհեստաչէն, որով շրջապատած է Սախրան, այսինքն Մոսլաք Խաչըսուած ժայռը: Ժայռին երեսը բաց է եւ անհարթ ու բոլորակ ծակ մի ունի մէջտեղը ուղղահայեայց, եւ հիւսիսային ու արեւմտեան մասերը տափեալ

ցած են, ասե՛նօք ասոր վրան՝ մարդա-
չափ բարձրութեամբ կանանչ ու կար-
միր կերպասէ շինուած թէ՛մէ կախուած
էր, որ տեսակ մը վրան է, բայց այժմ
սոյն վրանը վերցուած է. Մահմէտա-
կանք այս թէ՛մէն տեսնալով՝ ըստ իւր-
եանց աւանդութեան կը յիշէին Աս-
տուծոյ Ադամին տուած վրանը, երբ
Մէքքէի քով լերան մի վրայ Եւան
գտաւ կ'ըսեն հարիւր տարի որոնելէն
յետոյ:

Այս ժայռը Ուռնային կայն է, զոր
Գաւիթ Յերուսաղիմերէն գնեց, որու
վրայ շինուեցաւ յետոյ Սողոմոնեան
Տաճարը եւ Տապանակ ուխտին հոն
գրուեցաւ, եւ կոչեցաւ Սրբութիւն
Սրբոց, ուր տարին մի անգամ միայն
մեծ Քահանայապետը կը մտնէր:

Ժայռին արեւմտեան կողմը ձեռքի
նշան մի կայ, Գարբիէլ հրեշտակապե-
տինն է կ'ըսեն Մահմէտականք, և ինչ-
պէս մնալը պատմութեամբ մի եւս կը
հաստատեն:

Հարաւային արեւմտեան անկեան

գիտնացր տախտակեաց շրջանակի մը մէջ՝
 քարակ, փայլուն, եւ մութ կապուած
 դունով քար մի ցոյց կուտային առաջ-
 ները 80 հարիւրոգումքը լայնու-
 թեամբ ու երկարութեամբ, և որուն
 ետեւի կողմը վահան մի կախուած էր,
 այս վահանին համար Հանդային է կ'ըսէին,
 զի Մէհէմմէտի հաւատարիմ ընկերն
 ու հօրեղբայրն էր: Վահանին վրայ անու-
 բոշ նկարներ կ'երեւէին և միայն սիրու
 մարգ մի յայտնի կը տեսնուէր, զոր վեր-
 ջին տարիներու նորոգութեան ժամա-
 նակ կառավարութիւնը վերցուց:

Ստիրայի հարաւային արեւմտակողմը
 տեսակ մի վանդակ կայ երկաթի, եւ
 միշտ փակ կը մնայ և մէջտեղը ծակ մի
 ունի, որու մէջէն ձեռքերնին խոթելով
 Մէհէմմէտի մէկ ոտքին ինչը կը շօշա-
 փեն Մահմէտականք եւ կը յարգեն:
 կնիքը մարմարեայ քարի մի վրայ է, հոս
 է կ'ըսեն նաեւ Մէհէմմէտի գլխուն
 մազէն քանի մը հատը:

Հարաւակողմը կ'երեւի մարգարէին
 (Մէհէմմէտին) դուռ որ իւր նիզակին

վրայ պլլուած է, և Օմարայ Դրոշը (Սահ-
ճագ) արձակ թողուած: Սոյն տեղը կ'ե-
րեւի նաեւ էլ Պլլաֆի թամբերը: Պլլաֆ
Մէհէմմէտի ձիուն կամ ուղտին ա-
նունն է:

Տաճարին հիւսիսային կողմը Պապ-
էլ-ձէննէ ըսուած դրան առաջը շրջաբա-
լոր տեղւոյն մէջ յասպիս (եէլիճ) քարէ
տախտակ մը կայ, որու վրայ Մէհէմմէտ
19 հատ ոսկի գամեր գամած է, և ասոնք
աշխարհիս տեւողութեան ժամանակը
ցոյց կուտան, եւ իւրաքանչիւր դար
վերջանալուն գամերէն մին կը քակուի,
աներեւոյթ կը վինի կ'ըսեն Մահմէտա-
կանք: Նաեւ կը յաւելուն, թէ օր մի
սատանան վերոյիշեալ դռնէն ներս մըտ-
նելով՝ սկսաւ այս գամերը քակելով
հանել որ շուտով աշխարհիս վախճանը
տեսնէ, բայց Գաբրիէլ հրեշտակապետ
վրայ հասնելով հալածեց զինքը սրբաւ
վայրէն. այժմ սոյն գամերէն չորս հատ
միայն մնացած է, վերջին ժամանակներս
Կառավարութիւնն այն տեղի շէյխե-
րուն պատուիրեց, որպէս զի նոյն պատ-

մութիւնն այլ եւս չը պատմեն այցե-
լուներուն :

Հարաւային արեւելեան կողմը 16
ոտք սանդուխ մի կայ , որ սորին յարիչ
կիջեցնէ , որուն առաստաղն է Սախան ,
որ ըստ ասութեան Արաբացւոց՝ օղին
մէջ կախեալ կը կենայ առանց նեցուկի ,
եւ ժայռին երեսը կտաւով մի ծած-
կուած է : Ուխտաւորները պատցնող
առաջնորդը , որ միշտ Տաճարին լուսա-
բարը կը լինի , շատ բաներ կը խօսի յի-
շեալ յարկին զանազան տեղերուն վրայ ,
որոնք նշանաւոր եղած են մէյ մէկ
դէպքերով : Այն տեղ յիշեալ լուսա-
բարը ոտքը գետինը զարկած ժամանակ
ձայն մի կ'ելնէ , և կ'ըսէ թէ այս տեղ
հոգիներուն հօրն է (Պի-էլ-Արո-ահ) ,
ուր շաբաթը երկու օր հաւատացեալ-
ներուն հոգիները հաւաքուելով կ'ա-
ղօթեն Աստուծոյ :

Հիւսիսային դռնէն դուրս ելնելով
և պատին տակովը երթալով , որ ձախա-
կողմը կուգայ , աջակողմը երկու Քըղի
կը տեսնուի գմբէթաւոր եւ ճերմակ

մարմարեայ սիւներով, պզտիկը՝ Մէհէմէ մէտին աղջկանը Ֆախիմէի անուամբ է, միւսը կը կոչուի Քոպուլէ-էլ-Մեքաճ, որ ըսել է Մէհէմէտի համբարձման գմբէթը: Հարաւային դրան քով երկու եւ կէս մեդր բարձրութեամբ պատին երեսը մարմարեայ քար մի կը տեսնուի, որուն երակին գիծերը երկու թռչուն կը ձեւացնեն, ասոնց վրայօք ալ պստ մութիւն մի կայ, որ կ'ըսեն թէ՛ երկու սիրամարգ են, որոնք իրենց գոռոզութեան համար պատժուած են Սողոմոնի կողմէն:

Հարաւային դրան դիմացը կամաբակապ սրահ մի կը տեսնուի, և ասոր չորս կամարներէն կախուած է կլիփ, որու մէջ վերջին դատաստանին օրը պիտի կշռուին կ'ըսեն՝ վարձքերն ու մեղքերը իւրաքանչիւր ոգւոց: Այս սրահին մօտ արեւմտակողմը՝ մարմարեայ գեղեցիկ ամպիոն (Միմլէր) մի կերեւի, որ կ'ըսուի Պո-բահ-է-փոյն-Ղապի, ուր Բամազան ամայն մէջ ամեն ուրբաթ օրերը քարոզ կը տրուի:

Դէպ 'ի հարաւակողմը աւաջ երթալ ըով, և ջրի աւազանի մի քովէ անցնելով, 30 մեդրաչափ աւելլի անդին 18 աստիճաններէ վար ստորերկրեայ տեղ մի կ'իջնուի. ուղղութիւնն է հիւսիսէն դէպ 'ի հարսւ. երկու մասէ կը բաղկանայ՝ գմբէթայարկ և սիւներու վրայ յենած : Եայրը չ'հասած՝ 8 աստիճան կան. ուսկէ վար իջնելով միակտուր սիւն մի կը տեսնուի խիստ մեծութեամբ և վերին խոյակը արմաւենիի նման տերեւով զարդարուած է : Այդ ստորերկրեայ յարկին ծայրը երկու դռներ կան որմով հիւսուած, որոնց վերի շեմերը կը կենան : Այս դռներուն և երկու սրահներուն համար մեծ գիտնականք կ'ըսեն թէ Սողոմօնի Տաճարին դռներն են եւ նորա շինուածները, սակայն երբեմն նորոգութիւն տեսած են. Այս ստորերկրեայ տեղէն դուրս ելնելով՝ էլ Ասա ըստուած մզկիթը կ'երթուի, որուն մէկ մասը սոյն ստորերկրեայ տեղին վըրայ է :

Էլ — ԱՔՍԱ : Օմար՝ Ուռնայի կալը

մաքրել տալէն յետոյ, զոր ինքն Դաւթի Տաճար կ'անուանէ, գնաց անոր վրայ շինուած Ս. Աստուածածնի եկեղեցւոյն մէջ աղօթելու, և պատուիրեց որ այն տեղն յատուկ աղօթարան ըլլայ Մահմէտականաց, ուստի Մզկիթի փոխելով՝ անունը դրին Էլ-Ասա, այն է՝ ծայր կամ եզր: Եթենբորոգ դարուն վերջերք Ապր-էլ-Մէլէ, անուն Տասնբորոգ Խալէֆայն յիշեալ Մզկիթին դռները ոսկւով և արծաթով պատել տուաւ: Նոյն Խալէֆային եւ իւր որդւոյն Վալէպի օրովք արեւելեան կողմի մէկ մասն փլշելով ինկաւ, և հաստատ հիմն չ'ունենալուն համար բոլորովին կործանեցաւ: Քառասուն տարի յետոյ Ապր-ճաֆար-էլ-Մանսուրի ժամանակ արեւելեան և արեւմըտեան կողմերը սաստիկ երկրաշարժէ մի վնասուեցան, և դրանը վրայ պատած ոսկին ու արծաթը քակել տալով ու դրամ կտրելով՝ անով նորոգուեցան. ուրիշ անգամ մի եւս Էլ-Մահարպիի Խալէֆայութենէն առաջ (որ նստաւ 775-785), բոլորովին կործանեցաւ երկրա-

չարժէ, անոր համար Ս. Աստուածամօր
անուամբ Եկեղեցի եղած ժամանակին
Կրթութեան հնութիւններէն գրեթէ բան
մի մնացած չէ այժմ: Էլ Մակարայի կրկին
չինել տուաւ Էլ-Ասան, բայց չափակ-
ցութիւն չը կրնալով տալ, երկայնու-
թիւնը պակսելով՝ լայնութիւնը ընդ-
արձակեցաւ:

Խաչակրաց օրով 1099 թուականին
պալատի փոխուեցաւ, և Սողոմօնի սա-
լատ կը կոչուէր. այս տեղ կը նստէին
Տաճարականք ըստած զինուորաց կար-
գը. եւ 1187 ին Սալահէտտին մաքրել
տալով այն տեղն, անոր մէջ հաստու
տեց այն հոյակապ ամպիոնը, որու վրայ
յետոյ պիտի խօսինք:

Էլ-Ասայի Մզկիթը արտաքին սրահէ
մի կը մտնուի եօթը կամարով, որոնք
Մզկիթին ներքին եօթը սրահներուն
կը համապատասխանեն: Այս ընդար-
ձակ շէնքէն, որ 80 մեդր երկայնու-
թիւն ունի, ներս մտնելու ժամանակ
միջին դաւթին մէջ փոքրիկ տեղ մի կայ
վանդակով շքտպատուած և մէջը ուղ-

ղանկիւնի քար մի յատակին մէջ տընկած . ըստ պատմելոյ Մահմէտականաց, այս տեղն Ահարոնի որդւոցը գերեզմանն է, Նսրադայ, Աբիուդի, Եղիազարայ եւ Իթամարայ . Ղեփ . ԳԼ . Ժ . Քէպէտ եւ ասոնք խոստացեալ երկիրը չ'մտած՝ անապատին մեջ մեռան . Սոյն քարին արեւելակողմը հոր մի կը տեսնուի, որուն Տերէ-ի Կոյ կը կոչեն, ըստ աւանդութեան Մահմէտականաց . ըստ որում մարդուն մէկը այս հորին ճանապարհաւը Արքայութիւն մտեր եւ յետոյ կրկին նոյն ճանապարհաւ ետ դառնալուն՝ ականջին ետեւը կանանչ տերեւ մի ունեցեր է, եւ ասկէ մնացեր է հորին անունը Տերէ-ի Կոյ :

Միջին սրահը՝ որ ամենէն լայն է, սիւներու վրայ հեծած է, եւ ծայրը սիրուն գմբէթ մի կայ միւսիոններով զարդարուած եւ չորս սիւներու վրայ բարձրացած, որոնց ամեն մէկը երկերկու մարմարեայ սիւներ ունին առ 'ի զարդ . Ասոր հարաւային ծայրն է Միհրաղը և անոր արեւելակողմը Միհրէր

մի կայ , այսինքն սիրուն ու գեղեցիկ
ամպիոն մի , որ խիստ մեծ արհեստով
քանուած է Հալէպի մէջ Նորէփփին
Սուլթանին հրամանաւը , որ 1145ին
նստաւ գահը :

Արեւմտեան կողմը՝ ամպիոնին եւ
մզկիթի հարաւային պատին մէջտեղը
երկու Միհրապով մատուռիկ մի կայ ,
ամպիոնին մօտ եղածը՝ Մովսիսի եւ
միւսը Իսայի (Յիսուսի) անուանը նուի-
րուած է , վերջի Միհրապին մէջ ուսի
նշան կայ քարի մը վրայ , զոր Իսլամք
Յիսուսի Քրիստոսի ոտից տեղն է ըսե-
լով մեծ յարգ կ'ընծայեն :

Գմբէթին տակովը և անոր արեւ-
մտակողմը երկու սիւններ կան , որոնք
Փորջի սիւներ կը կոչուին , և որովհետեւ
խիստ մօտ են իրարու , այնպէս որ հա-
զիւ թէ մարդ մի կարէ անոնց մէջէն
անցնիլ , ուստի եթէ կ'ուզէ մէկը փոր-
ձել վինքը թէ մեղաւոր է արդեօք՝
թէ արդար , երկու սիւնին մէջէն փորձ
կ'ընէ անցնելու , եթէ անցաւ , որդի
արքայութեան է , թէ որ քիչ մի մտեղ

ըլլալով չկրցաւ անյնիւ, թող ինքը մտածէ թէ ո՛ւր պիտի երթայ: Մահ-մէտականք այսպիսի փորձեր ըրած ժամանակնին շատ անգամ վնասի հանգի, պսո՞ծ են, որուն համար վերջին ժամա-նակներս՝ Քաղաքիս նախորդ կառավարիչներէն վսեմ. Բէուֆ Փաշայն այդ երկու սիւներու մէջտեղ երկաթներ շինել տուաւ, որպէս զի այլ եւս այդպիսի անոտի փորձեր չըլլան և վնաս մի չի ծագի:

Ըստ աւանդութեան՝ Մարիամ ամենասուրբ կոյսը, Աննա մարգարէուհին, եւ ուրիշ կուսանքներ այս տեղ կը բնակէին, և այս տեղ մարգարէացած պիտի ըլլայ Աիմէօն Մերունին. Ղուկ. Բ. 34, 35:

Իսկ ասոր դիմացի արեւելակողմը, մզկիթին հարաւային պատին դէմ կը տեսնուի Օմարայ աղօթած պեղը, որոյ նշան Միկրայ մի կայ՝ և անոր երկու հատ իւրարու պլլուած ոլորուն սիւներ կան վերնախոյ սկնին դէպ ՚ի վար:

Դէպ ՚ի դուռը՝ ուսկէ ար մտանք,

գառնալու ժամանակ աջ դին Միկրայ մի կայ գեղեցիկ սիւնակներով զարդարուն : Այս տեղւոյն համար կ'ըսեն Մահմէտականք թէ՛ Զաքարիա Քահանայ եւ իւր որդին Յովհաննէս Մկրտիչ սղօթելու եկան :

Այս մզկիթէն դուրս արտաքին մեծ հրապարակին հարաւային սրեւելեան անկիւնը նորոգուած դուռ մի կայ որ կը տանէ Սարգիսիայ յարկը , ուր 32 ոտք աստիճաններէ կ'իջնուի . այս տեղ կը տեսնուի Յիսուսի Քրիստոսի Որբան ըսուածը : Ասիկայ հասարակ քարի մէջ փորուած փոս մի է , որուն վերի կողմը քանդակածոյ է , եւ հորիզոնական գիրքով զետեղուած հովանոցի մի ներքեւ , որ չորս մարմարեայ սիւնակներու վրայ բարձրացած է : Աւանդութեամբ կը կարծուի որ Միմէօն Ծերունին այս տեղ բնակեցաւ եւ ամենասրբուհի Կոյսն ալ իւր անդրանիկ Որդին Տիրոջը ընծայելէն յետոյ քանի մի օր Ծերունին քով մնաց : Արարադիբ Իսրի-Սէյիփա-Իսա կը կոչեն այս տեղւոյն :

Յիշեալ տեղէն 50 մեղրի չափ դէպ
յարեւմուտք, պարսպի հարսււային
պատին դիմաց ծակ մի կայ բացուած,
ուսկէ կ'երեւի մեծ ստորերկրեայ տեղ
մի կամարակապ եւ 96 սիւներու վրայ
յենած. ներս մտնելը դժուար է, որով
հետեւ աստիճան չունի: Այս շէնքն հա-
ւանականաբար Սողոմոնի ժամանակէն
է, եւ ուրիշ թագաւորաց օրովը նորո-
գութիւններ տեսած պիտի լինի: Ներսի
կողմը մութ է և խոնաւ և արդէն ա-
ւելի ներքին կողմերը երթալու համար
եղած ծակն ալ գոցած են, մի միայն
հետաքրքրութեան համար տեսնել եւ
դուրս ելնելու է:

Գլութի հրապարակի արեւելեան
պատին տակովը դէպ 'ի հիւսիս երթաւ
լով Սիրախ ըսուած կամուրջը կը հասնինք,
ուր տեղ Միկրայ մի և գետինը պսակած
սիւն մի կայ, որուն ծայրը պատին մէ-
ջէն դուրս ելած է, այնպէս որ դրսէն
տեսնողը թնթանօթի բերան կը կարծէ
դէպ 'ի Համբարձման լեռը ուղղուած:
Այս Սիրախ ըսուած կամուրջը յիշեալ

սիւնին ծայրէն մինչեւ Համբարձման լեռը ձգուած է ածելի բերնին բարակութեամբը, ուստի և անտեսանելի է ըստ հաւատոյ Մահմէտականաց, և այս կամուրջին վրայէն պիտի անցնին հաւատացելոց հոգիները, որ եթէ արդար են, իրենց հրեշտակին պահպանութեամբը երկիւղ չ'ունին, իսկ մեղաւորք իրենց հաւատարակչութիւնը կորսնցնելով՝ Յովսափատու ձորին մէջ և անկէ դժոխքին յատակը պիտի գահավիժին :

Նոյն ուղղութեամբ առաջ երթալով ադամաթղենի անտառի մի կը հասնինք, ուր տեղ կ'երեւի աշտարակի նրման բարձրացած Զղճան և Ողորմութեան դռները, զոր երկրորդ այցելութեան ժամանակ Քէթսեմանի ձորին կողմէն տեսանք : Արկին դուռ են, արեւելեան կողմէն պատով հիւսուած, ներսի կողմէն երկու մեծկակ միակտուր քարեայ սիւններով երկու մասի բաժնուած է, երկու մասն ալ սիւններով զարդարուած և ծայրերնին հարուստ քանդակագոր-

ձուլթեամբ յօրինուած է . երկու գրմբէթ ունին , որոնց պատուհասներէն լոյս կառնու ներքին կողմը : Գրան վրայ ելնելու համար , աստիճաններ կան , ուսկէ խիստ գեղեցիկ տեսարան կ'ընծայէ մարդոյս աչաց Յովսափատոյ ձորը եւ բովանդակ Հարեմ-էլ-Շերիֆի տարածութիւնը :

Քիչ մի աւելի հեռուն դէպ 'ի հիւսիս աջ թեւի վրայ պզտիկ Մէսճիք մի կը պատահի , երկաթի վանդակապիւններէ ներս նայած ժամանակ Ռիւրլէ մի կ'երեւի , որոյ համար լուսարար առաջնորդը Սողոմնի ավուը կ'անուանէ , իսկ արդեամբ ուրիշ բան չէ՝ եթէ ոչ դատարկ շիրիմ մի , որ բոլոր Մէսճիքը բռնած ու վրան կանանչ չուխայով ծածկուած է : Ասկէ քանի մի քայլ անդին է Հարեմ-էլ-Շերիֆի հիւսիսային՝ այն է Ս . Աստուածածնի դուռը , ուսկէ դուրս կ'ելնեն Ուխտաւորք :

Սողոմոնեան Տաճարին վերայիջեալ հիւսիսային դռնէն դուրս ելնելով և Պրոպագիլէ առաջին եզերքով դէպ 'ի ձախ

դառնալով և Յովակիմայ և Աննայի եկեղեցւոյ առջեւէն անցնելով՝ աջ թեւիդ վրայ եկած առջի փողոցին մէջ աջակողմը եղած վերջին տունն է Սիճն Փարիսեյոյն տանը տեղը, ուր Մարիամ Մագդաղենացի Յիսուսի ոտքերը արտասուքովը թրջելով՝ անոյշ իւղով օծեց. Ղուկ. Է. 37-38: Այս տեղ Ասորիք փոքրիկ եկեղեցի մի ունէին, որ հիմակ Արաբացւոց ձեռքն է անարգ վիճակի մէջ:

ԻՆՆԵՐՈՐԴ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Ի գերեզմանս Թագուորաց,
Դատաւորաց, եւ այլն:

Մեր իններորդ այցելութիւնը Ս. Երուսաղեմի հիւսիսային կողմերը պիտի ըլլայ, և ըստ որում քանի մի ստորերկրեայ տեղուսնք կան, պէտք է ուխտաւորք հետերնին մում եւ լուցկի ունենան ՚ի պատրաստի:

Սոյն այցելութիւնն կ'ըսկսի Սուրբ Աստուածածնի դռնէն, ուսկէ դուրս երնելով ձախ կողմի ճամբան կը բռնենք, եւ 60 մեդր երթալով իրամին երկայնութեամբը, ձախ դին կը հանդիպի Պերիէր-Սիւրի-Մերիէճ (Աւազան Ս. Աստուածածնի) ըսուած աւազանը. ասոր վրայօք հին յիշատակութիւն մի չկայ:

Ասկէ երեք կամ չորս բուպէէն քաղաքին հիւսիսային արեւելեան անկիւնը կը հասնինք, ուր դէպ յարեւելք, որ Յովսափատու ձորին արեւմտեան եզերքն է, հին շէնքի մի մնացորդներ կ'երեւին. ըստ ոմանց կը կարծուի թէ՛ այս տեղն է Աբգարու կնոջ Հեղինէ թագուհւոյն գերեզմանը, զոր Յովսէպոս Փլաքիանոս եւ Պաւսանիոս Յոյն մատենագիրը կը յիշեն: Ճանապարհը շարունակելով՝ առանց քաղաքին պարիսպը թողլոյ, դէպ յարեւմտեան ուղղութեամբ և անկէ 'ի հարաւ սակաւ ինչ շեղելով, 6 բուպէին կը հասնինք քաղաքին մէկ դուռը, որ Հերով-

Դէսի Դոմ կը կոչուի, իսկ տեղացիք
 Պատրիարքաներ (ծաղկանց դուռ) կ'ա-
 նուանեն : Ասկէ 160 մեզր անդին , աջ
 կողմը նեղ ճանապարհ մի կայ և անոր
 ծայրը դուռ մի կ'երեւի , այն է Երե-
 միայի այրը , զոր մերայինք Աբիթիլիի Կա-
 րանյա կամ Ագրիպայի ագարակ կը կոչեն ,
 անոր համար որ , ինչպէս կը գրէ Հաննէ
 Պատմագիր երես 295 , Երեմիայ մար-
 գարէի աշակերտը Աբիմելք , Բարե-
 լոնի գերութեանը ժամանակ հիւան-
 դաց համար թուզ բերելու զոկուե-
 լով հոս Երեմիայի հրամանաւը , սոյն
 սյրին մէջ 68 տարի քնուցաւ , եւ ար-
 թընցած ժամանակ իւր քաղած թուզը
 դեռ դալար քովը կեցած գտաւ . Յայտ .
 Մայիս 1 : Իսկ Երեմիայի սյրը կը կոչուի ,
 որովհետեւ աւանդութեամբ կը կար-
 ծուի , թէ Երեմիա մարգարէն իւր Ող-
 բերը այս տեղ յօրինեց : Սոյն այրը
 Տերվիլի մի ձեռքն է , վասն որոյ ներս
 մանելու համար մասնաւոր պարգեւ մը
 տալու է իրեն : Ներս մտած ժամանակ-
 նիս աջ թեւի վրայ Տերվիլներու քանի

մի գերեզմաններ կը տեսնուին, որոց Մահմէտականք մեծ յարգ կ'ընծայեն ։ Անկէ փոքր բակի մի մէջ ջրամբար մի կայ, որուն համար Երեմիայի Բանփն է կ'ըսուի ։ Այրին բնական կամարին տակ մտնելով, ձախակողովը պզտիկ պատի մը միւս կողմը վիճափոր խորշ մի կ'երեւի, ուր ձեռքի սանդուղով կ'իջնուի ։ այս տեղայն համար սուանդութեամբ կ'ըսուի թէ Երեմիա պառկեցաւ գուրը նետած ժամանակնին Սեդեկիայի օրովը ։ Երեմ. ԼԲ. 2 ։ ԼԷ. 20 ։ ԼԸ. 13 և 28 ։

Երեմիայի այրին վրայի բլուրը Բեթլեհա ըսուած լեռանը հիւսիսային ծայրն է, զոր Հերովդէս Ագրիպպաս հարաւային մասէն զատեց, որու վրայ շինուած էր նոր քաղաքը, եւ քաղաքին երրորդ պարսպին գիծը անկէ անցուց ։ Սոյն բլուրը այժմ Մահմէտականաց գերեզմանատուն է ։

ձանապարհը դէպ յարեւմուտք 87 մեդր առաջ գնալով՝ դէպ 'ի հարաւ՝ պատին երեսը՝ գետնին հաւասար ծակ մի կ'երեւի, ուսկէ կ'իջնուի Թագաու-

բախան այբերը, զոր Յովսեփոս Հրէայ պատմագիրը կը յիշատակէ քաղաքի երրորդ շրջապատին վրայ խօսած ժամանակ : Պատմ. պատմ. Ե . 13 : Այս տեղէն կ'երեւի թէ շինութեան համար քար կտրած են հին ժամանակները, և տեղը Քաղաւորական ըլլալուն՝ անուան ալ Քաղաւորական այրեր մնացած է : Այս տեղ ջրի կաթիլներ կը թափեն, որ կ'երեւի թէ վրան եղած ջրամբարի մը ջուրն է՝ որ քամուելով այրին մէջ կը թափէ :

Դէպ յարեւմուտք 90 մեդրաչափ, որ յիշեալ այրերուն հարաւակողմը կ'ընայ, քաղաքին Դամասկոսի կոչուած դռն է, զոր տեղացիք՝ ինչպէս առաջ ալ ըսինք Պատմ. Եւրոպ. կը կոչեն, այսինքն՝ Դուռ սիւնի, եւ այս դռուն Քաղաքին Աւագ դռուն էր :

Սոյն դռնէն դէպ 'ի հիւսիսային արեւմուտք 250 մեդր յառաջ գնալով՝ տափակ ժայռ մի կը տեսնուի : Լատին այս տեղւոյն համար կը կարծեն թէ Քէոզոս Բ. կայսեր Եւդոքսիա տիկնոջ Ս. Առեփաննոս անուամբ շինել տուած

եկեղեցւոյն տեղն է. հոն երեք գերեզման կայ, որոց մին յիշեալ Եւդոքսիային է կըսեն, ըստ որում իւր շինել տուած եկեղեցւոյն մէջ թաղուեցաւ :

Վերջին տարիներս, այն է 1881 թուականին՝ նոյն տեղն Յունաց ազգէն անհատ մը ծախուս տունելով, տուն շինելու համար տեղն մաքրել տուած ժամանակն, հին եկեղեցին ամբողջապէս յայտնուեցաւ, որ աւելի Յունական ձեւ ունէր քան թէ՛ Լատինական, եւ սակայն Լատին միաբանութիւն մը յիշեալ Յոյնին բաւական գումար տալով նոյն տեղը գնեց :

Յետոյ դէպ ՚ի հիւսիս շեղելով մեծ ճանապարհին վրայ, իբր 8 վայրկեանէն ջրամբարի մը քով կը հասնինք, որ ճամբուն աջակողմեան եզերքին վրայ է, այս ջրամբարէն 20 մեդր դէպ ՚ի հիւսիսային արեւելակողմն կը տեսնուին Թագաւորաց Գերեզմաները (¹) :

(¹) Որքան որ Թագաւորաց Գերեզմանք կը կոչուին, մենք ՚ի սուրբ Գրոց գիտենք, որ Յուդայի 23 թու

Բոլոր շէնքը ժայռի մէջ փորուած քարէ դռներ եւս ունէր բնական ծրխնինքով, ինչպէս մինչեւ ցայսօր կը տեսնուի մէկ քանին, ՉՉ ոտք աստիճաններէ վար իջնելով, որոնց լայնութիւնն է 9¹/₂ մեդր, բոլորը միաժայռ, դուռ մի կը հանդիպի պատին երեսը, որ վերէն ՚ի վայր ժայռին մէջ կտրուած է հասարակ շինուած պատի նման: Այս դռնէն ներս քառակուսի բակ մի կայ ՉՂ մեդրաչափ դէպ ՚ի լայնքն ու երկայնքը, եւ ասոր պատերը նոյն ժայռէն յորինուած են միակտուր, եւ բարձրութիւնն է 7 էն մինչեւ 8 մեդր:

Արեւմտեան երեսը լայն գաւիթ մի կայ իբր անցք, որ յառաջուց երկու

գաւորներէն 18ը Սուրբ քաղաքին մէջ Թաղուեցան, այսինքն Միտ լերան վրայ, մէկը Գաբա փոխադրուեցաւ. միւսներուն համար սուրբ Գիրքը տեղ մի շնուցըներ. և յայտնի գիտենք այժմ որ Յայեալ Տը պատուով Թաղում չունեցան: Լատինք այս այրը Սրգաբու կնոջ Հեղինէի հրաշակերտ գերեզմանը կը համարին. այս կարծիքը մեզ եւս ընդունելի է, ըստ որում շէնքը Թագաւորական է:

սիւնով ամրացած էր նոյն ժայռէն կրտսրած՝ և երկու ալ սիւներ պատին կից։ Այս երկու սիւներուն մէկ կտորը դեռ առատադէն վար իբր կախուած կը տեսնուի։ Գաւթին և ժայռին երեսի վրայ փափուկ գրչով եւ ընտիր ճաշակով քանդակուած երկար շրջանակ (փերվալ) մի կայ, որուն մէջ տեղը խաղողի կոյզ մի կ'երեւի։ Աջ ու ձախ՝ չափակցութեամբ քանդակուած կան երեքկիսն արմաւենի, մէկ պսակ եւ ուրիշ ճարտարապետական զարդեր, մէջտեղերնին փոփոխակի ունելով բաժակի ձեւով զարդեր կամ վահաններ և կամ ինչպէս ոմանք կը կարծեն՝ հացի նկանակներ երեքական հատ (1)։ Ասոնց վերի կողմը

(1) Որովհետեւ սոյն քանդակեալ զարդերը ժամանակին երեսէն քիչ շատ մաշուած, և ըստ մեծի մասին անորոշ են, աւելի հաւանական է որ հացի քանդակներ եղած ըլլան, որով կը հաստատուի Աբգարու կնոջ Հեղինէի շէնքն ըլլալը, և հացերը՝ ի յիշատակ քանդակուած են այն մեծ սովուն, յորում իբր գանձերը բանալով և ըգիպտոսէն առատ ցորեն բերել տալով՝ քաղաքին այնչափ բաղմութիւնը հացով կերակրեց։ Իսկ կոյզ մի խաղողն և հացի նկարները քրիս-

Ճոխ կ'երեւի տերեւներէ ու պտուղներէ հիւսուած պսակ մի, որու ձախ կողմի մասը ժամանակէն մաշուած ու աւրբուած է :

Այրին մուտքը, որ գաւթին հարաւակողմն է, 90 հարիւրորդամեդր բացուածք ունի, որ երբեմն երկանաքարի ձեւով հաստ քարով մի կը փակի եղեր, ինչպէս որ դեռ քարը արեւելեան նեղ անցքի մի մէջ պառկած կը կենայ : Գրան առաջը ուրիշ նեղ անցք մի կայ, որ կ'երթայ մինչեւ գետնին երեսը ժայռին մէջ փորուած տաշտաձեւ աւազանը : այս աւազանին ինչ բանի հաւմար ըլլալը չ'գիտցուիր, միայն կը կարծուի թէ մեռեալներուն վերջին ծառայութիւնը հոս կը կատարէին :

Գերեզմանք փակ եղած ժամանակ երկու նեղ անցքերն ալ կը գոյէին, ինչպէս յայտնի է անկիւնաւոր ձեւով տաշուած տեղերէն, որոնց մէջ քարէ տախ-

տանէութեան գլխաւոր խորհուրդներէն մին է, եւ աւելի կը յարմարի Գրիտտոնեայ Թագուհիի մի քան թէ իտալեկ թագաւորաց :

րանին կամարներ դարձուած : Հիւսիսային պատին կողմի սենեկէն նեղ անցքով մի ուրիշ սենեակ մի կը մտնուի, որ այն ալ արեւմտեան կողմը դարձեալ ուրիշ հանգստարան մի ունի նստարանի ձեւով, և երկու հատ եւս հիւսիսային կողմը : Այս երեք հանգստարանները կամ մահանկողինները քան զմիւս ամենքը երկար են դիրքով : Այս ծակերը կամ խորշերը, ինչպէս յայտնի կ'իմացուի, բոլորը մէկ ահագին ժայռի մէջ փորուած են :

Գերեզմանէն դուրս ելնելով՝ ետ կը դառնամք մինչեւ աջ կողմն եղած առաջին ուղին դէպ յարեւմուտք, և կը շարունակեմք մինչեւ առաջին մեծ ճանապարհը՝ դարձեալ աջակողմը, որ Մոհրոյ Բլաւր ըսուած տեղը կը կտրէ, որու վրայ յետոյ պիտի խօսիմք : Իբր 10 վայրկեանէն ձախ կողմերնիս ուղիի մի առջեւէ կ'անցնինք, յետոյ 20-22 վայրկեան եւս քայլելով՝ երկու կողմը խորշ խորշ բացուած ժայռեր կը տեսնուին, և աջ կողմը ճանապարհէն քանի

մի քայլ ներսով Գաբա-որայ գերեզման է :

Այս յիշատակարանի հին շէնքն ալ բոլորը մէկ ժայռէ է , որ իւր գեղեցիկ քաւիթով բոլորովն եղած գերեզմաններէն կ'որոշուի : Խիստ սիրուն ճակատ մի ունի , որ եռանկիւնաձեւը վայելուչ տերեւներով , ծաղիկներով և պտուղներով զարդարուած է , թէպէտեւ չափակցութիւն չունի : Գրանը եւ եռանկիւնին բոլորտիքը գեղեցիկ շքանակներ կան :

Գաւթի ներքին կողմը եւ պատին մէջտեղը փոքրիկ գեղեցիկ դուռ մի կայ՝ խիստ նեղ ցպածեւ շքանակով մի պատած , եւ անոր վրայ արմաւենիով զարդ մի՝ վրան տերեւներով : Այս դռնէն ներս մտնելու ժամանակ դամբանական քառակուսի սրահի մի մէջ կը դնեմք զմեզ , որոյ ձախ կողմի պատին երեսը երկու կարգ իրարու վրայ գերեզմանական խորշեր կան , բայց այնքան նեղ՝ որ կ'երեւի թէ առանց շերմի միայն պատանքովը կը դնէին մեռեալը անոնց մէջ , վերի կարգը վեց՝

և վարի կարգը եօթը խորշ ունի : Հիւսիսային արեւմտեան անկիւնը մինակ մէկ խորշ կայ , և հիւսիսային արեւելեան անկիւնի դետինը ծակ մի կայ , ուսկէ ց ոտք վար իջնելով փոքրիկ բակի (սահանլըֆ) մի վրայ կ'ելնէ , որու ծայրը պզտիկ ցած դուռ մի կը բացուի , որ բարձրկէկ դարեւանդով (չըֆմա) մի երկրորդ փոքր բակ մի կը տանի , ուր կան երեք խորշ դամբաններ :

Սոյն երկրորդ փոքր բակին ներքին պատին երեսը դարձեալ դուռ մի կայ խիստ ցած , որ միւսին պէս դարեւանդով մի քառակուսի սիրուն սենեակ մի կը հանէ , որ իւր ներսի երեք երեսներուն վրայ կամարներ կան պատուհանի կամարներու պէս , որոնք Միկրապի ձեւ ունենալով , տակի կողմերնին նստաբաններ կը կազմեն , որոնց վրայ չորս մեռեալ դնելու դամբարաններ կան աջ ու ձախ դին , և երեք հատ ալ ներքին երեսին վրայ , և ասոր ձախակողմը ուրիշ դամբան մի եւս կայ , որու ներսի կողմը քառակուսի սենեակ մի է , եւ

աջ դին հասարակ գամբան մի :

Գրան առջեւն եղած սրահը ետ դառնալնուս , ներքին պատին երեսը մէջտեղը պարզ դուռ մի կը տեսնուի , ուսկէ քառակուսի փոքրիկ սրահ մի կը մտնուի . հոս ալ երկու կարգ իրարու վրայ դամբանի խորշեր կան երեք պատին երեսը , վերի կարգերը չորսական , իսկ վարինները երեքական :

Աջակողմեան պատերեսին մէջտեղը դուռ մի կայ , ուսկէ ուրիշ քառակուսի սենեակ մի կը մտնուի . որու երեք պատին վրայ երեքական խորշեր կան , եւ երեք խորշերուն վրայ երկու կամար , որոնց ամեն մէկուն տակ դամբանի երկերկու խորշեր բացուած են :

Վերջապէս , հարաւային արեւմտեան անկիւնը գետնին երեսը ծակ մի բացուած կայ , ուսկէ սենեկի մի մէջ կը մտնուի , բայց այս սենեկին շէնքը անկատար թողուած է և գերեզմանական խորշեր չունի :

Դատաւորաց գերեզմանատնէն ելնելով՝ ետ դառնամք կրկին մինչեւ Մոխ-

բոյ Բլըրը: Այս բլուրն ինչպէս իւր անունէն կ'երեւի, մոխիրներու կոյտ մի է բլրի չափ բարձրացած օ ոմանք կը կարծեն որ Սողոմոնի Տաճարէն հանուած ու հոս թափուած են, իսկ տեղացւոց կարծիքը որ աւելի խելքի մօտ է, օճառի գործարաններէ հանուած կը կարծեն:

Աջ կողմի շաւիղը բռնելով և 280 մեդրի չափ տեղ քայելէն յետոյ, ձախ կողմի վրայ եղած ճանապարհէն 30 մեդրը ներսով կը ձգուի պափ մի կիմեր, 40 մեդր երկարութեամբ եւ 3 մեդր լայնութեամբ: Կարծող կայ, որ այս նոր շէնքին մնացորդները Հերովդէս մեծին Յրուսաղեմէ դուրս շինել տուած ամփիթէատրոնինն է: Յովեդ. Հնախոս. ԺԵ. 2: Թէպէտեւ սոցա ձեւը, (որ ահագին բարերով՝ մինչեւ 2 մեդր երկայն ու լայն եղողները կան,) բոլորակութիւն մի ցոյց չեն տար, ուստի ըստ այլոց՝ Մանասէ թագուհւոյ Սուրբ քաղաքէն բաւական հեռու՝ արուարձաններու բոլորտիքը շինել տուած աշտարա-

կի կամ ամբողջ մը մնացորդներն կը համարուին . Յովէպ . Հնախօս . Ժ . 4 :

Իբր եօթը վայրկեան եւս յառաջ քալելով Ռուսաց վանքին պատին տակովը , որ աջ թեւի վրայ կ'իյնայ , քաղաքին պարիսպը կը հասնինք , որոյ հիւսիսային արեւմտեան անկիւնը Պսեփիկեայ աշտարակին վրայ հիմնարկուած է , զոր Մեծն Հերովդէս շինել տուաւ՝ ութանկիւնի , և 70 կանգուն , այսինքն 38 մեդրաչափ բարձրութիւն ունէր . Յովէպ . Հնախօս . Ե . 12 : Ասկէ դիւրին է այլ եւս վերադառնալ 'ի Ս . Յակովբ , որոյ արդէն ճանապարհը գիտեն բարեպաշտ ուխտաւորք :

ՏԱՄՆԵՐՈՐԴ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Յովհաննու Մենդեան գիւղը ,
այն է լեռնակողման վանքերը :

Երուսաղեմէն մինչեւ Յովհաննու
Մննդեան գիւղը , զոր տեղացիք Այն-

Քեարէ՛ճ կը կոչեն, երկու ժամու հեռաւորութիւն կայ, ուստի սոյն այցելութիւնը դիւրութեամբ և հանգստութեամբ ընել փափագող բարեպաշտ ուխտաւորք կ'սրող են կառքով կամ ձիով ընել:

Յոպպէի դռնէն ելնելով ու Բեթլէհէմի ճամբան ձախ դին թողլով, 90 մեդր քալելէն յետոյ դիմացնիս երկու ճանապարհ կ'ելնէ, աջակողմեան ուղին որ Յոպպէինն է՝ թողլով, ձախակողմեան ուղին յառաջ երթալու է, ուր 475 մեդրաչափ քալելէն յետոյ՝ աջ դին աւազան մը կը հանդիպի, որ ըստ Ս. Գրոց վերին աւազան կամ վերի ճանապարհի Աւազան ըսուածն է. Գ. Թագ. ԺԸ. 17: Եւ Բ. Մնայ. ԼԲ. 30: Զորս կողմն Մահ մէտականաց գերեզմանատուն է. Գեհնի ձորին ծայրը կ'իյնայ, ուր Սադովկ մեծ Քահանայապետը և Նաթան մարգարէ Դաւթի հրամանաւ նորա որդին Սողոմոնը թագաւոր օծեցին:

Այս աւազանին մօտ Եսայի մարգարէն Աքազ թագաւորի ժամանակ

մարդարէանալով ըսաւ այն նշանաւոր
խօսքը թէ՛ « Ահա կոյս յղացի և ճնցի
որդի և կոչեսցեն զանուն նորա Էմմա-
նուէլոյ ։ Եսայի Է. 14. :

Սոյն աւազանին հիւսիսային գետ-
նին վրայ բանակեցաւ Ռափսակ՝ Սենե-
քերիմ թագաւորի մեծ սպարապետը ,
երբ Երուսաղեմին տիրելու եկաւ , եւ
չբէից պատգամ ղըկեց որ հնազանդին
Ասորեստանեայց թագաւորին , և Աս-
տուծոյ դէմ եւս արհամարհանօք խօ-
սեցաւ : Իարայելացիք իրենց Եզեկիա
թագաւորին հետ աղօթեցին ու ապաշ-
խարեցին , եւ Եսայի՝ աստուածակոյս
կողմանէ եկաւ թագաւորին մօտ և քա-
ջալերեց զինքը որ չ՛վախնայ , և ըսաւ
թէ՛ Ասորեստանցիք չքալիտի մանն են
բէք Երուսաղէմ : Հետեւեալ առաւօ-
տուն Ռափսակ ելաւ ու տեսաւ որ իւր
բանակէն 185,000 մարդիկ յանկարծաւ
մահ եղած են , ուստի մնացեալ զօր-
քերն ժողվելով անմիջապէս փախուստ
տուաւ . Դ. Թագ. ԺԸ . 17. - ԺԹ . 1-36 .
և Եսայ . ԼԶ . 2. - ԼԷ . 1-37 :

Այս աւագանէն շատ հեռու չէ Հերովդէս Ագրիպպասի Թաղուած տեղը, այն որ Յակովբոս առաքեալը սպաննել է և Պետրոս առաքեալը բանտարկել տուաւ, և ինքը Պաղեստինի Կեսարիոյ մէջ մեռաւ, երբ ժողովուրդը գինքն աստուածային պատուով կը գովաբանէր. Գործ. ԺԲ. 1-23. Աւագանէն 100 մեդր դէպ յարեւմուտք գերեզմանական գետնափոր մի կայ, ժայռի մէջ փորուած, որ յիշեալ Հերովդէսինը լինիլ կը կարծուի: Այս տեղը 1861 ին փորել տրուած ժամանակ, պատի մի երեսը գրուած գտնուեցաւ Հայերէն գրով Սարգիս վարդապետ, որ յայտնի ապացոյց մի է թէ՛ յառաջագոյն սոյն տեղը Հայոց ձեռքն էր: Նախանձոտ օտարազգիք գիշերանց երթալով եղծեցին գրերը: Գանիէլ Իդումենոս, ազգաւ Ռուս, երկոտասաներորդ դարուն սկիզբը ուխտի եկած ժամանակ սոյն տեղերն վանք մի տեսած է, ինչպէս կը գրէ իւր Պատմութեանը մէջ. նոյն պէս և միջին դարու մէջ Կրօնաւորաց

վանք մի ըլլալը Լատինք կը վկայեն իրենց վանուց Յիշատակարաններէն ուսանելով, եւ որովհետեւ կրօնաւորաց Հռովմէական ըլլալը չը խօսիր, ինչպէս; ուրիշ տեղեր եղածները կը յիշատակէ, վասն որոյ ամենայն հաւանութեամբ կը կարծուի որ յիշուած կրօնաւորք Հայ էին:

Վերոյիշեալ աւազանի արեւմտեան կողմէն 5-6 վայրկեան յառաջանալով կը հասնինք տեղ մի, ուր ճանապարհը երկուսի կը բաժնուի, աջ կողմինը բռնելով և 440 մեդր քալելով, դարձեալ ճանապարհը երկուսի կը բաժնուի: Աջ կողմինը թողլով, որ Յովհաննու Ծննդեան գիւղը կը տանի, ձախտկողմեան ճանապարհը 10-12 վայրկեան յառաջնալով Խալավանի կը հասնինք: Այս վանքը որ Վրաց էր, այժմ Յունաց ձեռքն է. միջին դարու ամրոցներու ձեւով շինուած է ձորին մէջ, որ վանքին անունովը Խալավանի յոր կը կոչուի, և տեղացիք Ուսպէլ-Մոսպլայէ կ'անուանեն: Եկեղեցին եօթներորդ դարուն Հերակլիոս կայսրը շինել տուած

է, այն տեղւոյն վրայ, ուր ըստ Յու-
նաց աւանդութեան՝ Քրիստոսի թաչա-
փայտին ծառն տնկուած էր: Ուրիշ տ-
ւելի հուանական աւանդութիւն մի
կ'ըսէ թէ՝ Հերակլ կայսրը Կենաց Փայտը
ետ դարձուցած ժամանակ՝ այս տեղ
Հանգիստ առած և թաչին վրայ լուսե-
ղէն կամար մի ծագած տեսած է, և ի
յիշատակ սոյն սքանչելեաց՝ եկեղեցին
կառուցած է (1): Աւագ խորանին տա-
կը տեղ մի ցոյց կուտան Յոյնք, որոյ
համար կ'ըսեն թէ՝ Մառը հոս տնկուած
էր: Եկեղեցւոյն շէնքը հին է, բոլոր
յատակը զարդարուած է ծաղկանկար
միւսիսններով, նոյնպէս պատերուն եւ
սիւններուն ծեփին վրայ բոլորը պատ-
կերներ նկարուած են եւ պատմական
հատուածներ ալ կան: Մոյն վանքին մէջ
Յոյնք վարժարան մը հաստատած են որ
քանիցս փակուելէ յետոյ վերջին ան-
գամ քանի մը տարի յառաջ վերաբա-
ցուեցաւ:

(1) Հաննէ Պատմ. Ս. Երևասողեմի. էրես 291:

Խաչավանքէն ելներով՝ 200 մեղ-
քաչափ դէպ ՚ի հիւսիս կ'երթանք ճա-
նապարհին վրայ ելնելու, որոյ ուղղու-
թիւնն է դէպ յարեւմուտք. Խաչա-
վանքի ձորն անցնելով 20 վայրկեանէն
(վանքէն սկսելով) սարահարթի մի վրայ
կ'եւնենք և յետոյ Ուսպիւղ-Մապիւնէ ըս-
ուած ձորը կ'իջնենք. Քառորդ ժամէ մը
յետոյ բլրի մի վրայ ելնելով գէշ ճանա-
պարհէ մի՝ և Ուսպիւղ-Պարուիէ, (Պե-
տէվիներու) ըսուած ձորէն անցնելով,
աջ կողմը կը հանդիպի Խէրլէր - Նահլէի
աւերակները :

Իբր տասն վայրկեան եւս յառաջ
երթալով՝ Ուսպ - Տխապ ձորին ծայրէն
կ'անցնինք, և աջակողմը բլրին ստորտար
Խէրլէր - այն - ձառու ըսուած գիւղին ա-
ւերակները կը տեսնուին : Բլրին վրայ
հասած ժամանակնիս արեւմուտքէն Մի-
ջերկրական ծովը և արեւելքէն Համ-
բարձման լեռը Ս. Երուսաղեմի մէկ մու-
սին հետ ՚ի միասին կը նշմարուին .

Աջ կողմը ձոր մի թողլով, ուր իջ-
նելու ճանապարհն ալ կ'երեւի, ձախ

կողմէն՝ քառորդ մի քալելէն յետոյ, Պէյլ-Իսիբ ըստւած գիւղի աւերակներ, բուն մօտէն կ'անցնինք:

Հոս քարուտ ճանապարհէ մի դարուվար իջնելէն յետոյ, իբր 17 վայրկեանէն Յովհաննոս Մննդեան գիւղը կը հասնինք: Միջին դարու Հայք Լեռնակողմ կ'անուանէին, իսկ տեղացիք՝ այն տեղ գտնուած աղբիւրին անուանովն: Այն՝ Քեարէճ կը կոչեն գիւղի անունն՝ որ կըրակ բլրի մի վրայ շինուած է: Աստ Լատինք վանք մի և եկեղեցի մի ունին:

Զաքարիա քահանայապետ իւր կընողը Եղիսաբեթին հետ աստ կը բնակէր, ուր ծնաւ և Յովհաննէս Մկրտիչ: Քրիստոնէութեան առաջին դարէն 'ի վեր եկեղեցի շինուած կար այս տեղ, Իանիէլ Իգումենոս Ռուսը 1113 Թուականին Քրիստոսի, Սուրբ Երուսաղէմ եկած ժամանակ տեսած է աստ վանքեր ու եկեղեցիներ: Այժմ Լատինաց ձեռքը եղած եկեղեցին՝ 1621 Թուականին ամայի վիճակի մէջ գտնուած ժամանակ ստաշած և սեփհականած են, և եկե-

ղեցին նորոգելով վանք մի եւս քովը շինած են : Եկեղեցւոյն աջակողմեան դասուն մէջ 7 աստիճանով վար փոքրիկ խորան մի կայ ժայռին մէջ փորուած ուր ծնաւ , կ'ըսեն , Յովհաննէս Մկրտիչ :

Լատինաց վանքէն ելնելով՝ աջա-կողմը եղած առաջին ուղին բռնելով և յետոյ ձախ կողմի առջի ճանապարհը շեղելով , երեք վայրկեանէն աղբիւրի մի կը հանդիպինք , որուն Արաբացիք Այն-Քէրի՛ (Աղբիւր շորեաց) կը կոչեն եւ տեղացի Քրիստոնեայք Ս. Աստուածածնի աղբիւր կ'անուանեն (¹) , լաւ ջուր մի ունի և գիւղի պարտէզներն ալ այս ջրով կը ջրեն : Յիշեալ աղբիւրին մօտ Մահ-մէտական գիւղացւոց աղօթարանն է , որոնք գիւղին մէջ 800 հոգւոյ չափ կան , իսկ Քրիստոնեայք հարիւրէն աւելի կը հաշուին :

Աղբիւրէն դէպ յարեւմուտք երթալով , եւ 100 մեդր քալելէն յետոյ

(¹) Հաննէ Վարդապետ առանց հաստատութեան կը գրէ՝ Թէ Յոյնք այս ջրին համար կ'ըսեն , սո՛ է Զուրի Փոյլուլեան :

մը կար Սուրբ Վիֆի սնուամբ ըստ Հայ յիշատակարանաց, որ բարեպաշտ Քրիստոնեայներէ յարգանք կ'ընդունի մինչեւ ցայսօր :

Եկեղեցւոյն մնացորդներէն դեռ կ'երեւին, նոյնպէս և վանքին, զոր եւ Հաննէ կը յիշատակէ, և կ'ըսէ որ կանգուն տեսնուած մնացորդ շէնքը գինետան մէկ մասն է . էր՝ 293 . Վանքը՝ եկեղեցիէն ելնելուն՝ ձախ դին կ'իյնար, և Հաննէի յիշած ջրհորը ներսի կողմը դրանը կից էր, որ մինչեւ ցայսօր դեռ կայ :

Ֆրանչիսկեան Լատին միսքանու-թիւնը 1861 Թուականէն 'ի վեր է իրեն սեփականած է սոյն վանքն ալ, որուն տեղը մաքրել տալով հին եկեղեցին գտած են այժմ : Ներս մտած ժամանակնիս աջակողմը խորշի մի մէջ Վիֆի մէկ կտորը կ'երեւի, որու մէջ պահուեցաւ Յովհաննէս Մկրտիչ օ Հիւսիսային դասի պատին մէջ Միգո-Ռեան ապանին տեղը դեռ կը տեսնուի, որոյ համար Լատինք՝ Հայկական եկեղեցւոյ շինուածքի ձե-

ւերուն տեղեակ չ'ըլլալով, չենք գիտեր, կ'ըսեն, ի՞նչ կընշանակէ այս մեծ-
կակ խորշը պատին վրայ, և անգիտարար
կըկարծեն թէ Ս. Յովհաննէս հոն թըլ-
փատուած ըլլայ :

Ս. Յովհաննու Մենդեան գիւղին
մէջ, Լատինք ունին ընդարձակ Մայ-
րապետանոց մը՝ որուն մէջ նաեւ դըպ-
րոց մը, սոյն մայրապետներն Երուսա-
ղեմայ մէջ գտնուած Սիօնի Կոյրերու մէկ
մասն են : Բուսք եւս վանք մի շինեցին
ընդարձակ և գեղեցիկ գիւղին արեւե-
լեան լեռան կողին վրայ :

Վերոյիշեալ Հայոց սւեբրակ վանքէն
դուրս ելնելով՝ ետ դառնալու է մին-
չեւ ճանապարհին վրայ, ուր տեղաց
դէպ յարեւմուտք շիտակ երթալով գա-
հավէժ ճամբու մի եղերքով, 20 վայր-
կեանէն յետոյ աջ կողմի վրայ Քալճէի
գիւղը կ'երեւի, որու առջեւէն կ'անց-
նին ուխտաւորք Երուսաղէմ եկած ժա-
մանակնին : Յետոյ քարակոյտ տեղ մի կը
հասնուի ճամբուն մօտ, որով ծածկը-
ւած է սոյն ժայռին մէկ մասը, որոյ վրայ

մըտակողմը Սարաֆ ըսուած պղտիկ գիւղը կը տեսնուի :

Յովհաննու Մննդեան, կամ Այն-Քեարի մէջ և անոր մերձակայքը գըտնուած ուխտատեղիքն ասոնք են զոր ստորագրեցինք :

Ասոնցմէ դուրս է Փիլիպպոսի աղբիւջը, ուր ուխտաւորաց սովորութիւն եղած չէ այցելելու, ըստ որում ո՛չ շէնք կայ եւ ո՛չ ալ ճանապարհի կողմանէ պատեհութիւն ունի հանդիպելու : Յովհաննու Մննդեան գիւղէն 1 1/2 ժամ կը տեւէ, ճանապարհը խիստ քարոտ ու դժուարակոխ է, Ոսպ-էլ-Հանիէ ըսուած ձորի մի, որ հին ժամանակ Երուսաղեմէն Պելլե-Փիպրիժ ու Գալա գնացի մեծ ճանապարհ էր. Գործք. Ը. 26. հարուային արեւմտեան եզերքը կ'իյնայ, լեռնադաշտակի ծայրը. զոր տեղացիք Այն-Հանիէ կը կոչեն. Զուրը հեռաւոր ակէ մի գետնափոր ճանապարհով կուգայ, եւ այս տեղ փոքրիկ աւազանի մի մէջ ժողովուելով, յետոյ դուրս կը թափի. աղբիւրը պղտիկ խո-

րանի ձեւով շինուած է։ Այս տեղ մկրտեց Փիլիպպոս առաքեալ Տիրոջ հրամանաւ Կանթակա Թագուհւոյն Եթովպացի ներքինին, որ Երուսաղէմ եկեր էր Աստուծոյ երկրպագութիւն ընելու, ու Գաղաթ կը դառնար կառքի մէջ նստած, և Եսայի մարգարէի գիրքը ձեռքը։ Փիլիպպոս տեսնելով նորա ջերմ հաւատքն ու ճշմարտութեան համար աւնեցած փափագը, թէ՛ նորա միտքը լուսաւորեց մարգարէին մութ խօսքերը պարզելով և թէ՛ մկրտութեան կնիքը տուաւ։ Գործք. Ը. 26-40 :

1859 ին Չմիւռնիացի Յովհաննէս Ս. Պատրիարքը գնեց սոյն աղբիւրին վըայի պարտէզը, և վերջին տարիներս նոյն պարտիզին կից այգիներ ևս գնուեցան, որոնք բոլորն ալ Հայոց սեփական ստացուածք են։

Աղբիւրին հարաւային արեւելլա կողմը այգիին մէջ երեք սիւներ կան, որոնք կը ցուցնեն թէ՛ հին ժամանակ եկեղեցիով մի պատուած են այս տեղը։

Սոյն աղբիւրէն ճանապարհ կայ

Քեթլեհէմ երթալու , բայց քարուտ
ու դժուար է :

Աստ կը լրանայ մեր Տաներորդ
այցելութիւնը :



ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ



Ի Յորդանան , 'ի Մեռեալ ծով ,
եւ այլն :

Յորդանանու ուղեւորութիւնը մեր
Ազգին մէջ բաւական ժամանակէ 'ի վեր
խափանուած է , թէ ճանապարհի դը-
ժուարութեանց համար , որ Գ ժամ կը
տեւէ , և թէ առաւելապէս մահաբեր
վտանգաց համար , որ ամեն տարի պա-
կաս չ'են , և մէկ կամ երկու անձինք
զոհ կ'երթան իրենց աւելորդապաշ-
տութեանը : Քողունք բարոյականու-
թեան դէմ եղած զեղծմունքները , որ
ճշմարիտ բարեպաշտ և պատուոյ տէր

մարդ մի երբէք չընդունիր՝ և ո՛չ ան-
գամ տեսնել : Յունաց ուխտաւորք ,
որ ամեն տարի սովորութիւն ունին
գնալու , արք և կանայք կը պարտաւո-
րին գետին մէջ լուացուելու և կրկին
մկրտուելու , այս պատճառաւ ալ բա-
ւական զոհեր եւս պակաս չ'են ըլլար
միշտ :

Ս. Աթուռս 'ի հին ժամանակաց սու-
վորութիւն ունի բաւական քանակու-
թեամբ Յորդանանու ջրէն բերել տա-
լով , բարեպաշտ ուխտաւորաց բաժնե-
լու : Մինչեւ անգամ Եւրոպացիք հե-
տերնին կը տանին , և անով մկրտութիւն
կ'ընեն , կամ մկրտութեան ջրոյն կը
խառնեն , որ խիստ մեծ յարգ ունի
քովերնին : Ինչպէս 1868 թուականին
Աւստրիոյ Ժողէֆ Վեհ. Կայսրը Յոր-
դանանու ջրէն սոյն նպատակին համար
խնդրած լինելով տեղւոյս Հիւպատո-
սէն , Եսայի Ս. Պատրիարքն Չինու պա-
տուական ամաններ շնորհած էր մէջը
դնելու համար , որոյ փոխարէն Վեհ.
Կայսրը իւր և իւր Կայսրուհւոյն կեն

դանազիր պատկերները յուզարկեց (1) :

Սոյն ճանապարհորդութիւնը, ինչպէս նաեւ յետագայ Երկոտասաներորդ և վերջին ճանապարհորդութիւնը Այցելութեանց կարգին մէջ դասաւորելու հիս ուրիշ նպատակ չունի, բայց միայն ստորագրել նոյն սահմաններուն մէջ գտնուած սուրբ Տեղիքը, ուր Յիսուսի Քրիստոսի փրկագործ Տնօրէնութեան խորհուրդները կատարեցան :

Յոպպէի դռնէն դուրս ելնելով, ան միջպէս ձախակողմեան ճանապարհէն՝ Գեկոնի ձորն աջ կողմը ձգելով և Միօն լեռան ստորոտովը յառաջ կ'երթանք, յետոյ աջակողմը Ալիդաճայի առջեւէն կ'անցնինք և իբր 15 վայրկեանէն Յօբայ-հորը (Աբբայ-հոր) կը հասնինք : Ասկէ Կեդրոնի հեղեղատը բռնելով, որոյ նախ ուղղութիւնն է դէպ 'ի հարաւային արեւելք, մէկ ժամ եւ 8 վայրկեանէն հանգիստ ճամբով Կեդրոնի ձախ եզեր

(1) Ի Միօն Ամուտեսք 1868 ամի Նոյեմբեր ամսոյ :

քին վրայ յառաջանալով՝ Երուսաղէմն մեր աչքէն աներեւոյթ կը լինի, և մէկ ժա- մէն յետոյ ճանապարհին վրայ աջակողմը հոր մը կը հանդիպի, որու մէջ միշտ ջուրը պակաս չէ։ Ութ վայրկեան եւս քալե- լով, ձախ դին ճանապարհին մօտ Ապիպիէ ըսուած վրանարնակ ժողովրդին գերեզ- մանատունն է, ուր Տէրվիչէ մը գերեզ- ման ալ կայ, որու ջերմեռանդ Արարս- ցիք ուխտի գնալով, ուղտի հնացեալ համետներ ու արօրներ, կիր, կտորտած խեցամաններ, վրանի կտորուանքներ և այլն, կը նուիրեն։ Եթէ վայրկեանէն՝ աջ կողմը կեդրոնի մէջէն անցուծ ուղին կը մտնենք, և ձախ կողմը նոյն հեղե- ղատին եզերքովը յառաջ կ'երթանք, որ 50 մեդրաչափ հեռուն՝ նոյն հեղեղատն օրինաւոր վիհ մը կը դառնայ երկու սե- պացեալ քարաժայռ պարիսպներու մէջ- տեղը փորուած, և ժայռին երեսը մազի նման ծակեր բացուած, որոնց մէջ հին ժա- մանակները ճգնաւորներ կը բնակէին։

Քսան վայրկեանէն Յունաց Հայր Սա- Բայի վանքը կը հասնինք, որ նկարագրա-

կան տեսք մի ունի: Քրիստոնէութեան առաջին դարերէն սկսեալ բազմաթիւ ճգնաւորներ կուգային այս տեղ բնակելու: Եւդոքսիա Թագուհին աշտարակ մի շինել տուած է վանքին հարաւակողմը, որ իւր անուամբը կը յիշուի, եւ եթէ ուխտաւոր կանայք պատահին, ասոր մէջ կը բնակեցնեն (եթէ գիշերը մնայու ըլլան): Դուռն այնչափ բարձր շինուած է, որ խիտ երկար սանդուխ մի պէտք է վեր ելնելու համար, թէեւ վարէն ալ դռներ կան գետնի հաւասար: Քիչ ժամանակ յետոյ Ս. Եւթիմիոսի աշակերտ Հայր Սաբայ իւր վարդապետին յաջորդելով սոյն վանքն շինեց:

Վանքին դուռը հասնելուն, կրօնաւորներէն մին, որ վանքին կից եղած հիւսիսային բարձր աշտարակին վերայ պահպանութիւն կ'ընէ, զամբիւղ մի վար կը կախէ, եւ անով կ'ընդունի Երուսաղէմի Յունաց պատրիարքի կողմէ տրուած յանձնարարական գիրը, առանց որոյ կարելի չէ որ ներս մտոր:

ընդունին : Թղթին վաւերական ըլլալը ստուգելէն յետոյ՝ նշան կուտայ , եւ անմիջապէս արտաքին երկաթի դուռը կը բացուի : Յիսուն ոտքով սանդուխ մի վար կ'իջեցնեն , վեր ելնելով երկրորդ երկաթի դռնէ մի անցնելէն յետոյ՝ ուրիշ աւելի կարճ սանդուխ մի կը կախեն , որով պզտիկ քարայատակ գաւթի մի մէջ կ'ելնուի : Այս տեղ փոքրիկ մատուռ մի կայ բոլորչի ձեւով , որու մէջ է Հայր Սաբայի պապանը : Անոր քով է Ս . Կիլոյոյի եկեղեցին ժայռի մէջ փորուած , խիստ հին աւուրց եկեղեցի է , և անոր մէջ ուրիշ փոքրիկ ճապարակ մի կայ , ուր ամփոփուած են Պարսից խոսրով թագաւորի զօրաց ձեռքով նահատակուած ճգնաւորներու մասունքները , եօթներորդ դարուն մէջ : Այն ժամանակներն սոյն վանքին մէջ 4000 կրօնաւոր կը ճգնէին , եւ շրջակայ սահմաններուն մէջ գտնուած բոլոր ճգնաւորաց թիւը 10,000 ի կը հասնէր , որոնք ամենքը Հայր Սաբայի վանքի վանահօր հրամանին տակն էին :

Վանքին եկեղեցւոյն շէնքը բաւական հին է, ոսկէզօծ խաչկաներով, եւ բիւզանդեան նկարներով զարդարուած :

Կրօնաւորք արձաւեի մի ցոյց կուտան և կ'ըսեն թէ՛ Հայր Սաբայի տնկածն է, որուն արմաւները կորիզ (կուտ) չ'ունին :

Յովհաննոս Դոմասիացոյն գերեզմանն ալ հոս է կ'ըսեն, որուն վրայ է իւր ճգնարանը: Անկէ կ'երթուի այր մի եւ փոքրիկ մատուռ մի միւսիննէ յատակով, ուր Հայր Սաբայ բնակած է կ'ըսեն, եւ Կեդրոնին վրայ կախուածի պէս շէնք մի է և Աւիճի այր կը կոչուի: Յոյնք կը պատմեն թէ, օր մի Հայր Սաբայ դուրս ելած ըլլալով, առիւծ մի կուգայ այրին մէջ պառկելու, ետ դառնալուն սուրբը, առիւծը կը տեսնէ, և Աստուծոյ ապաւինելով՝ իւր սովորութեան համաձայն ներս կը մտնէ եւ կը սկսի ժամերգութիւնն ընել. դեռ խօսքը բերանը քունը կուգայ՝ կը սկսի մրափել, առիւծը քովք կը մօտենայ, թեզանիքէն խաճնելով

կը քաջէ դուրս կը տանի . կ'արթննայ սուրբ ձգնաւորը , դարձեալ ներս կը մտնէ եւ կը շարունակէ իւր աղօթքը , դարձեալ մրափը կուգայ , և երկրորդ անգամ առիւծը զինքը քաշելով դուրս կը հանէ . այն ժամանակ խիստ ձայնով մի կը դառնայ կ'ըսէ առիւծին , միթէ քեզ եւ ինձ բաւական տեղ չկայ այս տեղ , և անկիւն մի ցոյց կուտայ կենդանւոյն որ հոն պառկի , առիւծն հնազանդելով՝ այն օրէն 'ի վեր սուրբ ձրգնաւորին հետ մէկ տեղ կը բնակի այրին մէջ : Յայսմաւուրքին մէջ կը յիշատակէ թէ՛ Ս . Յրասիմոս իւր խիստ սրբութեանը համար առիւծ մի իրեն կը սպասաւորէր , Յորդանանէն ջուր բերելով ⁽¹⁾ , այս սուրբին՞ վանքը քիչ մի վարը պիտի տեսնենք : Ժամանակաւոյն երեւելի վանուց մէջ Հայ միաբանք ևս կը բնակէին , ինչպէս կը վկայէ Հաննէ . եւ վանքին մէկ մասն ալ իրենց

(1) Յայմ . Ապրիլ 25 . Հաննէ , Պատմ . Սուրբ Երուսաղէմի , յեր . 278 :

ձեռքն էր մինչեւ յիշեալ Պատմագրին ժամանակ, բայց թէ որ ժամանակէն ՚ի վեր հեռացած են անկէ, յայտնի չէ : Գեռ մինչեւ ցայսօր ականատեսք կը վկայեն, թէ մեծ եկեղեցւոյ գմբէթին մէջ Հայերէն երկամթագիր գրուածներ կան, նսեւ Հայերէն ձեռագիր գրեսանք եւս գտնուած են հոն :

Հայր Սաբայի վանքէն ելնելով, եւ Երուսաղէմի ճանապարհը ետ դառնալով՝ Կեդրոնի եզերքը բռնած, մինչեւ աջ կողմի առաջին ճանապարհը՝ որ 20 վայրկեան կը տեւէ, Կեդրոնին միւս եզերքը կ'անցնուի : Քանի մի քայլ եւս առնելով, աջ կողմը ճամբուն վրայ Պիր-էլ-Սրապ կոչուած ջրամբարը կը հանդիպի, ասկէ անդին Պէպէվէներու սահմանն է : Բոլոր այս ճանապարհը ձորերու, հեղեղատներու մէջ, լեռներու ստորոտներուն ու գլուխներուն վրայ ըլլալուն խիստ յոգնեցնող են : Թէպէտ որուն ճանապարհները շատ են, այսու ամենայնիւ գլխաւոր ուղղութիւնն է դէպ յարեւելք, եւ ամենասոսկայի

անապատի մի մէջէ ալ կ'անցնուի :

Քառորդ մի եւս քալելէն յետոյ , բարձր տեղ մի կը հասնինք , ուսկէ կը տեսնուի Մեռեալ ծովը : 28 վայրկեան աւելի անդին ձախ թեւի վըսայ , ճանապարհին մօտ ջրամբար մի կայ Պիր-էլ-Աճառա անունով , որու մէջ երբեմն ջուր կը դանուի , բայց գոյնը ճերմըկեկ է :

Տասը վայրկեան եւս առաջ երթալով քարակոյտեր կը հանդիպին խորհրդով դիզած , որպէս զի Մահմէտականք իմանան որ այս տեղերն Նեպի-Մոսայի դիմաց կը գտնուին : Նեպի-Մոսայ , այսինքն Մովսէս մարգարէ ըսուածը , խիստ հին վանքերէն մին է , չորրորդ դարուն մէջ հիմնարկուած : Խոսքով թագաւորի զօրքերը սոյն վանքին ալ չ'ինայեցին : Ժամանակէ մը յետոյ Մահմէտական Արաբացիք համարելով թէ Մովսէս մարգարէ ասոր մէջ թաղուած է , տիրեցին անոր ե քիչ շատ փոփոխութիւններ ընելով Միւարէ մի եւս քովը կանգնեցին :

Մահմէտականք ամեն տարի սոյն

գերեզմանին ուխտի կ'երթան մեծ բազմութեամբ : Մաղկազարդի կիւրակէէն երկու օր առաջ՝ ուրբաթ օր , և կը վերադառնան մէկ շաբաթ վերջ . ուխտագնացութիւնն և վերադարձն շատ հանդիսաւոր կը լինի :

Կ'ըսուի թէ այս ուխտագնացութիւնը հաստատողն եղած է Էջյուղի որդի Սուլթանն Սալակբաշին . սա երբ կը տիրէ Երուսաղէմին , կը թոյլատրէ Քրիստոնէից անարգել կատարել Ս . Տեղեաց ուխտաւորութիւնը . սակայն տեսնելով Քրիստոնէից մեծ բազմութեամբ Երուսաղէմ ժողովուրդը , եւ կարծելով որ գուցէ այս միջոցաւ կարողանան խաչակիրք վերստին տիրել Երուսաղէմի և կամ առիթ տան Քրիստոնէից Երուսաղէմի բնակիչ Մահմէտականաց վրայ բռնանալու , Նեղի-Մասայի ուխտաւորութիւնը կը հաստատէ Ճիշդ Աւագ շաբթու մէջ , յորում ամեն կողմէն Քրիստոնեայք կը ժողովին յԵրուսաղէմ , որպէս զի Մահմէտականք եւս հաւաքուելով շրջակայներէն՝

կարենան պաշտպանել ինքրզինքնին Քրիստոնէից դէմ, եթէ պատահի Քրիստոնէից կողմէն այդպիսի բան մը :

Սոյն գերեզմանն, ինչպէս ըսինք, շատ փոփոխութիւններ կրած է և հետզհետէ նաեւ նորոգութիւններ եղած են և Պապոս-Սիւննիքէ կ'երեւի որ նորագոյներէն մին եղած է Սուլթան Տակեր Պիպրէս, երբ սա Հիճրէթի 668ին Մերսէէն կը վերադառնար Երուսաղեմի ճանապարհաւ. և ապա Գաթիպա Չերթեղ թագաւորը. այժմեան պարիսպն Սայտայի ընդհանուր կառավարիչ Ապա-Իւլլահ Փաշայն շինել տուած է կ'ըսուի :

Տասն և եօթը վայրկեանէն արագընթաց զառ'ի վայրէ մի վարիջներով ջրամբարի մի քով կը հասնինք Պիրթէթ-Հէլե Տէֆու անուն, որ ժայռի մէջ փորուած է, միշտ ջուր չ'գտնուիր մէջը, և ամառը վնասակար է : Յետոյ 18 վայրկեանէն ճանապարհն այնքան կը գէշնայ, որ հարկ կ'ըլլայ ոտքով քայելու. 17 վայրկեանէն աւելի անդին լայն ձորի մէջէ կ'անցնուի Վաթ-Թերապի անուն, կամ

ըստ այլոց Վապիւէս-Սարանի : Յետոյ էջ վայրկեանի չափ Լեպիա կոչուած պրզտիկ դաշտի մի մէջէ քալելով, ձախակողմը կը թողուի Երիքովի ճանապարհը եւ Վապիւէս-Քնէրի ձորը կ'իջնուի, որ մեծ հեղեղատ մի է, ուր անձրեւ եկած ժամանակ միայն ջուր կը գտնուի :

Ութ վայրկեան եւս յառաջ քալելով՝ զառ 'ի վայր մի կը հանդիպի, ուր խոհեմութիւն բանեցնել ուզողը պէտք է դարձեալ ոտքով անցնի, եթէ չուզեր որ գլուխը պատռուի : Այս տեղալ կը գտնուի այն ճերմակ քարերէն, որոնց մէջը սեւ է, գարշ հոտ մի ունի ու ածուխի նման կը վառի :

Քսան և հինգ վայրկեան եւս սոյն հեղեղատին մէջէն քալելէն յետոյ, աջ կողմը հանդիպած ճանապարհը կը շարունակենք ձորին եզերքովը, և երեք րոպէէն ուրիշ քարակոյտերու առջեւէ կ'անցնինք : Տասը րոպէէն ուրիշ ճամբայ մի եւս թող կուտանք ձախ թեւի վրայ՝ որ Երիւով կը տանի, և եօթը վայրկեան եւս քալելով Մեռալ ծովը դի-

մացնիս կը տեսնեմք , և ծովային հոտը սաստկապէս կը զարնէ մարդոյ քթին :

Իբր $\frac{1}{2}$ ժամ ծովեզերեայ նշաններ կրող՝ մերկ եւ աստ անդ անխացեալ ժայռեր ունեցող գետնէ մի անցնելէն յետոյ՝ Վափ-էփ-Տապար կը հասնինք , որ Պիճակներու ձոր ըսել է , եւ լայն հեղեղատ մի է Մեռեալ ծովուն կողմը՝ մացառներով լցուած : Ասկէ անդին գետինը շատ տեղեր աղային նիւթերէ գոյացեալ ճերմակ բիծերով ծածկուած է , որ գետնին երեսը կեղեւներ կը կապեն , ճանապարհին հետքը երբեմն աներեւոյթ կ'ըլլայ , և մացառներու եղէգնուտներուն , օշնանի և ուրիշ տունկերու թուփերուն մէջ կը մոլորի : Այս տեղուանքը , մանաւանդ Վափ-էփ-Տապարի մէջ որսորդները կը գտնեն տատրակ , կաքաւ , կարմրաթեւ , սարիկ (Փարա թաւուգ) , շնագայլ , վիկթ (Ղազալ) , նապաստակ՝ բայց քիչ , եւ ուրիշ կենդանիներ :

Իբր $\frac{1}{2}$ ժամ եւս աւելի հեռուն ալ կողմը Այն-էս-Սիպիը ըսուած առուա-

կին առջեւէն կ'անցնուի, որու ջուրը խմելու կուգայ, չորս դիէն եղէգով պատած է եւ մէջը մանրիկ ձկներ կը մնուցանէ։ Ասկէ մինչեւ Մեռեալ ծով 12 վայրկեան կը մնայ և թումբի մի վերայէ կ'անցնուի, որ է ծովուն և Մ'հէ լէփոյ ըսուած պզտիկ հեղեղատին մէջ տեղը։ Չմեռը անձրեւէներու ժամանակ յիշեալ թումբը ջրով կը ծածկուի, ու հեղեղատին ջուրը ծովուն հետ կը միանայ, վասն որոյ վտանգաւոր կ'ըլլայ անցնիլը։ Թումբին վրայէն անպակաս են փայտեր և մինչեւ անգամ ծառեր. զոր Մեռեալ ծովը Յորդանանէն ընդունելով՝ իւր եզերքներուն վրայ դուրս կը նետէ։ Պզտիկ կղզեակ մի կ'երեւի հոս Բեճօմ-Լոփ անուանով, որ Ղովտայ կոյտը կը նշանակէ, և շատ անգամ ջրով պատած կ'ըլլայ։ Կան շէնքի քարեր և հիմ մի՛ որ 7-8 մեդր երկայնութիւն և 2 մեդր լայնութիւն ունի։ Ծովեզերքէն 200 մեդր հեռու է։

ՄԵՌԵԱԼ ԾՈՎ։ Երուսաղեմի արեւելեակողմը՝ 10 մղոն հեռու է Մեռեալ

ծովը, Միջերկրականէն 392 մեդր և Երուսաղեմէն 1171 մեդր ցած է. երկու անհուն լեռանց շղթաներ կը պարփակին, Յուգայի լեռները արեւմուտքէն և Մովաբոյ լեռները արեւելքէն. վերջինին մէջ է՝ Մեռեալ ծովուն հիւսիսային ծայրին դիմացը, Նաբաւ լեռը, ուր մեռաւ Մովսէս տեսնելով նոյն տեղէն Խոստացեալ երկիրը. Բ. Օրի. ԼԴ. 1-12: Երեմիա մարգարէն հոն այրի մը մէջ ծածկեց Տաղաւարը, Կտակարանաց Տապանակն ու Խնկոց սեղանը, և դուռը ամրացուց. Բ. Մալ. Բ. 5:

Մեռեալ ծովը 20 մղոն երկայնութիւն եւ 4 մղոն միջին լայնութիւն եւ 340 մեդր խորութիւն սւնի:

Հին ժամանակ բարեբեր երկիր մի էր եւ Ձոր աղէ կը կոչուէր ըստ սուրբ Գրոց, եւ Յորդանանու ջրով ոռոգուելով Աստուածային դրախտ կը դառնար: Դովտ Աբրահամու քովէն զատուելով՝ հոս եկաւ բնակեցաւ: Հինգ քաղաք կը յիշատակուին այս տեղ, որ են՝ Սոդոմ, Գոմոր, Ադամայ, Սեբոյին

եւ Սեգովը, որոնք իւրաքանչիւրն առանձին Թագաւորներ ունէին : Քիչ ժամանակէ յետոյ ուզելով Աստուած այս քաղաքաց ժողովուրդը պատժել իրենց գործած չար մեղքերուն համար, որոնց մէջ և ոչ տասն արդար մարդիկ կային, Ղովտը միայն իւր կնոջն և երկու աղջկանց հետ դուրս հանելով Հրեշտակաց ձեռօք, յերկնից ծծումբ եւ կրակ մաղեց վրանին, և այրեց Սոգովն ու Գոմոր և շրջակայ միւս քաղաքները : Ծննդ. ԺԹ. 24 :

Երեք գետ կը հոսին Մեռեալ ծովուն մէջ. նախ՝ Յորդանան գետը, որոյ ջրերը առանց խառնուելու ծովու ջրին հետ, հիւսիսային կողմէն մտնելով՝ հարաւակողմէն դուրս կ'ելնեն : Երկրորդ՝ Կալէրոյէ գետը, որոյ ջուրը Մովաբայ լեռներէն բղխող հանքային տաք աղբիւրակներէ կը կազմուի : Ասոր մէջ մտնելով Հերովդէս Մեծն՝ փոխանակ առողջութիւն գտնելու, իւր մահը գլտաւ : Յովեպ. Ա. 21 : Երրորդ՝ Աւնոն գետը զոր տեղացիք Ուստի-էլ-Մոճիպ

կանուանեն, ուսկէ Խարայեւացիք ցամաք ուղքով անցան. Թի-դ. ԻԱ. 13:

Մեռեալ ծովուն ջրին խիստ աղի ըւլալն է անշուշտ պատճառ, որ մէջը ամենեւին կենդանի չը գտնուիր. ջուրը կաչուն է, բայց բիւրեղի նման պայծառ. հնար է մէջը լող գալ առանց վտանգի, և ծանրութիւնը չը թողուր որ մարմինը խիստ խոր իջնէ, այլ ջրին երեսը լաթի նման թեթեւ կը բռնէ, դուրս ելնելէն յետոյ հասարակ ջրով պէտք է լուացուիլ որ աղիութիւնը երթայ:

Մեռեալ ծովէն դէպ 'ի հիւսիսային արևելք 7 վայրկեան չոր գետնի մի վրայ քալելով, յետոյ 40 վայրկեանի չափ չոր մացառներու մէջէ, և յետոյ դարձեալ 45 վայրկեան դէպ 'ի հիւսիս չոր երկրի վրայէ անցնելով՝ պզտիկ ձորակի մի մօտ կը հասնուի, որ ձմեռը ճահիճ և ամառը կանաչութեամբ ծածկուած կ'ըլլայ: Արկու վայրկեան եւս քալելով Յորտաննի ափունքը կը հասնուի, և 8 վայրկեան եզերքը բռնած երթալով՝ մացառուտ տեղ մի կը հանդիպի, որոյ մէջէն անց-

նելով՝ 9 վայրկենին կը հասնինք այն տեղ, ուր Տէրն մեր Յիսուս Քրիստոս Յովհաննու Մկրտչի ձեռօք մկրտուեցաւ :

ՅՈՐԴԱՆԱՆ : Յորդանան գետին աւելունքը Լիբանան լեռներէն և յանուանէ յիշատակեալ՝ մեծ Հերմէն է . Տիրերական ծովէն անցնելով և քառասուն մը ղոնաչափ տեղ պտտելէն յետոյ Մեռեալ ծովուն մէջ կը թափի . իսկ ստ սրընթաց լինելուն, լողորդ մի որքան ալ վարպետ ըլլայ, վտանգի կը հանդիպի . ամենէն խոր տեղը 3 մեդր է, լայնութիւնը 50էն 70 մեդր : Յորդանանու բոլորտիքը երկրաւոր դրախտ մի է, ուր գարունը տարին տասուերկու ամիս կը տիրէ, ոչ կանաչեղէնք կը պակսին և ոչ թռչունները օտար երկիրներ կը հեռանան :

Աւանդութեամբ կ'ըսուի թէ Իսրայելացիք գետոյն այս տեղը հասնելով, ցամաք ոտքով այս կողմի եզերքն անցան . Յեառ . Դ . 16 , 17 : Յետու Իսրայելի ժողովրդոց հրամայեց որ նոյն տեղէն 12 քար վերցնեն տանին , զորոնք

յետոյ իւր բանակին մէջ դնել տուաւ՝
 ՚ի յիշատակ այն սքանչելեաց, որոնց ա-
 կանատես եղան, այսինքն Յորդանանոս
 ջրոյն երկուսի բաժնուելով այնքան
 բազմութեան ցամաք ոտքով անցնե-
 լուն. Յեռ. Դ. 3:

Այս տեղս դարձեալ Եղիայ մար-
 գարէ իւր վերարկուովը ջրին զարկաւ՝
 ցամաք ոտքով իւր աշակերտին Եղիսէ-
 ին հետ անցաւ միւս կողմը. Դ. Քափ.
 Բ. 8: Աստ մկրտեցաւ Քրիստոս, եւ
 հաւանական է որ այս տեղէն անցաւ
 միւս կողմը Յովհաննու առջի մկրտած
 տեղը. Յովհ. Ժ. 40:

Քրիստոնէութեան առջի դարերուն
 անապատասէր ճգնաւորներ բազմու-
 թեամբ կուգային Յորդանանոս եզերքները
 բնակելու: Քրիստոսի Տեառն մերոյ
 մկրտուած տեղը գետին մէջ խաչ մի
 տնկուած կար չորրորդ դարուն մէջ, և
 գետին եզերքը երկու կողմէն մարմար-
 եայ քարերով ծածկուած էին:

Այս տեղւոյն դիմացը միւս եզեր-
 քին վրայ Մարիամ Եգիպտային խըս-

տակրօն կենօք 33 տարի ապաշխարելէն յետոյ՝ վախճանեցաւ և Զոփիոսի ձեռօք հոս թաղուեցաւ :

Յորդանանէն ետ դառնալով մինչեւ այն ճանապարհը, որ Մեոփալ ծով կը տանի, ձեռք կ'առնումք այն շաւիղը որ յարեւմուտք կ'առաջնորդէ քիչ մի դէպ 'ի հիւսիս մօտելով :

Մացառուտ տեղէն դուրս ելնելուն՝ աջ ու ձախ դին մանր մունր բրլբրակներ կ'երեւին կանոնաւոր ձեւերով, որ կարծես թէ մարդոյ ձեռքով չբաղուած են : Գետէն 15 վայրկեան հեռաւ նալով, չոր գետնի մի վրայ կը գտնենք զմեզ, եւ աջակողմը հիւսիսային արեւելք նայելով ճանապարհէն՝ 2 հազարամեդր ներս աւերակ վանք մի կը տեսնուի, զոր Արաբացիք Քար-էլ-Եսկոս կ'անուանեն : Այս վանքն յանուն Ս. Յովհաննու Մկրտչի կառուցեալ է, զոր Հաննէ եւս կը յիշատակէ . էրեւ 276 :

Նակր-էլ-Քէլք ըստուած հեղեղատը կը հասնինք 47 վայրկեանէն, որու եզերքները կանաչութեամբ զարդարուած

են տեղ տեղ ծաղիկներով : Այս հեղեղատը Չոր Արուլայ կոչուած է Ս . Գրոց մէջ . Յետո՛ւ է . 24 :

Ասոր մօտ է Գաղգալա . ձախակողմեան եզերքին վրայ փոքրիկ բլուր մի է , և տեղացիք Թէլճըլճու կը կոչեն : Իսրայելացիք Խոստացեալ երկիրը ոտք կոխելուն առաջին կայանն ըրին Գաղգալան , ուր Յետու 12 քարերովը խորան մի կանգնեց : Չորրորդ դարուն սոյն քարերը այս տեղ կրկենային դեռ , և եօթներորդ դարուն մէջ եւս տեսնող կայ եկեղեցւոյ մի մէջ դրուած , որ Միքայէլ հրեշտակապետի անուանը նուիրուած էր : Այժմ քարերէ 'ի զատ բան չ'տեսնուիր , և տեղ տեղ միւսիոնով չենուած յատակներու աւերակներ կ'երեւին :

Հարաւային կողմը , մէկ մղոն հեռի Տէյր-էլ-Հաճլայ կոչուած հին վանքի մի աւերակներ կան յանուն Ս . Երասիմոսի : Վեշտասաներորդ դարուն մէջ դեռ կանգուն կը կենար և Յոյն կրօնաւորներ կը բնակէին : Անկէ յետոյ շատ ժամանակ

չէ տեւած՝ աւրուեր է, և հիմակ մէկ մաս մի միայն կանգուն կը կենայ, որովայն նկարներ կ'երեւին:

Կէս ժամէն Երէրով կը հասնինք, որ Բենիամինի ցեղին քաղաքներէն մին էր:

Սոյն քաղաքը Յեսու Քանանացիներէն առաւ, փողերու ձայնով պարիսպները կործանելով, և Ռախաբէն ՚ի զատ բոլոր բնակիչները սրէ անցուց: Ինքը Յեսու անէծք դրաւ առաջի Աստուծոյ այն մարդոյն, որ կրկին շինելու լինի: Երէր. 2. 26:

Մեծն Հերովդէս ձի վազցնելու աւ պարէզ, ամփիթէատրոն և աշտարակ մի շինել տուաւ. հոս խեղդել տուաւ իւր Արիստաբուլոս որդին, որ Մակաբայեցւոց վերջին շառաւիղն էր մօրը կողմանէ: Երէրովի մէջ դարձեալ բանտարկել տուաւ իւր մեծամեծները, որ ինքը մեռնելէն յետոյ, ըստ որում գէշ հիւանդացած էր, զանոնք բոլոր սպաննեն, որպէս զի համաշխարհական սուգ մի ըլլայ իւր մահուան օրը:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս գիշեր մի

կեցաւ Երէիւի մէջ :

Զարեի րանը պեղը, ուր յետոյ եկեղեցի շինուեցաւ, կը կարծուի թէ ալլաբալին մօտ եղած ըլլայ, ուր հիմայ անկանոն զօրք կը կենան պահպանութեան համար : Վեսպասիանոս ամրոցներ շինեց հոս և պահպաններ դրաւ . Յովն . Պար . պարտ . Դ . 28 . և Երուսաղեմի պաշարման միջոցին Երիբով կործանեցաւ 70 թուոյն Քրիստոսի : Ատրիանոս կրկին շինեց եւ Քրիստոնէից քաղաք եղաւ : Երիբովի եպիսկոպոսներէն գտնուած են Նիկիոյ , Կոստանդնուպօլսոյ , Լիւդի ժողովներուն մէջ , և Գրիգոր անուամբ եպիսկոպոս մի եւս Երուսաղեմի Ժողովքին մէջ գտնուէր է Անիիմօր նզովելու համար : Յուստինիանոս կայսրը եկեղեցի մի և հոգետուն մի շինել տրւած էր ուխտաւորաց համար : Երիբով հետզհետէ զանազան տիրապետութեանց ենթարկուելով կորսնցուց իւր առջի վիճակը և այժմ հազիւ 250 բնակիչ ունի :

Սոյն քաղաքը հին ժամանակ Արճա

-ինկայ քաղաք եւս կը կոչուէր . հողը
 խիստ բարեբեր է , ժամանակաւ խիստ
 շատ բալասանի ծառ կը գտնուէր :
 Կլիմայն մեղմ ու բարեխառն է , ջուրն
 առատ . եթէ լաւ մշակուելու լինի ,
 զարմանալի արդիւնք կուտայ , կրնայ
 լաւ բրինձ , բրքում (զաֆրան) , լեղակ
 (չիվիտ) , շաքարեղէնք և թթենիներ յա-
 ռաջ բերել , նոյնպէս վուշ (քէթէն) ,
 կանեփ (քէնտիր) եւ ուրիշ շատ տե-
 սակ բերքեր :

Երկքովի բոլորոիքը մացառուտ է
 և փշաբեր թուփերով լեցուն , և երկու
 տեսակ պտուղ կը բերեն մին Տո՛
 ուսծը , որ մանր կեռասի նման պտուղ
 մ' է՝ դեղին գունով և անհամ ճաշա-
 կաւ , երկրորդն Զըբիո-թի ծառը , որու
 պտուղը ձիթապտղի կը նմանի եւ քիչ
 միս կայ վրան : Կորիզին մէջէն դեղինի
 վըայ ճերմակ իւղ մի կ'ելնէ , որ սրի վէր-
 քերու օգտակար կը համարուի :

Իէպ ՚ի հիւսիսային արեւմուտք
 գնալով Տոթի եւ Զըբիո-թի թուփերուն
 մէջի ոլորուն ճանապարհէն . 28 վար-

կեանէն Այն-էլ-Սուլթան ըսուած ակը կը հասնինք, այն է Հաննէին Ելէսի աչ Բիւր կոչածը, երես 276, ըստ որում ջուրը յառաջագոյն գէշ ըլլալով, յիշեալ մարգարէն աղօթքով լաւացուց. Գ. Թագ. Բ. 19. այս պատճառաւ յւր անուամբը կը յիշուի :

Ասկէ 20 վարկեան հերի, դէպ ՚ի հիւսիսային արեւմտակողմն է Փորշու-Ռեան լեռը. ճանապարհին վրայ երկու երեք տեղ շինութեան աւերակներ և ջաղացքի ահագին քարեր կը տեսնուին, որ կ'երեւի թէ շաքարեղէգի ջաղացքի են, ըստ որում մինչեւ տասն և չորրորդ դար շաքարեղէգի մշակութիւն կ'ըլլար այս կողմերն : Փորձութեան լեռն այն է՝ ուր Տէրն մեր Յիսուս Քրիստոս քառասուն օր և քառասուն գիշեր միաց ծոմապահութեամբ, եւ յետոյ սկսաւ սատանան զինքը փորձել : Լերանը վրայ շատ տեղ ծակեր ու խորշեր կան, ուր ճգնաւորք կը բնակէին հին ժամանակները : Ասոնց մէջ մէկ հատ մի կայ լեռանը արեւմտեան կողմը, ձուածել

դռնով, այն է՝ ուր ըստ աւանդութեան կեցաւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս :

Ետ դառնալով մինչեւ այն տեղ ուր ճանապարհը դէպ ՚ի վար կ'իջնէ, կրնայ մարդ ասկէ կէս ժամու մէջ Փորձութեան լերան գլուխն ելնել, ուր ըստ աւանդութեան սատանան փորձելով զՓրկիչն մեր՝ աշխարհիս բոլոր թագաւորութիւնները նորա ցոյց տուաւ : Քրիստոնէութեան առջի դարերուն մէջ պզտիկ եկեղեցի մը շինուած կար այս տեղ, որու խորանին մէկ մասը դեռ կը կենայ :

Փշալից անտառին մէջտեղէն դէպ ՚ի հարաւային արեւմուտք յառաջ երթալով, (Փորձութեան լեռը աջ կողմը թողլով), 7 վարկեանէն փոքրիկ բլուր մի կը հասնինք Թէլէլ-Սադադ անուն, որ կարծես թէ մարդոյ ձեռք շինուած է . իբր 20 վարկեան եւս քալելով՝ Նադ-էլ-Քէլք կը հասնինք, ուսկէ անցանք Երուսաղեմէն Երիբով եկած ժամանակնիս . Այս տեղէն ջուր մի կ'անցնի, որու վրայ ժամանակաւ կամուրջ մը կայ

եղեր, ինչպէս աւերակները ցոյց կը տան, նաեւ ճանապարհին վրայ տեղ տեղ հին շէնքերու մնացորդներ կան լերան ստորոտը, որոնք Խրդէր-էլ-Քարուն կը կոչուին։ Այս տեղւոյն համար կ'ըսէ աւանդութիւնը, թէ Փրկիչն մեր Յիսուս կոյրին աչքը բացաւ Երիբովէն ետ դառնալու ժամանակ։ Մարի. Ժ. 46-52։

Նահր-էլ-Քէլքէն մեկնելով դէպ յարեւմուտք 10 վայրկեանէն գէշ ճանապարհաւ մի կուգանք Ապար-էլ-Րիէլա, ձախ կողմերնիս թողլով Պէյր-էլ-Տապպոր կոչուած ժայռի մի վրայի փոքրիկ շէնքը։ Անկէ 25 վայրկեանէն դժուար ճանապարհներէ քալելով՝ աջ կողմերնիս ջրամբար մի կը հանդիպի Խան-Իպն-Տապպոր անուն, ուր միայն ձմեռը ջուր կը գտնուի։ Տասը վայրկեան եւս քալելով ջրանցքի մի քովերէն, աջ կողմերնիս ճանապարհէն 70 մեղր ներս կ'ի վանք մի կայ, ուր ժամանակաւ անապատական մի կը բնակէր Յովհաննէս անուն՝ մականուանեալ Խովիլի։ Յետոյ Նահր-էլ-Քէլքէլ աջ կողմը թողլով ձա-

խակողմը Ուստի-էլ-Քրադ հեղեղատին ուղղութեամբ յառաջ գնալու է միշտ մեծ ճանապարհը բռնելով։ Վերջապէս հեղեղատին մէջ կ'իջնուի, եւ $\frac{1}{2}$ ժամու չափ քայլելէն յետոյ դուրս կ'ելնենք գէշ դարու վերէ մի, ասկէ անդին ձախ կողմը կ'իյնայ վափ-Րոմանի ձորը։ 40 վարկեանէն խանդէլ Աւար, և 20 վարկեանէն՝ դէպ 'ի հիւսիս դառնալով խան-էլ-Արրուր կը հասնինք։ Այս տեղն կ'երեւի թէ հին ժամանակներէն 'ի վեր իջեւանելու համար տեղ չի ուսած կար։ Նոյն տեղւոյն վրայ Իպրահիմ փաշայն եւս խոսն մի շինել տուած է, որ այժմ աւերակ է, դեռ մինչեւ ցայսօր ջրամբարները կը կենան։ Հիւսիսային արեւելակողմը բլրին վրայ լաւ ամրոց մի կայ, խրամներով շրջապատուած, ուր կ'երեւին աղեղնաձեւ և ձուաձեւ կամարներ։

Դէպ յարեւմուտք մեծ ճանապարհի վրայ գնալով, և մօտ $\frac{1}{2}$ ժամ դաշտի մի մէջէ անցնելով, ուր տեղ Իպրահիմ փաշայն Պեփեւիներու դէմ յաղ-

Թուօթիւն մի տարաւ , պզտիկ բլուր մի կ'երնենք , և յետոյ աստիճաններէ վար վափ-Սիփր ըսուած ձորին մէջ կ'իջնենք , իբր 10 վարկեան եւս յետոյ ուրիշ ձոր մի կ'իջնենք վափ-Քեդ-էլ-Սէճ անուն , ասկէ ալ անդին իբր 1/2 ժամ գնալով՝ ձախ կողմը հեղեղատ մի և Նեպի-Մոսայ գնալի շաւիղը թողլով , վափ-էլ-Հա-տոփ ձորը բռնած կ'երթանք , որու ծայրը՝ մէկ ժամէն յետոյ՝ կը հասնինք Առաքելոյ աղբիւրը , զոր տեղացիք Պիր-էլ-Հա-տոփ , (մնուրի հոր) կ'անուանեն , զոր Հաննէ կարծած է , թէ այս է Մոսայ աղբիւր ըսուած Սամիսոնի աղբիւրը . Դաս . ԺԵ . 15-19 : Հոս ալ իջեւանի մի աւերակ մնացորդներ կը տեսնուին :

Առաքելոյ աղբիւրէն մէկնելով , քարոտ ճանապարհներով , 18 վարկեան յետոյ ձախ կողմին վրայ ջրամբար մի կը տեսնուի քիչ մի ներսով , Պիր-էլ-Այիփ անուն : Հինգ վայրկեան եւս քայլելով՝ լեռնադաշտի մի վրայ կ'երնենք , ուսկէ արեւմտեան կողմը Բեթանիա գիւղը՝ և հարսուակողմը Ապոփի կոչուած գիւղը

կերեւի . Ապուտիսը հին Բաւուրիմ քաղաքը կը կարծուի . Սեմէիի հայրենիքը , որ Արիսողոմայ երեսէն Գաւիթ փախչելու ժամանակը անիծեց զինքը . Բ . Թագ . ԺԶ . Ե . Ասկէ ալ Ե վայրկեան յառաջ գնալով կը հանդիպինք այն տափարակ Քարաժայռին , որու վրայ Քրիստոս նստած ժամանակը Մարթա եկաւ ու քուս իրեն . « Տէր՝ եթէ հոս եղած ըլլայիր , եղբայրս չ'էր մեռներ » : Սոյն տեղոյն Ուխտը արդէն մեր Եօթներորդայցելութեան մէջ կատարեցինք , և սոյն տեղուանքը մինչեւ Ղազարոսի գերեզմանը և անկէ մինչեւ Համբարձում և Գէթսեմանիի ձորէն անցնելով , մինչեւ յԵրուսաղէմ գալու ճանապարհը բարեպաշտ Ուխտաւորք արդէն սորված են . աստանօր մեր Մետասաներորդայցելութիւնն չը լրացուցած կուզենք Քեբրոնի եւ Ղալէի վրայ եւս համառօտ քանի մը տեղեկութիւններ տալ բարեպաշտ ուխտաւորաց :

ՔԻՆՐՈՆ . Քեբրոն քաղաքն Երուսաղէմի արեւմտեան հարաւակողմն կ'իյնայ

և ութ ժամու չափ հեռու է, որուն Մահմէտականք Խալէլ-Բահան (բարեկամ Աստուծոյ) կը կոչեն, եւ մենք՝ Հայր Աբրահամ:

Այս քաղաքն յառաջագոյն կարիախ-Արքա (Աբբայի քաղաք) կը կոչուէր, որ մեր Աստուածաշունչին, Ծնն. ԻԳ. 2. Յես. ԺԳ. 15. եւ ԺԵ. 13. գլուխներուն մէջ Արքոյ, իսկ Դաք. Ա. 10, գլխուն մէջ կարիախ-Արքոյ սեփեր գրուած է. և Եգիպտոսի Տայանիս քաղաքէն եօթը տարի առաջ շինուած է. կ'ըսէ Ս. Գիրքը. Թոոոյ. ԺԳ. 23:

Թէեւ Եոր կտակարանի մէջ այս քաղաքին անուան յիշատակութիւնը չըկայ, սակայն Հին կտակարանին մէջ շատ տեղեր յիշուած է երեւելի դէպքերով, և այս պատճառաւ Հրէից ազգին քով Ս. Երուսաղեմէն յետոյ մեծ ուխտատեղի համարուած է:

Աբրահամ խառանքն Քանանու երկիրը գալուն, նախ Բեթէլէ և Գայիի մէջ տեղերը իր վրանը հաստատելով բնակեցաւ, եւ ապա եկաւ ՚ի Բեթըն, ուր

Մամբրէի կաղնիներուն մէջ իւր վրանը հաստատելով սեղան շինեց Տիրօջը .
 Ծննդ. ԺԳ. 18. ուր Տէրը երեւելով Աբրահամին երկու Հրեշտակաց հետ հիւր եղաւ անոր. Ծննդ. ԺԸ. 1 :

Նախ Աբրահամու կինն Սառա, ապա Աբրահամ և ապա Իսահակ, աստ մեռան և աստ թաղուեցան Մամբրէի կաղնւոյն դիմացը ՚ի Կրիին այրն (Մաքսիէլայի այր) զոր Աբրահամ ծախու առած էր Քետացի Սահառի որդի Եփրոնէն, Սառայի մահուան ժամանակ. Ծննդ. ԻԳ. 9. և ԼԵ. 29 : Ռեբեկայ և Լիա եւս այս այրին մէջ թաղուեցան :

Յակովբ նահապետ ալ երբ մեռաւ Նգիպտոս, մարմինն հոս բերին տղայքը և թաղեցին այս այրին մէջ. Ծնն. ԼԷ. 29 : Եւ որքան Յովսէփ կենդանի էր՝ իր եղբայրներէն ով ոք մեռնէր Նգիպտոսի մէջ, հոս կը ղրկէր և թաղել կուտար դարձեալ նոյն այրին մէջ :

Մովսէս Մարգարէի կողմէն այդ կողմի բնակչաց որքանութիւնն և քաղաքաց որպիսութիւնն հասկնալու հա-

մար զըկուած 12 լրտեաներն այս տեղի ձորէն խաղողի ողկոյզ մի կտրեցին ուռովը մէկ տեղ, և երկու հոգի լծակով վերցնելով՝ տարին Խարայելի ժողովըոց ցուցնելու եւ տեղւոյն բարեբերու թիւնը հասկցնելու համար. Թոոց ԺԳ. 24 .

Սաւուղ Թագաւորը մեռնելէն զկնի՝ Գաւիթ հոս գալով՝ միայն Յուդայի տանը վրայ Թագաւորեց եօթը տարի և վեց ամիս . Բ . Թագ . Բ . 3-11 : Եւ ապա բոլոր Խարայելի վրայ Թագաւոր եղաւ աստ և եկաւ յԵրուսաղէմ բնակեցաւ :

Մարիկայի այրին վրայ այժմ մեծ մրգկիթ մը կայ շինուած՝ Մահմէտականաց ձեռք , ուր մտնել արգելուած է ոչ-Մահմէտականաց . բուն Մզկիթը չորս սիւներու վրայ կառուցուած է . Սաուայի գերեզմանը ձախակողմեան առաջին սեան մօտ է , և անոր դիմացը՝ աջակողմեան առաջին սեան մօտ Աբրահամու գերեզմանն է . աջակողմեան երկրորդ սեան մօտ է Խասհակայ գե-

րեզմանն , և անոր դիմացը՝ ձախակողմեան սեան մօտ Ռեբեկայի գերեզմանն է :

Յակովբ նահապետի գերեզմանն գաւթի աջակողմեան սեան մօտն է , և ասոր դիմացը՝ ձախակողմեան սեան մօտ է Լիայի գերեզմանն :

Իսկ Մամբրէի Կաղնիի ծառն մինչեւ ցայսօր կ'երեւի , քաղաքէն դուրս կէս ժամ հեռաւորութեամբ , որոյ բուն արմատն գրեթէ եօթն գրկաչափ հաստութիւն ունի :

Հոս պատուական առատ խաղող կ'ըլլայ , եւ զանազան մրգեղէնք . վերջերս տեղական Կառավարութիւնն կառուղի (Շօէ) մը շինեց Երուսաղեմէն մինչ Հայր Աբրահամ :

ՂԱԶԶԷ : Գաղա՝ որ է Ղազէ , Գերոնէն մի եւ կէս օրուան ճանապարհ է , նոյնչափ ճանապարհ է նաեւ Երուսաղեմէն : Այս քաղաքին մէջ է Սամփատնի տունը . Դապ . ԺԶ . 1-31 : Եւ հոս է նաեւ Իլարիոնի տան տեղը . Յայմ . Հոկիմ . 21 : Այս տեղը վանք էր մեր

Ազգին սեփհական, որու Եկեղեցին յանուն սրբոց Հրեշտակապետաց Գարբրիէլի և Միքայէլի էր, և ունէր բաւական խցեր, պարտէզ մը ծառերով. Թէ վանքն եւ Թէ Եկեղեցին Հաննէ վարդապետին ժամանակը դեռ շէն էին. Հաննէ երես 290. բայց այժմ աւերակ է:

Ժամանակաւ մեր ուխտաւորք մեծ բազմութեամբ Երուսաղեմէն Սինէական լեռն գացած եւ վերադարձած ժամանակնին անցուդարձն այս քաղաքէն կ'ընէին:

Արդ՝ աստ լրացնելով մեր մետասաներորդ այցելութիւնն, կը սկսինք երկոտասաներորդ եւ վերջին այցելութեան:



ԵՐԿՈՏՈՍՍԱՆԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ի Նազարէք , 'ի Սամարիա ,
 Եւ այլն :

Սոյն ճանապարհորդութիւնն պատահական է , եւ առաւել անոնց կը հարկաւորի որոնք ցամաքի ճանապարհաւ կ'ընեն իրենց ուղեւորութիւնը . բայց որպէս զի Սրբազան Տեղեաց վրայ , ուր Քրիստոսի Տեառն մերոյ տնօրինական Խորհուրդներն ու սքանչելիքները կատարեցան , կատարեալ ստորագրութիւն մի տանք , զանց չեմք առներ բարեպաշտ Ուխտաւորաց հետաքրքրութիւն լեցնելու համար հեռաւոր տեղեաց վրայօք եւս տեղեկութիւններ տալ , անոնց արդի վիճակը նկարագրելով :

Երուսաղեմէն մինչեւ 'ի Նազարէթ , Սամարիայէն անցնելով երեսուն մղոն տեղ է , եւ երեք օրէն կրնայ մարդ երթալ :

Յոպպէի դռնէն ելնելով, դէպ 'ի հիւսիս գնալի ճամբան բռնելու է, այն որ կը տանի Քաղաւսրաց գերեզմանները, եւ անմիջապէս արքունի մեծ ճանապարհը կ'ելնենք եւ Յովնափոխո յորին մէջէն անցնելով բարձրկէկ սեղմի կը հասնինք, ուսկէ կ'երեւի Սոպա (Մովզիմ), Նեպի Սափուէլ (հին Արիմաթիմ-Սեփա) գիւղերը, եւ 20 վայրկեանէն կը գտնեմք զմեզ Արոպոս լէրան վրայ, ուր տեղ Յարբոս մեծ քահանայապետը, իւր քահանայապետական զգեստները հագած Աղեքսանդր Մեծին դիմացն ելլաւ բազմութեամբ, որ Տիրոս ու Գալլա քաղաքներն առնելէն յետոյ՝ սուրբ Քաղաքին եւս տիրելու կուգար: Աղեքսանդր պատկառելով մեծ Քահանայապետէն, որուն կերպարանքը իւր երազին մէջ տեսած էր, ինկաւ խոնարհեցաւ Աստուծոյ անուան դիմացն, որ անոր թագին վրայ գրուածն էր, եւ սուրբ Քաղաքն եւս մտնելով՝ զոհ մատոյց Տաճարին մէջ:

Ասկէ 20 վայրկեան կը տեւէ թիւշ

Էլ-Սօմ բլուրը, որ հին Գաբաա քաղաքին տեղն է, ուսկէ էր Սաւուղօ ասկէ եւս մինչեւ Պէյր-Հանինա. որ Սօ Գրոց Անինաս ըսած քաղաքը կը կարծուի, 20 վայր-հեան է. արեւմտեան կողմը բլուրի մի վրայ Էլ-ժիպ, հին Գաբաաոն քաղաքը կ'երեւի, ուր Յեսու արեգակը կասեցուց իւր ընթացքէն. Յեսու-Ժ. 12:

Քառորդ ժամէ քիչ մի աւելի երթալով գետինը պառկած կորէկի ձեւով արջան մի կը տեսնուի աւրուած գրերով. Ճանապարհին վրայ կը հանդիպի նաեւ Էլ-Պիրի գիւղը, որ է Բէէրովթ քաղաքը, զոր Մահմէտականք Չէլեօլէ կը կոչեն, ուր ըստ աւանդութեան Լատինաց, աւանաստուրք կոչան Հայր Յովսեփայ հետ մինչեւ հոս գալէն յետոյ՝ տեսան որ մանուկն Յիսուս հետերնին չէր, և ետ դառնալով Տաճարին մէջ գտան զինքը, որ Բապպիներուն հետ նստած հարցմունքներ կ'ընէր. Ղուկ. Բ. 41-51: Սոյն տեղւոյն վրայ հին ժամանակները եկեղեցի կար, որու մեծ մասը դեռ չանգուն կը կենայ:

Ասկէ դէպ 'ի հիւտիս ճանապարհը
բռնելով , իբր 2/3 ժամէն կը հասնինք
Բէթէլ (Տուն Աստուծոյ) եւ որ առաջ
Լուզ կ'անուանէր , սոյն քաղաքը այժմ
Պէյէրթին կը կոչուի , Աբրահամ սոյն տեղը
եկած ժամանակ բաժնուեցաւ Ղովտէն .
Ծննդ . ԺԳ . 3-11 : Աստ տեսաւ Յակովբ
իւր տեսլեան մէջ երկրէն մինչեւ եր-
կինք սանդուխ բարձրացած . Ծննդ . ԻԼ .
10-12 : Աստ մեռաւ ու թաղուեցաւ
Դեբորա Ռեբեկայի սնուցիչը , և Յակովբ
ետ դառնալուն Միջագետէն՝ Աստուծոյ
խորան կանգնեց . Ծննդ . ԼԵ . 1-18 : Եւ
ուրիշ շատ դէպքերով նշանաւոր եղած
էր սոյն քաղաքն : Հին եկեղեցւոյ շէն-
քեր կը տեսնուին տակաւին : Արեւե-
լակողմը եւս կ'երեւի երեւելի շէնքի
մի աւերակներ , որուն Պորճ-էլ-Մահն
կը կոչեն Արաբացիք :

Բեթէլէն մինչ Խանէ-Աստուի կոչ-
ուած իջեւանը ք ժամու չափ է . ճանա-
պարհին կը հանդիպի Պիր-Էյր , Դայիպի ,
և Եսպրո-պ գիւղերը , Այն-Հարաֆի աղ-
բիւրը , Թորֆոս-Այիս , Լուպպան եւ

ուրիշ աւերակ տեղեր, մինչեւ Խան-է-Սառ-իէ գիւղը, իսկ համանուն իջեւանը որ աւերակ է հիմայ, գիւղէն 20 վարկեան հեռու է, ուսկէ 3 վարկեան անդին կաղնիի ծառի մի տակ կ'իջնեն սովորաբար ճանապարհորդք հանգստութիւն առնելու :

Խան-է-Սառ-իէէն մեկնելով, 25 վարկեանէն քաղաքի գիւղին մօտէն անցնելով՝ Ինքճա գիւղը կը հասնինք, որ աջ կողմերնիս կ'իյնայ, եւ կէս ժամէն Գարիլին լեռան շղթայն կը տեսնուի դէպ 'ի հիւսիսակողմը, եւ նոյն կողմը դարձեալ հորիզոնին մէջ կ'երեւի Մեծ Կերմն լեռը ձիւնապատ գապաթով: Մէկ ժամ եւ 10 վարկեանէն կը հասնինք Գարիլի լեռան շղթային ստորոտն եղած Հառարա գիւղը, թողլով ճամբուն քանի մի մանր մունր գեղօրայքը :

Ասկէ մինչեւ Բոճիպ մեծ գիւղը 55 վարկեան կը տեւէ: Այս տեղ Նապլո-օփ (Սիկիմ) ճանապարհը թողլով ձախ կողմի վրայ, կէս ժամու չափ շեղելով դէպ 'ի ներս, Պիր-Եսփոպ (Յակովք նահա-

պետի հորը) կերթանք, որ և Սամա-
րացի կնոջ հորը կը կոչուի, որ ճանա-
պարհին մօտ աջ թեւի վրայ է, Գարիլին
լերան ստորտը, աւերակներով ծած-
կուած եւ երեք չորս ոտք բարձր հին
պատով մի շրջապատուած: Հորին բե-
րանը հին եկեղեցւոյ մի տակն է, որ ժա-
մանտկաւ շինուած է եղեր վրան:

Սոյն հորին մօտն եղած դաշտին մէջ
Աբրահամ իւր կնոջ Սառայի և Ղովտի
հետ Խառանէն գալով իւր վրանները
լարեց, և սեղան մի եւս կանգնեց Աւ-
տուծոյ, և Աստուած իրեն երեւնալով՝
խոստացաւ նորա զաւակացը տալու
Խոստացեալ երկիրը:

Յակովբ եւս Միջագետէն գալով
նոյն դաշտին մէջ լարեց իւր վրանները,
և Միւքեմայ տղոցը հարիւր գառն տա-
լով, ծախու առաւ յիշեալ դաշտը:
Մինչ. ԼԳ. 18—20. և այն տեղ սոյն հորը
փորեց, Քրիստոսէ 1738 տարի առաջ:
Դարձեալ այս տեղ եկաւ Յովսէփ
Մամբրէի ձորէն իւր եղբարքը որոնե-
լու, և Դովլայիճ ըսուած տեղը գտաւ

զիրենք, և յետոյ Իսմայելացի վաճառականաց ծախուեցաւ • Ծննդ. ԼԷ. 13-28 : Վերջապէս Յակովբ նահապետ սոյն երկիրը կտակաւ ժառանգութիւն թուղուց իւր որդւոյն Յովսեփին՝ մահուան անկողնոյն մէջ, ուր որ Իսրայելացիք եւս Եգիպտոսէն ելնելուն՝ այս տեղ (Սիփֆ) բերին ամփոփեցին Յովսեփոյ ոսկրոտիւքը • Ծննդ. Ծ. 59 : Ելեյ ԺԳ. 19 : և Յեո- ԻԳ. 32 :

Յիշեալ տեղը քառակուսի փոքրիկ շրջապատով մի որոշուած է : Յակովբ նահապետի աղբիւրէն 10 վարկեան հեռու դէպ ՚ի հիւսիս, որու մէջ հիմակ ուրիշ գերեզմանաքար մի կը տեսնուի :

Ջրհորին վրայ Հեղինէ թագուհին եկեղեցի մի շինել տուած էր : Սոյն եկեղեցին և կամ յետոյ այլոց ձեռօք նորոգուածը՝ 730 թուին դեռ կը կենար, խաչաձեւ էր և ջրհորը մէջտեղը, եւ կը կարծուի որ վերջին կործանումն եղած է 1187ին, ըստ որում անկէ յետոյ ոչ մի ազգի պատմագրոոյ մէջ չը յիշատակուիր : Աւերակներուն մէջ մին-

չեւ ցայսօր դեռ կրանիդեայ և մարմա-
րեայ սիւներու մեծամեծ բեկորներ կը
գտնուին :

Յիշեալ ջրհորին՝ հիւսիսակողմը կ'ե-
րեւի Գեբալ լեռը , որու Միջերկրակա-
նէն ունեցած բարձրութիւնն է 2,700
ոտք . շինութեան նշաններ չ'կան բնաւ :
Յետու Գայի քաղաքը առնելէն յետոյ
անտաշ քարերով սեղան կանգնելով
Գեբալ լեռան վրայ զո՛հ մատոյց Աս-
տուծոյ , եւ քարերուն վրայ Նրկորդ-
օրէնքը գրեց , զոր Մովսէս արդէն Խա-
րայելի որդւոց առաջը գրած էր . Յես .
Ը . 30-32 :

Գեբալ լեռան ստորոտը Աստար անուն
գիւղը՝ և անոյշ ջրի աղբիւր մի կայ :

Յակովբայ ջրհորին արեւմտեան կող-
մը կը տեսնուի Գարիդին լեռը որ Միջեր-
կրական ծովու երեսէն 2,650 ոտք
բարձր է : Յետու աստ բնակեցուց
Շմաւօնի , Ղեւիի , Յուդայի , Խաւբա-
րայ , Յովսեփի և Բենիամինի ցեղերը ,
որ օրինապահներուն Գեբալ լեռան վրայ
օրհնութիւններ կարդան , իսկ մնացեալ

ցեղերուն վրայ անէծքներ, որոնք օրինազանց գանուած էին: Սոյն լերան վրայ Սիլիմայ գլխաւոր տաճար մի կանգնեց, որ Հրէից եւ Սամարացւոց մէջ բաժանման պատճառ եղաւ: Առաջին Քահանայապետն եղաւ Մանասէ անուն մէկը, Քրիստոսէ 330 տարի առաջ, յետ սյնորիկ թէ՛ քահանայապետ եւ թէ՛ ժողովուրդէն ո՛վ որ օրինազանց գտնուէր, Սամարիա կը փախչէր, վասն որոյ երթալով պառակտումի ու թշնամութիւնը հաստատուեցաւ երկու կուսակցութեանց մէջ:

Քրիստոսէ 170 տարի առաջ, Գաբիղիի տաճարը Արամազդայ նուիրեցաւ, եւ շինութենէն 200 տարի յետոյ Յովհաննէս Հիւրկանոսի ձեռօք կործանեցաւ. Յովնէ. Հնախոս. ԺԳ. 17:

Քրիստոնէութեան ժամանակ եկեղեցիներ շինուած կային սոյն լերան վրայ. Զենոն կայսեր օրով Սամարացիք Քրիստոնէից վրայ յարձակելով Պենտէկոստէի օր մի, ՏԻՐԵՊԵՆԹՈՍ Եպիսկոպոսին՝ որ ժողովուրդը կը հաղորդէր

եկեղեցւոյ մէջ, մատերը կտրատեցին
 և հինգ եկեղեցի այրեցին : Զենոն՝ ՚ի
 պատիժ Սամարացւոց, զիրենք հալա-
 ծեց Գարիղիմէն եւ Քրիստոնէից տուաւ
 զայն, և անոր գագաթնան վրայ ալ եկե-
 ղեցի մի կանգնեց յանուն Ս. Աստուա-
 ծածնի և պահապան եւս կարգեց :

Անաստաս կայսեր ժամանակ դար-
 ձեալ յարձակեցան Սամարացիք լերանը
 սեպացեալ կողմերէն, պահապանները
 ջարդեցին, բայց իրենք ալ բռնուելով
 պատժուեցան :

Սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն
 հիմերը դեռ կը կենան, որոնցմէ յայտ-
 նի է թէ՛ ութանկիւնի էր և աւագ սե-
 ղանը դէպ յարեւելս ուղղեալ, և չորս
 ալ կողմնակի սեղաններ ունէր : Ասոնցմէ
 ՚ի զատ ուրիշ հնութեան մնացորդներ
 եւս կ'երեւին . լերանը հիւսիսային ա-
 րեւմտեան կողմը գիւղի մի աւերակ-
 ներ կան . որոնց մօտ դէպ յարեւմը-
 տեան հիւսիս՝ արտի մի մէջ Սամարա-
 ցիք ամեն տարի կուգան իրենց զոհերը
 մատուցանելու :

Յակովբայ ջրհորէն դէպ 'ի հիւսիսային արեւմուտք երթալով Գեբաղ և Գարիզին լեռանց մէջէն, 25 վարկեանին Նաղըս, որ է Նեոպոլիս, քաղաքը կը հասնինք :

Այս քաղաքը հին ժամանակ Սիկիճ կը կոչուէր, որու մէջ Յակովբ նահապետի որդիքը, բոլոր բնակիչներն սպաննեցին, քաղաքը կողոպտեցին և կանայքն աւտղայքը գերի տարին, 'ի պատիժ այն անպատուութեան, զոր Յմովի որդի Սիւքեմ իրենց քրոջը ըրաւ. Ծնն. ԼԴ. 25-29:

Երբ Իսրայելի թագաւորութիւնը երկուսի բաժնուեցաւ, Յերոբովամ Սիկիճ գեղեցկայոյց, ամրացուց և իրեն մայրաքաղաք ըրաւ: Ովսէէ թագաւորի ժամանակ Ասորեստանցւոց Սաղմանասար թագաւորը գալով Իսրայելի տասը ցեղը գերի տարաւ և իշխանութիւնն Վերջացուց 254 տարի տիրելէն յետոյ: Եւ անոնց տեղ կռապաշտ ազգեր եկան բնակեցան, որոնք հոն գտնուող սակաւաթիւ տեղացւոց հետ խառնուեցան, և ասոնցմէ յառաջ եկած է արդի Սա-

մարացւոց ցեղը :

Սամարիա խիստ կանուխ ընդունեց քրիստոնէութեան կրօնքը . այն քաղաքէն էր Ս. Յուստինոս , որ 167 թուոյն նահատակուեցաւ : Գերմանոս Եպիսկոպոսն Սամարիոյ , 314 ին Անկիւրիոյ ժողովոյն մէջ էր : Խաչակրաց ժամանակ իշխանութիւնն ալ քրիստոնէից ձեռքն անցաւ մինչեւ 1187 , յորում Սամարիա ինկաւ Մահմէտականաց ձեռքը : 1834 , Խպրահիմ փոշայն եկաւ Երուսաղեմը ազատեց Արաբացւոց պաշարումէն , Արաբացիներէն՝ որոնց գլուխն էր Շեյխ-Քասսիմ-Ահմէպ , բռնելով , և յետոյ յարձակելով Նապլուսի վրայ մեծ մասը լաւեց , եւ մեծամեծները ձերբակալ ընելով Դամասկոս տարաւ , եւ Շեյխ-Քասսիմ-Ահմէպը իւր չորս որդւոցը հետ գլխատեց :

Նապլուս Սուրբ Երուսաղեմի վիճակ է , ուր տեղ առաջները Եկեղեցի եւ Հոգետուն մի ունէին Հայք , ուր կ'իջեւանէին ցամաքաւ եկող Ուխտաւորք , նաեւ բաւական արտ եւ ձիթենիներ

եւս կային հոն եկեղեցւոյն կալուած , բայց միաբանք չ'կարենալով տանիլ բնակչաց բռնութեանց եւ զքկանքներուն , թողուցին հեռացան , թողլով Եկեղեցին և կալուածները աւարառուներուն ձեռքը , ըստ որում որքան ջանացին եւ Պաղեստինու Կուսակալէն հրամաններ բերել տուին՝ որ ոչ ոք ձեռք երկնցնէ Հայոց կալուածներուն եւ ձիթիւններուն , սակայն չ'կարացին գլուխ ելնել :

Խիստ գեղեցիկ դիրք ունի Նապլւսը ու հողը բարեբեր է , անհամար աղբիւրակներէ կը վազէ ջուրը , որոնց մէջ ամենէն պատուական է Գարիդին լեռան կողէն վազածը , որ Ռաս-էլ-Այն կը կոչուի , որ ակին գլուխն ըսել է , և շատ ջաղացքներ կը դարձնէ : Աստ Սամարացի Հրէից Սինաիոյսին մէջ Աստուածաշունչ Կրոց Թանկագին ձեռագիր մի կայ՝ մագաղաթեայ և գլանի վրայ սլորուած , զոր իրենք Ահարոնի Թունորդի Աբիսայի ժամանակէն կը համարեն , այսինքն Քրիստոսէ 1500 տարի յառաջ : Նապլւսի բը-

նակիչք 15,000 հոգի կը հաշուին, որոնց մեծագոյն մասը Մահմէտական են:

Նապլուսէն մեկնելով, գեղեցիկ և լաւ մշակուած ձորի մի մէջէ անցնելով 22 վարկեանէն Բաֆֆիէ ըսուած գիւղը և 25 վարկեանէն Զո-արա և հետզհետէ, ձիննէր-Պէյր-Ուլն, Պէյր-Իպա գիւղերը կը տեսնուին Գեբալ և Գարիլն լեռանց կողերուն վըայ շինուած: Սոյն վերջին գիւղէն քառորդի մի չափ առաջ երթալէն յետոյ Միջերկրական ծովը կ'երեւի. դարձեալ Տէյր-էլ-Շարաֆ. Պէյր-Լիպ և Քո-սին, Նա-սու-րա գիւղերը եւ Շէի-Սէկիլ կոչուած թիւրպէն թողլով, իբր 1/2 ժամէն ձորի մի մէջ իջնելով Սեբասթիա ըսուած հին քաղաքը կը հասնինք, այն է Ս. Գրոց Սամրոնը. Յէս. ԺԲ. 20. որոյ տեղը յետոյ Սամարիա կոչուեցաւ:

Արաբ տաճար մի կանգնեց հոս Բակաղը, ասոր համար Եղիա մարգարէն եկաւ ըսաւ իրեն թէ՛ շատ տարի պիտի անցնի առանց անձրեւ եւ ցօղ իջնելու. Գ. Թագ. ԺԷ:

Յէ՛ռ բոլոր Բահայո՛ւ երկրպագուները վարպետութեամբ տաճարին մէջ կան, չելով՝ զամէնքը մէկէն սրէ անցնել տուաւ, և Բահայո՛ւ կռոց արձանն ալ այրեց ։

Ժամանակէ մը յետոյ Մեծն Աղեքսանդր Եգիպտոսէն դառնալուն տիրեց սոյն քաղաքին ։ Արիստաբուլոսի և Անտիգոնոսի ձեռօք կործանուելէն յետոյ (107 տարի Ք․ Ա․) Գաբինիոս Ասորւոց երկրի Փոխ-Հիւպատոսը կրկին շինեց ։ Մեծն Հերովդէս աւելի շէնցուց և Սեբասթ կոչեց ՚ի պատիւ Օգոստեսոյ կայսեր, ըստ որում Սեբաստոս՝ Օգոստոս կամ Օգոստափառ կը նշանակէ Յունարէն լեզուաւ ։ Փիլիպպոս առաքեալ այս քաղաքին մէջ քարոզեց և շատ հրաշքներ գործեց ։ Գործոց Ը․ Ե-8 ։

Քրիստոնէութիւնը ծաղկած էր Սեբաստիոյ մէջ մինչեւ Պարսից և Մահմէտականաց զօրանալը, որոնց ժամանակ սկսաւ Քրիստոնէութիւնը և իւր բարեպաշտական հաստատութիւնները կործանիլ ։ Այժմ հին շէնքերէ մնացած

սիւններ կան , երկու աշտարակ , Սուրբ Յովհաննու Մկրտչի եկեղեցւոյն աւերակները , ճերմակ գմբէթ մի , որ Աբդիա և Եղիսէ մարգարէից և Յովհաննու Մկրտչի գերեզմաններուն վրայ շինուած է , և Մահմէտականաց ձեռքն է :

Սամարիայի լեռնէն իջնելով , Յ վարկեան անդին , ճամբուն վրայ ձախ դին վեց սիւններ կ'երեւին կանգուն . աջակողմն է Պէյր-Իմրի՛ ըսուած մեծ գիւղը լեռան ստորոտը :

Այս սիւներուն եղած տեղէն մինչեւ Սանուր գիւղը $2\frac{1}{2}$ ժամ է , որ կլորակ բլրի մի վրայ շինուած է և ճանապարհին ձախ կողմը կ'իյնայ : Սանուրը հին Բելուլէա քաղաքն է , Յուդիթի հայրենիքը , այն որ Հողովեռնէսի գլուխը կտրելով Հրէից ազգը ազատեց . Յուդ . Ը . 1-3 . եւ ԺԴ . 10 : Քաղաքին դիրքը այնպէս ամուր է , որ ձէզար փաշայն 5000 զօրքով պաշարեց և չ'կարաց տիրել , Թէպէթ և քաղաքին մէջ հազիւ 2000 Ֆէլլակս կային : Նորա յաջորդ Ապտուլահ փաշայն Թէպէտ և 1830 ին տիրեց քա-

ղաքին, բայց 6000 մարդիկ կորանցուց-
 իպրահիմ փառայն եւս պարիսպներ կոր-
 ծանեց, և յետոյ դարձեալ շինուեցան:

Ասկէ մինչև Մեափլէի գիւղը որ աջ
 կողմը կ'իյնայ, մէկ ժամ է, և 7 վար-
 կեան անաջ երթալով՝ հիւսիսային կող-
 մը կը տեսնուի Եսփրէոն դաշտին մէկ
 մասը, Նազարէթի լեռները եւ Ճանա-
 պարհին վրայ աջ կողմը մրտենիի նման
 մի ծառ կ'երեւի, որուն ճիւղերը լաթի
 քուրջերով զարդարուած են. Մահմե-
 տականք կը հաւատան որ սոյն ծառին
 շուքին ներքեւ մատուցուած սղովթքը
 կը լսուի:

Այս ծառին տեղէն մինչեւ ձընի
 գիւղը մէկ ու կէս ժամէն քիչ մի ա-
 ւելի է, Ճանապարհը ըստ մեծի մասին
 ձորերու մէջէն է: Կը կարծուի թէ
 սոյն քաղաքի մէջ մտնելու ժամանակ
 տասը բորոտները պատահեցան Յիսուսի,
 և ողորմութիւն խնդրելով իրմէ՝ բժըշ-
 կուեցան. Ղուկ. ԺԷ. 11-14: Այս տեղ
 եւս եկեղեցի կար և 1555 թուին տեւ
 նող եղած է, բայց այժմ և ոչ տեղը

յայտնի է : ձընին լեռներու ոտքը ձե-
նուած է, պատուական երկիր ունի մը-
շակութեան, և արմաւենի ծառերը գե-
ղեցիկ տեսք մը տուած են իրեն :

Ձընին մեկնելով ճանապարհն է
դէպ 'ի հիւսիսային արեւելք Եպրեմի
(Մէրձ-Իպի-Ա.Մեր) բարեբեր դաշտին մէ-
ջէն, որ Պաղեստինու մէջ ամենէն հրու-
չակաւորն է, եռանկիւնի ձեւ ունի,
հիւսիսային արեւմտեան կողմէն մինչեւ
Միջերկրական ծովը կը հասնի, արեւել-
քէն՝ երեքկուսի երկնցած է, մին թա-
փօր եւ Հերմոն լեռանց, երկրորդը Հերմոն
եւ Գեղէնայ լեռանց, եւ երրորդը Գեղ-
էնայ լեռան եւ ձընի մէջտեղ : Երկա-
րու թիւնն է 12 մղոն, և լայնութիւնը 6 :
Քանի մի գետեր մէջէն կ'անցնին :

Ձընին 17 վարկեան քալելէն յետոյ .
ձախ թեւի վրայ երեք գիւղեր կ'երեւին
և դիմացը կը տեսնուի Գեղէնայ լեռը,
որ երեւելի է Փղշտացւոց դէմ Սաւուղի
միլած պատերազմով, ուր երեք որդւոց
հետ սպանուեցաւ . Ա. Թագ. 1 Ա. 1-6 :
Ասկէ մինչև 'ի Ձերայի գիւղն 1¹/₂ ժամ է :

Ձերային, հին Յեղայել քաղաքն է իսա-
քարայ ցեղին. Յետո ժԹ. 18. որ նշա-
նաւոր է իւր պատմական դէպքերով:
1183 ին Սալահէտտինի զօրքերը հիմնա-
յատակ ըրին սոյն քաղաքը, այսօր մեծ-
կակ գիւղ մի է տղեղ ձեւով:

Ձերայինն մինչեւ Սո-լէճ 1¹/₂ ժամու-
չափ կը տեւէ: Սո-լէճ Ս. Գրոց մէջ
յիշուած Սո-նան քաղաքն է. Յետո ժԹ.
18. ուսկէ էր Սոմնացի կոչուած Աբի-
սակն: Այս քաղաքին մէջ յարոց Եղիսէ
այրի կնկան տղայն, որ իրեն հիւրասի-
բու-թիւն ցոյց տուած էր. Գ. Թ. 4. Ը. 1:
Այժմ պզտիկ գիւղ մի է փոքր Հերմնի
հարաւային ստորոտին վրայ, ուր տեղ
ժամանակաւ եկեղեցի մի կար:

Սո-լէճին ելնելով 25 վարկեանէն Ա-
ֆո-լէ գիւղը կը հասնինք, որու մօտ է
համանուն աւերակ ամրոցը, ուր տեղ
Պօնաբարդ՝ սկիզբն տուաւ պատերազ-
մին Տաճկաց հետ չորս հազար մարդով
Ժիւնոն և Քլէպէրի զօրապետու-թեամբ
1799 ին:

Ասկէ 7 վարկեան անդին Նաղարէի

երթալու ճանապարհը թողլով ձախ դին՝ եւ դէպ ՚ի հիւսիսային արեւելք երթալով Հերոնի ստորոտը, 40 վարկեանէն Նային քաղաքը կը հասնինք, որ փոքրիկ գիւղ մի է Մահմէտականաց՝ նոյն լեռան ոտքը: Այս տեղ յարու-թիւն տուաւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս այրի կնկան որդւոյն երբ թաղելու կը տանէին. Ղո-յ. Է. 11-17: Հրաշա-փործութեան տեղը յառաջագոյն եկեղեցի կար, որ հիմայ քանդուած մզկիթ է: Ասկէ 1 ժամ դէպ յարեւելք է Այնիւրդը ըսուած տեղը, ուր Սաւուղ քնաց պատգամ հարցնելու վհուկ կընկան. Ա. Թագ. ԻԸ. 8:

Նայինէն 45 վարկեան կը տեւէ Կիսնի հռչակաւոր հեղեղատը, 25 վարկեան եւս յառաջ երթալով՝ աջ կողմը կիրճ մի կը տեսնուի որ Եսթերիի դաշտը կ'ելնէ. ասոր արեւելեան կողմն է Նազարէթի շքակայքը և արեւմտեան կողմն է այն Արփաան լեռինը, ուսկէ Նազարէթցիք ուղեցին որ զՅիսուս վար գահալլիժեն. Ղո-յ. Դ. 29:

Այս տեղէն մինչեւ ՚ի Նաղարէի մէկ ժամ է : Սուրբ Գրոց պատմութեան մէջ առաջին անգամը Ղուկաս կը յիշու տակէ իւր Աւետարանին մէջ (Ա. 36) : Այս քաղաքին մէջ կը բնակէր Սուրբն Յովսէփ և անրիժ Կոյսն Մարիամ, որմէ ընկալաւ Աստուծոյ Որդին մարդկային մարմին, եւ աշխարհիս փրկութիւնը հրաշագործեց : Մեծն Կոստանդիանոս գեղեցիկ եկեղեցի մի շինեց այն տանը տեղւոյն վրայ՝ ուր Հրեշտակապետն երեւնալով Ամենասուրբ Կօւսին, աւետեց Բանին Աստուծոյ նորա արգանդին մէջ մարմին առնելու գալը : Մինչեւ 1219 շատ անգամ աւերեցաւ և կրկին նորոգեցաւ յիշեալ Ա-է-փմն եկեղեցին : Լատինաց աւանդութեան համեմատ իբր թէ մինչեւ 1291 թուականը դեռ Աստուածածնի տունը իւր ամբողջութեամբ կը կենար, և նոյն տարին, Մալիսի տասներորդ օրը յանկարծ աներեւոյթ կ'ըլլայ Նաղարէի մէջէն և Դաղմատիայի Տերափ քաղաքին մէջ կը գտնուի, և անկէ եւս 1294 Դեկտեմբեր 10ին

հրաշքով կը փոփոագրի Ռեդանափ , յետոյ մերձակայ լերան վրայ , վերջապէս Լորիի քաղաքին մէջ կը հանգչի . ուր մեծ ջերմեռանդութեամբ պատիւ եւ յարգ կ'ընդունի մինչեւ ցայսօր Հռովմէական պարզամիտներէն :

Տրանչիսկեանք քանի մի անգամ փորձեցին նորոգել Աւիֆան եկեղեցին եւ իւրեանց համար վանք մի հաստատել անդ , և քիչ ժամանակ մնալէն յետոյ վռնտուեցան անկէ . վերջապէս 1730ին հաստատուեցան եկեղեցին և վանքը կրկին անգամ նորոգելով :

Աւիֆան տեղը 17 ոտք աստիճաններով կ'իջնուի , տասն և չորս ոտք իջնելուն՝ ուղղանկիւնի մատուռ մի կայ , որ Աստուածածնի տանը տեղն է կ'ըսեն Լատինք , եւ երկու խորան կայ մէջը եւ այս երկու խորաններուն մէջ տեղէն երկու ոտք աստիճանով Սուրբ Այրին մէջ կ'իջնուի , որ բոլորովին վիմափոր և պատերը մարմարով պատած է : Աջ ձեռքին վրայ կը տեսնուի կրանիդեայ սիւնին բունը , որ իբր նշան դրօ-

ոււած է այն տեղւոյն վրայ՝ ուր կանգնած էր ամենասուրբ Այոսն երկնաւոր Պատգամաբերին (Հրեշտակապետին) հետ խօսելու ժամանակ, իսկ Հրեշտակապետի կանգնած տեղն ալ այն է, ուր իւր անուամբը սեղան մի կանգնուած է: Այն ուրիշ մէջ առ մէջ երկու մատուռներ եւս, ու վերջին մատուռին միջէն տասներեք ոտք աստիճանով այրի մը մէջ կը մտնուի, որուն ինչ ըլլալը յայտնի չէ:

Նաղարէկի հիւսիսային արեւելեան կողմը, իբր 500 մեդր հեռու, քաղաքին մէկ հատիկ աղբիւրն է, որ Աստուծածնի աղբիւր կը կոչուի. ուր տեղ ըստ աւանդութեան, ջուր հանելու եկած ժամանակ Ս. Այոսը՝ երեւեցաւ իրեն Գաբրիէլ Հրեշտակապետը: Զուրը ջրմուղէ մի անցնելով կուգայ աղբիւրը, որու ափն է քանի մի մեդր անդին: Յունաց եկեղեցւոյն մէջ, որ հին եկեղեցւոյ մի վրայ շինուած է, և Յոյնք այս տեղւոյն համար կ'ըսեն թէ՛ Հրեշտակապետ առաջին սնկամ երեւեցաւ:

Ամենասուրբ կուսին :

Լատինաց վանքէն 180 մեդր հեռու ուրիշ եկեղեցի մի եւս կայ, որ Սինկոյայ կրկոչուի, որու համար կ'ըսեն Լատինք թէ այն տեղւոյն վրայ է, յորում Տէրն մեր Յիսուս Քրիստոս Յսայի մարգարէի գիրքը կարդաց և Աստուծոյ արքայու թիւնը քարոզեց Հրէից, և ժողովուրդը զինքը դուրս հանելով անկէ՝ ետեւն ինկան որ ժայռին բարձրէն (Արբեան) վար գահավիժեն . Ղուկ . Գ . 14-31 . Սոյն եկեղեցին Հռովմէական Յունաց ձեռքն է, իսկ Արբեան լեռինը քաղաքէն 3 հազար մեդր հեռու հիւսիսակողմն է, ուր ժամանակաւ եկեղեցի կար :

Նաղարիւի անհարթ գետնի վրայ կառուցուած է, խոռոչներ շատ կան մէջը, որոնցմէ կ'անցնին չըջապատող քարա-ժայռերէն հոսած անձրեւները, փողոցները նեղ և աղտոտ են : Բոլոր բնակիչք 6000 հոգի են, Մահմէտական, արեւելեան Յոյն, Յոյն կաթոլիկ, Լատին, Մարոնիտ և Բողոքական :

Նաղարիւին մեկնելով 1 ժամ եւ 40

վարկեանէն կը հասնինք Թափօրական լեռան
 ոտը, եւ անկէ մինչեւ լեռան դաշտա-
 վայրը ելնելը 50 վարկեան կը տեւէ, ուր
 տեղ Յոյնք եկեղեցի մի ունին, եւ Լա-
 տինք Այլախերպո-Վեան եկեղեցին :

Թափօր լեռը Նազարէթէն 100 մեդ-
 րաչափ, Տիբերիայէն 760, և դաշտէն 400
 մեդր բարձր է: Աստ Տէրն մեր Յիսուս
 Քրիստոս իւր երեք գլխաւոր աշակեր-
 տաց դիմացն Այլախերպելով իւր սս-
 տուածային փառքը ցոյց տուաւ: Հե-
 ղինէ թագուհւոյն համար կըսուի թէ
 326 ին եկեղեցի մի շինեց Այլախերպու-
 թեան տեղւոյն վրայ, որ լեռանը հարա-
 ւային արեւելակողմը կ'իյնայ. և երկու
 ուրիշ եկեղեցիք ևս շինուեցան յանուն
 Մովսիսի և Եղիայի, զորոնք Գանիէլ Ի-
 գուածնոս Ռուս Ճանապարհորդը կը
 յիշատակէ: Սոյն սրբազան լեռան վրայ
 Հայք եւս առանձին վանք և եկեղեցի
 ունէին, ինչպէս նաեւ Տիբերական ծովուն
 եզերքը և ուրիշ տեղուանք Պաղեստի-
 նու, որոնց Հայ վարդապետ մի շրջա-
 դայելով Հայոց ԶԿԸ (1519) թուականին,

ականատես եղած է : Թափօրլան լեռան նկարագրութիւնը կ'ընէ և եղիչէ Երէց, որ գնացած է անձամբ և կամ Թերեւս հոն միաբանած է Հայ վանօրէից մէջ :

Պատերազմի երեսէ շատ անգամ կործանուած և Մահմէտականաց ձեռք անցած է . վերջին աւերմունքը տուաւ Պիոյարս (Փընփո-խփար) 1263 Թուին : Մին չեւ ցայսօր տակաւին շատ աւերակներ կը տեսնուին լեռնադաշտին վրայ , պարսպի մնացորդներ , ժայռերու մեջ փորուած խոռոչներ , աշտարակի կամարներ և բազմաթիւ ջրամբարներ :

Թափօր լեռան ստորոտէն մինչեւ Գալիլէայի կամ Տիֆերալիան ծովը չորս ու կէս ժամ է , որ Քէնէրէլայ կամ Գէնէարէլայ ծովեւս կ'ըսուի . Յետո՝ ԺԲ . 3 . և Ղո-ի . Ե . 1 . համանուն քաղաքէն առնելով . Յետո՝ ԺԱ . 2 : Տիֆերալիան ծովը Միջերկրականէն 230 մեղր ցած է , հինգ մղոն երկայնութիւն և երկու մղոն լայնութիւն ունի . ամենէն շատ խորութիւնն է 55 մեղր , ջուրը քաղցր ու ձկնաւէտ է : Փրկիչն մեր Յիսուս շատ

անգամ նաւարկութիւն ըրած է այն լճին վրայ և հրաշքներ գործած :

Տիբեթի քաղաքը համանուն ծովուն եզերքը կառուցեալ է, որու հիմնադիրն է Հերովդէս Անտիպաս Չորրորդապետը, զոր 'ի պատիւ Տիրերոս կայսեր անուանակոչեց, եւ իրեն մայրաքաղաք ըրաւ Երուսաղեմի կործանումէն ետքը : Հրէից ապատանի քաղաք եղաւ Տիբեթիւն եւ իրենց քով նուիրական կը համարուէր, ուր տեղ կային երեւելի կարգացողներ : Առաջին եկեղեցի շինողն եղած է հոս 'ի քրիստոնէութիւն դարձող Յովսէփ անունով Հրէայն Մեծին Կոստանդիանոսի ժամանակ, եւ քիչ ժամանակէն եպիսկոպոսանիստ քաղաք եղաւ : Շատ անգամ պատերազմներ տեսած է թաշակրաց, թալիֆայից և Սուլթանաց կողմէն : Անցեալ դարուն Աքեայի Դակիրէլ-Աճր փաշայն բերդերը նորոգեց, եւ 1833ին Եգիպտոսի Իպրահիմ փաշայն կրկին նորոգեց . և 20 թնդանօթ դրաւ պարիսպներուն վրայ, որոնք յետոյ Ափս փոխադրուե-

ցան. 1837ի շարժէն պարսպին շատ տեղերը ճեղքեցան և ծակեր բացուեցան, որոնք իբրև դուռ կը ծառայեն, ըստ որում քաղաքադուռ մէկ հատ միայն ունի արեւմտեան կողմը: Բընակիչքն են 3500 հոգի, մեծ մասը Հրէայ:

Տիբեթայէն մինչեւ Բեխայիդա երկու ժամու չափ կայ, որ Պետրոսի, Փիլիպպոսի և Անդրէասի հայրենիքն էր, և հիմակ Էդիթէլ կը կոչուի, և անկէ մինչեւ ՚ի Կափառնաոմ մէկ ու կէս ժամ է: Հիմակուան եղած քաղաքը Թելլոմ կը կոչուի, որ լճին մօտ է, ինչպէս Մատթէոս Աւետարանիչ (Դ. 13) Կափառնաոմի համար ծովեզերեայ քաղաք կըրտէ: Այժմ Թելլոմ ըսուած տեղն ակերակ մի է, ուր եօթը ութ խրճիթներ կը տեսնուին չոր քարերով շինուած:

Կափառնաոմէն 40 վարկեան կը տեւէ Գորպիւնը, որ հիմակ Գորառէ կը կոչուի, եւ հիւսիսային արեւմտակողմը կ'իյնայ:

Տիբեթայէն շատ հեռու չէ այն նշա-

նաւոր գաշտը Հապիթի⁽¹⁾, որուն մէջ է այն տեղն ուր Յիսուս Քրիստոս եօթն հասցիւ և քանի մի ձկով չորս հազարէն աւելի մարդիկ կշտացուց. Մաթի. ժե. 32-38: Յիշեալ տեղւոյն վրայ իբր նշան քանի մի սեւ խոշոր քարեր կը տեսնուին Ճանապարհին քով՝ աջակողմը եւ լճին դիմացը: Աստ եւս հնուց եկեղեցի կար, որուն այժմ եւ ոչ աւերակները կ'երեւին:

Ասկէ¹/₂ ժամ կը տեւէ դէպ'ի հիւսիսային արեւմուտք Երանոսիւանց լեռը, որուն գագաթը դիւրութեամբ կ'ելնուի ց վարկեանին մէջ, ուր տեղ Յիսուս Քրիստոս ինն երանութիւնները տուաւ. Մաթի. ե. 3-11: Սոյն բլրին հիւսիսակողմը կ'իյնայ Սաֆէր քաղաքը, 4600 բնակիչ ունի, և երրորդ մասը Հրէայ են: Սաֆէր Հրէից մօտ սրբազան քաղաքներէն մին համարուած է: Ասկէ 1 ժամ է Լոսպիէ մեծ գիւղը, ուր Պօնաբարդին

(1) Սոյն գաշտին մէջ ընդունեցին Խաչակիրք վերջին հարուածը, որով ջնջեցաւ իրենց իշխանութիւնը Պաղեստինու մէջէն:

ժիւնոյ զօրապետը իւր զօրքովը Կանայքն
գալու ժամանակ Մէյլը-իներէն սաստիկ
յարձակում մի կրեց , եւ նորէն ետ
դարձաւ 'ի Կանայ , ուր երկու օրէն յե-
տոյ Քլէպէր օգնութեան հասաւ իրեն
(1799 Ապրիլ) :

Լո-պիէէն երկու ժամու ճանապարհ
է մինչեւ 'ի Կանայ-Գալիլէա , ուր մտնե-
լու ժամանակ առաջին շէնքը որ աջ
կողմը կը տեսնուի , աւերակ մզկիթ մի
է , որ կը կարծուի թէ Նախնայելի տանը
տեղն է : Կանայի մէջ եկսւ թագաւո-
րազն իշխանը Յիսուսի մօտ՝ որպէս զի
գայ իւր օրհասական որդին առողջա-
ցընէ . Յովն . Գ . 46-54 : Դարձեալ սոյն
քաղաքին մէջ իւր առաջին հրաշքը
գործեց Յիսուս հարսանեաց օր մի , ուր
ինքն իւր մօրը հետ կը գտնուէր , ջուրը
գինիի փոխելով . Յովն . Բ . 1-11 : Գիւ-
ղէն յիսուս մեդրաչափ հեռի ձախ կող-
մը՝ պզտիկ գետնի մի վրայ աւերակներ
կը տեսնուին և մէկ ճերմակ սիւն մի ,
որ Հեղինէին Աիմօն Կանանացւոյ տանը
տեղւոյն վրայ շինել տուած եկեղեցւոյն

են : Այս Ամսն Կանանացիին հարսա-
նեաց օրն էր , որ Յիսուս գինէփոխու-
թեան հրաշքն ցոյց տուաւ : Յունաց
եկեղեցւոյն մէջ երկու հատ կուժ կը
գտնուին , օրոնց մէջ էր կ'ըսեն ջուրը ,
զոր Յիսուս գինիի փոխեց , քարէ փո-
րուած են խոշոր (խաղա) շէնքով : Կանայ ,
Քէֆր-Քանո կ'անուանեն՝ 600 բնակիչ
ունի , Յոյն և Մահմէտական :

Նազարէթէն մինչեւ Հայֆայ կամ 'ի
Քայֆայ (Կայիափա) ծովեզերեայ քաղա-
քը՝ 8 ժամու չափ կայ , Կարճըս լեռան
ստորոտը շինուած , 4000 բնակիչ ունի
խառն ազգերէ :

Հայֆայէն մէկ ժամու մօտ կայ Կար-
ճըս լեռը , որ նշանաւոր է Եղիա և Ե-
ղիսէ մարգարէից յիշատակօքը , ուր
տեղ Եղիա Բահաղը՝ մարգարէները ա-
մօթապարտ ըրաւ , և յետոյ Կիսնի հե-
ղեղատին մէջ իջեցնելով զանոնք ջար-
գել տուաւ . Գ . Թագ . ԺԸ . 25-40 :

Քրիստոնէութեան առաջի դարե-
քէն 'ի վեր աստ բնակող անապատա-
կանք Սուրբ Աւետարանն ընդունելով :

սկսան իրենք եւս քարոզել զՅիսուս
Քրիստոս :

Չորրորդ դարուն մէջ եկեղեցի չե-
նուեցաւ Հեղինէի ձեռօք :

Յամի 412, Յովհաննէս Պատրիարք
Երուսաղեմի Կանոններ տուաւ Կար-
մելոս լեռը ճգնող կրօնաւորներուն :
Շատ երեւելի եւ սուրբ ճգնաւորներ
բնակած են սոյն լեռան վրայ : Շատ
անգամ յարձակում եւ աւերում տե-
սած են Կարմելոս լեռան վանորայք եւ
եկեղեցիք : Վերջին ժամանակներս
(1821) Աբայի Ապտուլահ փաշայն մը-
տածելով որ այս տեղն ամրանալով կըր-
նայ իւր թշնամեաց օգտակար դիրք
մի ըլլալ, թէ եկեղեցին եւ թէ վանքը
քանդել տուաւ, եւ անոր նիւթերովը
վանքին մօտ ապարանք մի շինելով ա-
մառը հոն անցնելու կուգար : Քիչ
տարի յետոյ Ժան - Պագիստ անուն
Կրօնաւոր մի պատճառ եղաւ կրկին
չինութեան վանուց եւ եկեղեցւոյն,
եւ Կարմելիդոսի անուամբ միաբանու-
թիւնն հաստատուեցաւ, որ հիւրա-

սիրութեամբ կ'ընդունի ուխտի գնացող ամեն Գրիստոնեայքը :

Լատինաց վանքը քառակուսի մեծ շէնք մի է լերան հիւսիսային արեւմբտեան ծայրը . եկեղեցւոյն Աւագ խորանին տակը այր մի կայ , ուր կ'ըսուի թէ Եղիա եւ Եղիսէ մարգարէները կը բնակէին , որու մէջ հինգ ոտք աստիճանով կ'իջնուի : Պարտիզին մէջ պզտիկ բուրգ մի կը տեսնուի , որու տակ Թաղուած են Պօնաբարդի զօրքերը՝ որոնք 1799ին յիշեալ վանուց մէջ ջարդուեցան Մահմէտականներէն :

Եկեղեցւոյն շրջապատէն դուրս ուրիշ նշանաւոր տեղ մի կայ , այն է Մարտիրէից Դպրոցը , որոյ սկզբնաւորութիւնը Եղիայի եւ Եղիսէի ժամանակէն կը համարուի , եւ 1636 Թուականէն 'ի վեր Մահմէտականաց ձեռքն է , եւ իսլամ մի կը պահպանէ , եւ ուզողը կրնայ պարգեւ մի տալով ներս մտնել : Քարանձաւ մի է բնական եւ մարդու ձեռք հարթուած :

Կարմելոս լեռնէն 1 ժամ է սուրբ

Եղևյի աղբիւրը , որ ժայռի մէջէն կը բղխի :

Կարմելոս լեռնէն մինչեւ Արփա , որ ըստ Ս . Գրոց Պտղոմայիդ կը կոչուի , երեք ու կէս ժամ է :

Կարմելոս լեռան աջ կողմը կ'իյնայ Մար քաղաքն ծովեզերեայ , որ ըստ Ս . Գրոց Մար որ և Տիրոս կը կոչուի . Պօղոս Առաքեալն Պապարայէն նաւով դէպ 'ի սուրբ Երուսաղէմ գալուն այս քաղաքն հանդիպեցաւ . Գործ . ԻԱ . 3 . օդն խիստ վնասակար է : Եւ ասկէ մինչեւ Սայրայ քաղաք , որ ըստ Ս . Գրոց Մայրան՝ որ և Սիդոն կը կոչուի , վեց ժամու ճանապարհ է . Սայրան՝ նոյնպէս ծովեզերեայ է , ջրաւէտ , պտղաբեր եւ մաքուր օդ ունի . և շատ բարեհամ աղբիւրներ ու հողն բարեբեր է . հոս ալ հանդիպեցաւ Պօղոս Առաքեալ՝ երբ Պաղեստինու Կեսարիայէն յիսալիա կալանաւոր զրկուած նաւով կ'երթար . Գործ . ԻԷ . 3 . Տէրն մեր Փրկիչն Յիսուս Քրիստոս մինչեւ այս վայրը շուրջ եկաւ : Մարի . ԺԵ . 21 . Եւ Մարի . Է . 24 :

Կարմելտը Սուրբ Երկրին վերջին ծայրն է, ուր կը լրանայ գրեթէ ուխտաւորութեան շրջանը. ուստի և մենք այս տեղ լրացնելով մեր պատմական և տեղագրական համառօտ տեղեկութիւնը եւ առաջնորդութիւնը, կը թողումք բարեպաշտ Ուխտաւորաց որ գիտնան արդիւնաւորել և զօրացնել իրենց հագւոյն ու սրտին մէջ ջերմեռանդ ըզգացմունքներ և սէր առ Արբազան Տեղիս եւ առ Յիսուս Քրիստոս Փրկիչն, որ է լրումն փափագանաց:



ՅԱԻ Ե Լ ՈՒ Ա Ծ

Ա.

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն Ք

Ե Ի

Խ Ա Ձ - Ք Ա Ր Ք

1.

**Ի Յոպպէ Հայոց Ս. Կիկոզայոսի
Վանուց Աւագ-դրան վրայ եղած յի-
շատակարանն է.**

“ Ի Պատրիարքութեան Տեառն Գարբէէլէ Ազք
“ Եպիսկոպոսին, Ի վայելումն և յիշատակ Ազգիս Հա-
“ յոց, Յոպպէի Ս. Կիկոզայոսի վանքն Դորոգեցաւ
“ Ի դրանէ մինչեւ ցվեր գեղեցիկ սենեկօք, ձեռամբ
“ և աշխատութեամբ Տեղբանակերտցի Մեարովը վար-
“ ք գապեա Ռէիզին. Յամի Տեառն 1840 ”:

Սոյն յիշատակարանի ճիշդ մէկ օրինակն եւս վանքին մէջ եկեղեցւոյ դիմաց՝ արեւմտեան կամարին վրայ դըրուած է :

2.

Նոյն վանուց հարաւային վերին կամարներուն մէջ տեղ զետեղուած մարմարեայ քարին վրայի յիշատակարանն է :

« Աստղիկ կամարս յառաջագոյն փայտեայ եին .
 « Իսկ 'ի ՌՄԾԳ Թվին Հայոց . քարեայ շինեցան բա-
 « զում ծախւք . 'ի Պատրիարքութեան Ս . Երուսա-
 « ղէմի Տեառն Թեոքարոսի Արազան վեհի Վանեցոյ .
 « յիշատակ Օրհնեալ Ազգիս Հայոց . վերակացութեամբ
 « տեղւոյս Ըռեիլ Դազար վարդապետի Իփլանցոյ » :

3.

Յոպպէի արեւմտեան կողմը մաքսատան մօտ՝ Հայոց վանքին սեփհական՝ ծովեզերքին վրայ մեծ խանին մէջ եղած յիշատակարանն է :

« Յիշատակ է խանս եւ գերեզմանի մօտ եղեալ
 « Կարաէզն . Ակնցի Երեւանեանց լուսահոգի Մանու-
 « ելի որդի մահատի Սեղեհաբոսին , որ իւր սրգեանցն՝

« արար զսա յիշատակ Ս . Յակովբայ , Ս . Յարութեան ,
 « Ս . Եննգեան . Ս . Ասաուածածնի , Ս . Փրկչի , և
 « Ս . Հրեշտակապետու վանքերուն , այսու պայմանաւ
 « որ զիմ հին և նոր նմջեցեալքս ամէն որ ամէն սրբ .
 « բոյ Պատարագին յիշատակեն . և եկած վարձեն Ա .
 « Ա փարայ ժամուց ժամարարներուն . Ա . Ա փարայ
 « եւս իւզագին վանքերուն . իսկ զաւելորդն խանին և
 « պահանային մերածեթին խարձնն . եւ պրոշն Յակով .
 « բոյ միարանացն հոց գին տան . ո՛վ որ զս կարե .
 « ևոր յիշատակս ջրէ Ասաուած զմքն 'ի կենաց գրոց
 « ջնջէ . 1100 (1) » .

Վերոգրեալ յիշատակարաններէ 'ի
 զատ Յոպպէի վանուց մէջ կան նաեւ
 իրաչ-քարեր և եկեղեցւոյ ներքին պա-
 տերու մէջ զետեղուած տուպանաքա-
 րեր , սակայն ասոնց գիրերն մեծաւ-
 մասամբ եղծուած լինելուն անընթեռ-
 նելի են .

(1) Վերոյ գրեալ յիշատակարանի թուականը որ
 1100 գրուած է . սխալ է . որովհետեւ Աեղբեսարոս
 ամիրայն ՌճՀԼ : (1727) ին եկած է Կ . Պօլէն Ս .
 Երուսաղէմ և ՌճՀԼ (1739) ին գարձած է 'ի Պօլիս
 ևւ ուրկից հետզհետե շատ յիշատակներ ըրած է Ս .
 Յակովբայ : Երբ ՌճՂԸ (1749) ին շղթայակիր Գրի-
 գոր Պատրիարքն կը վախճանի . նորա տուպանաքարն
 ամիրայն ինքը Պօլիս շինել տալով կը դրկէ յԵրուսա-
 ղէմ . եւ ինքն ալ ՌՄԳ (1754) ի Փետրվարի 8 ին
 կը վախճանի 'ի Կ . Պօլիս .

4.

**Ի Ռէմլէ Սուրբ Գէորգ վանուց
եկեղեցւոյ մէջ սիւնի մը վերայ եղած
յիշատակարանի օրինակն է .**

“ Ասուծով վանք” սրբոյն Գեորգայ որ ‘ի Ռէմլէ
“ բազում ծախիւք եւ նեղութեամբ բոլորովն նորս,
“ գեցաւ նորակերտ մեծ գրամբն ‘ի Պատրիարքութեան
“ Արքայ Երուսաղէմի Տեառն Կարապետի, աշխատու
“ թեամբ Կարբիէլ և Գէորգ Վարդապետաց և բոլոր
“ Մխարանից ‘ի ՌՄԻԳ ԹՎԻՆ . որք հանգիպիք ասոք
“ զողորմին ” :

5.

**Յերուսաղէմ Ս . Յակովբայ վանուց
արեւմտեան պարսպին ճակատը կ’երե-
ւի հնագոյն և կիսամաշ թաշ-քար մի,
որոյ վերայ քանդակուած է տձեւ դրոշ
մածով թաշ և չորս թեւոց անկիւնները
եւս ուրիշ չորս թաշեր . շրջանակի վերին
երկու խորշերուն մէջ երկաթազրով
գրուած է, ՏԵՐ ԱՍՏՈՒԱԾ, և թաշի պա-
տուանդանին տակ, ԹՎ . ՆԵ :**

6.

Վանուց արեւմտեան Աւագ-Պրահ
Ճակատը դրուած Արարերէն արձա-
նագրութեան բնագիրն է :

برزمرسوم مولانا السلطان الملك الظاهر
ابو محمد سعيد چترق عزنصره بابطال ما احده
ابو الخير ابن النحاس من ضمان مار يعقوب دبر
الارمن بالقنس الشريف عامارده سيف الدين
المقر الشرقى الانصارى وسال فى ابطل ذلك
ليسطر فى الصحايف الشريفه بتاريخ وخسين
وثمانماية من الهجرة الشريفه ملعون ابن ملعون
وعليه لعنة الله تعالى من احدث ضماناً او جدد
مظلمة

Սոյն արձանագրութեան ճիշդ մէկ
օրինակն ալ նոյն դռնէն ներս մտած
ժամանակնիս ուղղակի դիմացը պատին
մէջ զետեղուած փոքր ջրի հոսանքի
վրան գրուած է , որ շնորհուած է
Ծգիպտոսի Սուլթաններէն Էլ-Ձակի

Ապոս Եկեղեցի Սախ Զագմագէն 854 Թուականին Հիշելի՛լ՝ այն է՝ 1437 Թուականին Քրիստոսի, որով կ'արգելէ այն ամեն վաղեմի հարստահարութիւնք, որք տեղի ունեցան Ս. Յակովբայ վանուց նրկատմամբ, և իւր խօսքն կը կնքէ հետեւեալ կերպիւ. ով որ կ'ըսէ, եթէ այդ ամեն արգիլեալ հարստահարութիւնքն ու բռնութիւնքն վերստին նորոգելու լինի, անիծեալ ըլլայ Աստուծոյ կողմէն:

7.

Յիշեալ Աւագ-Իրան ներքին կողմը դրուած է արեւմտեան պարսպին նորագութեան յիշատակարանը.

« Կարողութեամբն Աստուծոյ շինեցաւ սրբոյն մե-
 « ծի Աթուոյս արեւմտեան կողման պարիսպն գրամբս
 « խուցերօք և լիվաներօք 'ի Թվին ՌՃՂԲ. 'ի փառս
 « Աստուծոյ և 'ի պարծանս և 'ի վայելումն օրհնեալ
 « ազգիս Հայոց. պատճառ լինողաց աշխատողաց և ու
 « զորմութիւն տուողաց, ընթերցողք ողորմի առացէք,
 « ամէն »:

Զորս անկիւնները կը կարգացուին

այս չորս բառերը ԳՐԻՍՏՈՒՒ : ԾԱՌԱՅՐ
ԳՐԻԳՈՐ, ՊԱՏՐԻԱՐԻՔ :

8.

Սուրբ Յակովբայ վերնատան չե-
նութեան ատեն 1835ին, հին պատերը
քակելու ժամանակ խաչ-քար մի կը
գտնուի քանդակուած և յիշատագը-
րուած 'ի Թուին Հայոց Ո՛ր Զաքարիա
Պատրիարքը կ'ասէ, « Յիշատակ եղեալ
'ի Քաղաւորաց Կիլիկեցւոց ո՛ր : Նշն
խաչ-քարը նորոգելով կը գնէ Վերնա-
տան արեւմտեան պատի արտաքին
կողմը :

Ս. Յակովբայ գաւթին արեւմտեան
կողմը՝ Աբեղայ — Քաղի պատին մէջ
գրուած ընթեռնելի խաչ-քարերը :

9.

« Կանգնեցաւ Ս. Նշանս 'ի բարեխաւտութիւնս
« Յեւառ Մէլէքին եւ մաւրն Նազ խաթունին 'ի
« Թիւն ԶԹ » :

10.

« Յիշատակ է Ս. Նշանքս Լեւոնին, Կոստանդին,
 « Վասիլին, Ապլլին, Թովին Հայոց ՊՁԻ » :

11.

« Բարեխաւս է Ս. Նշանքս Քարամին. Սամանին,
 « Պարագին Թովին ՊՂ » :

12.

**Աբեղայ Թաղի շինութեան յիշա-
 տակարանն է.**

« Հազար հարիւր տան երկուսին, կազմեցաւ խը-
 « ցերս բոլորովին, յաւուրս մեծի Գահակալին Նղիւ-
 « զար Տեառն Վեհին. որք հանգիպիք տուք զոզոր-
 « մին, աշխատողաց և պատճառից » :

13.

**Ս. Յակովբայ Մայր — Եկեղեցւոյն
 տանիքը՝ գմբէթին տակ կը կարդանք
 հետեւեալը .**

« Աստուծով 'ի ՌՄԺԴ Թովին Ս. Յարութեան
 « տանիքն, Ս. Յակովբայ եւ բոլոր խցերաց տանիքն » :

« որ ընդ պարսպաւ Արբոյ Աթուոյս և Ս. Հրեշտա-
 « կապեաին նմանապէս, բոլորապէս պաշտօն շարեցաւ
 « և երկատասան խուց 'ի հիմանէ նորոգապէս շինեցաւ
 « 'ի Պատրիարքութեան Արբոյ Գահիս Տեառն կարաւ
 « պետի Գանձակեցւոյ, կամակցութեամբ բոլոր միա-
 « բանից եւ 'ի վայելումն ազգին Հայոց, յիշեցէք 'ի
 « Տէր » :

14.

Առաքելոց Մատրան փոքրիկ գաւ-
 թին մէջ հարաւային պատին վրայ
 դրուած է հնագոյն Խաչաքար մի, որոյ
 կեդրոնը բեւեռուած է 'ի նշան հնու-
 թեան. ունի հետեւեալ յիշատակա-
 րանը .

« ԹՎ. ԻԱ. Ես Առաքելս կանգնեցի զԽաչս ծնողին
 « իմոյ Զաքարիա, յիշեցէք 'ի Քրիստոս. ամէն » :

Սուրբ Յակովբայ տաճարին և եր-
 կու կից Եկեղեցեաց մէջ :

15.

Սուրբ Յակովբ Եկեղեցւոյ Աւագ-
 Սեղանի խաչկալին յիշատակարանն է .

« Կարողութեամբն Աստուծոյ . կազմեալ կանգնե-
 « յառ . սկիզբօ խաշկալս երկնահանգոյն Խորանիս .
 « Արքայն Յակովբայ . Տեառն եղբօր . Աստուածազէր
 « Արքայ Աթուոյս . ամենայն Հայոց . 'ի ԹՎԷՆ ՌՃՀ
 « ժէկ ամին . 'ի Պատրիարքութեան Արքայ Երուսաղէ-
 « միս , և Բիւզանդիոյ . Գրիգորի և Յովհաննու Վար-
 « զապետաց , աշակերտաց Տեառն Վարդանայ Վար-
 « զապետի Բաղէշեցւոյ . հոգաբարձութեամբն . և ջա-
 « նիւք . կերտեցաւ . 'ի յիշատակ հոգւոց իւրեանց .
 « և հոգեւոր և մարմնաւոր ծնողաց , և աշակերտաց .
 « եւ ամենայն միաբանից . աշխատողաց . եւ ողորմու-
 « թիւն տաւողաց . և բոլոր Արամեանս սոհմի . զՏէր
 « Եհուս եւ զՏունս սիրողաց . ընթերցողք Աստուած
 « ողորմի սասցէք . ամէն » :

 16.

Սուրբ Յակովբ եկեղեցւոյ Աւագ-
 Սեղանի կամարն բարձրացնող սիւնե-
 բուն վրայ բոլորակ ձեւով գրուած յի-
 շատակարանն է .

« Նորագեցաւ սկիզբօ որմն բոլոր սկիզբօնք
 « տեղեաց Արքայ Տաճարիս եւ այլոց արգետնք Աղգիս
 « Հայոց 'ի Պատրիարքութեան Տեառն Կիրակոսի Արք
 « Եպիսկոպոսի Իրուսաղէմոցւոյ . յամի Տեառն 1847
 « եւ Հայոց ՌՄՂԶ » :

17.

**Սուրբ Յակովբ եկեղեցւոյ Աւագ-Սե-
զանի բեմին ճակատը շինուած ոսկեղա-
ճեալ ծաղկանկար մարմարիոնի վրայի
յիշատակարանն է .**

“ Աստուծով 'ի Թուին ՌՃՀԹ ամին կազմեալ եղև
“ մարմարեայ Ս . Բեմն 'ի յիշատակ Ակնցի Աբեւան-
“ եանց Սարգս Մահտեի Սեղբեսորոսին և ծնողաց
“ եւ ամենայն զարմից նորա . 'ի Պատրիարքութեան
“ Գրիգորի և Յովհաննէս Վարդապետաց , յիշեցէք և
“ Աստուած ողորմի ասացէք ” :

18.

**Սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյ դրան
սատափեայ երկբեղկերուն յիշատակա-
րանն է .**

“ Յիշատակ է դուռնս Տարսիսիցի Մահտեի Մե-
“ լիածին , վասն կենաց իւրեան եւ կենակցւոյն Մահ-
“ տեի Նազուբն և Մահտեի զաւակացն և ծնողացն
“ հոգւոց , 'ի Թուին ՌՃՁԲ ” :

19.

**Սուրբ Գլխադրի մատրան հարաւա-
լին դրան սատափեայ փեղկերուն վրայի
յիշատակարանն է .**

« Գեղեցիկ Դուռնա շինեցաւ 'ի Պատրիարքութեան
 « Տեառն Գրիգորի եւ Տեառն Յովհաննու Վարդապե-
 « տացն վանն Գլխաբրի որբոյն Յակոբայ , եւ է յիշա-
 « տակ Կամարկապոյի Նազարի որդւոյն Որհնեալ Մահ-
 « տեռեաց Մակարին , Առաքելին , Մարտիրոսին եւ
 « Յարութիւնի եւ ծնողացն եւ ամենայն զարմից նոցա
 « Ընթերցողքդ յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք •
 « 'ի Թուին ՌՃՁ , շինեցաւ 'ի Յակոբ ծառայէ » :

20.

**Սուրբ Մինասայ սատափեայ դրան
 փեղկերուն յիշատակարանն է .**

« Յիշատակ է Աստուածասէր Տարսիսիցի Մահ-
 « տեռի Մելիտոնին եւ կողակցւոյն հաճի Նազուֆն ,
 « եւ իբր նռան ծաղկի 'ի կարկոտ մահուն յանկարծա-
 « հարեալ . 'ի քառութիւն հոգւոյ հաճի Սեզբաբին եւ
 « կենդանի որդւոյն հաճի Գրիգորին եւ հաճի Գեոր-
 « գին , եւ ամենայն զարմից նորա ՌՃՁԶ » :

21.

**Սուրբ Մինասայ երկաթեայ դրան վե-
 ռի շէմին վրայ եղած յիշատակարանն է .**

« Յիշատակ է Դուռնայս սեմքն հանգերձ Մահ-
 « տեռի Սարգիս բարեպաշտ Խալֆային եւ ծնողացն
 « Մահտեռի Հեղինէին եւ ամենայն զարմից նորին
 « ՌՃՁԲ » :

22.

**Սուրբ Մակարայ դրան սատակեայ
գեղեկերուն յիշատակարանն է .**

“ Աստուած ողորմի Տէր Մինասին , որ հոգաց զա .
“ մենայն ծախս սորին , զառա յիշատակ սուրբ Գրչ .
“ խաղբին , կազմեալ ձեռամբ Մելիթանին , տեսա .
“ նազբդ ասէք զՏէր ողորմին , համայն ազգի նախ .
“ նեաց նորին , 'ի Թուին ՌձԺԱ ” :

23.

Սուրբ Մակարայ մատրան մէջ .

“ Երազուց աղայ փրկչին ծառայ շինեաց զտապան
“ Ս . Մակարայ . Լուսաւորչին եւ մասն է աստ , բա .
“ բխտուել նմին պատրաստ : Յամի Տեառն 1781 եւ .
“ Հայոց Թուին ՌձԺ . 'ի Պատրիարքութեան Յակոբայոյ :

24.

**Տեառն — եղբօր Աթոռին արեւմը .
տեան կողմի արտաքին երեսը եղած յի .
շատակարանն է .**

“ Վերայդիտողութեամբ Եղիազար Վարդապետին
“ կազմեցաւ եպիսկոպոսարանս ձեռամբ մահտեսի Մե .
“ լիանին յիշատակ իւր եւ ծնողացն ” :

**Արեւելեան կողմի ներքին երեսը
եղած յիշատակարանն է .**

« Ի թուին ՌՄԿԱ նոր 'ի նորոյ նկարագրեցաւ Կա-
 « թուղէկէ որոյ Գահայս 'ի Պարիպրութեան Տեառն
 « Թէպորոսի երջանկափայլ Արբազան Վեհի » :

25.

Աւագ-Իսասու գրադարանին մէջ .

« Յիշատակ է Սուրբ Խաչս Մեկտննցի Աստուածա-
 « սուբ կրօնաւորին եւ ծնողացն . Թօլին . ՊՂԱ » :

26.

**Ս . Էջմիածնի տախտակեայ դրան
 կրկին փեղկերուն վրայ .**

« Դուռնս հունփայ յիշատակի

« Սարգիս անուն վարպետի .

« Դանտիլ անուն այս վարպետի

« Սա աշակերտ գոլ անուանի

« Եւ ծնողացն իսկ տարին

« Տէր Յովակիմ եւ Կիւլզարին

« Եղբարց եւ Գերց ընդ սօսին

« Տէր Առաքելին Շմաւսնին

« Այլ եւ իւրոցն աշակերտաց

« Եւ ամենայն ազգականայ .

« Հազար հարիւր վաթսուն 'ի թիւ

« Տուք ողորմիս լիով սրտիս » :

« Դուռնս հունփայ Էջմիածնայ

« Ի մէջ Արբազն Յակոբայ

« Ղանտիլ անուն վարդեափ
 « Կեսարացի եւ Մահտեսի .
 « Իւրոյ հոգւոյն է յիշատակ
 « Եւ ծնողաց իւրոց համակ
 « Առաքելին եւ Ղաարէթին
 « Եւ կողակցացն ընդ նոսին
 « Երեք եղբարցն քուերն իմ
 « Կալիւղարին ե իւր որդւոյն Սեֆերին
 « Եւ գասերացն հանգերձ սովին
 « Որք հանդիպիք սուք զողորմին » :

27.

**Ս. Էջմիածնայ եկեղեցւոյ սեղանին
 Խաչկալին յիշատակարանն է .**

« Յիշատակ է գեղեցիկ Խաչկալս Ակնցի Երեւան,
 « Եանց Սարգաֆ ե Պէղերկեան պաշը մահտեսի Սեղ,
 « բեսարոսին ե կողակցւոյն մահտեսի Արեգնաղին ե
 « ծնողաց նոցա ե ամենայն զարմից ե զաւակաց նոցա
 « Ի Սուրբ քաղաքն Երուսաղէմ՝ Աստուածազիբ Ա
 « Թառն Սրբոյն Յակովբայ Ի Ս. Խորանին Էջմիածնի .
 « Ի ԹՎին ՌՃՁԲ յիշեցեք ե Աստուած ողորմի սաս,
 « ցեք : ամէն » :

28.

**Սուրբ Էջմիածնի եկեղեցւոյ սեղա
 նի բեմին Ճակատը եղած յիշատակա
 րանն է .**

« Ի Պատրիարքութեան Տեառն Գրիգորի վեհեմ
 « կազմեցաւ մարտարեայ բեմն Ս. Էջմիածնի Խորա-
 « նիս , արգեամբ Ակնցի Երեւանեանց Մահտեսի Սեղ-
 « բեասարսին , 'ի յիշատակ իւրն եւ ամենայն զարմից
 « իւրոց , 'ի Թուին ՌՃՂԱ . յիշեցէք եւ Աստուած
 « ողորմի ասացէք , ամէն » :

29.

**Նոյն եկեղեցւոյն մէջ ագուցեալ
 Խաչ — քարի վրայ .**

« Ի Պատրիարքութեան Տեառն Պետրոսի նորապը-
 « սակ արհի Եպիսկոպոսի յախճապակեցաւ բոլոր Տա-
 « ճարս Ս. Էջմիածնի Պաշ-Պաղերկեանեան մահտեսի
 « Յովհաննէս որ է տեղեալ կեասարացի եւ է յիշատակ
 « խոհեմագոյն Աղայի եւ վասն իւր հոգւոյն կենդանի
 « եւ երկորդւոյն կարապետին եւ Սարգսի եւ իւր ննջե-
 « ցեւոց հոգւոյն համայնի եւ որ հանգիպիք երկիր պա-
 « գանեւ Արոյ Խաչիս , ընթերցողքդ ասացէք Հայր
 « մեղայիւ մի ողորմի եւ Աստուած մեզ ողորմեացի .
 « ՌՄԽԳ » :

**Ս . Թորոս Եկեղեցւոյ մէջ եւ անկէ
 դուրս եղած Խաչ — քարք :**

30.

Աջակողմը Աւազանին մէջ .

“ Եւրոպայի քաղաքացիներն Տէր Դաւիթ արհեստակարար
 պոստի եւ մեղաւոր, Մարտիրոս կանգնեցի զԽաչոս բա-
 րեխօս առ Աստուած ինձ եւ ծնողացս Սարգիս Գա-
 հանային եւ Խանուսին, եւս առաւել Յովանիսին
 Սարխաշին եւ Մերանշին. ԹՎ. ՌԼԹ ” :

31.

Եւրոպայի քաղաքացիներն Տէր Դաւիթ արհեստակարար
 պոստի եւ մեղաւոր, Մարտիրոս կանգնեցի զԽաչոս բա-
 րեխօս առ Աստուած ինձ եւ ծնողացս Սարգիս Գա-
 հանային եւ Խանուսին, եւս առաւել Յովանիսին
 Սարխաշին եւ Մերանշին. ԹՎ. ՌԼԹ ” :

“ Եւրոպայի քաղաքացիներն Տէր Դաւիթ արհեստակարար
 պոստի եւ մեղաւոր, Մարտիրոս կանգնեցի զԽաչոս բա-
 րեխօս առ Աստուած ինձ եւ ծնողացս Սարգիս Գա-
 հանային եւ Խանուսին, եւս առաւել Յովանիսին
 Սարխաշին եւ Մերանշին. ԹՎ. ՌԼԹ ” :

32.

“ Եւրոպայի քաղաքացիներն Տէր Դաւիթ արհեստակարար
 պոստի եւ մեղաւոր, Մարտիրոս կանգնեցի զԽաչոս բա-
 րեխօս առ Աստուած ինձ եւ ծնողացս Սարգիս Գա-
 հանային եւ Խանուսին, եւս առաւել Յովանիսին
 Սարխաշին եւ Մերանշին. ԹՎ. ՌԼԹ ” :

33.

“ Եւրոպայի քաղաքացիներն Տէր Դաւիթ արհեստակարար
 պոստի եւ մեղաւոր, Մարտիրոս կանգնեցի զԽաչոս բա-
 րեխօս առ Աստուած ինձ եւ ծնողացս Սարգիս Գա-
 հանային եւ Խանուսին, եւս առաւել Յովանիսին
 Սարխաշին եւ Մերանշին. ԹՎ. ՌԼԹ ” :

34.

“ Եւրոպայի քաղաքացիներն Տէր Դաւիթ արհեստակարար
 պոստի եւ մեղաւոր, Մարտիրոս կանգնեցի զԽաչոս բա-
 րեխօս առ Աստուած ինձ եւ ծնողացս Սարգիս Գա-
 հանային եւ Խանուսին, եւս առաւել Յովանիսին
 Սարխաշին եւ Մերանշին. ԹՎ. ՌԼԹ ” :

35.

“ Յեշատակ Ե Սուրբ Նշանն Դաւիթ Սարկաւազին
 “ Խաչատուր Երեցուն , Մարգարտին , Մարեամին ,
 “ Սաւային . 'ի ԹՎ . ԶԸ . Օգոստոս 1 ” :

36.

**Նոյն Եկեղեցւոյ Ս . Մերկեռիոսի
 մատրան Ճակատը պատկերին տակ .**

“ Եանգնեցաւ Սուրբ Նշանքս 'ի բարեխօսութիւն
 “ Կոստանդին փահանային եւ ծնողաց իւրոց Վասի
 “ փահանային եւ Աննային . 'ի ԹՎ . ԶԳ ” :

37.

“ Սուրբ Խաչս յիշատակ Ե Պաղատաարին եւ ծնա-
 “ ղացն ՎԹ ե գատերոյ . . . : Դարձեալ յիշատակ Ե
 “ Աննանին եւ ծնողացն Խաչատուրին եւ Մարիանէին .
 “ 'ի ԹՎ . ՌԾԸ ” :

38.

**Նոյն Եկեղեցւոյ արեւմտեան դրան
 վրայ .**

“ ՉԽոջանի բեկն ե զկողակէցն իւր ե զորդին
 “ Է զՂաւն յիշեցեք 'ի Քրիստոս . ԹՎ . ՌԺԳ ” :

39.

Թանգարանի դրան վրայ .

“ Ի ԹՎ. ՌՃՀՁ կերտեաց զգեղէցիկ խուցս Արբա.
 “ զան Հայրապետ մայրաքաղաքիս Գրիգոր Աստուա.
 “ ծարան Վարդապետն 'ի յիշատակ հոգւոյ եւ 'ի վա.
 “ յելումն Արբաղան Պատրիարքին Կոստանդնուպոլսոյ
 “ Տեառն Յովհաննու Աստուածարան վարդապետին
 “ Բաղէշէցւոյ . բայց հանգեաւ 'ի Քրիստոս եւ ո՛չ եւ.
 “ կեալ վայելեաց , որք հանդիպէք և վայելէք ասացէք
 “ Աստուած ողորմի . ամէն ” :

40.

Ատանաթաղի մեծ դրան վրայ .

“ Աստուծոյ ողորմութեամբն 'ի ԹՎ. ՌՃՀԼ, մեք
 “ Գրիգոր եւ Յովհաննէս մեղապարս Վարդապետքս
 “ սպասաւորք Արբոյ Աթոռոյս , զայս գրան ներսի
 “ եղեալ զբովանդակ տեղիքս գնեցաք շինեցաք և պա.
 “ բայեցաք և 'ի Սուրբ Գահիս շինուածքս խառնեցաք
 “ 'ի փառս Աստուծոյ և 'ի յիշատակ 'ի վայելումն և
 “ 'ի պարծանս ազգիս Հայոց եւ մեզ եւ աթոռակալ
 “ Յովհաննէս Վարդապետին և ծնողաց մերոց և նախ.
 “ բակաց և ամենայն միաբանից աշխատաւորաց և ու.
 “ զորմութիւն ասուողաց . վայելողքդ և ընթերցողքդ
 “ Աստուած ողորմի ասացէք վերադրելոց , զի յոյժ
 “ ջանիւ և աշխատութեամբ կատարեցաւ օգնականու.
 “ թեամբն Աստուծոյ և սրբոց իւրոց ” :

Նշանակէս Պուրսա-Թաղի, Հաննա-
Թաղի արեւելեան սենեկաց, Գարրիէլ
Պատրիարքի Թաղին արտաքին դրան,
Արեք օտայ կոչեցեալ սենեկաց և Հան-
նա-Թաղի արեւմտեան սենեկաց վրայ
Գրիգոր եւ Յովհաննէս բազմերախտ
Պատրիարքաց յիշատակարանները կան :

41.

Քիրէճ-Թաղի յիշատակարանը .

“ Աստուծով 'ի Պատրիարքութեան Արքայ Գահին
“ Տեառն Կարապետի Գանձակեցւոյ շինեցան երկուստ-
“ սան խցունքս նորապէս 'ի յիշատակ իւր եւ բոլոր
“ միաբանից , 'ի վայելուան ազգիս Հայոց , 'ի ՌՄԺԳ .
“ յիշեցէք 'ի Տէր ” :

42.

Շորաթաղին մէջ .

“ Ես Տէր Գրիգոր Պարոն տէր Հայրապետ Ս . ' Ե .
“ բուսաղէմի շինեցի զխանս նոր տներովս յիշատակ
“ հոգւոյ իմոյ 'ի վայելուան Ազգիս Հայոց , 'ի ԹՎԸՆ
“ հազար հինըսուն ամի , տեսողքք ասէք Աստուած
“ ողորմի իւր , և իւր ծնողաց ” :

Սուրբ Հրեշտակապետի վանուց
Եկեղեցւոյ մէջ .

43.

Աւազանին վրայ .

« Յիշատակ է Ս . Աւազանս զոր ընծայեցին թաշ
 « ճի պաշի հանգուցեալ Վարդան Աղայի բարեժա-
 « ռանդ որդիքն Պարոն Յակոբն և Պարոն Ստեփանն .
 « 1849 » .

44.

Պահարանի տախտակեայ դրան վրայ .

« Ի Հայկազեան մեծ թուականին ՌՂԸ աւելին
 « կազմեցաւ Դուռն Ս . Տաշարիս յիշատակ Տէր Մի-
 « նասին ձեռամբ Յամթեցի ճարտարապետին » .

45.

« Ի Պատրիարքութեան Տեառն Պետրոսի նորապը-
 « սակ Աբրազան Վեհին մերոյ . յիշատակ է և բոլոր
 « տեղւոյս ջինիքն Ատանացի մահտեսի Տէր Օհանին և
 « իւր ծնողացն և կողակցւոյն . ՌՄԽԴ թվին » .





ՏԱՊԱՆԱԳԻՐՔ

ՊԱՏՐԻԱՐԳԱՑ ԵՒ ՆՇԱՆԱԽՈՐ
ՎԱՐԴԱՊԵՏԱՅ Ս. ԱԹՈՒՈՑՆ
ԵՐՈՒՍԱԿԵՄԻ



1.

**Աբրահամ Բ. Պատրիարքին գե-
րեզմանը՝ Սուրբ Յակովբայ Եկեղեցւոյ
փոքրիկ գաւիթն մտնելու դրան ձախ
կողմը կը տեսնուի .**

“ Այս է Տապան եւ պահպանն սրբանեաց մարմ-
“ նոյ Տեառն Աբրահամու Եպիսկոպոսի Երուսաղեմաց-
“ ւոյ , երջանիկ Պատրիարքի Աբրայ Աթոռոյս , որ հան-
“ գի յիշխանութեան Սուլթան Սալահէտտինի . ԹՎ .
ՈՒ Է Ա . ” :



2.

**Դաւիթ Պատրիարքին .
Նոյն գաւթի աշակողմեան սեան
հարաւային երեսին վրայ .**

“Տաղանա այս : որ կայ սասնն : և գերեզմանս աս
 “Տէր Դաւթի գերեզմանիկ եւ ասոր հեղինակի :
 “Գնեղ աղաշէ աղերսալի . յիշման ասնել զես արժաւ
 “Ի՛ . Թ՛վ . Զ՛” :

3.

**Չախակողմեան սեան արեւմտեան
 կողմը .**

“Այս է հանգիստն Տէր վարդանայ կարուց և
 “պիսկոպոսի . և մեծ սուգ եթող եղբար Յովհանն
 “Ինտի . որք կարգայք յաղաւթս յիշեալէք . ՈՁէ” :

**Հետեւեալք Սուրբ Փրկչայ վանուց
 մէջ են .**

4.

Գրիգոր Պարոն-Տէր Պատրիարքին .

“Այս է Պատրիարգ Գրիգոր Պարոն Տէր .
 “Այք բազմավաստակ բարեաց բարեսէր .
 “Բազում շինութեանց աշխատս անէր .
 “Գեղեցիկ վարուց օրինակ լինէր .
 “Մեծ անուն թողեալ աշակերտ կարգէր .
 “Իւր բարի կրօնից ընտիր հոգեսէր :
 “Ամբս տասն և չորս ⁽¹⁾ Հայրապետ նստէր
 “Բազում գեղեցիկ կանոն յօրինէր” :

1645 . Ռ՛Ղ՛Գ . 1 . 7 .

(¹) Տաղանադարի “Ամբս տասն և չորս” սխալ էր
 ըստ որում Գրիգոր Պարոն-Տէր երեսուն երկու տարի
 Պատրիարքական իշխանութիւն վարած է :

Տապանաքարին եղերքն գրուած է .

“ Վերտին նորոգեցաւ շիրիմն Եւզոկիացի Ռէկէլ
 “ Անտն Վարդապետի ձեռամբ . ԹՎին Հայոց ՌՄԿԻո »

5.

Աստուածատուր Պատրիարքին .

“ Նսեմայարգ գիրք ստորին ունի յաւանդ զգանձ
 “ գովելի . զմաքուր մարմին բազմերջանկին . Աստուա-
 “ թաատուր Վարդապետին . Նստեալ 'ի Գահն Բակոբա-
 “ սին . ըստ մարմնոյ եղբօր մերոյ Փրկչին . մեծ Պատ-
 “ ըրիարք յաջորգ Նմին . յԵրուսաղէմ Ս . Բաղաբին :
 “ Հայրապետաց սրբոց կարգին փայլէր վարուք . գեր
 “ քան զՆստին . Էր անձանձիր 'ի քարոզին Աստուա-
 “ թաքան քաջ Բարուներն : Արգ փոխեցաւ առ ցանկա-
 “ լին . շուեաց յաստեացս յայն վերին . լցեալ շքման
 “ ամբ հաղաբին . հարիւր քան յարաբարգին . (այն է
 “ 'ի ԹՎին Հայոց ՌՃԻ-1671) » :

6.

Կոստանդնուպօլսեցի Յովհաննէս Պատրիարքին .

“ Այս է տապան հանգստեան Տեառն Յովհաննէս
 “ Վարդապետի Ստամպօլսոյ . Պատրիարքի Արքայ Ա-
 “ թուոյս . որ փոխեցաւ 'ի Գրիտասս 'ի ԹՎին ՌՃԻԶ
 “ ամին : Ընթերցողքդ յիշեցէք եւ Աստուած ողորմի
 “ ասացէք . ամէն » :

7.

Մինաս Պատրիարքին .

“ Այս է տապան Տեառն Տեառն Մինասոյ Ամ-
 “ Թեղոյ . Աստուածաբան Վարդապետի եւ Աբրոյ
 “ Աթոռոյս առաջնորդի որ փոխեցաւ 'ի կեանս Վերին .
 “ ԹՎին ՌՃԾԳ ” :

8.

Կիլիկիոյ Պետրոս Կաթողիկոսին .

“ Այս է տապան Պետրոս Կաթողիկոսին Կիլիկիոյ ,
 “ որ փոխեցաւ առ Տէր 'ի ԹՎ . ՌՃՀԷ ամին ” :

9.

Հաննա Վարդապետին .

“ Այս է տապան Հանգստեան բազմաշխատ Աթո-
 “ աակալ Հաննայ Յովհաննէս Աստուածաբան Վար-
 “ դապետի 'եւ Աբր Եպիսկոպոսին Երուսաղէմացոյ ,
 “ որ ին մտ զաթոռակալութեան գործն կատարեաց
 “ Վե վիշտա բազումն կրեաց 'ի պարտուց 'վճարումն եւ
 “ 'ի շինութիւն . Աստուածագիր Աթոռոյ Աբրոյն Յա-
 “ կովբայ . եւ տարածամ մահուամբ փոխեցաւ 'ի Քրիս-
 “ տոս , 'ի ԹՎին ՌՃՁԲ ամին 'ի Բունիսի ի Ո . եւ Մեծ
 “ սուգ եթող սիրելեաց իւրոց , յորք Հանգիպիք ե ըն-
 “ թեանուք լի բերանով յիշեցէք եւ Աստուած ողորմի
 “ ասացէք սմա , ե Տէր ձեզ ողորմեսցի , ամէն ” :

10.

Գրիգոր Շղթայակիր Պատրիարքին .

- « Կանգը ֆրիչին արթուն անունն անձկացեալ ,
 « Զպակասութիւն վշտաց նորին ներ անձնեալ .
 « Զութ հարիւրակ քակ պարտուց վճարեալ .
 « Սուրբ Յակոբայ սիւն ամբութեան կառուցեալ .
 « Վեհ աշակերտ մեք վարժողին Վարդանայ ,
 « Հրեշտակական վարուք ճգնեալ անխնայ .
 « Արովբեավար քաղաքավար յարակայ ,
 « Յարէնս էին միշտ ակն 'ի բաց աներկբայ ,
 « Ութսուն ամօք միշտ կուսութեան պարապեալ .
 « Մարմնայն հանգիտա խուն մի երբեք ոչ տուեալ .
 « Յասպարիդի մարտին յաղթող ներգտեալ .
 « Գրնաց առնուլ զանեղծ պսակ պատրաստեալ :
 « Դնջէ մարմնով Գրիգորիտան որ արթուն .
 « Հոգւովն հսկէ առ միշտ բարին որ անհուն .
 « Որում է գործքն պսակէ զիւրն անուն .
 « Զի հաւատով է սուրբ գործովն էր տըքուն .

- « Յիշեալ լիցի միշտ 'ի բարին
 « Բարեբաբոյ մեծ Մահտեսին .
 « Շինող շիրմին մերոյ Վեհին .
 « Որ Սեղբեստրոս Երեւանին » :

1749 . ՌՃՂԸ .

11.

Աղոտ Յովհաննէս Պատրիարքին .

- « Աստուածաբանից իշխանի այս է տապան ,
 « Եւ անօթոյն Հոգւոյն Արքայ այս օթարան .

- “Տէր Յովհաննէս Պատրիարքին Բիւզանդիոյ ։
 “Որ Թագ փառաց էր Դպրատան Ամբաստան ։
 “ԶԽմատուցեան սուրբ մարգարիտն որ էր Թագուան ։
 “Ի լոյս էած՝ այս գերազփին խորին գիտուան ։
 “Փան հնգից ամաց միջէ գեր քան զինաց ։
 “Զհարիւր ամաց գործ կատարեաց այս լուսազգեաց ։
 “Ս . Յակոբայ պարտուց բարձման սա է պատճառ ։
 “Եւ լուսաման ազգիս ախտին սա սուրբ օճառ ։
 “Վկայասէր . իմաստասէր . սակերեան
 “Զոր արք տգետք չեն գովելոյ զքեզ արժան ։

12.

Խորենացի Թէոդորոս Պատրիարքին .

- “Այս է հանգիստ իւր տապանի Առն մեծի բաւ
 “բերջանիկ Թէոդորոս Արքապետի Արքայ Գահին Պատ-
 “րիարքի ։ Էր նահանգաւ Տարօնացի բնիկ գիւղէն
 “Խորենացի . լի աւուրքք օր ծերութեան հանգեաւ
 “առ Տէր բարի մահուամբ ։ Թվին Հայոց յարեթաւ
 “կան Ռժ . քառ . յարեւան . Դեկտեմբերի կոյն ընդ
 “ինքեան ։

13.

Գանձակեցի Կարապետ Պատրիարքին .

- “Այս է տապան հանգստեան Գանձակեցի Արքա-
 “պետ Կարապետ Պատրիարքի սրբայ Աթոռոյս Երու-
 “սազէմի . որ փոխեցաւ յանանց կեանս 'ի Թվին
 “ՌՄԺԷ . սրբ հանգիպէք սուք զուղտի ։

14.

Վանցի Պօղոս Պատրիարքին .

- « Հաղանիւթեայ այս դամբարան
 « Մարմնոյ միայն սա կայարան .
 « Հիւթ առաջին եւ գոյարան ,
 « Վահանն վերջին առ որ գառնան :
 « Արգ՝ որ եդեալս է 'ի յոյս ստապան ,
 « Պօղոս արհի բարունական :
 « Նստեալ յԱթոռ Պատրիարգական ,
 « Որ 'ի Սաղեմ երկիրն կոչման :
 « Բակերտ բարի քաջ հովուական
 « Եւ սիրելի յաշո մարդկան .
 « Խուն ինչ ցաւօք թոշեալ զայն կեանս .
 « Ծածկեալ եղեւ ներ հող ստապան » :
 ԹՎԻՆ . ՌՄԻԴ :

15.

Գանաբեռցի Յովակիմ Պատրիարքին .

- « Այս է ստապան հանգստեան ,
 « Երբժամ յայտնի նշան Տերունեան ,
 « Զի մի գարձցի տնանկ ամաշեցեալ .
 « Որ եմ 'ի ներքոյ վիմիս թաղուցեալ :
 « Յովակիմ Պատրիարգ յորջորջեալ
 « Եւ ծովածին ⁽¹⁾ կոչեցեալ .

(1) Յովակիմ Պատրիարք Գանաբեռցին՝ յԱրա-
 սաղեմ գալու ժամանակ՝ նաև ճանապարհին կը խոփ-
 տակի եւ ծովատոյզ կը լինի . սակայն ինքն կ'ազատի ,
 աւարի և ծովածին կը կոչուի :

“ Զեռամբ խնով շարագրեալ .
 “ Առ Տէր Յիսուս գնացեալ ” :
 Ի ԹՎԻՆ ՌՄԻԲ Է Սեպտեմբեր ԻԲ :

16.

Թրակացի Յարուժիւն Եպիսկոպոսը
Նուիրակութեան պաշտօնիւ 'ի Զմիւռ-
նիա կը վախճանի , բայց 'ի յիշատակ
կը կանգնեն թաջ—քար մի այս Տապա-
նագրով .

“ Կանգնեցաւ Ս . Թաջ բարեխօս առ Աստուած
 “ վասն փրկութեան հոգւոյ Արքայ Աթոռոյս բնիկ մի .
 “ արան Թէքիրտաղջի Յարուժիւն Եպիսկոպոսի , որ
 “ 'ի գործ նուիրականութեան գնաց 'ի Զմիւռին քա .
 “ զաք և անդ հանգեաւ 'ի Քրիստոս . ՌՄԻԲ : Սեպ .
 “ տեմբեր Լ ” :

17.

Եւզոկիացի Պետրոս Պատրիարքին ,
որոյ գերեզմանը Յոպպէի վանուց Եկե-
ղեցւոյ գաւթին մէջ է .

“ Եւզոկիացի Արքայան Պետրոս Պատրիարքն Ե .
 “ բուսողէմի 'ի ժամանակ պատերազմին Ֆրանկրոզոց
 “ յորժամ բանակն Օսմանեան էր 'ի Յոպպէ , յառա .
 “ ւել նեղութենէն եկն առ Եպարզոսն գտանել այ .

« ցելութիւնն , որոյ հասեալ անգէն վախճանն հան-
 « գեաւ 'ի Տէր , որոյ զհոգին Տէր լուսաւորեացէ : 'ի
 « Թուին ՌՄԻՇ Թուներս ԻԱ » :

18.

**Ի յիշատակ Սկիւտարի մէջ վախճա-
 նեալ Պաղտատար Եպիսկոպոսին .**

« Կանգնեցաւ Ս . Խաչո ըտրեիս առ Աստուած
 « 'ի փրկութիւնն հոգւոյ Աւագ — Լուսարար Պօղոսցի
 « Պաղտատար Եպիսկոպոսի , որ վասն գործոյ Ս . Ա-
 « Թուոյս երթեալ 'ի Պօլիս . անգ առ Քրիստոս հան-
 « գեաւ . Թաղեցաւ 'ի Սկիւտար . 'ի Թիւ ՌՄԾԸ Թն » :

19.

Վանցի Թէոդորոս Պատրիարքին .

« Թէոդորոս Վեհ՝ ընտիր հոգեւոր .
 « Ի յերկրէն Վանայ՝ յոյժ հաշակաւոր .
 « Տեսչ լուսաւորչի՝ Պարթեւ փառաւոր .
 « Մարքական վարուք եւ պապաւոր .
 « Կատեալ 'ի յԱթոս՝ որբոյն Աթոնի .
 « Եզգօր Տեառն եղև՝ յաջորդ անուանի .
 « Զանայր շէն պահել՝ զԱթոսն Փրկչի .
 « Բայց տեւեալ ամօք՝ միայն տասն ութի .
 « Դարձեալ ստացաւ՝ սա ըզմեր տեղի .
 « Տաճար Եննդեան՝ եւ Աստուածամնի .
 « Իսկ հասեալ 'ի տիս՝ եթմնեկ տասնեկի .
 « Ալայաւ 'ի մէնջ 'ի բուն հայրենի » :
 Զամի Տեառն 1819 յՕգոստոսի 22 :

20.

**Նիկոմիդացի Գաբրիէլ Պատրի-
արքին .**

- “ Ի բարձրելոյն երգէ Ահաք մրտեղեաց ,
 “ Այս դատաստան՝ բարէ և զի՛ վայելուչ .
 “ Յազազու յիմ՝ նուազելոյս ՚ի կարեաց .
 “ Ընդ յի. անոյչ , յի և անձն իմ ընկալուչ :
 “ Գաբրիէլ եմ սուրբ Աթոռոյս Գահակալ .
 “ Այլ Նիկոմիդ. ծնել ես քնձ զօգ նախկին .
 “ Որ ինն էր բազդ յայս աստիճան վերառեալ .
 “ Ընդ փորձ անցոյց որդէս զսկի քուբային :
 “ Քան երկու ամաց շքեանս ՚ի գահիս ,
 “ Զիշխանութեան յաջ ընկալեալ գաւազան .
 “ Զիմ շունչ վերջին յաւանդ թողի , սվ շնորհիս .
 “ Յայս սուրբ Ահն յեցեալ յալիս ծերութեան :
 “ Որ փառասորի քս սուրբ անուն յայս կոչան .
 “ Տէր իմ Յիսուս . ուր և փայլի քոյր շիրիմ՝ .
 “ Ի փող զուարթնոյն անդ անճառիցն ՚ի խորան ,
 “ Հնչեա՛ յականջս , հանգի՛ր ծառայ մտերիմ՝ :
 Յամի Տեառն 1840 Ապրիլ 15 . Ամաց 76 :

21 .

Ի կոչ գեղէն Տարօնոյ Զաքարիա Պատրիարք Ե-
րուսազէմի Տէր Պետրոսեան :

- “ Մահ և գերեզման՝ գերեք զամենայն , գերեցեք
 “ և զես՝ ՚ի իմ վաթառն ամ՝ ՚ի սուրբ Պատարագի՝
 “ պառաճառս մատուցման , ՚ի կենդանակից՝ Փրկչին գե-

« րեզման . Տէր Յիսուս Քրիստոս՝ վան քս թաղման ,
 « զԹաղեալս վերածեա՝ քումք հանգստեան . 1846
 « Մայիս 7 ր .

22.

Գանձ տկերայ Տ . Տ . Կիրակոս Աբբ Եպիսկոպոսի
 և Պատրիարքի Ս . Երուսաղէմի :

« Հօտին Քրիստոսի հովիւ հոգեկան
 « Բանական հնձոց մշակ տէրունեան
 « Հայելի բնակի վարուք մայրութեան
 « Անձանձիր քարոզ կենացն անվախձան
 « Նորոգիչ Գահոյս տեղեաց զանազան
 « Որք կան ակներեւ գրեալ ՚ի յարձան

« Հովուապետ բարի
 « Փրկիչ աշխարհի
 « Տուր սմա տեղի
 « Ի քում՝ խորանի ր :

1850 Մայիս 25 .

23.

« Այս է Տաղան հանգստեան Պօղոս Ս . Աբբ Ե .
 « պիսկոպոսի Անգրիանուպօլսեցւոյ , նախկին Պատրի-
 « արքի Կ . Պօլսոյ և Ս . Աթոռոյս հարազատ և բազ-
 « մերախոս միաբանի , որ ՚ի հասակի քննառնամեայ հան-
 « գեաւ ՚ի Տէր Յամի 1853 Ի Ծ՝ Մայիսի ր .

24.

“ Այս է Տապան հանգստեան Տ. Յովհաննու Ս.
 “ Աբբ Եղիսկոպոսի Զմիւռնացւոյ եւ բաղմարգիւն
 “ Պատրիարքի Ս. Աթուոյս որ վարեալ զԷջեանու. Թիւնն
 “ զամս տան հանգեաւ. ՚ի Տէր Յամի 1860 Ի 25՝ Դեկ.
 “ տեմբերի ” :

25.

“ Այս է Տապան հանգստեան Յակովբայ Ս. Աբբ
 “ Եղիսկոպոսի նախկին Պատրիարքի Կ. Պօլսոյ որ եւ
 “ կեալ յուխտ անօրինական տեղեաց հանգեաւ. ՚ի Տէր
 “ Յամի 1862 Ի 6՝ Նոյեմբերի ” :

26.

“ Այս է Տապան հանգստեան Եսայեայ Ս. Աբբ
 “ Եղիսկոպոսի Թալասացւոյ եւ Պատրիարքի Ս. Աթու
 “ ուոյս որ վարեալ զԷջեանու. Թիւնն զամս քսան, հան
 “ գեաւ. ՚ի Տէր Յամի 1885 Ի 29՝ Օգոստոսի ” :



ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ

ՈՐԻ ԿԸ ԾԱՏՈՒՑՈՒԻՆ ՀԱՅՈՑ
ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷՆ Ի Ս. ՏԵՂԻՍ

Բաց 'ի որոշեալ Հանդիսաւոր Պատարագներէն՝ զորս վարը մի առ մի պիտի գրենք, ամեն օր ⁽¹⁾ Սուրբ Պատարագ կը մատուցուի որոշեալ ժամերուն 'ի Ս. Յարութիւն և 'ի Ս. Աստուածածին Ս. Գերեզմաններուն վրայ, և 'ի Բեթ-լեհէմ՝ Սուրբ Այրին մէջ՝ 'ի վերայ Ս. Ծննդեան տեղւոյն :

ՀԱՆԴԻՍԱԻՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ Ի ՍՈՒՐԲ ՏԵՂԻՍ

1°. Սուրբ Ծննդեան ձրագալոյցի երեկոյին Հրաշափառ 'ի Ս. Ծննդեան Տաճարն, եւ Ս. Պատարագ Ս. Այրին մէջ. գիշերը ժամը 5ին Տաճարին մէջ՝

(1) Երբ Ս. Տեղեաց վրայ Հանդիսաւոր Պատարագ լինի սովորական սուրբ Պատարագը չը մատուցուի :

մեզ սեփհական հիւսիսային կողմը թա-
մերգուծիւնը սկսուելով՝ յետ ժամեր-
գուծեան Ս. Պատարագը կը մատուցուի
Աւագ-Սեղանոյն վրայ, և ապա առաւ-
տուն՝ Այրին մէջ 'ի վերայ Ս. Մննդեան
տեղոյն. սոյն վերջին Պատարագը կը մա-
տուցանէ Սրբազան Պատրիարքն կամ մի
Եպիսկոպոս :

2°. Ութօրէից՝ այն է Անուանակո-
չութեան Տօնի օրն Հրաշափառ 'ի Ս. Յա-
րութեան Տաճարն՝ և Հանդիսաւոր Պա-
տարագ 'ի վերայ Ս. Գերեզմանին Քրիս-
տոսի. ժամարարն է Եպիսկոպոս :

3°. Բուն բարեկենդանի շաբթուն
Ուրբաթ օրն՝ Ս. Պատարագ 'ի տունն
Ս. Մարկոսի Աւետարանչին որ 'ի վանս
Ատրուոց :

4°. Թէոդորոսի շաբաթ երեկոյին՝
Հրաշափառ 'ի Տաճարն Ս. Յարութեան,
և Կիրակի առաւօտ՝ Ս. Պատարագ Ս. Յա-
րութեան Վերնատան մէջ, և զկնի Ս. Պա-
տարագին Մեծահանդէս Թափօր շուրջ
զՍ. Գերեզմանաւն Քրիստոսի :

5°. Մեծի պահոց Տնտեսի Կիւրա-

կէին Հանդիսաւոր սուրբ Պատարագ 'ի սուրբ Համբարձում՝ որ 'ի լերինն ԶԻԹենեաց .

6°. Դատաւորի Կիւրակէի շաբաթօրը՝ երեկոյին Հրաշափառ 'ի Տաճարն Ս. Յարութեան, Կիւրակէի սուաւօտուն Ս. Պատարագ 'ի վերայ Ս. Գերեզմանին Քրիստոսի, եւ ապա Մեծահանդէս Թափօր . Ժամարանն է Սրբաղան Պատրիարքն :

7°. Մաղկազարդի շաբաթօրը երեկոյին Հրաշափառ 'ի Տաճարն Ս. Յարութեան, Կիւրակէի առաւօտուն Ս. Պատարագ 'ի Ս. Վերնատան՝ և զկնի Ս. Պատարագին Մեծահանդէս Թափօր շուրջ զՍ. Գերեզմանաւն Քրիստոսի :

8°. Աւետման Ս. Աստուածածնի օրն՝ Հրաշափառ և Հանդիսաւոր Ս. Պատարագ 'ի վերայ Ս. Գերեզմանին Ս. Աստուածածնի :

9°. Աւագ - Շաբաթօրն՝ երեկոյին Հանդէս ԼՈՒՍԱԻՈՐԵԱՅԻ 'ի Տաճարն Ս. Յարութեան, և Հանդիսաւոր Թափօր շուրջ զՍ. Գերեզմանաւն Քրիստոսի, զկնի Թա-

գիորին Սուրբ Պատարագ 'ի Սուրբ Վերնատան :

10°. ԶԱՏԿԻ օրն Ճամերգութիւն և Մեծահանդէս Թափօր շուրջ զՍ. Գերեզմանաւն Քրիստոսի, և Ս. Պատարագ 'ի վերայ Սուրբ Գերեզմանին. Ճամարարն է Եպիսկոպոս :

11°. Զատկի Բ. օրն՝ Հանդիսաւոր Ս. Պատարագ 'ի Ս. Յակովբ՝ և Մեծահանդէս Թափօր 'ի մէջ Ս. Եկեղեցւոյ, Ճամարարն է Ս. Պատրիարքն :

12°. Աշտօրհամատրան Կիւրակէի օրն՝ Ճամերգութիւն 'ի Ս. Վերնատան, եւ Ս. Պատարագ 'ի վերայ Ս. Գերեզմանին Քրիստոսի. Ճամարարն է Եպիսկոպոս :

13°. Սուրբ Համբարձման օրն՝ Հրաշափառ և Ս. Պատարագ 'ի Ս. Համբարձումի որ 'ի լերինն Ձիթենեաց :

14°. Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի օրն՝ Ս. Պատարագ 'ի վերայ Ս. Գերեզմանին Ս. Աստուածածնի :

15°. Վերափոխման նախորդ երեկոյին Հրաշափառ եւ Ճամերգութիւն

՚ի Տաճարին Ս. Աստուածածնի. վերափոխման օրն, նոյնպէս Հրաշափառ եւ Սուրբ Պատարագ ՚ի վերայ Սուրբ Գերեզմանին Ս. Աստուածածնի. Ժամարարն է Սրբազան Պատրիարքն կամ մի Եպիսկոպոս :

16°. Յովակիմայ եւ Աննայի օրն՝ Ս. Պատարագ ՚ի Ս. Աստուածածին ՚ի վերայ գերեզմանին Հայր Յովսեփայ :

17°. Գիւտ Գօտույ Ս. Աստուածածնի օրն՝ Ս. Պատարագ ՚ի վերայ Գերեզմանին Ս. Աստուածածնի :

18°. Սուրբ Աստուածածնի ծննդեան օրն՝ Հրաշափառ եւ Ս. Պատարագ ՚ի վերայ Ս. Գերեզմանին Ս. Աստուածածնի. Ժամարարն է Եպիսկոպոս :

19°. Արքայն Գէորգայ զօրավարի օրն՝ Ս. Պատարագ ՚ի Ս. Գէորգ Եկեղեցին՝ որ ՚ի վանս Ղբաւոյ. եւ նոյն երեկոյն Հրաշափառ ՚ի Տաճարն Ս. Յարութեան :

20°. Վարագայ սուրբ Խաչի Տօնի օրն՝ Ս. Պատարագ ՚ի Տաճարն սուրբ Յարութեան ՚ի վերայ Սուրբ Գերեզմանին Բրիստոսի :

21°. Սուրբ Աւետարանչայ Տօնի օրն՝ Ս. Պատարագ 'ի Մատրանն (1) սուրբ Յովհաննու , որ 'ի գաւլթ Տաճարին սուրբ Յարութեան :

22°. Սուրբ Յովսէփայ Աստուածա-
հօր Տօնի օրն՝ Ս. Պատարագ 'ի սուրբ Աստուածածին 'ի վերայ գերեզմանին Հայր Յովսէփայ :

23°. Գիւտ Խաչի Շարաթ երեկոյին՝ Հրաշափառ 'ի Տաճարն Ս. Յարութեան . Ժամերգութիւն և Ս. Պատարագ դարձեալ 'ի Ս. Լուսաւորիչ Եկեղեցին , զկնի Պատարագին Մեծահանդէս Թափօր շուրջ զՍ. Գերեզմանաւն Քրիստոսի :

24°. Սուրբ Աստուածածնի Ընծայման օրն՝ Հրաշափառ և Ս. Պատարագ 'ի վերայ Ս. Գերեզմանին Ս. Աստուածածնի . Ժամարարն է Եպիսկոպոս :

25°. Յզրութիւն Ս. Աստուածածնի 'ի ՄԱննայէ , Հրաշափառ և Ս. Պատարագ

(1) Սոյն Մատուռը՝ ինչպէս Պատմութեան մէջ իւր տեղն ըմբռնելով սեփական լինելով՝ նոյն որոշեալ օրէն 'ի զատ ուրիշ ժամանակներ եւս Ս. Պատարագ կը մատուցուի :


՚ի վերայ Ս. Գերեզմանին Ս. Աստուածածնի. Եւամարարն է Եպիսկոպոս:

Ի Սուրբ Տեղիս մատուցեալ վերոյգրեալ ամէնօրեայ և Հանդիսաւոր սուրբ Պատարագներէն ՚ի զատ, Ս. Յակովբայ Տաճարին մէջ ընդհանրապէս Շաբաթօրերն ՚ի վերայ Ս. Գլխադրի մատրան՝ և Եկեւակի օրերն ՚ի վերայ Աւագ-Սեղանոյն Ս. Պատարագ կը մատուցուին՝ եթէ նոյն օրերը Սուրբ Տեղեաց մէջ Հանդիսաւոր Պատարագի օրեր չըլինին. նոյնպէս սուրբ Յարութեան վերնատան Սեղաններուն վրայ Սուրբ Պատարագ կը մատուցուի, սովորաբար երկու կամ երեք շաբաթն անգամ մը: Իսկ մասնաւորապէս ՚ի Սուրբ Յակովբ Հանդիսաւոր արարողութիւնք կը կատարուին հանդերձ Սուրբ Պատարագաւ, Իսահակայ Պարթեւի Հայրապետին, Տեառնընդառաջի, Ս. Վարդանանց զօրավարայ, Աւագ Հինգշաբթի, Եկեղեցւոյ, Վարդավառի, Խաչ վերացի, Իաւթի Մարգարէին, եւ Որդւոց որոտման և այլն Տօներու օրերն: Ասոնցմէ զատ ուխտա-

ւորաց ժամանակ գրեթէ ամեն օր՝ սուրբ
Պատարագ կը մատուցուի 'ի Ս. Յակովբ,
և որոշեալ օրեր այլ և այլ Սուրբ Սեղան
ներու վրայ :

Հոգեգալստեան Նախատօնակն՝ Հան
դիսաւոր Պատարագն՝ եւ երեկոյեան
Անդաստանն կը կատարուին 'ի Սուրբ
Փրկիչ, մեր սեփհական վանուց մէջ,
ուր տարին քանիցս անգամ մասնաւոր
Պատարագներ եւս կը մատուցուին :
Երկրորդ ծաղկազարդի հանդէսն՝ և սուրբ
Հռիփսիմեանց և Ս. Հրեշտակապետաց
Տօնախմբութիւնքն կը կատարուին մեր
Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյն մէջ :





ՑԱՆԿ



	ԵՐԵՍ
Ուխտաւորք 'ի Յողպէ և ուղեւորութիւն նոցա գէպ յԵրուսաղէմ	7-38
Երուսաղէմ	38-41
Ս. Յարութեան Տաճարը, Պատմական	41-46
Ա. ԱՅՅԵԼՈՒԹԻԻՆՆ. — Ի Տաճար Ս. Յարու- թեան	46-71
Բ. " — Խաչին ճանապարհը մինչև 'ի գերեզման ամենաուրբ Առաքին	71-97
Գ. " — Ի Ս. Փրկիչ և 'ի հարա- ւային շրջակայքն Ս. Երուսաղէմի	97-129
Դ. " — Ս. Յակովբայ Եկեղեց- ւոյն և Վանուց մէջ	129-152
Ե. " — Ի վանս Ս. Հրեշտա- կապետի և քաղաքին մէջ գտնուած ուրիշ պատմական տեղերը	152-179
Զ. " — Ի Լեւոն Սուրբ Համ- բարձման	179-199
Է. " — Ի Բեթլէհէմ եւ 'ի շրջակայս նորին	199-240
Ը. " — Ի Տաճարն Սողոմոնի . կամ մզկիթն Օմարայ	240-267

ԵՐԵՄ

- Թ. ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ . — Ի գերեզմանս Թադա.
ւորաց, գատաւորաց,
և այլն 287—288
- Ժ. " — Յովհաննու ծննդեան
գիւղը, այն է լեռնա-
կողման վանքերը . . . 283—300
- ԺԱ. " — Ի Յորդանան, 'ի Մե-
ռեալ ծով, և այլն . 300—336
- ԺԲ. " — Ի Նաղարէթ, 'ի Սա-
մարիա, և այլն . . . 336—371
- ՅԱԻԵԼՈՒԱԾ Ա. Յէշատակարանք եւ Խաչ-
քարք 371—392
- " Բ. Տապանագիրք Պատրիարքաց
և նշանաւոր վարդապե-
տաց Ս. Աթոռոյս Երու-
սաղէմի 392—405
- Ս. Պատարագք որք կը մատուցուին Հայոց
Միաբանութեան կողմէն 'ի Ս. Տեղիս . . . 405—412



